

# ՆՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

## ԺԱ

ՍՈՒՐԲ ՆԱՏԱՏԱԿ ԵՎ ԲԺԻՇԿ  
ՊԱՆՏԵԼԵԻՄՈՆԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԸ  
ԵՎ ՆՐԱՇՔՆԵՐԸ





ՀՐԱՄԱՆԱԻ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԳԻ**

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ-  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**ՆՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ**

**ԺԱ**

**ՍՈՒՐԲ ՆԱՏԱՏԱԿ ԵՎ ԲԺԻՇԿ  
ՊԱՆՏԵԼԵԻՄՈՆԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԸ  
ԵՎ ՆՐԱՇՔՆԵՐԸ**

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
Ս. ԷԶՄԻԱՇԻՆ - 2009

ՀՏԴ 23/28  
ԳՄԴ 86.37  
Պ - 201

Թարգմանությունը ռուսերենից՝  
Արա Զոհրաբյանի

Պ – 201 ՍՈՒՐԲ ՆԱՅԱՏԱԿ ԵՎ ԲԺԻՇԿ ՊԱՆՏԵԼԵԻՄՈՆԻ  
ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀՐԱՇՔՆԵՐԸ: – Էջմիածին:  
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009.– 304 էջ:

ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկնաստությամբ՝

«Մարգիս Գարրիելյան» հիմնադրամի

ISBN 978-9939-59-026-4 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009 թ.

\*  
\* \* \*

Ս. Պանտելեիմոնը հայ իրականության մեջ հայտնի է ս. Պանդալեոն անունով: Նա Հայ Եկեղեցու տոնելի սրբերից է: Նրա հիշատակը եկեղեցական օրացույցով նշվում է Ս. Խաչի 4-րդ շաբաթվա հինգշաբթի օրը: Նա ծնվել է Նիկոմեդիայում (3-4 դդ.): Հայտնի է իր բազմաթիվ հրաշագործություններով ու բժշկություններով, որոնց էլ նվիրված է սույն գիրքը:

*Մոսկվա լեռնաշղթայից հյուսիս-արևելք գտնվում է Պանդ անունով լեռնագագաթը (Գանձակի լեռներում), որտեղ այսօր էլ պահպանվել են Պանդ անունով մի մատուռի ավերակները: Ըստ ավանդության, այդտեղ է թաղված ս. Պանդայկոն բժիշկը: Այս ուխտատեղին մեծ համարում ունի Արցախում և հայրենի է որպես բժշկություն պարզևող ուխտատեղի:*

**ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ ԵՎ ԲԺԻՇԿ  
ՊԱՆՏԵԼԵԻՄՈՆԻ ՎԱՐՔԸ,  
ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐԱԾ  
ՀՐԱՇՔՆԵՐԸ**

**Ս**ուրբ նահատակ և բժիշկ Պանտելիմոնը (հունարեն՝ Պանտոլեոն բառից, որ նշանակում է «ամեն ինչում առյուծ») ծնվել է Բուլթանիայում, Պրոպոնտիդայի (Մարմարա ծովի) ափին գտնվող Նիկոմեդիա հնամյա գեղեցիկ մի քաղաքում:

Բուլթանիան, ուր գտնվում էր Նիկոմեդիան, մտնում էր Հռոմեական կայսրության կազմի մեջ, սակայն ինքնուրույն նահանգ էր և կառավարվում էր հատուկ պրոկոնսուլի կողմից:

Հենց այստեղ՝ Բուլթանիայում էր, որ Մաքսիմիանոս կայսեր տիրապետության տարիներին՝ IV դարի սկզբում, ծավալվեցին քրիստոնյաների ամենասարսափելի հալածանքները: Խստասրտությոնն ու սնահավատությոնն էին Մաքսիմիանոսի հոգու մեջ իշխող կրքերը: Կայսրը ջերմեռանդորեն պաշտում էր հեթանոսական աստ-

վածներին, ուսումնասիրում մոգուլթյուն և հավատում պատգամախոսներին, գուշակներին և փիլիսոփաներին, որոնց նա պատվում էր, հաճախ նշանակում նահանգների կառավարիչներ, խորհրդակցում էր նրանց հետ, կիսվում իր մտադրուլթյուններով:

Մաքսիմիանոսի օրոք հեթանոսությունը անկում էր ապրում, և նա միամտորեն ենթադրում էր, թե հռոմեական կրոնը թուլացել է միասնականության բացակայության պատճառով, իսկ քրիստոնեությունը տարածվում է և հաստատվում միայն խիստ կարգապահության շնորհիվ: Մաքսիմիանոսը փորձում էր վերակենդանացնել այդ ժամանակ արդեն շունչը փչող հռոմեական կրոնը: Բոլոր մեծ քաղաքներում հեթանոսական տաճարները վերանորոգվեցին և զարդարվեցին, տարբեր աստվածություններին պաշտամունք մատուցող քուրմերը ենթարկվեցին քրմապետին: Այս քրմապետերն, իրենց հերթին, ենթարկվում էին նահանգի գլխավոր քրմերի գերագույն իշխանությանը, որոնք գործում էին որպես իր՝ կայսեր տեղապահներ: Նրանց արտոնյալ պատվո նշանը սպիտակ հանդերձն էր:

Մաքսիմիանոսը քրիստոնյաների հալածանքը նախապատրաստում էր կանխամտածված հաշվենկատությամբ: Նա հրամայեց ավերել քրիստոնեական տաճարները, այրել ժամագրքերը և բոլոր քրիստոնյաներին զրկել քաղաքացիական իրավունքներից և պաշտոններից: Եվսեբիոս և Լակտանցիոս պատմիչները նկարագրում են քրիստոնյաների չարչարանքների սարսափելի պատկերներ: Նրանց աշխատությունների ամբողջական էջեր նվիրված են տանջանքների և խարազանման գործիքների, երկաթե կեռերի, կարմրելու աստիճան շիկացրած երկաթե մահճակալների, ինչպես նաև հրի, սրի, վայրի գազանների և էլ ավելի վայրի դահիճների միջոցով մարդկային մարմնի ամեն տեսակ խոչտանգումների նկարագրություններին:

Մի անգամ Մաքսիմիանոս կայսրը քաղաքային հրապարակում հեթանոսական աստվածներին զոհեր մատուցելու արարողություն կազմակերպեց: Երբ սկսվեց զոհաբերվող կենդանիների արյամբ ամբոխի ցողումը, քրիստոնյաները սկսեցին հեռանալ հրապարակից: Դա տեսնելով՝ կայսրը զայրացավ, սակայն ազատություն չտվեց իր զգացմունքներին, քանի որ երկիրը հանկարծակի սասանվեց: Որոշ ժամանակ անց Մաքսիմիանոսը մտավ եկեղեցի և այնտեղ գտնվողներին հրամայեց ուրանալ Քրիստոսին: Մերժման դեպքում նա սպառնաց այրել եկեղեցին և կոտորել քրիստոնյաներին: Քրիստոնյա

քահանա Գղիկերիոսը պատասխանեց նրան, որ քրիստոնյաները երբեք չեն ուրանա իրենց հավատը՝ ինչպիսի չարչարանքներ էլ որ սպասեն նրանց:

Ձսպելով զայրույթը՝ կայսրը դուրս եկավ եկեղեցուց, իսկ որոշ ժամանակ անց հրամայեց Գղիկերիոս քահանային դատարան բերել: Դահլծները խոշտանգեցին նահատակին, որը չէր դադարում աղոթելուց և Տիրոջ անունը կանչելուց: Անկարող լինելով սուրբ Գղիկերիոսին հարկադրել ուրանալ, Մաքսիմիանոսը հրամայեց ողջակիզել նրան:

302 թ., Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնին, երբ Նիկոմեդիայի մայր եկեղեցում հավաքվել էին մոտ քսան հազար քրիստոնյաներ, կայսրը տաճար մուսնետիկ ուղարկեց, որը հրապարակեց նրա հրամանը բոլոր քրիստոնյաներին՝ դուրս գալ եկեղեցուց և զոհ մատուցել կուռքերին: Հակառակ դեպքում նա սպառնում էր տաճարը այրել աղոթողների հետ միասին:

Բայց և այնպես քրիստոնյաները հրաժարվեցին երկրպագել կուռքերին: Մինչ հալածիչները նախապատրաստվում էին հրկիզելու եկեղեցին, ժամերգուն՝ Անթիմոս եպիսկոպոսը, մկրտեց բոլոր նորընծաներին և Սուրբ Հաղորդություն տվեց: Բոլոր քսան հազար աղոթող-

ները նահատակի մահ ընդունեցին՝ ողջակիզվելով կրակի մեջ:

Մաքսիմիանոսը համարեց, թե ինքը ոչնչացրել է Նիկոմեդիայի բոլոր քրիստոնյաներին, բայց շուտով իմացավ, որ նրանք դեռ շատ են, որ նրանք բոլորը առաջվա պես դավանում են իրենց հավատամքը ու պատրաստակամ են մեռնելու հանուն Քրիստոսի: Կայսրը մտադրվեց հաշվեհարդար տեսնել նրանց հետ: Նրա հրամանով բռնեցին Ջինոն գորավարին, որ հրապակայնորեն հանդիմանում էր կայսրին անիրավության ու դաժանության համար: Ջինոնը դաժանորեն ծեծվեց և, ի վերջո, գլխատվեց: Կուռքերի քուրմ Ինդիս ներքինուն բանտարկեցին հեթանոսական տոնախմբությանը մասնակցելուց հրաժարվելու համար:

Քրիստոնյաների հալածանքները շարունակվում էին: Բանտ նետվեցին Իտալիայի տեղապահ, եպիսկոպոս Դորոթեոսը, Մարդոնիոսը, սարկավագ Միգդոնիոսը և մի քանի փոխանորդներ: Տաճարի հրկիզումից հետո հրաշքով ողջ մնացած Անթիմոս եպիսկոպոսը նրանց գորացնում էր ուղերձներ առաքելով: Ուղերձներից մեկը Թեոփիլիոս սարկավագի մոտ գտնելով՝ բռնագրավեցին: Հետամուտ լինելով տեղեկանալ եպիսկոպոսի մասին, նրան կտտանք-

ների ենթարկեցին, սակայն սուրբ նահատակը համբերությամբ տարավ բոլոր չարչարանքները, ոչինչ չհայտնելով: Այդ ժամանակ նրա հետ միասին մահապատժի ենթարկեցին նաև նրանց, ում եպիսկոպոսը դիմել էր ուղերձով:

Բայց և այնպես այդ անմարդկային արարքները չվախեցրին քրիստոնյաներին: Նրանք անսասան խոստովանում էին իրենց հավատամքն ու նահատակությամբ վախճանվում հանուն Քրիստոսի: Այդպես այդ ժամանակ չարչարանքներով նահատակվեցին Դորոթեոս, Մարգոնիոս, Միգդոնիոս, Պետրոս, Ինդիս և Գորգոնիոս սուրբերը: Նրանցից ոմանք թրատվեցին, մյուսները՝ ողջակիզվեցին, ողջ-ողջ թաղվեցին հողի մեջ կամ ջրահեղձ արվեցին ծովում: Ռագմիկ Ջինոնը Մաքսիմիանոս կայսրին համարձակ հանդիմանելու համար քարկոծվեց և ապա գլխատվեց: Այդ ժամանակ էր նաև, որ հեթանոսների ձեռքով զոհվեցին նախկին քրմուհի, սուրբ կույս Դոմնան և սուրբ Եվթիմոսը, որոնք հոգում էին, որ սուրբ նահատակների աճյունները թաղվեն:

Անթիմոս եպիսկոպոսը, որ գլխավորում էր Նիկոմեդիայի եկեղեցին, հոտի խնդրանքով հալածանքների ժամանակ թաքնվում էր Նիկոմեդիայից ոչ հեռու, մի գյուղում: Այնտեղից

նա նամակներով դիմում էր քրիստոնյաներին, որոնց մեջ նրանց համոզում էր ամուր մնալ սուրբ հավատի մեջ և չվախենալ չարչարանքներից: Նրա նամակներից մեկը, ուղարկված Թեոփիլոս սարկավագի միջոցով, առգրավեցին և հանձնեցին Մաքսիմիանոս կայսրին: Թեոփիլոսը հարցաքննության ենթարկվեց և տանջամահ եղավ, այդպես էլ չարչարողներին չհայտնելով Անթիմոս եպիսկոպոսի գտնվելու վայրը:

Այնուամենայնիվ, Մաքսիմիանոսին որոշ ժամանակ անց հաջողվեց իմանալ, թե որտեղ է գտնվում սուրբ Անթիմոսը և նա զինվորների ջոկատ ուղարկեց նրան բերելու: Ճանապարհին նրանց պատահեց ինքը՝ եպիսկոպոսը: Ջինվորները չճանաչեցին սուրբին, սակայն նա իր մոտ հրավիրեց նրանց, ճաշով հյուրասիրեց, ապա հայտնեց, որ ինքը հենց նա է, ում փնտրում են: Ջինվորները չզիտեին ինչ անել, ցանկանում էին ազատ թողնել սրբին և կայսրին ասել, թե չգտան նրան: Անթիմոս եպիսկոպոսը սուտ չէր հանդուրժում և դրան չհամաձայնեց: Ջինվորները հավատացին Քրիստոսին և սուրբ մկրտություն ընդունեցին: Ընդ որում սուրբը, այնուամենայնիվ, նրանց ստիպեց կատարել տիրակալի հրամանը:

Երբ Անթիմոս եպիսկոպոսն եկավ Մաքսիմիանոսի մոտ, սա հրամայեց մահապատժի

գործիքները բերել և դնել նրա առջև: Սուրբը հարցրեց. «Մի՞թե դու, կայսր, մտածում ես ինձ վախեցնել մահապատժի գործիքներով: Ոչ, չես վախեցնի նրան, ով ինքն է կամենում մեռնել Քրիստոսի համար: Մահապատիժը վախեցնում է միայն փոքրոգիներին, որոնց համար ժամանակավոր կյանքն է ամենաթանկը»:

Այդ ժամանակ Մաքսիմիանոսը կարգադրեց դաժանաբար տանջել սուրբին և կտրատել սրով: Անթիմոս եպիսկոպոսը մինչև վերջին շունչը ուրախ փառաբանում էր Աստծուն, Ում համար արժանացավ չարչարվելու:

Նույն այս սարսափելի հայրամայիների ժամանակ էլ կայսրի պալատում է հայտնվում արքունական բժշկի՝ Եվփրոսինիոսի աշակերտ պատանի Պանտոլեոնը:

Պանտոլեոնի հայրը՝ Եվստորգեստը, քաղաքի ամենահարուստ և անվանի մարդկանցից մեկն էր: Նա հետևորդ էր հեթանոսական սովորույթների և հավատալիքների: Իսկ պատանու մայրը՝ սուրբ բարեպաշտ Եվբուլան (հուն. բարեխորհուրդ) քրիստոնյա էր, մանկույթունից դաստիարակված քրիստոնեական հավատով: Բուլթանիայում քրիստոնեությունը երևան էր եկել առաքելական ժամանակներում և արդեն առաջին դարերից սկսած այստեղ բազում քրիստոնե-

յաներ կային ոչ միայն քաղաքներում, այլ նաև գյուղերում: Իրենց առաջնեկին ծնողները կոչեցին Պանտոլեոն: Պանտոլեոն անունը նշանակում է «ամեն ինչում առյուծ», քանզի հայրը ենթադրում էր, որ իր որդին քաջությամբ ամեն ինչում առյուծի կնամանվի: Սակայն Եկեղեցու պատմության մեջ սուրբ նահատակը մտավ Պանտելեիմոն անունով, որ նշանակում է՝ ամենաողորմ:

Պանտոլեոնի մայրը՝ Եվբուլան, ամուսնուց ծածուկ մանկանը դաստիարակում էր քրիստոնեական հավատով, սովորեցնելով նրան միակ ճշմարիտ Աստծու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ճանաչողությունը, որդու սրտում խորությամբ արմատավորելով առաքինի կյանքի ու բարի գործերի սերը: Տերը նրան Իր մոտ տարավ, երբ նա տակավին երիտասարդ էր, երբ դեռահաս Պանտոլեոնը դեռ չէր կարող հասուլինել հավատի էությունը և դրան հանձնվել ողջ սրտով:

Պանտոլեոնի հայրը՝ Եվստորգեստը, ցանկանալով իր որդուն բարձրագույն կրթություն տալ, նրան տարավ լավագույն հեթանոսական դպրոցը, որն ավարտելով, Պանտոլեոնը սկսեց բժշկության արվեստ սովորել Նիկոմեդիայում նշանավոր բժիշկ Եվփրոսինոսի մոտ: Ամեն ինչ



արագ ըմբռնող, ընդունակ Պանտոլեոնը շուտով շատ առաջ անցավ իր բոլոր հասակակիցներից և ուսումնակիցներից, ինչպես գրում է նրա առաջին վարքագիր Մետափրաստոսը՝ «նմանվելով արագաթռիչ թռչունի, որն առանց մեծ ջանքի թևածոմ է ամենուր՝ սրաթռիչ ճեղքելով օդը: Ընդ որում նա բարքով բարի ու փափկանկատ էր, վարվեցողությունը և գրույցներում հաճելի, գեղեցկադեմ, բոլորի համար սիրելի էր, բոլորը նրան հրաշամանուկ էին համարում»:

Երբ Պանտոլեոնին ներկայացրեցին Մաքսիմիանոս կայսրին, նա ցանկացավ նրան իր մոտ տեսնել: Պանտոլեոնի համար փայլուն արքունական կյանքի հնարավորություններ էին բացվում: Սակայն Տերը նրան ուրիշ ժառանգություն էր պատրաստում:

Նիկոմեդիայի եկեղեցու հրկիզումից հետո փոքր թվով քրիստոնյաներ էին կենդանի մնացել: Վերապրածների մեջ էին Նիկոմեդիայի քահանաներ՝ սուրբ նահատակներ Երմողայոսը, Երմիպոսը և Երմոկրատոսը: Եկեղեցու այդ հալածանքների ժամանակ նրանք թաքստոցներում էին մնում և չէին դադարում քարոզել քրիստոնեական հավատը:

Հեթանոս պատանի Պանտոլեոնը հաճախ էր անցնում այն տան մոտով, ուր թաքնվում էր սուրբ Երմողայոսը:

Ահա թե ինչպես է նկարագրում սուրբ նահատակ Երմողայոսի հետ պատանու առաջին հանդիպումը Մետափրաստոսը. «Ծերը հաճախ էր տեսնում Պանտոլեոնին: Նրա արտաքին տեսքից, քայլվածքից, շարժումներից, հայացքից ծերը կռահում էր, թե ինչ է կատարվում պատանու հոգու ներսում: Ինչպես խեցուց են ճանաչում նրա մեջ ծածկված գոհար քարը, ծերը հասկացավ, որ պատանին Աստծու ընտրյալ անոթ է, և ջանքի արժանի գործ համարեց որսալ այդպիսի հոգին: Մի անգամ, երբ պատանին սովորականի պես պիտի անցներ մոտերքով, Երմողայոսը դուրս ելավ տնից և տեսնելով Պանտոլեոնին՝ խնդրեց կարճ ժամանակով իր տուն մտնել: Պատանին խոնարհությամբ և հլու-հնազանդ մտավ ծերի մոտ: Ծերը հյուրին իր մոտ նստեցնելով՝ սկսեց հարցուփորձ անել նրա տոհմի և ծնողների մասին, թե նա ինչ հավատ ունի, նաև նրա ամբողջ կյանքի մասին: Պատանին նրան ամեն ինչ մանրամասն պատմեց, նաև հաղորդեց, որ իր մայրը քրիստոնյա էր և մահացել է, իսկ հայրը ողջ է և ըստ հելլենական սովորություն՝ պաշտում է բազում աստվածների: Եվ հարցրեց նրան սուրբ Երմողայոսը. «Իսկ դո՞ւ, բարի մանուկ, ո՞ր հավատից ես ցանկանում լինել, հայրակա՞ն՝ թե՞ մայրական»: Որին Պանտոլեոնը

պատասխանեց. «Իմ մայրը, քանի դեռ ողջ էր, ինձ իր հավատին էր սովորեցնում, և ես կկամենայի նրա հավատին լինել, բայց հայրս ստիպում է ինձ իր հավատով ապրել, ցանկանալով իմ համար արքունիքում տեղ ապահովել»: Մերը հարցրեց, թե ինչ է սովորում Պանտղեոնը: Պատանին պատասխանեց, որ հոր ցանկությամբ ուսանում է Ասկլեպիոսի, Հիպոկրատեսի և Գալլիանոսի արվեստը: Նա ասաց. «Այդպես է հաճելի իմ հորը, բայց նաև իմ ուսուցիչն է հավատարիացնում, թե երբ ես ինչպես հարկն է տիրապետեմ այդ արվեստին, ապա կկարողանամ բուժել ամեն տեսակ մարդկային հիվանդություններ և այդ արվեստի միջոցով մեր մարմնի ցանկացած ցավ հաղթահարել»:

Ինչպես բարեբեր հողում, ծերը սկսեց Աստվածային խոսքերի սերմեր ցանել պատանու սրտում: Նա Աստվածային հավատի մյուռոն էր լցնում այդ բարի անոթի մեջ, ասելով. «Հավատա ինձ, բարի պատանի, ճշմարիտ եմ ասում քեզ, թե Ասկլեպիոսի, Հիպոկրատեսի և Գալլիանոսի արվեստը քիչ ազդեցություն ունի, և նրանց առաջարկած միջոցները դրանք օգտագործողներին քիչ օգուտ կարող են տալ, իսկ այն աստվածներն էլ, որոնց Մաքսիմիանոս կայսրը, քո հայրն ու մյուս հելլենացիները

պաշտում են, իրականում սին հեքիաթներ են, դատարկ մտքերի սնոտի հնարանք: Իսկ միակ ճշմարիտ և Ամենագոր Աստվածը Քրիստոս Հիսուսն է: Եթե հավատաս Նրան, ապա միայն Նրա Ամենասուրբ անունը կանչելով կվտարես ամեն տեսակ հիվանդությունները: Նա կույրերին տեսողություն է տալիս, մեռածներին՝ հարություն, բորոտներին մաքրում է ախտից: Իսկ դեերին, որոնց Մաքսիմիանոսն ու բոլոր հելլենացիները երկրպագում են, Նա մի խոսքով և հրամանով դուրս էր հանում մարդկանցից: Եվ ոչ միայն Նա Ինքը, այլև Նրա հազուստներն էին բժշկող, որովհետև տասներկու տարվա արնահոսությունամբ տառապող կինը, երբ միայն դիպավ Նրա հազուստին, անմիջապես բժշկվեց: Բայց ո՞վ կարող է Նրա հրաշալի գործերը հանգամանորեն թվարկել: Նրա մեծ և սքանչելի գործերի մասին պատմելը նույնն է, թե՛ հաշվել ծովի ավազը, երկնքի աստղերը և ջրի կաթիլները: Նա այժմ էլ իր ծառաների հետ է, որպես նրանց անհաղթ աջակից և օգնական:

Նա մխիթարում է վշտերի մեջ, ազատում փորձանքներից, դուռ բացում նեղությունների մեջ գտնվողների համար, և այս ամենն անում է աղոթքների և խնդրանքների չսպասելով, այլ նույնիսկ կանխելով աղոթքները: Նա իր երկ-

յուղածներին տալիս է ոչ միայն այդ ամենը, այլ նաև հրաշագործելու զորութիւնն է շնորհում, ընդ որում իր հրաշագործելու կարողութիւնից առավել մեծ չափով, ավարտելով դա իր փառավոր Երկնային Արքայութեան մեջ հավիտենական կյանք պարգևելով»:

Քաղցր էին հնչում այս խոսքերը Պանտղեոնի համար: Նա ասաց ծերին. «Այս ամենն ես հաճախ էի լսում իմ մորից և նրան հաճախ էի տեսնում Աստծուն աղոթելիս և կանչելիս, Որին դու քարոզում ես»: Այդ օրվանից սկսած ամեն օր Պանտղեոնը մտնում էր Երմողայոս ծերի մոտ, երկար զրուցում նրա հետ և գնալով ավելի ու ավելի էր հաստատվում Քրիստոսի սուրբ հավատի մեջ:

Մի անգամ ամայի փողոցով Երմողայոսի մոտից վերադառնալիս Պանտղեոնը հանկարծ տեսավ մի մահացած մանկան դիակ: Նա ընկած էր գետնին, իսկ դիակի մոտ սողում էր մի հսկայական օձ: Մեծ նահատակի վարքում այն անվանվում է Եքիզնա: Մետափրաստոսը գրում է. «Մարսափը պատեց Պանտղեոնին, և նա փոքր ինչ հետ ընկրկեց, սակայն սթափվելով մտածեց՝ ահա պատեհ մի առիթ գործով համոզվելու, թե արդյոք Երմողայոս ծերի ասածը ճշմարիտ է: Նա նայեց երկինք և ասաց. «Տեր Հիսուս Քրիստոս, թեև ես անարժան եմ Քեզ կանչելու,

բայց եթե բարեհաճես, ապա Քո ծառան կլինեմ, ցույց տուր Քո զորութիւնը և արա այնպես, որ Քո անունով մանուկը կենդանանա, իսկ օձը սատկի»: Եվ նույն պահին մանուկը կենդանացած ոտքի ելավ, իսկ օձը սատկած ընկավ: Այդժամ Պանտղեոնը, կատարելապես հավատալով Քրիստոսին՝ իր հոգևոր և մարմնավոր աչքերը բարձրացրեց երկինք և օրհնեց Աստծուն, արտասուքով և ուրախութեամբ գոհաբանելով Նրան, որ իրեն կործանարար խավարից տարավ դեպի փրկարար ճշմարտութեան ճանաչողութեան լույսը»:

Աստծու զորութեան ցուցաբերած այդ հրաշքից հետո Պանտղեոնի հոգուց կասկածներն անհետացան:

Անկարող լինելով զսպել իրեն համակած հոգևոր ուրախութիւնը, նա վերադարձավ ծերի տուն, պատմեց նրան կատարվածի մասին, թե ինչպես մահացած մանուկը կենդանացավ Հիսուս Քրիստոսի անվան զորութեամբ, և ինչպես մահաբեր օձը սատկած ընկավ:

Սուրբ Երմողայոսը և Պանտղեոնը շտապեցին այն վայրը, ուր ընկած էր տղան: Մերը տեսավ սատկած օձին և գոհութիւն հայտնեց Աստծուն, որ բարեհաճեց այդպիսի հրաշք գործել: Պանտղեոնը պատրաստ էր Սուրբ Մկրտու-

թյան: Տուն վերադառնալով՝ ծերը մկրտեց պատանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով, և տնային եկեղեցում Պատարագ մատուցելով, նրան Քրիստոսի Մարմնի և Արյան Աստվածային Խորհրդի հաղորդություն տվեց:

Մկրտության Խորհուրդն ընդունելուց հետո Պանտոլեոնը յոթ օր ապրեց ծերի մոտ, «նրա մյուռնոված խոսքերով ուղեկցելով սիրտը, արգասաբեր դարձնելով հոգին և որովայնը շնորհների աղբյուրներով լիացնելով համաձայն Տիրոջ խոսքի, թե՛ Քրիստոսի շնորհով հավատացյալի «որովայնից կենդանի ջրերի գետեր կբխեն», առատորեն հոգևոր պտուղներ տալով ի բարօրություն բոլոր հավատացյալների:

Պանտոլեոնը տուն վերադարձավ միայն ութերորդ օրը: Վախեցած ու տագնապած հորը նա ասաց, որ պալատականներից մեկը ծանր հիվանդացել էր, Եվփրոսինոս բժիշկը նրան յոթ օր խնամում էր, և ինքը հարկադրված էր մնալ հիվանդի մոտ: Մետափրաստոսը գրում է. «Սակայն Պանտոլեոնը սա ասաց ոչ որպես ստույգություն սիրող, այլ առակով ծածկելով ճշմարտությունը, որը հորը բացահայտ հայտնելու ժամանակը դեռ չէր եկել: Ուսուցիչ ասելով նա հասկանում էր ոչ թե Եվփրոսինոսին, այլ Երմոզայոս քահանային, արքայական պա-

լատ էր անվանում այն ներքին շտեմարանը, ուր կատարվեց Աստվածային խորհուրդը, իսկ հիվանդ ասելով նկատի ուներ իր հոգին, Երկնային Թագավորի սիրելիին, որը յոթ օրում հոգևոր բժշկությունը առողջացավ»:

Իսկ Եվփրոսինոս ուսուցչին իր բացակայությունը բացատրեց նրանով, որ գնացել էր տեսնելու այն կալվածքը, որն իր հայրը գնել էր թանկ գնով: Այդպես առակով նա պատմեց Սուրբ մկրտության մասին:

Թեև Սուրբ մկրտությունն ընդունելուց հետո Պանտոլեոնի դրսի գործերն ընթանում էին սովորական կարգով, նա նույն կերպ շարունակում էր բժշկական արվեստն ուսանելը, սակայն ներքուստ երանելի Պանտոլեոնը լցվում էր Աստվածային շնորհով:

Իր մեջ կրելով սուրբ հավատի գանձը, նա համակված էր այն մտահոգությամբ, թե հորը ինչպես հանի հեթանոսության խավարից և բերի Քրիստոսի ճանաչողության լույսին: Պանտոլեոնը սկսեց հոր հետ հաճախ գրուցել հավատի մասին, և ցանկանալով հեթանոսության մեջ նրա վստահությունը սասանել, այնպիսի հարցեր էր տալիս, որոնց հեթանոսական կրոնը պատասխանել չէր կարող: Այսպիսով Պանտոլեոնը իր հոր մոտ կասկածներ էր ծնում

հեթանոսական կրոնի ճշմարտացի լինելու մեջ: Հայրն աստիճանաբար սկսեց դադարել կուռքերը պաշտելուց: Մետափրաստոսը գրում է. «Տեսնելով այդ՝ սուրբ Պանտոլեոնը ուրախանում էր, մեծարում էր Հիսուս Քրիստոսի անունը և նրան գոհություն էր վերառաքում, որ Նա գոնե տատանվող դարձրեց իր հորը, որ «բաժանում էր իր սիրտը» (Հմմտ. Ովս. 10, 2) և արդեն սովորականի պես կուռքերին առատ զոհաբերություններ էր մատուցում»:

Պանտոլեոնը Մկրտություն խորհուրդն ընդունելուց հետո սկզբում հաճախ էր խիստ ցանկություն ունենում ջարդուփշուր անել և ոչնչացնել բոլոր կուռքերը, որոնցով լիքն էր իր հոր տունը: Սակայն չցանկանալով զայրացնել հորը, նա միառժամանակ հեռու էր մնում այդ մտքից: Նա վճռեց, որ հորը Քրիստոսի հավատին պետք է բերել հեզությունը և համբերությունը: Եվ Տերը, որ տվել է հորը պատվելու պատվիրանը, Պանտոլեոնի որդիական այդ զգացումներն ընդունեց որպես իրեն իսկ մատուցված զոհ:

Շուտով Պանտոլեոնին առիթ ներկայացավ հորը հավատի բերելու և իր համար մեծ պարգև վաստակելու:

Մի անգամ տեղեկանալով, թե որտեղ է ապրում երիտասարդ բժիշկը, մի խումբ մարդիկ մի

կույրի տարան այնտեղ, որին քաղաքի բժիշկներից և ոչ մեկը չէր կարողացել օգնել:

Մետափրաստոսը գրում է. «Պանտոլեոնը ասաց նրան. «Դու ծախսել ես քո ամբողջ խնայողությունները և ամբողջն անօգուտ, ուրեմն ի՞նչ կտաս ինձ, եթե բժշկեմ քեզ և դու նորից սկսես տեսնել»»:

Նա պատասխանեց. «Այն ամենն, ինչ դեռ մնացել է իմ մոտ, նույնժամ կընեմ ոտքերիդ տակ»:

Դրան Պանտոլեոնը ասաց. «Աստված՝ լույսերի Հայրը, Իր անարժան ծառայի՝ իմ միջոցով քեզ կտա տեսողության պարգևը, իսկ ինչը որ դու ինձ խոստացար, բաշխիր աղքատներին, երբ այստեղից կատարյալ տեսողությամբ կվերադառնաս»: Լսելով այս, Պանտոլեոնի հայրը սկսեց հետ պահել նրան այդպիսի ձեռնարկումից, ասելով. «Իմ սիրելի որդի, մի՛ ձեռնարկիր մի գործ, որը չես կարող կատարել, որպեսզի անհաջողության դեպքում ծաղրի չենթարկվես, քանզի ի՞նչ կարող ես անել այն բժիշկներից հետո, ովքեր փորձել են բուժել նրան, բայց չեն կարողացել»: Սուրբ Պանտոլեոնը պատասխանեց. «Ինչ ցանկանում եմ գործադրել այս մարդու համար, դա չգիտի ոչ մի բժիշկ, ինձ այդ բանը սովորեցնող Ուսուցչի և նրանց միջև հսկայական տարբերություն կա»: Մտածելով,

Թե որդին խոսում է Եվփրոսինոսի մասին, հայրն ասաց. «Բայց չէ՞ որ քո ուսուցիչն էլ է փորձել բուժել այդ մարդուն և ոչնչով չի օգնել»:

Սրան սուրբ Պանտոլեոնը այսպես արձագանքեց. «Մի փոքր սպասիր, հայր իմ, և գործն ինքը ցույց կտա, թե իրավացի՞ է արդյոք հաջողության մեջ իմ ունեցած վստահությունը»:

Պանտոլեոնը դիպավ կույրի աչքերին, և կանչելով Տեր Հիսուս Քրիստոսի անունը, արտաբերեց. «Անունով Տեր Հիսուսի Քրիստոսի, կուրացածներին լուսավորողի, աչքերդ բաց և տես»:

Եվ նույն պահին կույրի աչքերը բացվեցին և նա տեսավ: Նույն պահին Պանտոլեոնի հայրը՝ Եվստորգիոսը կատարելապես հավատաց Քրիստոսին, Տիրոջը հավատաց նաև տեսողությունը վերագտած կույրը:

«Նրանք ստացան,– ինչպես գրում է Մետափրաստոսը,– կրկնակի տեսողություն՝ մարմնավորի հետ միասին նաև հոգևոր, քանի որ կուրացած էին նաև հոգով՝ լինելով կուռքերի ջերմեռանդ երկրպագուներ»։ Երկուսն էլ՝ և՛ Պանտոլեոնի հայրը, և՛ բժշկված կույրը, նույն այդ ժամանակ մկրտվեցին Երմողայոս քահանայից: Մկրտվելուց հետո Պանտոլեոնի հայրը շտապեց ցույց տալ, թե ինչպիսի անկեղծությամբ է ատում նախկին մոլորությունը: Եվստորգիոսը

Պանտոլեոնի հետ միասին փշրեց բոլոր կուռքերը, որ կային իր տանը, վերածելով մանր կտորտանքների՝ դրանք նետեց խորը փոսի մեջ և ծածկեց հողով, որպես լիակատար մոռացության արժանիների:

Շուտով Պանտոլեոնի հայրը մեռավ, և նրա մահից հետո Պանտոլեոնը կարողացավ իրականացնել իր վաղեմի ցանկությունը: Իր ծառաներին ազատ արձակելով՝ նա առատորեն պարգևատրեց նրանցից յուրաքանչյուրին, իսկ հորից հետո իրեն մնացած ստացվածքը բաժանեց աղքատներին, հիվանդներին, այրիներին, որբերին, թշվառներին:

Նա սկսեց այցելել բանտերն ու զնդանները՝ բաշխելով բանտարկյալներին անհրաժեշտ ամեն ինչ, բժշկում էր հիվանդներին, կարիքավորներին հնարավորություն էր ընձեռնում մոռանալու իրենց աղքատությունը: Նա առատորեն օգնում էր չքավորներին, և, ինչպես գրել է նրա վարքագիրը՝ մարդկանց վերքերն ու հիվանդությունները բժշկելու հետ միաժամանակ բժշկելով նաև նրանց աղքատությունը: Նրա առատաձեռնության ու բարության մասին շուտով հայտնի դարձավ Նիկոմիդիայի բոլոր բնակիչներին, և Պանտոլեոնի մոտ եկող հիվանդների հոսքը մեծացավ, մանավանդ որ նա իր

բժշկուլթյան համար դրամ չէր վերցնում՝ սուրբը բոլորին բժշկում էր ձրի՝ իր աշխատանքի համար առանց վճար վերցնելու: Սակայն մարդիկ նրա մոտ էին գնում ոչ միայն նրա համար, որ նա անվճար էր բժշկում, այլ որպես Նիկոմիդիայում լավագույն բժշկի: միայն նա կարող էր օգնել բժշկելու նրանց: Զարմանալի չէ, որ Նիկոմեդիայի բժիշկներից շատերն ատում էին Պանտոլեոնին: Սկսեցին նրան նախանձել, առիթ փնտրել նվաստացնելու և ստորացնելու:

Մետափրաստոսը գրում է. «Այդ առիթը տվեց Պանտոլեոնի բժշկած կույրը: Այնպես պատահեց, որ նա անցնում էր այդ նախանձողների մոտով: Նայելով նրան, նրանք ասացին իրար. «Սա այն կույրը չէ՞, որին մենք չէինք կարողանում բուժել: Ապա ինչպե՞ս նա տեսողություն ստացավ: Ո՞վ նրան բժշկեց: Ինչպիսի՞ բժշկուլթյամբ և ինչպե՞ս նա կարողացավ հասնել դրան»:

Բժշկվածին մոտ կանչելով՝ նրանք հարցրեցին. «Արդյոք ճշմարիտ է, որ դու հիմա տեսնում ես: Եվ ո՞վ քեզ օգնեց»:

Նա չթաքցրեց ճշմարտությունը և ծածուկ չպահեց բժշկի անունը, այլ ուղղակի ասաց, որ բժշկել է Պանտոլեոնը: Այս լսելով և իմանալով, որ Պանտոլեոնը Եվփրոսինոսի աշակերտն է եղել, նրանք ասացին. «Ճշմարիտ որ մեծ է

մեծ ուսուցչի աշակերտը»: Եվ այս կերպ խոստովանեցին Տեր Քրիստոսի մեծությունը, թեև չէին ճանաչում Նրան, քանի որ Պանտոլեոնը առավել Նրա աշակերտն էր, քան՝ Եվփրոսինոսի: Եվ չնայած նրանք այդպես ասացին, այնուամենայնիվ նրանց սրտերը այրվում էին նախանձից, ու նրանք սկսեցին առիթ փնտրել, թե ինչպես Պանտոլեոնին մեղադրեն կայսեր առաջ: Վերջապես տեսնելով, որ նա այցելում է բանտերում քրիստոնեական հավատի համար ձերբակալվածներին, ու մանավանդ ամեն ինչով օգնում և բժշկում է նրանց, պահանջով դիմեցին Մաքսիմիանոս չարչարողին և ասացին.

«Կա՛յսր, նա, որին դու հրամայեցիր սովորեցնել ամբողջ բժշկական իմաստությունը և կամենում էիր տեսնել քո պալատում, քո բարեհաճությունը ոչինչ է համարում: Չվախենալով քո բարկությունից՝ նա շրջում է գնդաններում ու բժշկում մեր աստվածներին հայհոյող քրիստոնյա բանտարկյալներին: Նա ոչ միայն բաժանում է քրիստոնյաների հավատը, այլ նաև մյուսներին է ներգրավում դրա մեջ: Եթե դու դա չկանխես, ապա շուտով շատերը նրա ուսմունքով հրապուրված՝ կուրանան աստվածներին, և իրենց հիվանդություններից բժշկվելու համար կսկսեն գոհություն մատուցել Քրիստոսին»:

տոսին, ինչպես որ անում է այս բժիշկը, և բոլորը հավատում են նրան»:

Այս ասելով, նրանք ավելացրին. «Եթե ցանկանում ես, ո՛վ կայսր, համոզվել մեր ասածների հավաստիության մեջ, հրամայիր կանչել վերջերս Պանտոլեոնի բժշկած կույրին»:

Մաքսիմիանոսը հրամայեց պալատ կանչել տեսողություն ստացած կույրին և սկսեց նրան հարցուփորձ անել Պանտոլեոնի մասին: Նա իսկապես պատմեց կայսրին, թե ինչպես Պանտոլեոնը սոսկ զիպավ իր կույր աչքերին, կանչեց Քրիստոսի անունը և իր աչքերն իսկույն տեսան: «Հիմա քեզ ո՞վ բժշկեց՝ Քրիստո՞սը, թե աստվածները»,– զայրացած հարցրեց Մաքսիմիանոսը, իսկ տեսողություն ստացած կույրը պատասխանեց.

«Ահա այս բժիշկները, որոնց դու այստեղ տեսնում ես, երկար փորձում էին ինձ բժշկել: Նրանք ինձ չօգնեցին, այլ միայն սպառեցին իմ փողը, որն, ի դեպ, ես ինքս հոժարությունբ ծախսում էի՝ հույս ունենալով աշխարհի լույսը տեսնել: Իսկ Պանտոլեոնը միայն Քրիստոսի անունը կանչելով վերադարձրեց իմ տեսողությունը: Այժմ ի՛նքդ դատիր, տիրակա՛լ, ու՞մ է ինձ պատշաճ համարել իսկապես օգնող, Ասկլեպիոսի աստծուն՝ որին շատերն են կանչում, թե՞

Քրիստոսին, Ում միայն Պանտոլեոնը կանչեց, և Նա նույն պահին ինձ լույս պարգևեց: Իսկապե՛ս, տիրակա՛լ, սա կույրի համար էլ է ակնհայտ»:

Մաքսիմիանոսը, զարմանքի մեջ չիմանալով ի՞նչ առարկել, ընդամենը արտաբերեց. «Մի՛ անմտացիր և իմ մոտ մի՛ արտաբերիր Քրիստոսի անունը: Հիշիր՝ այդ աստվածներն են քեզ տեսողության լույսը պարգևել»:

Բայց տեսողություն ստացած կույրը գերադասեց խոնարհվել առավելապես ճշմարտության առջև, քան՝ կայսրի: Նա այնպես պատասխանեց, ինչպես որ Ավետարանի կույրը պատասխանեց փարիսեցիներին՝ Տիրոջից իր ստացած բժշկության մասին. «Դու նույնպիսի կույր ես, ինչպիսին նրանք էին, և նույնիսկ անկարող ես տեսնելու ճշմարտության լույսը»:

Այս բառերը կայսրին կատաղության հասցրեցին: Մետափրաստոսը գրում է. «Եվ շողոքորթ խոսքերով ապականված ու այլասերված հոգուն որտեղի՞ց կարողություն՝ կրելու ճշմարտության անողոք վճիռը»: Կատաղության մեջ հրամայում է կտրել Քրիստոսին սիրողի գլուխը, դրանով, ինքն էլ չիմանալով, նրան պատեհություն է տալիս նահատակվելով արժանավորությանբ երախտագետ լինել իրեն բժշկած Քրիստոսին:



Ու Հիսուսս Քրիստոսի անվան այս բարի խոստովանողը զնաց անմար լույսի մեջ տեսնելու Նրա դեմքը, Ում երկրի վրա խոստովանեց Նրանից ստացած տեսողության լույսի համար:

Նրա մարմինը սուրբ Պանտղեոնը փրկագնեց սպանողներից և թաղեց հոր կողքին, որ Տիրոջ միևնույն հրաշագործությունը և միևնույն ժամանակ հավատացել էր Նրան, իսկ դա մարմնական հարազատությունից էլ սերտ է»:

Շուտով կայսրը հրամայեց իր մոտ բերել Պանտղեոնին, և նա պալատ տարվելիս սաղմոսում էր. «Իմ օրհնության Աստված, մի՛ լռիր, քանզի ամբարշտի շուրթերը և նենգավորի շուրթերը բացվեցին իմ վրա: Իմ հետ խոսեցին նենգավոր լեզվով և ատելության խոսքերով ինձ պաշարեցին, և մարտնչեցին իմ դեմ առանց պատճառի: Իմ սիրո փոխարեն ատում էին ինձ, բայց ես աղոթում էի: Ինձ չարիքով հատուցեցին բարության փոխարեն և ատելությանը՝ իմ սիրո փոխարեն» (Սաղմ. 108, 1-5):

«Օգնի՛ր ինձ, Տե՛ր Աստված իմ, և փրկի՛ր ինձ քո ողորմությանը: Թող ամոթով պատվեն ինձ չարախոսողները և որպես հագուստով՝ իրենց ամոթով զգեստավորվեն» (Սաղմ. 108, 26, 29):

Նա մարմնով կանգնեց երկրավոր թագավորի առջև՝ մահկանացու և ժամանակավոր, միև-

նույն ժամանակ մտքով չդադարելով անմահ և հավիտենական Երկնավոր Թագավորի առջև կանգնելուց: «Բարի լուրեր չէ, որ ես քո մասին լսեցի, Պանտղեո՛ն,՝ նախ հանդարտ ու հեզոթյամբ ասաց նրան Մաքսիմիանոս կայսրը, իբրև թե դու արհամարհում ես Ասկլեպիոսին և մեր մյուս աստվածներին, իսկ ամբողջ հույսդ դնում ես Քրիստոսի վրա և միայն Նրան ես աստված համարում: Ես բարեհաճ էի քո նկատմամբ, հրամայել էի Եվփրոսինոսին հնարավորինս լավ և արագ քեզ սովորեցնել բժշկական արվեստը, որ դու ինձ դրանով օգտակար լինեիր, իսկ դու... Թերևս մարդիկ երբեմն շատ են դատարկ բաներ խոսում: Ես քեզ կանչել եմ, որպեսզի դու ինքդ պատասխանես այս մեղադրանքներին և զոհ մատուցես մեր մեծ աստվածներին»: «Ես իրոք մերժում եմ Ասկլեպիոսին և մյուս աստվածներին և փառաբանում Տեր Հիսուս Քրիստոսին», պատասխանեց Պանտղեոնը,՝ ես ճանաչեցի, որ Նա է ճշմարիտ Աստվածը, իմ խոստովանած Աստված երկինքն արարեց, երկիրը հաստատեց, մեռյալներին հարույնում էր տալիս, կույրերին՝ տեսողություն, բորոտներին՝ մաքրություն, անդամալուծներին՝ հաստատուն առողջություն, ընդ որում տալիս էր միայն հոժարելով և միայն խոսքով:

Չգիտեմ կատարե՞լ են արդյոք ձեր աստվածները այսպիսի որևէ բան, և առհասարակ կարո՞ղ են ինչ-որ բան անել, բայց եթե ցանկանում ես, տիրակալ, եկ հիմա գործով ստուգենք, թե ում հավատն է ճշմարիտ: Թող այստեղ բերեն ուրևէ հիվանդի, որին բժիշկները հրաժարվում են բուժել, թող գան նաև ձեր քուրմերը և սկսենք կանչել, նրանք՝ իրենց աստվածներին, ես՝ իմ խոստովանած Աստծուն: Որ աստծուն կանչելով որ հիվանդությունը հեռանա, նա էլ թող ճանաչվի և երկրպագվի որպես Միակ ճշմարիտ Աստված, իսկ մյուս աստվածներին քարկոծենք և մոռացություն մատնենք»:

Կայսրը համաձայնեց: Պալատ բերեցին մի հիվանդի: Երկար տարիներ ի վեր նա չէր կարողանում շարժվել և մահճում պառկած էր ինչպես մի անզգա գերան:

Մետափրաստոսը գրում է. «Եկան սնտոի աստվածների է՛լ ավելի սնտոի քուրմերն ու ասացին սուրբ Պանտոլեոնին»: «Առաջինը դո՛ւ կանչիր քո Քրիստոսին, իսկ հետո նաև մենք կկանչենք մեր աստվածներին»:

Իսկ նա ի պատասխան ասաց. «Ո՛չ, նախ դո՛ւք կանչեք, դուք շատ եք, եթե ձեր աստվածները լսեն և բժշկեն հիվանդին, ինձ արդեն պետք չի լինի կանչել իմ Աստծուն»:

Նրանք համաձայնեցին և սկսեցին կանչել՝ մեկն՝ Ասկլեպիոսին, մեկը՝ Դիոսին, մեկը՝ Դիանային... «Ինչ բժշկություն կարող էին տալ այդ խուլ ու համբերը»:

Եվ չտվեցին, չնայած իրենց ուղղված երկար և բազում աղերսներին, իրենց երկրպագողներին ցույց տալով, որ իրենք ընդամենը քարեր են: Կայսրն ասաց. «Հիմա էլ դու արի և քո Աստծուն կանչելով՝ այս մարդուն առողջացրու, եթե կարող ես»:

Սուրբ Պանտոլեոնը, աչքերն երկինք հառելով և իր միտքը նույնպես այնտեղ բարձրացնելով՝ սկսեց աղոթել. «Տե՛ր, լսի՛ր իմ աղոթքը և իմ հեծեծանքը թող քեզ մոտ գա: Մի՛ չըջիր քո երեսն ինձանից: Այն օրը, երբ ողբում եմ, ինձ խոնարհեցրո՛ւ Քո ականջը և շուտով լսի՛ր ինձ. (Սաղմ. 101, 2-3) և հայտնիր Քեզ չճանաչողներին և անգո աստվածներ պաշտողներին, որ Դու, ամենակարող Թագավորդ՝ ի զորու ես ամեն ինչ անել և Քեզ համար անհնարին ոչինչ չկա»:

Այսպես աղոթելով, նա բռնեց անդամալույծի ձեռքից և գոչեց. «Տեր Հիսուս Քրիստոսի անունով վե՛ր կաց և առողջացի՛ր»: Եվ խոսքը իսկույնս եթ գործի վերածվեց: Անդամալույծը վեր կացավ, կարծես երբեք էլ հիվանդ չէր եղել:

Տեսնելով նման հրաշքը՝ բազում կուսակազմներ հոգով հառնեցին ու դարձի եկան և հրաժարվելով իրենց նախկին մոլորությունից, հավատացին Տիրոջը և դիմեցին անսուտ Աստծուն, իսկ պիղծ քրմերին, որ անբուժելի հիվանդ էին մոլեգին կուսակազմությամբ, ճշմարտության լույսը չհասավ:

Ատամները կրճտացնելով՝ նրանք շրջապատեցին Մաքսիմիանոսին և կատաղի ցասումով նրան բորբոքեցին ընդդեմ սրբի՝ ասելով. «Եթե նրան ողջ թողնես, մեր աստվածները կմոռացվեն, զոհաբերությունները կզաղարեն, հավատը կծանակվի: Քրիստոնյաները մեզ իրենց կենթարկեն, նրանց գործերը կծաղկեն, իսկ մեր ունեցածը ոտնակոխ կլինի: Նրան կորստյան մատնիր ինչքան հնարավոր է շուտ»: Մաքսիմիանոսը, լսելով նրանց, կրկին կանչեց իր մոտ Պանտոլեոնին և խոսեց արտաքուստ բարեհամբույր ու բարյացկամորեն. «Լսի՛ր ինձ, Պանտոլեո՛ն, քեզ բարի խորհուրդ տվողին, մի՛ խորտակիր քո պատանեկության դալար հասակը: Եթե դու անհնազանդություն ցուցաբերես, քեզ սպասում են բազում և սարսափելի տանջանքներ»:

Սուրբ Պանտոլեոնը դրան պատասխանեց. «Մի՛ հուսա, ո՛վ տիրակալ, բարությունը ինձ

հրապուրել կամ վախեցնել սպառնալիքներով, քանզի բարիքներից ի՞նչ կարող է գերել կամ երկրային ինչպիսի՞ վախ կարող է վախեցնել նրան, ով ոչ միայն պարզապես չի երկնչում մահվանից, այլ երանությամբ և բաղձանքով գերադասում է մեռնել հանուն Քրիստոսի: Հանուն Տիրոջ տանջանքներ կրելուց չեմ վախենում, այնքա՛ն հեռու եմ այդ վախից, որ մեծ զրկանք պիտի համարեմ, եթե չկրեմ ահավոր տանջանքներ, և այդ առումով իմ նկատմամբ ցուցաբերած զիջումը կընդունեմ որպես ծայրահեղ խստասրտություն: Արդ, մի՛ հուսա, տիրակա՛լ, համոզել կամ վախեցնել ինձ և դրանով շեղել ինձ ամենացանկալի վկայությունից, որի հավաստիություն մեջ ես համոզվեցի աստվածային նշաններով: Դրանով ես կանարգեի իմ հորը և իմ մոր աստվածասիրությունը, որը մանկությունս հասակում պատմել է ինձ քրիստոնեական բարեպաշտության կանոնների մասին, և որի հետ ձգտում եմ հանգիստ գտնել հավիտենական օթևաններում»:

Մաքսիմիանոսը հասկացավ, որ սուրբ Պանտոլեոնին համոզել՝ նույնն է, թե փորձել ցանցով օդ որսալ կամ ձեռքերով բռնել ամպերի վրայով սլացողին:

Կորցնելով խոսքով համոզելու հույսը՝ Մաքսիմիանոսը որոշեց նրան չարչարանքների են-

Թարկել, ինչը բռնակալության գործ էր, այլ ոչ թե իմաստության և բանականության:

Այնուհետև Մետափրաստոսը գրում է. «Կայսրը հրամայում է նահատակին կախել ծառից և նրա մարմինը քերել երկաթյա ճանկերով, իսկ կողերը խանձել վառվող մոմերով: Իսկ նա, ուշադրություն չդարձնելով վերքերի և այրվածքների վրա, այլ մտքով համբառնալով ու աչքերը երկինք հառելով առ Ամենակարողի օգնությունը, աղոթում էր. «Տե՛ր Հիսուս Քրիստոս, ինձ ընդառաջ ել այս ժամին և տո՛ւր ինձ համբերություն, որպեսզի մինչև վերջ կարողանամ կրել ամեն տեսակ տանջանքները»: Եվ նույնժամ երևաց Փրկիչը, Քրիստոս Տերը, հայտնվելով ծեր Երմողայոսի կերպարանքով, որպեսզի նրան մխիթարի և վերականգնի նրա ուժերը: «Մի՛ վախեցիր, ես քեզ հետ եմ՝ ինչպես սկզբից նաև առաքյալներին ուխտեցի՝ այն ամենում, ինչ որ դու կրում ես, չարչարվելով իմ համար»: Այսպես էր նրան մխիթարում Տերը: Եվ այդժամ, որպես ապացույց նրա ներկայության, տանջողների ձեռքերը թուլացան, երկաթյա ճանկերը նրանց ձեռքերից դուրս պրծան և ընկան գետնին, մոմերը հանգան: Կայսրը հրամայեց տանջանքները ընդհատել, նահատակին իջեցնել ծառից ոչ այն պատճառով, որ

գլխաց նրան, այլ որովհետև չգիտեր ինչ անել նրա հետ, ավելի շուտ դրան դրդեց վերին ուժը: Այնուհետև, դիմելով նահատակին, հարցրեց. «Այդ ի՞նչ մոգական խորամանկություն ունես, Պանտոլեոն, որ մոմերը ինքնուստինքյան հանգան և ծառաները ուժասպառ եղան»: Իսկ նահատակը պատասխանեց նրան. «Դա մոգություն չէ, դա Իր ամենակարող գորությունը կատարում է Քրիստոս, Ով կանգնած է իմ կողքին»: Կայսրը ասաց. «Իսկ եթե ես ավելի խիստ չարչարանքների ենթարկեմ քեզ, այն ժամանակ ի՞նչ կլինի...»: «Ավելի խիստ չարչարանքներ կրելով, ես նրանից առավել մեծ պարգև կստանամ, իսկ դու ամոթահար կլինես», - պատասխանեց Պանտոլեոնը: Լսելով այդ, Մասքմիմիանոսը հրամայեց բերել մի մեծ կաթսա, նրա մեջ հալեցնել արծիճ, նահատակին գցել նրա մեջ: Երբ արծիճը հալվեց, Պանտոլեոնին մոտեցրին կաթսային, և նա իր աչքերը դեպի երկինք հառելով, գոչեց. «Աստվա՛ծ, երբ աղաչեմ Քեզ, աղոթքս լսի՛ր, թշնամու ահից փրկի՛ր ինձ: Թաքցրու ինձ չարագործների ամբոխից և անօրենություն գործողների բազմությունից» (Սաղմ. 63, 2-3):

Այսպես էր աղոթում նա, և այդժամ կրկին սուրբ ծեր Երմողայոսի կերպարանքով նրան

Հայտնվեց Տեր Քրիստոս և նրա հետ միասին իջավ կաթսայի մեջ: Դրանից հետո կրակը հանգավ, արճիճը տեղնուտեղը սառեց, իսկ նահատակը կրկին աղոթք բարձրացրեց առ Աստված և սաղմոսեց. «Ես Աստծուն ձայն տվի, և Տերն ինձ լսեց: Երեկոյան, առավոտյան ու կեսօրին պատմեցի ու խոսեցի, և նա իմ ձայնը կլսի»: (Սաղմ. 54, 17-18): Կաթսայի մոտ բոլոր կանգնածները տեսան այդ և զարհուրեցին ապշահար:

Բայց նույնիսկ այդ հրաշքը խելքի չբերեց Մաքսիմիանոսին, նահատակի նկատմամբ ատելու թյուրեմից այրվելով, նա խորհում էր, թե ինչպես ստիպեր Պանտոլեոնին ուրանալ քրիստոնեական հավատը: Կայսրի հրամանով Պանտոլեոնին նավակ նստեցրին, պարանոցից քար կապեցին, և փիղից հեռու լողալով, ջուրը նետեցին:

Բայց մինչ ծառաները, կայսրի հրամանը կատարելով, լողում էին դեպի փի, խեղդվող մեծ նահատակի դիմաց կանգնեց Քրիստոսը սուրբ Երմոդայոսի կերպարանքով և նույնժամ քարին հրամայեց լողալ ջրի վրայով, ինչպես ծառի տերև, իսկ նահատակի ձեռքից բռնելով, ինչպես երբեմն Պետրոս առաքյալին՝ տարավ ջրերի վրայով:

Այդ Փրկիչը Նա էր, Ում «Ճանապարհները ծովում են, շավիղները՝ Հորդառատ ջրերում, և... հետքերը չեն երևում» (Սաղմ. 76, 20): Պանտոլեոնը այդպես քայլում էր ջրերի վրայով, գովերգելով իրեն Փրկողին, մինչև որ դուրս եկավ փի և կանգնեց Մաքսիմիանոսի առաջ: Նրան ողջ տեսնելով՝ կայսրը բղավեց. «Դու մոգ ես, Պանտոլեոն, դու կախարդեցիր նույնիսկ ծովը»: «Նաև ծովն է ենթարկվում իր Տիրոջը և կատարում Նրա կամքը», - պատասխանեց Պանտոլեոնը: «Մի՞թե դու կառավարում ես նույնիսկ ծովը», - զարմացած հարցրեց կայսրը. «Ո՛չ ես, այլ իմ Տերը՝ Քրիստոս, - պատասխանեց Պանտոլեոնը, - բոլոր երևելի և աներևույթ արարածների Արարիչն ու Տերը: Նա, ինչպես երկնքին և երկրին, այնպես էլ ծովին է իշխում: Եվ ամենայն գոյ հնազանդվում է Նրան ավելի, քան քեզ քո ծառաները, կայսր»:

Այնուհետև բռնակալը, դեռևս հուսալով համոզել, որ սուրբ նահատակը ուրանա Քրիստոսի ճշմարտությունը, հրամայեց որպես կեր՝ նրան նետել գազանների առջև: Ողջ քաղաքը շտապեց այդ ներկայացմանը, ցանկանալով տեսնել, թե գազանները ինչպես պիտի հոշոտեն գեղեցիկ և անմեղ պատանուն: Բերեցին սուրբ նահատակին, եկավ կայսրը:

Եվ դարձյալ, ցանկանալով ահաբեկել սրբին, խորամանկություն և նենգություն գործադրելով, ասաց նրան, ցույց տալով գազաններին. «Դրանք քեզ համար և քո կորստյան համար են պատրաստ, Պանտուկոն: Եթե դու փոքր-ինչ խղճում ես քեզ, լսիր ինձ և ցույց տուր, որ դու դեռ բավականաչափ խելամիտ ես, որպեսզի գերադասես կյանքը մահվանից, ուրախությունները և զվարճանքները՝ տառապանքներից, փառքն ու պատիվը՝ անպատվությունից»: Սուրբը դրան պատասխանեց. «Եթե նախկինում, երբ դեռ չէի ստացել այսպիսի աստվածային հոգածություն, ես չէի հակվում քո համոզմունքներին, ապա հիմա, երբ ստացա իմ նկատմամբ Տիրոջ այսպիսի խնամք, արդյոք կլսե՞մ քեզ, դու ի՞նչ ես գազանների կատաղությամբ ինձ վախեցնում: Նա, Ով քո չարչարող ծառաների ձեռքերը թուլացրեց, կրակից խլեց նրա այրող զորությունը, հրով հալած արճիճը վերածեց սառը ջրի, ծովում իմ ոտքերի համար ճանապարհ պատրաստեց, կարող է նաև հիմա գազաններին հնազանդեցնել և նրանց ոչխարներից ավելի հեզ դարձնել»:

Եվ արդարև գազանների մոտ գնաց ոչ մի խռովք և տատանում չցուցաբերելով: Իսկ նրա

հետ էր կրկին նրա մշտական Օգնականը՝ Երմոդայոսի կերպարանքով՝ ներշնչելով նրան չկորցնել արիությունը և համարձակությունը:

Նահատակին հրեցին այդ մահապատժի վայրը և բռնակալի հրամանով գազաններին բաց թողեցին նրա վրա:

Ահա մոտենում են նրան գազանները: Բոլոր ներկաները, տեսնելով այդ, մտածում էին, որ նա անմիջապես կհոշոտվի, բայց այդպես չէր վճռել Նա, Ով ասաց Իրեն ապավինողներին. «Բարձրյալին քեզ ապավեն դարձրիր, չարիքը չի հասնի քեզ, և տանջանքները չեն մոտենա քո տան հարկին... Դու կքայլես իժերի ու քարբերի վրայով, ոտքով կկոխոտես առյուծին ու վիշապին» (Սաղմ. 90, 9-10, 13):

Եվ ապավինությունը ամոթով չթողեց հավատացածին: Գազանները այնքան հեռու էին Աստծո սրբին որևէ վնաս հասցնելուց, որ կարծես ոչ թե բանականությունը զուրկ գազաններ էին, այլ բանական էակներ: Նրանք ակնածանքով մոտեցան նահատակին, փաղաքշանք էին սպասում նրանից, լիզում էին նրա ոտքերը և մրցում էին իրար հետ, թե նախ որ մեկը մոտենա նրան, և մոտեցողը չէր հեռանում նրանից, մինչև որ նահատակը իր ձեռքը չդներ և չօրհներ նրան: Եվ այդժամ անակնկալ մի գործ

կատարվեց: Ներկաները կատարված հրաշքից զարմացած՝ բացականչեցին. «Մեծ է քրիստոնյաների Աստվածը. նա է միայն ճշմարիտ Աստվածը: Թող ազա՛տ արձակվի անմեղ և արդար պատանին»:

Իսկ ինչ ասենք կայսեր մասին, որն ի՛նքն էր միայն մնում որպես գազան, բոլոր գազաններից ավելի անողոք: Լցված ցասումով և կատաղով թյամբ՝ նա մերկացած սրերով զինվորներ է դուրս բերում Քրիստոսին փառաբանողների վրա: Եվ շատերը, ովքեր հավատացին Տեր Քրիստոսին, կոտորվեցին: Այնուհետև նա իր բարկով թափեց նաև գազանների վրա, և հրամայեց նրանց բոլորին ոչնչացնել, կարծես նախանձելով նրանց ցուցաբերած բանական ունակությանը և չտանելով նրանցից իրեն հասած հանդիմանությունը: Տեսնելով այս՝ սուրբ նահատակը գոչեց. «Փա՛ռք Քեզ, Քրիստոս Աստված, որ ոչ միայն մարդիկ, այլ նաև գազաններն են մեռնում Քեզ համար»: Եվ կայսրը խայտառակ ներկայացման վայրից գնաց իր պալատը, ողբալով և գազազելով, իսկ նահատակին հրամայեց բանտ նետել:

Այնուհետև ազգականները Քրիստոսի անվան համար զոհվածներին վերցրեցին և պատ-

վով թաղեցին, իսկ գազանները թողնվել էին բաց տեղում, շներին և գիշակեր թռչուններին որպես կերակուր: Նրանք շատ օրեր ընկած մնացին այնտեղ, բայց ոչ մի շուն և ոչ մի թռչուն չգիպավ նրանց, իսկ նրանց մարմինները չեն թարկվեցին ապականություն:

Տերը այնպես տնօրինեց, որ է՛լ ավելի պատվի իր նահատակին, ընդ որում այնպես, որ անհավատներին բերի հավատի, իսկ հավատացյալներին հաստատի հավատի մեջ:

Բայց անմիտ կայսրը հրամայեց խորը փոս փորել և այնտեղ հորել կոտորված գազաններին, որոնք հանդես էին եկել որպես իր անմտություն հանդիմանիչներ :

Տարակուսած եղածի պատճառով՝ Մաքսիմիանոսը ասաց. «Ուրիշ ի՞նչ անեմ Պանտոլեոնի հետ»:

Ծառաներն ասում են նրան. «Թող անիվ պատրաստեն և բարձրացնեն այն բարձունքի վրա, հետո Պանտոլեոնին անիվին կապելով, բաց թողնեն զառիվայրից: Անիվը ցած գլորվելով՝ նրան կտոր-կտոր կանի»:

Բայց Աստված, որ տեսնում է Իրեն սիրողներին, նաև այստեղ չլքեց Պանտոլեոնին, այլ պահպանում էր նրան որպես Իր սիրելի զավակի:

Մինչ պատրաստվում էր անիվը, Պանտոլեոնին պահում էին բանտում հսկողութայն տակ: Իսկ երբ անիվը պատրաստվեց, կրկին հավաքվեց ժողովրդի բազմությունը: Եկավ և կայսրը: Բերեցին սուրբ նահատակին և սկսեցին կապել նրան անիվից: Իսկ սուրբ նահատակը այդ ժամանակ սաղմոսներ էր երգում, աղոթքով Տիրոջն օգնություն կանչելով: Իսկ Տերը մոտ էր, և երբ անիվը ուղղորդեցին և հրեցին ցած, քանդեց կապանքները, և նահատակը մնաց իր տեղում անվնաս, իսկ անիվը ինքն իրեն գլորվեց և հարվածեց բազում անհավատների:

Այսպես է ճանաչվում «Տերը դատաստան անելով, և մեղավորները կպատժեն ըստ իրենց ձեռքի գործերի» (Սաղմ. 9, 17): Այսպես՝ «Աստված վրեժխնդիր, Դու հայտնվեցիր» (Սաղմ. 93, 1):

Վախը ցնցեց ողջ քաղաքը այդ զարմանալի գործերի պատճառով, որոնցով Աստված փառավորվում է Իր սրբի մեջ: Զարմացավ նաև կայսրը, բայց բռնված չարությունք և ամբարշտությունք, ընդունակ չէր ընկալելու հավատի լույսի անգամ մի փոքր շողը: Այդ ընթացքում նա սկսեց սուրբին հարցուփորձ անել. «Ո՞վ է եղել քո ուսուցիչը, ո՞վ է սովորեցրել քեզ քրիստոնեությունը»: Սուրբ նահատակը ասաց.

«Քրիստոսի հավատն ինձ ուսուցանել է սուրբ ծերը՝ երեց Երմողայոսը»:

«Իսկ որտե՞ղ է նա, հարցրեց կայսրը, ու գում եմ տեսնել նրան»:

Սուրբ նահատակը Երմողայոսի անունը այդպես չիտակ և անթաքույց նշեց՝ վստահ լինելով, որ նման լուսատուին չի կարելի անհայտություն մեջ մնալ: Սուրբ Պանտոլեոնը ենթադրում էր, թե սուրբ Երմողայոսի ժամանակն էլ է եկել զարդարվելու նահատակության պսակով, բայց դրա հետ միասին հույս էր տածում, որ նրա խոսքը բարերար ազդեցություն կունենա չարչարողի վրա:

Ահա թե ինչ ասաց Պանտոլեոնը կայսրին. «Եթե կարգադրես, ես կկանչեմ նրան քո մոտ»:

Սուրբին բաց թողեցին երեք գինվորների ուղեկցությամբ: Եկան այն տունը, որտեղ պատսպարվում էր սուրբ Երմողայոսը: Նա, տեսնելով Պանտոլեոնին, հարցրեց. «Ի՞նչ կա, որդյակ իմ, և ինչո՞ւ ես եկել»:

Սուրբ նահատակը պատասխանեց. «Կայսրը կանչում է քեզ, տեր հայր իմ»:

Մերն արձագանքեց. «Ես գիտեի՛ դա, ժամանակը եկավ որ ես էլ չարչարվեմ Քրիստոսի համար, այդ մասին Նա Ինքը հայտնեց ինձ այս գիշեր»:



Այս ասելով, ծերը ուրախությամբ քայլեց նահատակի ետևից և կանգնեց կայսեր առաջ:

Նրան տեսնելով՝ կայսրը հարցրեց, թե ո՞վ է նա և ի՞նչ է անունը:

Երմողայոսը ասաց իր անունը, իսկ անվան հետ չթաքցրեց նաև իր քրիստոնեական հավատը: Կայսրը հարցրեց, նա գիտի՞ արդյոք նաև ուրիշ քրիստոնյաների: Ծղմարտություն սիրողը չթաքցրեց նաև այդ, անվանելով Երմիպոսին և Երմոկրատոսին: Կայսրը հրամայեց բերել նաև նրանց, և երբ նրանք եկան ու կանգնեցին Երմողայոսի կողքին, հարցրեց. «Այդ դո՞ւք եք Պանտոլեոնին շեղել աստվածներին երկրպագելուց»:

Նրանք պատասխանեցին. «Մեր Քրիստոս Աստված Ինքն է կանչում դեպի Իրեն, կուսակաշտուկության խավարից հանելով դեպի Իր գիտության լույսը»:

Կայսրը հրամայեց նրանց լուել, ընդ որում ավելացրեց. «Եթե ուզում եք ձեր այդ նախկին մեղքի համար ներում ստանալ, իմ սիրելիների թվին դասվել և մեծ պատիվների արժանանալ, Պանտոլեոնին համոզեցեք նախկինի պես աստվածներին զոհաբերություն մատուցել: Նրան այսպես պատասխանեցին. «Ինչպե՞ս կարող ենք մենք այդ անել, երբ ինքներս էլ ենք

նրա հետ միասին ցանկանում մեռնել Քրիստոսի, մեր Աստուծո համար: Ո՛չ, կայսր, ո՛չ նա, ո՛չ մենք չենք ուրանա Քրիստոսին և խուլ ու անհոգի կուռքերին զոհեր չենք մատուցի: Այս ասելով՝ նրանք իրենց միտքը դարձրեցին առ Աստված և, աչքերը երկինք հառելով, սկսեցին աղոթել: Փրկիչ Տերը հայտնվեց նրանց, և այդ տեղը աղմուկով ցնցվեց:

Այս տեսնելով, կայսրը, կարծես ցնորվելով, գոռաց. «Այդ աստվածները բարկացան և ցնցեցին երկիրը»: Սուրբ Պանտոլեոնը որքան իմաստությամբ, նույնքան և արիաբար դրան արձագանքեց. «Իսկ ի՞նչ կասես, եթե քո աստվածներն իրենք էլ գետին ընկան»: Դեռ չէր հասցրել ասել այդ իր բառերը, երբ պալատականներից մեկը վազեց և լուր տվեց կայսրին հենց դրա մասին. «Ո՛վ տիրակալ, աստվածները ընկան և փշրվեցին»:

\*\*\*

Կայսրը սուրբ Պանտոլեոնին դատապարտեց սրով թրատելու, հետո հրամայեց այրել նրա մարմինը: Զինվորները բռնեցին Պանտոլեոնին և քաղաքից դուրս տարան թրատելու: Սուրբը ուրախությամբ էր գնում մահվան, վստահ լինելով, որ բոլոր չարչարանքների փոխարեն

մխիթարություն կգտնի Երկնքում: Գնում էր  
և երգում Դավթի երգը. «Մանկուլթյունիցս ի  
վեր բազում անգամ մարտնչեցին իմ դեմ, բայց  
չհաղթեցին ինձ: Մեղավորներն հարվածեցին  
իմ թիկունքին, շարունակեցին անօրենուլթյուն-  
ներն իրենց: Տերն արդար է, մեղավորների պա-  
րանոցը նա կխորտակի» (Սաղմ. 128, 2-4):

Նահատակին տարան քաղաքից հեռու, այն  
վայրը, որտեղ Տերը հաճեց պատրաստել իր ծա-  
ռայի վախճանը: Աստված այդժամ այդտեղ էլ  
հանուն Իր սուրբի իր հրաշքը գործեց նախորդ-  
ներից ոչ պակաս: Այդ վայրում կանգնած էր մի  
հին ձիթենի: Հենց այդ ձիթենուց էլ կապեցին  
նահատակին: Զինվորներից մեկը սրով հար-  
վածեց նրա պարանոցին: Բայց հարվածը չու-  
նեցավ ոչ մի ազդեցություն, դանակի բերանը  
մոմի պես փափկեց, և սրբի պարանոցի վրա ոչ  
մի փոքր իսկ հետք չմնաց: Սարսուռը պատեց  
մահապատիժը իրագործողներին: Բացականչե-  
լով՝ մեծ է քրիստոնյաների Աստվածը, նրանք  
ընկան սրբի ոտքերի առջև, և եթե մինչ այդ  
Պանտղեոնին ապրելու անարժան էին համա-  
րում որպես ամոթալի մահվան դատապարտ-  
վածի, սկսեցին նրան աղաչել ողորմելու և բա-  
րեխոսելու Աստծու առաջ, խոստովանելով ի-  
րենց հավատը առ Քրիստոս և զղջալով, որ ան-

գիտուլթյամբ հանդգնեցին ձեռք բարձրացնել  
նրա վրա: Սուրբ նահատակը նրանց ոչ միայն  
ներեց այն ամենը, ինչ արել էին իրեն, այլև  
Տեր Քրիստոսից նրանց համար սկսեց ողորմու-  
լթյուն հայցել: Իսկ երբ նա աղոթում էր, ձայն  
լսեց ի վերուստ, որ հավաստիացնում էր, թե՛  
խնդրածը կկատարվի, և որը ավետում էր նրա  
անվան փոփոխումը. այսուհետև դու կանվան-  
վես ոչ թե Պանտղեոն, այլ Պանտելեիմոն: Այս  
անունով Տերը կոչեց նրան, հայտնապես շնորհ  
տալով ողորմելու բոլորին, ովքեր իր մոտ կգան  
ամեն տեսակ փորձանքներում և վշտերում:

Լսելով այդ ձայնը և հավաստիանալով, թե  
ինչպիսի շնորհի արժանացավ, սուրբ Պանտե-  
լեիմոնը անսահման ուրախուլթյամբ դիմեց մա-  
հապատիժը ի կատար ածողներին, նրանց կոչե-  
լով անհապաղ կատարելու այն, ինչ հրամայված  
է բռնակալից: Նրանք հրաժարվում էին, պնդե-  
լով, թե ոչ մի կերպ չեն կարող իրենց ստիպել  
նրա վրա ձեռք բարձրացնել: Իսկ երբ սուրբը  
նրանց հավաստիացրեց, որ այդպիսին է Աստծո  
կամքը, և որ եթե նրանք կատարեն այդ, ապա  
նահատակուլթյան հաղորդակից կդառնան, իսկ  
եթե չկատարեն, ապա ոչ մի ողորմուլթյուն չեն  
ստանա Տեր Քրիստոսից: Այդժամ նրանք, ոչ  
առանց տատանումների, համաձայնեցին անց-

ներ այդ ոչ հեշտ գործին: Բայց մինչ այդ ցանկացան հայտնել իրենց լիակատար ակնածանքը սրբի նկատմամբ՝ նրա բոլոր անդամները համբուրելով, և այդժամ միայն անցան գործի, հրամայելով իրենցից մեկին սրով կտրել նահատակի գլուխը:

Եվ կրկին հետևեց հրաշքը հրաշքի ետևից: Տիրոջը հաճելի էր է՛լ առավել փառավորել այսքան չարչարանքներով իրեն փառավորող նահատակին: Քանզի արյան փոխարեն սրբից կաթ հոսեց: Իսկ ամբողջ ձիթենին, որին նա կապված էր, արմատից մինչև գագաթը ծածկվեց պտուղներով: Տեսնելով այդ, ներկաներից շատերը հավատացին Քրիստոսին: Երբ դա հասավ բռնակալ կայսեր ականջին, նա հրամայեց այդ ծառը կտրել, մասերի բաժանել և կրակի մեջ այրել նահատակի մարմնի հետ, որը մինչ այդ էլ էր հրամայված կրակի մատնել: Հրամանը իրագործվեց: Երբ կրակը մարեց, հավատացյալները մոտեցան և սրբի մարմինը գտան կրակից անվնաս և նրան բարեպաշտությամբ և սրբազգացությամբ թաղեցին թրատման վայրից ոչ հեռու մի դաշտում, որը պատկանում էր ոմն Ադամանտիոս Սխոլաստիկի:

Նահատակի մտերիմներ Լավրենտիոսը, Վասոյը և Պրավիանոսը, որոնք անբաժան հե-

տևում էին նրան չարչարանքների ամբողջ ընթացքում, տեսնում էին այդ ամենը և լսեցին Երկնքից եկած ձայնը, գրեցին նրա վարքը, որը հանձնեցին եկեղեցիներին ի հիշատակ նահատակի և ի խրատ մեծարողների և լսողների, ի փառս մեր Քրիստոս Աստծո, որ Հոր և Սուրբ Հոգու հետ փառաբանվում է այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:



Ուրախացի՛ր, բոլոր կրքերին հաղթող, ուրախացի՛ր գարդարվածդ շնորհապարզ անկրքությամբ, ուրախացի՛ր քեզ մերձեցողներին ուրախությամբ լիացնող, ուրախացի՛ր Քրիստոսի շնորհով փութով բոլորին բժշկող: Ուրախացի՛ր, մե՞ծ նահապակ և բժիշկ Պանտելիմոն:

*Օրհներգից*

**ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ ԵՎ ԲԺԻՇԿ  
ՊԱՆՏԵԼԵԻՄՈՆԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ՝  
ՀԱՎԱՔՎԱԾ ՍՎՅԱՏՈԳՈՐԵՑԻ ԿՈՂՄԻՑ**

«**Ի**նձ փառավորողին կփառավորեմ», – ասում է Իր Սրբության մեջ Սուրբ Աստված (Ա. Թագ. 2, 30): Եվ սուրբ նահատակ Պանտելեիմոնը, խոսքով ու գործով կենդանություն օրոք Տիրոջը փառավորելով, իսկապես փառավորված է և փառավորվում է Նրանից երկնքում և երկրի վրա: Սուրբ վկային կենդանության օրոք ճոխացնելով անճառելի հրաշքների շնորհով, ամենագոր Աստված չի դադարում սուրբ նահատակին փառավորել նաև հետմահու, պարգևելով հրաշքով զանազան հիվանդություններ բժշկելու և բոլոր նրանց փութով օգնության հասնելու զորություն, ովքեր կյանքի դժվարին պարագաներում դիմում են նրան հավատով և ակնածալի ջերմեռանդությունամբ: Ափսոս, որ այդ հրաշքները ժամանակին ոչ ոք գրի չի առել, այդ իսկ պատճառով

դրանց մասին արևելյան քրիստոնյաների մեջ մնացել են լոկ կցկտուր ավանդապատումներ: Նույնիսկ Սուրբ Աթոս Լեռան վրա սուրբ Պանտելեիմոնի անունով դարեր առաջ կառուցված մեր ռուսական մենաստանում (Ռուսսիկ) նախկինում չէին գրառվում վանքի մեծ բարեխոսի հրաչքները, որոնք նրանից միշտ առատապես հեղվում էին նրա սուրբ օգնականությունը հայցող մարդկանց վրա: Վանքի եղբայրները որոշ հրաչքների մասին պահպանում էին ընդամենը ակնածալի հիշողություններ, և որպես փոխադարձ խրատ ու մխիթարություն, դրանց մասին միմյանց պատմում էին բանավոր, անհրաժեշտ չհամարելով գրառել, այնպես որ միայն տարբեր թագավորների և իշխանների քրիստոնյաներն (պարզեագրերն) են պահպանել բավական վկայություններ, որ սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնից հրաչքները միշտ հորդում էին անսպառ հոսքով: Այստեղ անհրաժեշտ եմ համարում ընթերցողի ուշադրությունը հրավիրել այդ վանքի համար թանկարժեք փաստաթղթերի և դրանց պարզեման բուն պատճառների վրա:

1. 1744 թվի հուլիսի քրիստոնյաների, մոլդովական վոյեվոդա (գորավար) Իոանն Իոաննովիչ

Նիկոլաին վկայում է, որ այդ տարի Յասսիում մոլեզնում էր ահավոր ժանտախտը, և ժողովուրդը երկնային պատժի այդ պատուհասից հնձվում էր ինչպես հասկերը՝ հնձվորի մանգաղից: Իսկ երբ այնտեղ բերվեց սուրբ նահատակ Պանտելեիմոնի պատվելի գլուխը և հրապարակում մաղթանք կատարվեց ջրի օրհնություն, ապա անթիվ հրաչքներ թափվեցին (այսպես է ասված պարզեագրում): Ժանտախտը դադարեց, և հոսպոդարն ինքը ապաքինվեց: Ի հիշատակ այդ իրադարձության և որպես նշան ակնածալի երախտագիտության երկնավոր բժշկի ողորմածության համար, գորավարը ողորմության հետ միասին այս պարզեագիրը շնորհեց Աթոսի սուրբ Պանտելեիմոնի մենաստանին:

2. Դրանից մի քանի տարի հետո, այսինքն 1750 թվականին, սուրբ նահատակի գլուխը բնակիչների խնդրանքով դարձյալ բերվեց Մոլդովա, և ըստ բարեպաշտ քրիստոնյաների հավատի, սուրբ բժշկարարից այնտեղ դարձյալ բազմաթիվ հրաչքներ կատարվեցին: Այդ է վկայում 1750 թվականի օգոստոսի պարզեագրով տիրակալ իշխան Իոանն Կոնստանտինովը: Չթվարկելով հրաչքները՝ նա հաստատում է միայն, որ նաև իր վրա է տեսել Աստծո ծառայի հրաչքը, և որ իր ողջ իշխանության մեջ սուրբ

Պանտելեիմոնից հրաչքները աղբյուրի պես էին հորդում:

3. Սուրբ վկայի հրաչքների փառքը տարածվեց Մոլդո-Վալախական իշխանությունների բոլոր տեղերում: Նրա բոլոր անկյուններում գիտեին դրանց մասին և ակնածանքով պատմում էին միմյանց: Բայց տեղի քրիստոնյաների ջերմեռանդությունը սուրբ ծառայի նկատմամբ չսահմանափակվեց դրանով: Նրանք շուտով փափագեցին կրկին տեսնել և համբուրել առողջացման շնորհ բխեցնող սուրբ և պատվելի գլուխը, և նրանց խնդրանքով, 1754 թվականին այն դարձյալ բերվեց Մոլդո-Վալախիա: Այնտեղ սուրբ վկա Պանտելեիմոնը Տիրոջից իրեն տրված շնորհով դարձյալ բազում հրաչքներ կատարեց՝ իրեն փառավորելով իր շնորհական օգնությունն ու բարեխոսությունը այդպիսի ջերմեռանդությամբ և հավատով փնտրող ուղղափառների մեջ:

Վկայելով այդ ժամանակ սուրբ նահատակի կատարած բազմաթիվ հրաչքների մասին, հոսպոդար Իոանն Գրիգորևիչ Գիկան, 1754 թվականի պարգևագրով, ի նշան երախտագիտության սուրբ վկայի՝ իր և իր հպատակների կողմից Աթոսում նրա անվամբ կառուցված վանքին արտոնություն ընձեռեց պետական գանձարանից տարեկան թոշակ ստանալու:

Աստծո ծառայի՝ հին ժամանակներում կատարած հրաչքների մասին այս վկայություններից հետո այժմ մեջբերենք նաև ավելի ուշ ժամանակի վկայություններ, և դրանք, ըստ մեր նվազ ուժերի չափի և ըստ սուրբ բժշկի շնորհի առատության, իբրև փոքր փշրանքներ ճոխ թագավորական սեղանից, առաջարկենք քրիստոնյա աստվածասեր ընթերցողների ուշադրությանը, անկեղծորեն ցանկանալով, որ նաև նրանց վրա հեղվի ողորմած բժշկի շնորհը, ինչպես որ այն հեղվում էր նրան ջերմեռանդորեն դիմող այլոց վրա, որպեսզի նրանց հետ միասին փառավորենք իր ծառա՝ մեծ նահատակ Պանտելեիմոնի միջոցով փառավոր և հրաշալի գործեր գործող բարեգութ Աստծո անունը:

\*\*\*

1735 թվականին Աթոսի մեր հին ռուսական մենաստանի՝ Հուլյների իշխանության տակ անցնելու հետևանքով, այն զրկվեց Ռուսաստանի մշտական օգնականությունից, և որքան այդ պատճառով, նույնքան էլ, կամ դրանից ավելի շատ իր բնակիչների ինքնագլուխ կյանքի պատճառով, սկսեց արագորեն անկում ապրել, այնպես որ պրոտատը (Աթոսի սինոդը կամ կինոտը) ստիպված եղավ ի վերջո Կոստանդնուպոլի-

սի Կալլինիկոս պատրիարքին առաջարկութիւնն ներկայացնել վանքը վերջնականապէս փակելու և նրա գույքը վաճառելու մասին: Բայց ամեն ինչ տնօրինող Տիրոջ Նախախնամութիւնը իր սուրբ ծառայի աղոթքներով հաճեց այլ կերպ տնօրինել գործը: Պրոտատի հայտը ծառայեց լոկ նրան, որ պատրիարքը առանձնահատուկ ուշադրութիւն դարձրեց ուսնների այդքան հին և փառավոր վանքի անկման պատճառների վրա: Եվ պատրիարքի կամքով, առավել ևս ըստ ամենակառավարող Աստծո Նախախնամութեան բարերար տեսչութեան, որոշվեց սուրբ Պանտելեիմոնի վանքը նոր կառուցելով վերականգնել ծովի մոտ, և այնտեղ հանրակացարան հիմնել: Պատրիարքի այդ բարի մտադրութեան իրագործման համար Քսենոֆի մենաստանից Կոստանդնուպոլիս հրավիրվեց իր խստակեցութեամբ հայտնի ծեր անապատական Սավվան, որին պատրիարքը հայտնեց իր կամքը և լիակատար աջակցութիւն և օգնութիւն խոստացավ վանքը վերականգնելու համար: Ծեր Սավվան չորս տարի անցկացրեց Կոստանդնուպոլսում բարեգործական նվիրատվութիւններ հանգանակելու համար, բայց նրա հավաքածը, այնուամենայնիւ, խիստ անբավարար եղավ անցնելու նոր վանքի կառուցմանը: Եվ չնայած ծերը դեռ հույս ուներ իր հա-

վաքածը լրացնել պատրիարքի խոստացած օգնութեամբ, բայց Ռուսաստանի հետ թուրքերի այնժամ սկսված պատերազմի պատճառով նրան կտրականապէս մերժեցին:

Մեծ Եկեղեցուց ստանալով նման մերժում (դա 1806 թվականին էր), և արդեն չունենալով ոչ մի ակնկալութիւն կողմնակի օգնութեան՝ ծերը խորը վշտի մեջ ընկավ և չգիտեր, թե ինչ ձեռնարկեր: Այդժամ սուրբ վկա Պանտելեիմոնն ինքը մասնակցեց այդ կառուցման գործին, և Ռուսսիկի նոր վանահայր Սավվային իր հրաշագործ օգնութիւնը ցույց տվեց նրա վանքի վերականգնման գործում:

Դրանից քիչ առաջ հիվանդացավ Բարձր Դուան զբաղմանը (թարգմանիչը)՝ Սկարլատ Կալլիմաքոս իշխանը: Նրա հիվանդութիւնը սաստկացավ, և չնայած բոլոր բժշկական միջոցներին, ամենևին չնվազեց, այլ ավելի ու ավելի սաստկացավ և վերջապէս բժիշկների կողմից ընդունվեց որպէս անբուժելի: Հիվանդն իր կյանքի վերջին րոպեներն էր ապրում...: Գերդաստանի և իշխանին բոլոր ճանաչողների համար նույն այդ վշտալի օրերին, համոզվելով, որ երկրային դեղամիջոցները ապարդիւն են և բժիշկներից տեղեկանալով իշխանի անխուսափելի մահվան մասին, սկսեցին խնդրել ծերին



աղոթել սուրբ բժիշկ Պանտելեիմոնին իրենց թանկագին հիվանդի մարող կյանքի համար: Պատկառելի ծերը սիրով համաձայնեց նրանց ցանկությունը կատարել, բայց դրա հետ միասին պահանջեց նաև, որ նրանք ջերմագին աղոթեն սուրբ վկային: Բոլորը անկեղծ համաձայնություն արտահայտեցին այդ պահանջին և հայտնեցին իրենց հավատը սուրբ Պանտելեիմոնի հրաշագործ գորությունը, ընդ որում ինքը՝ հիվանդ իշխանը ևս հանդիսավոր կերպով հայտարարեց, որ եթե սուրբ նահատակը իրեն բժշկի մահաբեր հիվանդությունից, ապա ինքը ուխտ կանի լինել Աստծո այդ ծառայի անունով կառուցվող Աթոսի վանքի կտիտորը (կառուցողը): Այդժամ ծերը սկսեց սուրբ Պանտելեիմոնին աղոթքներ հղել ջրօրհնեքի կարգ կատարելով... Եվ բոլոր ներկաների աղոթքը Աստծո մեծ ծառային ջերմագին էր:

Աղոթքներն ավարտելով՝ վանահայր Սավվան հիվանդին ցողեց սուրբ ջրով, և որպես բժշկարար դեղ, Աթոսի խոտերից այդ սուրբ ջրով պատրաստված թուրմ տվեց նրան խմելու համար: Հաջորդ օրը Սկարլատն արդեն միանգամայն առողջ էր: Իշխանն այդպիսի սքանչելի բժշկություն ստանալով՝ սրբորեն կատարեց իր ուխտը, և վանքի շինարարության գործնական հոգաձուլյամբ

նրա համար անչափ շատ գործ արեց, մանավանդ այն ժամանակ, երբ դրազոմանի պաշտոնում ծառայության՝ օրենքով սահմանված ժամկետի լրանալուց հետո սուլթանի կամքով նա նստեց Մոլդավիայի գահին: Նրա հոգաձուլյամբ ծովի մոտ վեր խոյացող վանքը, իհարկե, չափերով ավելի փոքր, այժմ փառահեղ գեղեցկություն է հառնում այդ Սուրբ լեռան հարավ-արևմտյան լանջին: Հետագայում կառուցապատվելով ընդարձակվեց, և իրեն պատշաճ բարեկարգ տեսքի բերվեց բարեգործ Ռուսաստանի առատաձեռնությունով: Սավվա ծերի Կոստանդնուպոլսում լինելը նշանավորվեց ոչ միայն իշխան Կալլիմաքոսի այդ հրաշալի բժշկությունով, այլ նաև սուրբ նահատակ Պանտելեիմոնի միջոցով ուրիշ շատ հրաշքների իրագործվեցին: Աստվածահաճո ծառայի միջոցով իրագործված այդ հրաշքների համբավը տարածվելով հասավ մինչև հեռու արևելք, որն էլ շատերին դրդեց ծերի՝ Աթոս վերադառնալուց հետո նորից դիմել նրան, խնդրելով Կոստանդնուպոլիս բերել նահատակի սուրբ մասունքները: Վանահայր Սավվան, հարգելով կոստանդնուպոլսեցի քրիստոնյաների փափագը, Աթոսից այնտեղ տարավ աստվածահաճո ծառայի սուրբ գլուխը: Ջերմեռանդների ցանկությունը աղոթասացություն-

ներ էր կատարում ջրօրհնեքի կարգով հանդերձ, սուրբ ջրով ցողում աղոթողներին և սուրբից որևէ օգնություն ակնկալողներին, նրանց տալիս էր այդ ջուրը խմելու, և բժշկագործի սուրբ մասունքներից օրեցօր այնքան շատ հրաշքներ էին կատարվում, որ վերջիվերջո ծերն այլևս անկարող էր կատարել բոլոր նրանց պահանջները, ովքեր ցանկանում էին իրենց տներում ընդունել աստվածահաճո մեծ ծառայի սուրբ մասունքները: Սակայն Քրիստոսի վկան՝ իբրև անվարձ բժիշկ, առատորեն պարգևում էր ջերմեռանդներին, և՛ նրանց, ովքեր աղոթում էին, և՛ նրանց, ովքեր միայն ցանկություն էին հայտնում իր սուրբ մասունքների մոտ աղոթելու՝ յուրաքանչյուրին օգնելով հոգալ կարիքները: Նրա հրաշագործ գորությունները տարբեր տեսակի տկարություններով տառապող հիվանդները բժշկվում էին, կույրերը տեսնում էին, բորոտները՝ սրբվում, դեերն էլ՝ հալածվում: Այդ հրաշքների համբավը ժողովրդի մեջ գնալով ավելի էր տարածվում, այնչափ, որ Ռուսսիկայի վանքի վանահայր Սավվային արդեն անգամ կյանքից զրկվելու վտանգ էր սպառնում քրիստոնեական հավատի թշնամի մահամեղականներից, որոնք ուղղափառության այս հաղթական հանդեսը չէին կարողանում հանդուրժել որպես

իրենց չարափառություն ակնհայտ քողագերծում: Սակայն հրաշագործ հովանավոր սուրբ Պանտելեիմոնի միջնորդությամբ հռչակավոր ծերը պաշտպանվեց նրանց կատաղի վրեժխնդրությունից:

Այդ նույն ժամանակ սուլթանական գլխավոր կաթողիկ բժշկի միակ դուստրը բռնված էր սաստիկ դիվահարությամբ: Բայց հայտնի է, որ բժշկությունը այդ կարգի հիվանդների համար բուժման միջոցներ չունի: Բժիշկը խոր վշտի մեջ էր և ասում էր, թե ոչինչ չի խնայի իր դստեր բուժման համար, սակայն, այնուամենայնիվ, չէր գտնում մեկին, ով կարողանար օգնել դստերը: Սավվա ծերի՝ Կոստանդնուպոլիս գալուց հետո, երբ սուրբ նահատակ Պանտելեիմոնի հրաշքների և բուժումների համբավը Կոստանդնուպոլսում շատերի մեջ էր տարածվել, դիվահարի հայրը նույնպես լսեց մեծ նահատակի սուրբ գլխից բխող աստվածապարզ գորություն մասին: Եվ չնայած չէր պատկանում ուղղափառ եկեղեցուն, համարձակվեց իր տուն կանչել Սավվա վանահորը, սուրբ մասունքները բերելու իր հետ: Ծերը չմերժեց: Հիվանդի մոտ բուժման աղոթքներ կատարելով՝ նա շղթաներով պատին կապված աղջկան թույլ տվեց հավել

սուրբ մասունքներին և աղջկա հոր վճռական խնդրանքով ծերը այդ տանը մնաց ամբողջ գիշերը՝ սուրբ բժշկին ավելի տևական աղոթքներ մատուցելու: Իսկ սուրբ մասունքները տապանակով տեղակայելով մեծ սկուտեղի մեջ, դրեց այն սենյակում, ուր կապված էր հիվանդ աղջիկը: Հաջորդ օրը, երբ վանահայրն ու հիվանդի հարազատները մտան այդ սենյակ, ապա ի զարմանս բոլորի և ի փառս սուրբ նահատակ Պանտելեիմոնի, ականատես եղան մեծ հրաշքի: Սկուտեղը, որի մեջ տեղակայված էր աստվածահաճո նահատակի սուրբ գլուխը, լի էր օծույթյան ձեթով, որ հեղվել էր սուրբ մասունքներից, և դիվահարված աղջիկը լիովին առողջացել էր: Ընտանիքի հետ միասին օրհնելով բժշկին՝ գթառատ Աստծուն և սուրբ նահատակ Պանտելեիմոնին՝ Սավվա ծերը միաժամանակ մխիթարվեց նաև այդ ամբողջ կաթոլիկ ընտանիքի՝ ուղղափառ եկեղեցուն միանալու համար: Իսկ բխած մյուռոնը թողեց բժշկված աղջկա մոտ, քանի որ նրա համար էր, և աստվածահաճո նահատակը նրա սենյակում էր բարեհաճել այն բխեցնել:

Նույն Սավվա վանահոր օրոք մեր վանքում էր գտնվում մի վարձու բժիշկ, որ մտադրվել էր

ընդմիջտ այստեղ մնալ և Տիրոջը ծառայել վանականին վայել հրեշտակային կենցաղավարությամբ: Բայց ոչ շատ ժամանակ ապրելով՝ նա ենթարկվեց վանականության մեջ սովորական գայթակղության փորձությունը, որով ստուգվում է մարդու հոժարությունը և ճանաչվում է նրա մտադրության հաստատունությունն ու Տիրոջ նկատմամբ սիրո իսկությունը: Երկնքից անկյալ հրեշտակը, ցանկանալով բժշկին շեղել ընտրած ճանապարհից, սկսեց նրան ներշնչել, թե նա աշխարհիկ կյանքում էլ կարող է Աստծուն հաճո լինել և այնտեղ էլ կարող է բարի գործեր կատարել, ընդ որում ապրել լիության մեջ, չկրելով այն զրկանքները, որոնք անխուսափելի են վանական կյանքում: Դեռևս չունենալով սատանայական սաղրանքները զանազանելու փորձառություն՝ գայթակղության մեջ ընկած բժշկի համար հեշտ էր տարվել խաբեբայի այդպիսի ներշնչումներով, որն իր նենգությունը միշտ քողարկում է բարեպատշաճ դրդապատճառներով: Առավել ևս դժվար չէր դա անելը, որովհետև բժիշկը, բացի իր գիտության հիմնավոր իմացությունից, որը նրան քաղաքում բարեկեցիկ կյանք էր խոստանում, ուներ նաև զգալի առձեռն գումար: Վանականության մեջ մտնելու իր մտադրությունը համարելով

չհիմնավորված՝ նա որոշեց, ինչպես դա պատահում է գայթակղության մեջ ընկածների հետ, աշխարհիկ կյանքում իր կյանքը այնպես դասավորել, որպեսզի և՛ Աստծուն հաճելի լինի, և՛ իրեն նեղություն չտա: Այդպիսի շեղումը նա անմեղադրելի էր համարում, ուստի և վանահորը հայտնեց իր մտադրությունը փոխելու մասին, և հաջորդ առավոտ նույնիսկ պատրաստվում էր վերջնականապես հեռանալ վանքից: Բայց, ինչպես երևում է, նրա կարծիքով այդ լուսավոր դատողությունները հաճելի չէին Աստծուն, Ով միշտ հոգում է գլխարտությունը և ողորմածաբար մեզ փրկելու մասին:

Վանքի միաբանները, իմանալով բարի բժշկի մեկնելու մասին, առավոտյան եկան նրան հրաժեշտ տալու և ճամփա դնելու, սակայն ի սարսափ իրենց, նրան գտան այն աստիճանի այլանդակված, որ անգամ մարդկային կերպարանք չուներ՝ նրա գլուխն ու ամբողջ մարմինը այնպես էին ուռել, որ այդ դժբախտին նույնիսկ նայելը ցավալի էր: Նրա գլխի և երկար մորուքի մազերը թափվել էին, ամբողջ մարմինը այնպես էր անբնականորեն ուռելով մեծացել, որ նրան դժվար էր դռնով դուրս հանել: Նա մարդու էլ ամենևին նման չէր, և միայն ձայնից կարողացան ճանաչել թշվառ բժշկին, որին տակա-

վին երեկ լիակատար առողջ էին տեսել: Իր մուրրություն համար անկեղծ զղջալով՝ նա եկածներին հագիվ լսելի ձայնով խնդրեց իր ունեցվածքն ու փողերը վերցնեն ու տանեն վանահորը և միաժամանակ խնդրեն նրան անհապաղ գալ իր մոտ թողություն աղոթք կարգալու, քանզի իրեն մահվան եզրին էր զգում: Վանահայրը, լսելով պատահածի մասին, չհապաղեց հիվանդացածի մոտ գալ, բերելով իր հետ նաև մեծ նահատակ Պանտելեիմոնի սուրբ գլուխը: Աղոթքներ կարգալով և ջրօրհնեքի կարգ կատարելով, նա տառապալին ցողեց սուրբ ջրով և խաչակնքեց նրան սուրբ մասունքներով, և երբ մահացողը ցավագին հոգով սկսեց վանահորից ու միաբան եղբայրներից ներողություն հայցել իր առաջին մուրրություն համար, ապա ի զարմանս բոլորի՝ այտուցվածությունը անմիջապես սկսեց պակասել և արագ անհետացավ: Բժիշկը առողջացավ և իր ամբողջ սրտի երախտագիտությունը շնորհակալություն հայտնելով իր բժշկին, արդեն իր վճռական որոշումը հայտնեց ընդմիշտ մնալու սուրբ Պանտելեիմոնի վանքում: Միաժամանակ սկսեց խնդրել և համոզեց վանահորը՝ առանց հապաղելու իր վրա կատարել վանականությունը ընծայվելու սուրբ կարգը: Բժիշկը, ընդունելով Փիլոփեյոս սքեմավոր

վանականի անունը, իր բուժվելուց հետո հինգ տարի ապրելով վանքում, այս ժամանակավոր կյանքից անցավ հավիտենական կյանքի:

Հենց այդ ժամանակ, Սավվա վանահոր օրոք, մեր վանքի եղբայրների թվում կար Ազարիա անունով մի վանական: Չնայած իր ամբողջ ջանասիրույթյանը և արտաքին գործնականույթյանը, նա սքեմավորի կարգավիճակով Տիրոջը ծառայելու վճռականույթյան մեջ հաստատուն չէր, ուստի և շատ հաճախ էր փորձույթունների ենթարկվում սատանայից, որը ջանում էր հեռացնել նրան նախընտրած նպատակից և վերադարձնել աշխարհիկ կյանքի՝ ընտանիքում իր նախկին ինքնագլուխ կյանքին: Ամենասկզբից Ազարիան մեծ ջերմեռանդույթյամբ էր իրականացնում իր վրա դրված հնազանդույթյան կանոնը՝ ճաշ էր եփում աշխատողների համար, ընդ որում այնքան հաջող, որ միայնակ երեք հոգու գործ էր անում: Սակայն մարդու վաղեմի թշնամին, որը «մոնչացող առյուծի նման շրջում ու մտածում է, թե ում կուլ տա», վանականի մեջ նկատելով փրկույթյան այդ նախանձախնդրույթյունն ու հոգածույթյունը, սկսեց ավելի ուժգին հարձակվել նրա վրա և նրան գրավել նորից աշխարհիկ կյանքի վե-

րադառնալու խորհուրդներով՝ նրա հոգաբարձույթյան տակ եղած ուրիշի երեք երեխաների դաստիարակելու պատրվակով: Այդ պայքարը Ազարիայի մեջ շարունակվում էր երկար տարիներ և նույնիսկ այն ժամանակ, երբ արդեն այդ երեխաները ո՛չ նյութական, ո՛չ հոգևոր հոգաբարձուի որևէ խիստ կարիք չունեին: Բայց ահա նա, չնայած վանահոր և խոստովանահոր հորդորներին, այնուամենայնիվ, որոշեց թողնել վանքը և հեռացավ այնտեղից, սրտում ծածուկ սնուցվող հանցավոր նպատակներով, դրանք ծածկելով բարեպաշտույթյան շարժառիթով: Սակայն նոր էր դուրս եկել դարպասից, երբ տեսավ, որ ծովի փոխարեն, որի վերևում է գտնվում վանքը, տարածվում է մի ընդարձակ դաշտ: Դա չափազանց զարմացրեց նրան, և երբ նա սկսեց նայել իր շուրջը և հասկանալ, թե դա ինչ կնշանակի, հանկարծ տեսավ Սիկի թերակղզուց դեպի իրեն ձիավարող երեք արաբ հեծյալների, որոնք սրընթաց արշավում էին դեպի վանք և ակնթարթորեն հասան նրան: Այս անակնկալը ապշեցրեց Ազարիային, սակայն այդ նույն պահին նա տեսավ, որ վանքի սուրբ դարպասից դուրս եկավ տասնութ տարեկան մի երիտասարդ տղա, ձեռքին՝ ձող: Նա ուղիղ գնում էր դեպի հեծյալները և իշխանույթյուն

ունեցողի պես (ինչպես տանտերն է վարվում գողերի հետ), սկսեց նրանց ձողով հարվածներ հասցնել, ասելով. «Ի՞նչ է ձեզ պետք, կորուստի ծնունդներ: Քի՞չ է ձեզ գեհե՛նը, որին ինքներդ եք դատապարտված, ուզում եք նաև իմ փարախից իմ գտած ոչխարի՞ն տանել: Դուք այստեղ բաժին չունեք, հեռացե՛ք այստեղից»:

Եվ այս խոսքերն ասելուն պես՝ պատանու հարվածներից արաբները չքացան: Դժվար չէ հասկանալ, թե ովքեր էին արաբները, և ով էր նրանց քչող պատանին: Դեերը Ազարիային արդեն համարում էին իրենց բացահայտ ավարը և, իհարկե, կիրականացնեին այն, ինչ որ նախապատրաստել էին իրենց դժոխային չարությամբ, որը յուրաքանչյուրի կորուստն է միայն փնտրում: Սակայն Ամենողորմը (հունարեն պանտելեյմոն բառը նշանակում է ամենողորմ) համաձայն իր անվան, ողորմած լինելով մարմնավոր հիվանդությունների և նյութական կարիքների մեջ իրենից օգնություն հայցողների նկատմամբ, առավել ևս ողորմած է հոգով տառապողների նկատմամբ: Աստծո ծառա Պանտելեիմոնը տեսել էր վանականի վճռական մտադրությունը վանքը թողնելու և, ինչպես ինքը արտահայտվեց, ցավալի էր իր գտածին թողնել դեռ իշխանության ներքո: Ուստիև նա չհապա-

ղեց ծերի համար վճռական պահին հայտնվել՝ կործանելու համար հայտնված դեերին: Ապա սուրբ Պանտելեիմոնը դարձավ Ազարիային և հոգատար հոր ողբով ասաց նրան. «Իսկ դո՛ւ, փտա՛ծ ծերուկ, ինչո՞ւ ինձ հանգիստ չես տալիս, անդադար տազնապեցնում ես ինձ»:

Եվ որպես պատիժ, այդ նույն ձողով, որով նրանից հալածել էր դեերին, հարվածեց նրա աջ կողին, որից մեղանչածի մարմնի աջ կողմը ակնթարթորեն մինչև ձեռքը փայտացավ: Դրանից հետո Ազարիան հագիվ էր կարողանում տեղաշարժվել, այն էլ՝ հենակների օգնությամբ, իսկ երբ նստում էր կամ պառկում, առանց ուրիշների օգնության արդեն չէր կարողանում վեր կենալ: Սուրբ Պանտելեիմոնի տված այդ հրաշալի և ողորմած դասը բարերար ազդեցություն ունեցավ Ազարիայի հոգու խաթարված վիճակի վրա և նրան վերջնականապես պահեց վանքում: Հետագայում նա նշանակվեց վանքի դռնապան և մահացավ 1836 թվականին:

19-րդ հարյուրամյակի քսանական թվականներին Աթոսում մեծ հրդեհ եղավ, որն ամբողջ վանքի համար սպառնում էր ակնհայտ փտանգով: Սուրբ նահատակ Պանտելեիմոնի հրաշագործ միջամտությամբ դրա դադարեցումը

խիստ զարմանալի էր: Այդ հրդեհը բռնկվեց նրանից, որ վանքից ոչ հեռու սկսեցին այրել չոր խոտերն ու անպետք թփերը, բայց անակնկալ ուժեղ քամի բարձրացավ և բոցը ցրեց մեծ տարածության վրա: Կրակը տարածվեց անտառով մեկ և շուտով շրջապատեց ամբողջ վանքը: Վանական եղբայրները արդեն շտապում էին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ հրդեհի տարածումը կասեցնելու համար, բայց այն այնքան ուժեղացավ, որ այլևս հնարավոր չէր ոչինչ անել: Այդ համընդհանուր տագնապի ժամանակ Կյուրեղ անունով մի աբեղա մտավ եկեղեցի, ընկավ սուրբ Պանտելեիմոնի սրբապատկերի առաջ և արտասուքով սկսեց մեծ նահատակին աղոթել վանքը հրդեհից պահպանելու և կրակը հանգցնելու համար: Օ՛, որքան արագահաս է ամենաողորմած հրաշագործը իրեն ջերմեռանդ հավատքով աղոթողներին լսելու և օգնություն գործում: Դեռ չէր հասցրել աբեղան աղոթքը վերջացնել, երբ անսպասելիորեն երևաց մի մուկթ ամպ՝ հորիզոնով սուրալով դեպի ահագնացող հրդեհը: Կարծես թե դուլլից անձրև հեղվեց և շարունակվեց մեկ ժամից ավելի: Հրդեհը մարեց, վերականգնվեց նախկին լուսությունն ու կարգը, և բոլորը՝ ոչ միայն վանականներն ու այդ ժամանակ այդտեղ եղած քրիստոնյաները,

այլ նաև թվով տասը հոգի թուրքեր խորապես զարմացած էին այդ մեծ հրաշքով, որը կատարվեց նրանց աչքերի առաջ:

1830-ական թվականների սարսափելի համաճարակը, որը նաև Ռուսաստանում էր շատերի համար անմոռանալի, ավերածություններ էր գործում ամբողջ Մոլդավիայում և առանձնապես նրա մայրաքաղաք Յասսիում: Ոչ մի միջոց չկար այդ աղետից ազատվելու և համատարած մահացությունն ալիքը կանգնեցնելու համար: Այդ ժամանակ Յասսիի բարեպաշտ բնակիչները, նորից վերհիշելով իրենց սահմաններում կատարված սուրբ նահատակ Պանտելեիմոնի անթիվ հրաշքները, նաև այդ համընդհանուր աղետի տարին շտապեցին դարձյալ նրան դիմել աղոթքով, և նրանց համառ խնդրանքով բժշկագործի սուրբ գլուխը մեր վանքից բերվեց Յասսի: Այդ մայրաքաղաքի բնակիչները, փոքրից մինչև մեծը, բոլորը միասին հավաքված խնդրում էին սուրբ Պանտելեիմոնի մասունքների առաջ քաղաքի հրապարակում աղոթքներ և ջրօրհնների կարգ կատարել, դրա համար նախապես բերելով ջրով լիքը մի քանի ջրամաններ: Մայրաքաղաքի բնակիչների այդպիսի բարեպաշտ ջերմեռանդությունը սուրբ նահատակի կողմից չմնաց ա-

ռանց հատուկ առատաձեռն հատուցման՝ բնակիչները դեռ նոր էին ջրօրհնեքից հետո իրար մեջ բաշխել օրհնված ջուրը և յուրաքանչյուրն իր տունը հասցրել, երբ ժանտախտը դադարեց: Այս կարևոր իրադարձությունը կատարվեց 1830 թվականին, վանահայր Գերասիմի օրոք, որն այն ժամանակ Մոլդավիայում անձամբ ինքն էր սուրբ մասունքների հետ և ինքն էր կատարում ջրօրհնեքի կարգը:

Նույն 1830 թվականին հուլյն ծեր անապատական Ն.-ի գլխավորությունը վանքի ոչ մեծ նավը կարճ ճանապարհորդություն ուղևորվեց Կալամարիա՝ վանական առարկաների պատրաստման համար այնտեղ տախտակներ տեղափոխելու: Երբ նավը ափից հեռացավ, քամին չափավոր և համընթաց էր, բայց հետո հանկարծ փոխեց իր ուղղությունը և կարճ ժամանակում ուժեղ փոթորիկ բարձրացավ, նավարկողների համար բացահայտ վտանգ սպառնալով, մանավանդ որ վրա հասնող գիշերվա և թանձր մառախուղի պատճառով մակեդոնական ցամաքի ափերի և մերձակա կղզիների տեսանելիությունը կատարելապես ծածկվեց: Այդպիսի ահեղ արհավիրքի ժամանակ ծեր Ն.-ն փրկության ուրիշ միջոցներ չակնկալելով, նավի վրա գտնվող վանական եղ-

բայրների հետ միասին ջերմեռանդ աղոթքով օգնություն համար դիմեց վանքի հովանավոր սուրբ նահատակ Պանտելեիմոնին, և Աստծո մեծ ծառան չհապաղեց նրանց հայտնելու իր սովորական ողորմածությունը, և այն ցույց տվեց զարմանահրաշ ձևով: Անմիջապես աղոթքի ժամանակ ծերը տեսավ, որ տախտակամածի վրա նավավար վանականի հետ մի երիտասարդ մարդ է նստած և վարում է դեկը: Հայտնվածը այնպիսի հագուստով էր, ինչպիսին սովորաբար վանական եղբայրները կրում էին վանքում աշխատելու ժամանակ: Զարմացած այդպիսի տեսիլքից՝ ծեր նավապետը որոշեց անձամբ հավաստիանալ տեսածի իրականությունը մեջ և իմանալ, թե այդ ով է իրենց մեջ անակնկալ հայտնվածը: Դրա համար նա, նավի երկայնքով մեկ ձգված պարանից բռնելով, մի կերպ նավի առաջնամասից գնաց մինչև նավախելը, սակայն նավի դեկի մոտ նստած ծեր նավավարից բացի ոչ ոքի չգտավ: Ծեր անապատականը, որին երևացել էր տեսիլքը, նավավարին դեռ նոր էր պատմում երիտասարդ անձանոթին տեսնելու մասին, երբ երկուսով էլ նրան տեսան արդեն նավի առաջնամասում՝ մնացած բոլորի հետ կանգնած: Նրանց ցնծագին հուզմունք տիրեց: Այդ ժամանակ նավապետը, թողնելով նավավարին, նորից շտապեց նավի առաջնամաս՝



Հայտնված պատանուն հարցնելու, թե ո՞վ է նա և ինչպե՞ս հայտնվեց իրենց մեջ: Սակայն այնտեղ հասնելով՝ ի զարմանս իրեն, նորից նրան այնտեղ՝ եղբայրների մեջ չգտավ, բայց դարձյալ նավախելին նայելով՝ տեսավ այդ երիտասարդին նախկինի պես նավավարի մոտ նստած և նավը վարելիս: Այդ ժամանակ հայտնվածին տեսան նաև մնացած եղբայրները: Դրանից հետո մոռանալով փոթորկալի ծովագնացության բոլոր դժվարությունները և վտանգը, ծեր անապատական Ն.-ն բացականչեց. «Քաջալերվե՛նք, եղբայրներ՛ր, մեզ հետ է մեծ նահատակ սուրբ Պանտելեիմոնը: Նա ինքն է վարում մեր նավը, և մենք փրկված ենք»: Այստեղ բոլորը մի մարդու նման սկսեցին աղոթել և փառաբանել իրենց հարեհաս օգնական նահատակ Պանտելեիմոնին, որը իրենց մոտ հայտնվեց՝ ամենաաղետալի ժամին բոլորին փրկելու համար: Մինչ նրանք աղոթքով փառաբանում էին բարերար սուրբին, փոթորկալի քամու ուժգնությունը կարծես թուլացավ, և փոթորիկը հանդարտվեց: Փչեց թեթև, համընթաց քամի, որով եղբայրները շուտով հասան իրենց ժամանման տեղը: Այնտեղ նրանք բոլորին պատմեցին իրենց սքանչելի փրկության մասին վանքի ամենողորմ բարերարի և Տիրոջ սուրբ Պանտելեիմոնի ա-

ջակցությունը, ով ակնհայտ վտանգի ժամանակ բաց ծովում իրենց մեջ հայտնվեց նավի վրա: Այդ նույն պարզահոգի, ավետարանական սիրով և անհարույնությամբ լցված ծեր անապատականը դարձյալ մի անգամ նահատակ սուրբի միջոցով ծովում փրկվեց նավաբեկությունից: Դա եղավ 1849 թվին: Այդ ժամանակ նավախցում գտնվող սուրբ նահատակի սրբապատկերը խոնավացավ՝ նրա մակերևույթին ասես թե քրտինքի կաթիլներ հայտնվեցին և գլորվեցին նրանից ներքև հաստատված սրբապատկերների վրա, որոնք միանգամայն չոր էին, որպես առավել հաստատումն այս հրաշքի, մինչդեռ խցում ոչ մի խոնավություն էլ չկար: Այս նշանը ծեր անապատականն ընդունեց իբրև այն բանի անմիջական արտահայտությունը և հավաստումը, թե սուրբ Պանտելեիմոնը որքան և ինչպես է ջանք գործադրել նավը փրկելու համար: Այդ սուրբ հեղուկը բամբակով հավաքելով՝ հետագայում այն բաժանեց ջերմեռանդ հավատացյալներին: Բացի դրանից, նա էլի երկու անգամ արժանացավ սուրբ նահատակի տեսությունը: Առաջին անգամ 1836 թվականին, երբ սուրբ Պանտելեիմոնը Կարեյայից առաքվածին տեսանելի կերպով ուղեկցում էր մինչև վանք: Այդ ժամանակ պատահեց այնպես, որ նույն ծերը

վանքի սուրբ դարպասի մոտ էր և դռնապանի հետ ինչ որ բանի մասին էր խոսում: Երբ տեսավ նամակաբերին, որ եկել էր ուղեկցի հետ, որը, ինչպես ինքը լսեց, հրաժարվեց իրեն առաջարկված հանգստից և ընթրիքից, ապա այդտեղ իսկ եկվորին հաց ընծայեց, որպեսզի նա իր ուղեկցորդին փոխանցի իբրև օրհնութիւն նահատակ սուրբից, ինչպես դա միշտ արվում է վանքում: Սուրբը 1863 թվականին, վանական սովորութիւնի համաձայն, երկրորդ անգամ աղոթքով ծեծեց ծերի խցի դուռը: Եվ երբ վերջինս բացեց, ապա Քրիստոսի նահատակը նրան պատվիրեց հետևել իրեն (դա միջօրեին էր, երբ վանական եղբայրները հսկումից հետո հանգստանում էին), և նրան միջանցքներով տանելով՝ դուրս բերեց վանական հրապարակ, նստեց սպիտակ ձին և իր անվանը նվիրված տաճարի շուրջը պտույտ կատարեց, հետո դիմելով ծերին, պատվիրեց նրան գնալ և ընթրիք պատրաստել վանական եղբայրների համար, քանի որ նա այդ ժամանակ խոհարարի հնազանդութիւն կարգ էր անցնում: Այդ ամբողջ ընթացքում ծերն անձայն հետևում էր հայտնվածին և նայում էր նրան որպես սովորական մեկին, (այսպես է Աստուծո շնորհը ծածկում նման հանգամանքներում) և միայն այն ժամանակ, երբ

սուրբը հանկարծ աներևութացավ, նա հասկացավ, որ իրեն հայտնվել է սուրբ նահատակը՝ վանքի հովանավորն ու տերը: Անպատմելի ուրախութիւն արցունքներ հորդեցին ծերի աչքերից, և նա երկար ժամանակ չէր կարողանում իր մեջ հանդարտեցնել այդ շնորհից առաջ եկած հուզումը: Ընդ որում՝ սուրբ նահատակ Պանտելեիմոնի այս երկու երևումներն էլ վանքի համար կարևոր հանգամանքներում էին, և ծառայում էին որպես գործերի՝ դեպի բարին փոխվելու նշան, որն էլ շուտով կատարվեց ի օգուտ վանքի և ի մխիթարութիւն այն ժամանակ միաբանների ողբալի վիճակի:

Կոստանդնուպոլսի պատրիարքի դիվանապետի (լոգոֆետ) հարազատ քույրը անհուսալի հիվանդ էր և կոստանդնուպոլսեցի լավագույն բժիշկների ընդհանուր խորհուրդը եզրակացրեց, թե այլևս նրա առողջանալու ոչ մի հույս չկա: Այդ ժամանակ մեր վանքի վանահայր Գերասիմը Կոստանդնուպոլսում էր գտնվում վանքի հետ առնչվող գործերով: Նա իր մոտ ուներ նաև սուրբ Պանտելեիմոնի մասունքները: Դիվանապետը շտապեց հրավիրել վանահայրը՝ նրան խնդրելով սուրբ նահատակին աղոթք մատուցել, քանի որ նա գիտեր

Աստծո ծառայի հրաշքների մասին, որոնք նրա միջոցով կատարվել էին Կոստանդնուպոլսում: Համաձայնելով այդ սրտառուչ ցանկությանը՝ Գերասիմ վանահայրը ջրօրհնեքով աղոթքներ կատարեց, ցողեց հիվանդին և նրան սուրբ ջուր տվեց խմելու: Հիվանդն այդ նույն ժամին թեթևություն գգաց, իսկ երեք օր անց լիովին առողջացավ: Այս իրադարձությունը կատարվեց 1831 թվականին:

Սալոնիկի օկրուգի (գավառի) Պուլիգիրո գյուղից մի վաճառական՝ դիվաճարությունից բժշկված շատերից մեկը, որն ավելի քան 30 տարի երախտագիտությունից մղված հաճախ էր այցելում վանք, ի լուր ամենքի պատմեց սուրբ նահատակի միջոցով կատարված իր հրաշալի բժշկության մասին: Այդ վաճառականը բռնված էր կատաղի դեկից և տանջվում էր, ինչպես տանջվում է այդպիսի դժբախտների մեծ մասը: 1832 թվականին մերձավորները նրան բերեցին Սուրբ Լեռը՝ խոնարհվելու այդտեղի սրբությանը: Այդ վիճակով և նույն այդ նպատակով նրան բերեցին նաև մեր վանքը, ուր հարազատների խնդրանքով նրա համար աղոթքներ մատուցվեցին նահատակ Պանտելեիմոնին, և դիվաճարը տեղում բժշկվեց: Հայտնի է նաև, որ տարբեր ժամանակներում

մեծ խմբերով Աթոս եկած բուլղար ուխտավորները հաճախակի էին խնդրում գոհաբանական աղոթքներ մատուցել սուրբ նահատակ Պանտելեիմոնին, ընդ որում պատմում էին իրենց կամ իրենց ընտանիքների հետ կատարված հրաշքների մասին: Ի հիշատակ դրա՝ նրանցից ոմանք տարբեր ընծաներ էին թողնում նահատակի սրբապատկերի մոտ, որոնք էլ մնում են բժիշկ Պանտելեիմոնի կողմից միշտ հորդող հրաշքների միակ վկայությունները: Ցավոք, այս հրաշքների մանրամասները, ժամանակին գրի չառնելու պատճառով, անհայտ էին մնացել:

Վանքի ծերերից Իլարիոնը՝ դաստիարակված Երուսաղեմի պատրիարք Աթանասի հովանավորությամբ, նրա մահից հետո ավագ սարկավագի կոչում ստացավ և ընդունվեց Սուլունի միտրոպոլիա (թեմ)՝ Մելտիոս միտրոպոլիտի ենթակայության ներքո: Այստեղ նրա մոտ քոս սկսվեց, որը ժամանակի ընթացքում խորացավ և վերածվեց ձեռքերի սարսափելի հիվանդության, այնպես որ այն կարելի էր անվանել ամբողջական, համատարած խոց: Նրա ձեռքերը այտուցվեցին, մաշկը ճաքեր տվեց, որոնցից արյուն և թարախ էր հոսում: Սկզբում անտեսելով հիվանդությունը՝ նա ի վերջո, դրա խորացման պատճառով ստիպված էր ամեն հնա-

րավոր միջոց ձեռնարկել, սակայն, չնայած բժիշկների բոլոր ջանքերին և տարբեր բժշկական միջոցների գործադրմանը, նրան ոչ մի թեթևացում չեղավ: Արդեն վաղուց ձգտում ունենալով մենակեցական, անապատական կյանք վարելու՝ հայր Իլարիոնը որոշեց ուղևորվել Աթոս Սուրբ Լեռը և մեր վանք եկավ հիվանդ վիճակում, ամենախղճալի ձևով այլանդակված ձեռքերով: Մտնելով գլխավոր տաճար՝ նա անկեղծ աղոթքով դիմեց երկնային բժիշկ Պանտելիմոնին, և երբ սկսեց դիպչել նրա սուրբ գլխին, սուրբ մասունքներից հանկարծ անպատմելի անուշահոտություն տարածվեց և միաժամանակ զգաց, որ ցավը թեթևացավ: Վերադառնալով խուց՝ հայր Իլարիոնը զննեց ձեռքերը և տեսավ, որ այտուցվածությունը վերացել է, իսկ բոլոր ուղղություններով տարածված ճաքերը հարթվել են: Դրանից հետո կարճ ժամանակ անց վերքերը փակվեցին, ցավը սկսեց արագորեն վերանալ, և նա լիովին առողջացավ: Դա կատարվեց 1832 թվականին: Տեսնելով սուրբ նահատակի այդպիսի բարերարությունը իր նկատմամբ՝ հայր Իլարիոնը ընդմիջտ մնաց մեր վանքում: Հետագայում սքեմ ընդունեց և երկար ժամանակ մեր միաբանության զարդն էր: Նա ի Տերննջեց 1886 թվականի հունիսի 30-ին: Հայր Ի-

լարիոնի՝ մեր վանք մտնելուց շատ չանցած, նրա ջերմեռանդ և տևական աղոթքից հետո, սուրբ նահատակ Պանտելիմոնը երազում նրան ողորմածաբար արժանացրեց իր այցելությունը: Քրիստոսի վկան այդ ժամանակ նրան հայտնեց ավետարանական սիրո լիակատարությունը, ընդ որում հասկացնելով, որ մերձավորի բարիքի մասին աղոթքներ կատարելիս նրա կողմից ոչ մի մարդկային, եսասիրական և կրքոտ բան չխառնվի: Հետագայում, երբ վանքը ապրուստի համար միջոցներ հայթայթելու զգալի դժվարություններ էր ունենում և սկսել էր ամեն ինչում զրկանքներ և աղքատություն կրել, հայր Իլարիոնը դարձյալ տևական և անձանձիր աղոթում էր սուրբ նահատակ Պանտելիմոնին, որպեսզի նա իր հովանավորությունից չզրկի վանքը: Սուրբ նահատակը կրկին նրան հայտնվեց երազական տեսություն, և երբ հայր Իլարիոնը, ասես արթմնի՝ սկսեց աղաչել նրան նույնի մասին, սուրբ նահատակը նախ անձամբ միաբանին վերաբերող խրատներ տվեց միաբանական կյանքի կանոնների խիստ պահպանության առնչությամբ, իսկ հետո ասաց. «Վանքի մասին ես հոգացել եմ, հոգում եմ և միշտ հոգալու եմ»:

Մենաստանի մասին հոգ տանելու իր խոստումը սուրբ նահատակը հաստատեց նաև 1836 թվականին, երբ միաբանությունը պահելու միջոցների բացակայության և վանքից հողերի առգրավման պատճառով մենաստանը գտնվում էր ծայրահեղ դժվարության մեջ: Այդ ժամանակ Աստծու սուրբ ծառան ոչ թե երազի մեջ տեսիլքով, այլ իրականորեն մի վանական ծերի շնորհի արժանացրեց մի քանի վերստ ուղեկցելու իրեն: Սերգի վարդապետը՝ «Սվյատագորցու նամակաները» գրքի հեղինակը, այս իրադարձությունը այսպես է նկարագրում. «Կարեյաում (մենաստանից երկու ժամվա ճանապարհի վրա) գտնվում է Սուրբ Լեոան խորհուրդը (սինոդ), որտեղ նախագահում են վստահված անձինք՝ Աթոսի վանքերից յուրաքանչյուրից մեկական ներկայացուցիչ: Այդ անձինք կոչվում են անտիպրոսոպներ, և միշտ ապրելով Կարեյաում, վանական համայնքներում իրենց վանականներին տեղեկացնում էին խորհուրդի (սինոդի) կարգադրությունների մասին: Այլ վստահվածների թվում այնտեղ էր գտնվում նաև մեր Ռուսիկի ներկայացուցիչը: Մի անգամ այդ վստահված անձին անհրաժեշտ էր շտապ տեղեկություն հասցնել վանք, որի համար էլ նա այնտեղ ուղարկեց մի ծերի, նրան հանձնելով իր նամակը: Ձմեռային

խաղաղ եղեկոն արդեն մթնշաղ էր փռում Սուրբ Լեոան վրա: Առաքվածը հույսը դրեց ճանապարհի հայտնի լինելու վրա և ուղևորվեց երեկոյան: Սակայն նոր տեղացած ձյունը նրան շեղեց ճանապարհից, և նա սկսեց դեզերել: Նրա ուժերը նվազում էին և ճանապարհը փնտրելիս միտքը խառնվում էր: Հանկարծ նրան է հասնում մի անծանոթ պատանի: Սովորական փոխադարձ ողջունից հետո պատանին հարցնում է նամակատարին. «Ո՞ւր ես գնում, ո՞վ ծեր»: «Ռուսական վանք, պատասխանեց նա, սակայն շեղվեցի ճանապարհից և հիմա ուղևորվում եմ Քսիրոպոտամ»: «Եթե այդպես է, շարունակեց անծանոթը, միասին գնանք, ես էլ հենց Քսիրոպոտամ եմ շտապում և ճանապարհը ծանոթ է ինձ»: Ծերը ուրախ էր ուղեկցի հայտնվելու համար: «Ուրեմն հետ մի ընկիր, ավելացրեց երիտասարդը, և արի ուղիղ իմ հետքերով, հակառակ դեպքում կարող ես ձորը ընկնել, ճանապարհը նոր է բացվել և դժվարին է, համ էլ ձյունով է ծածկված: Անծանոթը արագ ընթանում էր առջևից, հոգնած ծերը հաճախ էր հետ ընկնում և խրվում ձյան մեջ, մինչդեռ մյուսը այնպես թեթև էր ընթանում, որ նույնիսկ ճանապարհին նրա հետքերը չէին երևում: Այդ հանգամանքը նամակատարին

զարմացրել էր հետազայում: Նրանք լուռ հասան մինչև Քսիրոպոտամ: «Ահա քո ճանապարհը,- ասաց պատանին, ցույց տալով տրորված ճանապարհը դեպի Ռուսական վանք: «Աստված քո հետ, ես քեզ կհասնեմ»: «Ինչի՞ համար ես դու այստեղ գալիս», - հարցրեց ծերը իր ուղեկցին: «Հանդիպելու ընկերներին,- պատասխանեց նա, և նայելով սուրբ դարպասի վրա պատկերված քառասուն նահատակներին և Տիրոջը, որ պսակ էր դնում նրանց վրա, խաչակնքելով գլուխ խոնարհեց գորովալից հայացքով, խոնարհվեց հեղությամբ և անհայտացավ գավթում: Դեռ չէր հասցրել ծերը հասնել մինչև Ռուսական վանք, երբ պատանի անծանոթը հասավ նրան: Նրանք դարձյալ միասին ընթացան, և երբ իրար հավասարվեցին Ռուսսիկի ավազ դռան մոտ, ծերը ուրախությամբ խաչակնքեց, խոնարհվելով սուրբ նահատակ Պանտելեիմոնի սրբապատկերի առջև, որ իր դիմացն էր, սակայն պատանին կանգ առավ լուելյայն: Ծերը զարմանքով նկատեց, որ իր ուղեկիցը, նայելով սուրբ նահատակ Պանտելեիմոնի սրբապատկերին, ոչ միայն չխոնարհվեց, այլ նույնիսկ չխաչակնքեց, մինչդեռ Քսիրոպոտամում այդ ամենն արեց ակնածալի երկյուղածությամբ: Դա զարմացրեց ծերին: Նա առաջարկեց վանք մտնել, հանգստա-

նալ կամ զորանալ ընթրիքով և գիշերել: Սակայն անծանոթը պատասխանեց, որ դրա անհրաժեշտությունը չունի: «Ի վերջո,- շարունակեց ծերը,- այստեղ սպասիր, ես քեզ հաց կբերեմ որպես օրհնություն սուրբ նահատակից»: Պատանին համաձայնեց: Երբ ծերը պատանու մոտ վերադարձավ հացով, նա հացին ձեռք չտվեց և ասաց. «Գնա՛, ասա՛ վանահորն ու եղբայրներին, որպեսզի չտրտմեն և չհուսալքվեն, այս վանքի համար ես հոգ կտանեմ»: Վերջին խոսքերն ասելիս՝ պատանին ձեռքով ցույց տվեց վանքը, և ծերը, որ այդ ժամանակ հայացքով հետևում էր պատանու ձեռքի շարժմանը, հազիվ հասցրեց շրջվել, երբ նրա ուղեկիցը արդեն անհայտացավ: Սարսափն ու ուրախությունը ցնցեցին ծերին. նա տրտնջացող վանահորը և եղբայրներին զարմանքով պատմեց անծանոթ պատանու հայտնության, նրա սփոփիչ զրույցի և խոստման մասին: Դա առույգացրեց միաբանության մարող հոգին և դրանից համարյա անմիջապես հետո, այն է՝ 1839 թվականին, Ռուսսիկի հարազատ անունը կրող վանքում, որը սկսել էր որբանալ, ապաստանեց ռուս մարդկանց մի փոքրիկ խումբ: Ժամանակն ու նպաստավոր հանգամանքները, ամենագլխավորը՝ վանական կյանքի խստությունն ու միաբանության խաղաղությունը սկսե-

ցին այդ ժամանակներից այստեղ գրավել ուսուցիչների, ուսուցիչների, ուսուցիչների թողնում էին սիրելի հայրենիքը և Սուրբ Լեւոն վրա փնտրում երկնային հայրենիք տանող մենակեցական ճանապարհը, որը թեկուզև դժվարին է, սակայն անխտոր:

\*\*\*

Ձմեռային և աշնանային ամիսներին Միջերկրական ծովը հաճախ է փոթորկվում անսանձելի ուժգնություններով, լեռնանման ալիքներ բարձրացնելով և դրանց միջև անդունդներ բացելով, որոնք կարծես թե պատրաստ են կուլ տալու դժբախտ գոհերին: Այդ սարսափելի փոթորիկների և մրրկահողմերի ժամանակ նավերը սովորաբար պահ են մտնում ծովախորշերում, ծովածոցերում կամ որևէ տեղ, ուր կարելի է ապաստան գտնել: Բայց վա՛յ այն նավերին, որոնց բաց ծովում հանդիպում է մրրկահողմը, քանի որ հազվագյուտ նավեր են ազատվում խորտակվելուց: Մոտ երեսուցն տարի առաջ այդպիսի մի փոթորիկի մեջ ընկավ Մարմարա ծով դուրս եկած մեր վանքի նավը: Կարճ ժամանակահատվածում մրրկահողմը պոկեց առաջատան ու նավապարանները, կտորեց խելերը և կայմերը, ու նավը այնպիսի ուժգնություններով քշեց փոթորկված ալիքների վրայով, որ այն երկու ժամվա ընթացքում

հարյուր վերստից ավելի ճանապարհ անցավ: Ալիքները մերթ ողողում էին նավի տախտակամածը, մերթ ահավոր բարձրություններ այն վեր շարտում իրենց գագաթների վրա, կամ էլ ներքև էին գցում՝ որպես թե անհուն անդունդները: Նավի վրա գտնվող եղբայրները ոչ միայն անկարող էին իրենք իրենց որևէ օգնություն ցուցաբերել, այլ նույնիսկ տախտակամածի վրա որևէ շարժում անել: Տեսնելով անխուսափելի մահը, հրաժեշտ էին տալիս իրար և հանձնվելով Աստծո կամքին՝ ամեն ռոպե սպասում էին, որ իրենց խախուտ նավը կուլ կգնա ծովի ջրապտույտում կամ կջախջախվի ստորջրյա քարերին խփվելով կամ էլ՝ ափի ուղղահայաց լեռանը բախվելով: Այսպիսով, որևէ մեկի կողմից չկառավարվող, կատաղած ամեհի ծովով քշվող և քամու քմահաճույքին թողված նավը անհայտ էր, թե ուր էր սլանում: Իսկ եղբայրները, հայտնվելով կյանքի ու մահվան միջև, ընկել էին ասես տապալված, ով ինչից որ կարող էր՝ բռնել էր և կառչած էր մնացել տախտակամածի վրա: Ահա այսպիսի աղետի մեջ և դեմ հանդիման հայտվելով անխուսափելի մահվանը, սփոփիչ և թանկ էր փրկվելու նույնիսկ ամենափոքր հույսը, եթե այն որևէ մեկը տալու լիներ կործանման դատապարտվածներին: Սակայն ո՞վ կարող էր օգնել այնտեղ, ուր մարդ-

կային իմաստութիւնը անճար էր բնութեան ա-  
հավոր ուժերի դեմ: Այդ սարսափելի պահերին  
աղետայւններին որոշ մխիթարութիւն կարող էր  
տալ միայն անկեղծ և արտասովալի աղոթքը, մա-  
նավանդ որ ալիքները կարող էր սանձահարել  
և նավորդներին խեղդվելուց փրկել միայն ի վե-  
րուստ հասած օգնութիւնը: Սթափ գիտակցե-  
լով այս ամենը, եղբայրները ջերմագին աղոթում  
էին Տիրոջը՝ կյանքի աղբյուրին: Խնդրում էին  
նաև իրենց սուրբ բարեխոս նահատակ Պան-  
տելեիմոնին իրենց համար այդ աղետալի ժա-  
մանակ իր հզոր միջնորդութեամբ չլքել իրենց  
և ազատել ահավոր մահվան երախից: Եվ իր  
կանչողներին արագ օգնութեան հասնող սուրբ  
նահատակը այդտեղ ևս, իր մեծ ողորմածու-  
թեամբ հարեհաս օգնական եղավ կործանվողնե-  
րին: Նա կանխեց նույնիսկ նրանց աղոթքները,  
նավը կանխավ ուղղորդելով դեպի հանդարտ  
նավահանգիստ: Քանի որ այն ժամանակ, երբ  
աղետայւնները փրկութեան հուշի որևէ ակնկա-  
լութիւն չունեին, հանկարծ նրանցից մեկը, որը  
դեռևս ի վիճակի էր ոտքերի վրա կանգնելու,  
նկատեց, որ իրենց դիմաց ծանոթ ասին է: Իրա-  
նից հետո նա տեսավ ծովածոցը, որ համարվում  
էր (Միջերկրական ծովում) ամենահարմարը: Նա  
բռնեց նավաղեկը, ուղղութիւն տվեց նավին և

այն ասես չվնասված նավասարքով և համընթաց  
քամու ուղեկցութեամբ արագ մտավ նավահան-  
գիստ և հանգիստ խարիսխ նետեց: Ծովածոցում  
նրանք հանդիպեցին նաև ուրիշ նավերի, որոնք  
այդտեղ էին պատսպարվել մինչև փոթորիկը, և  
պե՞տք է արդյոք ասել, թե այնտեղ բոլոր ներ-  
կաները ինչպես էին զարմացել նման սարսափե-  
լի փոթորիկից այդպիսի փոքր նավի փրկվելու  
վրա, իմանալով որ այդ փոթորիկը կործանարար  
է նույնիսկ մեծ նավերի համար: Նորոգելով բո-  
լոր վնասվածքները, եղբայրները վերադարձան  
վանք և այստեղ իմացան, որ նրանց ծով դուրս  
գալուց հետո, երբ փոթորիկ սկսվեց, ամբողջ  
միաբանութիւնը հավաքվել էր և սուրբ նահա-  
տակ և հրաշագործ Պանտելեիմոնին աղոթում  
էր ծովում աղետի ենթարկվածների համար: Ան-  
նկարագրելի են ակնածալի երախտագիտութեան  
այն խորը զգացմունքները, որոնցով նավաբե-  
կութիւնից և ակնհայտ մահվանից ազատված-  
ները լցվել էին սուրբ նահատակ Պանտելեիմոնի  
նկատմամբ: Քանի որ ցամաքի վրա պատահած  
ոչ մի աղետ չի կարող համեմատվել ծովում պա-  
տահող աղետների և փոթորիկի սարսափների  
հետ, երբ այն ծառս է լինում իր ամբողջ ահա-  
վոր ուժով և տակնուվրա լինում հիմքից ի վեր-  
դա կենդանի մահն է:



**ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ ԵՎ ԲԺԻՇԿ  
ՊԱՆՏԵԼԵԻՄՈՆԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ  
ՆԻԿՈՍԵՂԻԱՅՈՒՄ**

**Ս**ուրբ նահատակ Պանտելեիմոնը իրեն բու-  
լոր աղոթողներին ցույց տալով իր բժշկու-  
թյուն պարգևող զորությունը, անթիվ հրաշքներ  
է կատարում: Դրանք կատարում է որքան իր  
որևէ աստվածապարգև օգնության կարիքը ու-  
նեցողին և իրեն դիմողին կարեկցելով, նույնքան  
էլ նրա համար, որպեսզի քրիստոնյաների միջո-  
ցով փառավորվի Քրիստոսի անունը: Սակայն  
նախանձախնդիր լինելով անգիտության խավա-  
րում ընկղմված շատ հոգիների փրկությանը, և  
մարդասիրությամբ նմանվելով իր Տիրոջը, Ով ա-  
սում է. «Ձեմ կամենում մեղավորի մահը, այլ նրա  
դարձը... և նրա կենդանի լինելը», շատ նշաններ  
և հրաշքներ է կատարում նաև անհավատների  
մեջ, այսինքն՝ թուրքերի, նաև այլադավանների,  
այսինքն Ուղղափառ-Լնդհանրական (Կաթողիկե)  
Եկեղեցուց անջատված և արևմտյան ունայնա-

մտուլթյան գիրկն ընկածներն մեջ, որոնք, ըստ էության, Քրիստոսի փարախից չեն, թե՛ նրանց և թե՛ սրանց տանելով դեպի Ուղղափառության հիմքում ընկած ճշմարտության ճանաչողությանը, իսկ անհավատներին առաջնորդելով դեպի Միակ Ճշմարիտ Արարչի հավատը:

Այդպիսի շատ հրաշքներ են կատարվել Նիկոմեդիայում մոլորյալների մեջ, և նրանք բոլորը խոնարվում են սուրբ Պանտելեիմոն բժշկի առջև և ամեն տարի մեծ բազմություններով ներկա են լինում նրա հիշատակման նախօրեին կատարվող հանդիսավոր խաչերթին, իրենց հետ բերելով հիվանդների և նրանց դնելով այն ճանապարհի վրա, որտեղով պետք է անցնի նրա հրաշագործ սրբապատկերով եկեղեցական երթը:

Սակայն այս հրաշքների մասին մեզ չկարողացան հանգամանալից տեղեկություններ հաղորդել, բացառությամբ որոշ հանրահայտ դեպքերի: Այլադավանները մեծ մասամբ ջանում են իրենց հետ կատարված հրաշքները ծածուկ պահել կամ դրանց ուրիշ մեկնաբանություն են տալիս: Չնայած այս ամենին, իր սուրբերի մեջ հրաշալի Աստծո նշանները չեն կարող ընդմիջտ անհայտ մնալ: Եվ որպես լույսը խավարի մեջ՝ երբեմն բացահայտվում են ի փառավորումն սուրբ Պանտելեիմոնի, մանավանդ որ անհա-

վատներն իրենք էլ չեն կարող ծածկել դրանք և բարձրաձայն խոստովանում են: Այնտեղ կատարված հրաշքների հավաքման ամբողջ դժվարությունն այն է, որ դրանք ոչ մեկի կողմից չգրառվելով, մեծ մասամբ մոռացվել են, և կան միայն ժողովրդական պատումների ցիրուցան արձագանքների մեջ, առանց այն մանրամասների, որոնք անհրաժեշտ են երբեմն իրադարձությունների բացատրության և լիակատար պատկերը ներկայացնելու համար:

Այստեղ ըստ կարգի կբերենք սուրբ Պանտելեիմոնի բոլոր հրաշքները որոնք մենք կարողացանք իմանալ տեղում առավելապես Նիկոմեդիայի թեմի (միտրոպոլիայի) սինոդում, որի կողմից այդ հրաշքները հետագայում գրառվել են եկեղեցական կոնդիկի (այստեղ այսպես է կոչվում եկեղեցական գրառման գիրքը) մեջ:

Սուլթան Մուրադը, արշավանք ձեռնարկելով Բաղդադ քաղաքի վրա, իր բանակով ցամաքային ճանապարհով անցնում էր Նիկոմեդիայի մոտով: Երբ նա մոտեցավ քաղաքին և հասավ սուրբ նահատակ Պանտելեիմոնի վանքին, այն ժամանակ կամեցավ իմանալ, թե ինչ է դա: Նրան պատասխանեցին՝ «Քեչիչ-խանե», (այսինքն՝ վանական բակ), սակայն սուլթանը

լսեց՝ «Խիրսիս-խանե» (այսինքն՝ գիշատիչների բակ): Նույնանման Հնչող բառեր, սակայն մեկը մյուսին հակառակ իմաստներով: Այսպիսով, վանքը ընդունելով որպես ավագակների որջ, սուլթանը հրամայեց տեղում կործանել այն, և նրա հրամանը անհապաղ իրականացրեցին: Վանքից պահպանվեցին միայն վանական խցերը և սուրբ նահատակի գերեզմանը: Այդ ավերի ժամանակ, ի գարմանս շատերի, կանգուն մնացին տաճարի մի քանի սյուներ, և դրանց վրա էր պահվում համարյա ամբողջ գմբեթը առանց պատերի, որտեղ կային սուրբերի տարբեր պատկերներ, որ կարծես թե նայում էին բռնակալի անսանձ կամայականությանը: Վանքի ավերումից հետո սուլթանը հեռացավ քաղաքից և ճամբար խփեց նրանից հեռու, Կիլեզ կոչված տեղանքում: Գիշերը երազում նրան է հայտնվում սուրբ նահատակ Պանտելիմոնը և սարսափազդու ձայնով ասում. «Ինչո՞ւ դու ավերեցիր իմ տունը: Եթե հենց հիմա այն նորից չվերականգնես, դու և քո զորքը կկործանվեք»: Սուլթանն արթնանալով, դա պատրանք համարեց և ոչ մի նշանակություն չտվեց երազին: Սակայն սուրբը նրան հայտնվեց երկրորդ և երրորդ գիշերը՝ կրկնելով այդ նույն բառերը: Դա խռովքի մեջ գցեց սուլթանին: Երրորդ անգամ

սուլթանը սարսափահար վեր թռավ, բայց արթմնի վիճակում էլ շարունակում էր տեսնել երազում հայտնված երիտասարդին, որը հենց նոր նրան սպառնում էր (ինչպես որ ինքը արտահայտվեց) իր տան ավերման համար: Ապշած այսպիսի տեսիլքից՝ սուլթանը իր ենթականերին հարցրեց. «Այդ ի՞նչ տուն է, որ Իզմիտ (Թուրքերի կողմից Նիկոմեդիա քաղաքի անվանումը) չհասած, իմ հրամանով ավերեցին»: Նրան պատասխանեցին՝ ինչպես և նախկինում. «Վանական բակ»: Սուլթանը հակաճառեց. «Այդ ինչպե՞ս, չէ որ այն ժամանակ դուք ասացիք, թե դա ավագակային որջ է: Ահա արդեն երեք գիշեր է, ինչ երազում ինձ անընդհատ հայտնվում է մի երիտասարդ և չի թողնում քնել, անհանգստացնում է և սպառնալի կշտամբում. «Ինչո՞ւ ավերեցիք իմ տունը»: Տեսնելով իր սխալը՝ միաժամանակ նաև վախենալով սուրբ նահատակից իսկապես վտանգվելուց, սուլթանը իր զորապետներին անմիջապես հրամայեց երեք օրվա ընթացքում նորոգել վանքը: Այսպիսի որոշման նա հանգել էր նաև իր որդու անակնկալ հիվանդությունը պատճառով, որը վանքի ավերման օրը սաստիկ հիվանդացավ և մահամերձ պառկած էր:

Կատարված հրաշքի իրականություն մասին առավել պերճախոս վկայում են այն իրավունք-

ներն ու արտոնությունները, որոնք վանքի վերականգնման հետ մեկտեղ որպես պարզև տրվեցին նրան: Սուլթանը հաթի-չերիֆ կամ Ֆիրման կոչված արտոնագրով վանքին իրավունք տվեց բոլոր ժամանակներում ստանալ ողջ շրջակայքի այն արտերի ու խաղողի այգիների բերքի տասներորդ մասը՝ տասանորդը և մուկատը (տասանորդից տարբեր պայմանական տուրք), մինչև ուր որ կհասներ վանքի աքաղաղի աբլորականչը: Ի հաստատումն դրա՝ վանքը պետք է վկայական տար կնիքով, որը հենց այդ ժամանակ էլ տրվեց նրան որպես հատուկ արտոնություններից և իրավունքներից օգտվող տարածք: Վանքը մեկընդմիջտ ազատվում էր բոլոր պետական տուրքերից: Այդ ֆիրմանը, որը ուժի մեջ թողեցին Ֆեթի-Մեհմեդ, Ահմեդ III, Համիդ (Աբդուլ Համիդ) սուլթանները՝ վերահաստատելով նույն իրավունքները, վերացվեց Աբդուլ-Մեջիթ սուլթանի կողմից 1839 թ. պետութայն մեջ համընդհանուր վերափոխումներից հետո, երբ հոր՝ սուլթան Մահմուդի հրամանով բոլոր ազգերի տաճարներին նախորդ սուլթանների շնորհած տասանորդները չեղյալ հայտարարվեցին և անցան պետութայն գանձարանի տնօրինութայնը:

Այդ նույն ֆիրմանի փոխարեն շնորհվեց մեկ ուրիշը, ըստ որի վանքին իրավունք էր տրվում

նախկին տասանորդի փոխարեն, որը, ինչպես վերը ասվեց, վանքը մինչև այդ ստանում էր իր շրջակայքի բոլոր խաղողի այգիներից, պետական գանձարանից ստանալ 285 պիաստր (20 ռուբլուց պակաս): Բացի այդ, սուրբ Պանտեֆեյմոնի հիշատակի օրը թույլատրվում է ուխտավորների ազատ ելումուտը:

1807 թ. Ռուսաստանի հետ պատերազմի ժամանակ ենիչերիները գինված հարձակվեցին սուրբ վանքի վրա, մտածելով այնտեղ քրիստոնյաների մեջ գտնել թաքնված մոսկովիտների (նրանք այդպես են անվանում մեզ՝ ռուսներին): Հասնելով վանք՝ նրանք գնդակոծեցին տաճարի պարսպի երկաթյա դարպասները, ցանկանալով ներս մտնել, բայց չկարողացան դրանք խորտակել: Այդ դարպասները մինչև օրս էլ կանգուն են, սակայն դրանց վրա գնդակներից մնացած շատ հետքեր կան: Անհաջողութայն հանդիպելով՝ նրանք սպասեցին գիշերվան և ցանկանում էին սանդուղքի միջոցով անցնել պատի վրայով, առաջ ուղարկելով մի դերվիշի: Բայց հազիվ էր նա բարձրացել պատի վրա և ցանկանում էր բերանը բացել թուրքերի համար սովորական կոչը գոռալու, երբ հանկարծակի տեսավ սուրբ նահատակին և այդ տեսիլքից նրան անբացատրելի

սարսափ պատեց: Հետ ընկրկելով՝ նա ընկավ և ջարդեց ձեռքն ու ոտքը: Սուրբ նահատակ Պանտելեիմոնի հայտնվելու մասին հետագայում ինքը դերվիչն էր վկայում և որպես հիշատակ իր հանդգնություն, մինչև մահ մնաց կաղ ու ջարդված ձեռքով:

1824 թ. ենիչերիների կատարած բռնությունների ժամանակ Տուզ-Սուզ-օղլուզ անունով մի թուրք ինքնակամ կտրեց սուրբ նահատակ Պանտելեիմոնի եկեղեցուն պատկանող հողամասի ծառերը (թուրքի հողամասը հարակից էր եկեղեցուն), նույնիսկ գրավեց վանքապատկան տեղանքի մի մասը: Որքան էլ նրան համոզում էին, նա ոչ ոքի լսել չէր ցանկանում: Վստահ իր ուժին և թուրքական իշխանությունների հովանավորությունը՝ նա նույնիսկ ծեծեց մի քանի քրիստոնյաների, որոնք նրան համոզում էին, որ անհրաժեշտ է դադարեցնել բռնությունը: Ծառերը կտրելով և դրանք սղոցելով որպես վառելափայտ՝ թուրքն արդեն պատրաստվում էր փայտը նավով Կոստանդնուպոլիս հասցնել վաճառքի համար, բայց նույնժամ պատժվեց՝ կծկվեցին նրա երկու ձեռքերը: Չնայած դրան, նա, այնուամենայնիվ, կազմակերպեց առաքումը: Այդժամ նրան ավելի ահեղ պատուհաս հա-

սավ: Նավը դեռ նոր էր հեռացել ափից, երբ առանց որևէ ակնհայտ պատճառի, անգամ հանդարտ եղանակին, բեռան և նավաստիների հետ միասին սուզվեց ջրի հատակը: Այդպես սուրբ Պանտելեիմոնը պատժեց ամբարշտի գիշատիչ բռնությունը:

Թյուսլյա վայրում, որ գտնվում է Նիկոմեդիայից 50 մղոն հեռու, բոլոր բնակիչները մեծ ջերմեռանդություն ունեն սուրբ նահատակ Պանտելեիմոնի նկատմամբ, որը մշտապես նրանց մոտ և շրջակա գյուղերում բազմազան հրաշքներ է կատարում: Դրա համար էլ այդտեղից հատկապես շատ ուխտավոր-աղոթողներ են հավաքվում սուրբ Պանտելեիմոնի տոնի օրը. Նիկոմեդիայի քրիստոնյաներն իրենք (որոնք մեծ մասամբ շատ աղքատ են) նրանցից շատ օգուտ են ստանում: Այնտեղ (Թյուսլյայում) բնակիչներից մեկը երեխաներ չուներ: Ամուսինները երկար ժամանակ վշտանում էին դրա համար, սակայն լսելով սուրբ Պանտելեիմոնի տարբեր հրաշքների մասին, որ կատարվում էին շրջակայքում և հենց իրենց գյուղում, 1826 թվականին ուխտագնացության մեկնեցին Նիկոմեդիա և գնացին սրբի եկեղեցին: Նրանք ջերմեռանդորեն աղոթում էին սուրբ վկային,

խնդրելով արական սեռի երեխա պարգևել: Իրենց աղոթքները կատարելով և սուրբ Ջրհորից ջուր խմելով՝ նրանք ետ վերադարձան: Սուրբը չանտեսեց նրանց աղոթքը և ի ուրախություն նրանց, այդ նույն տարում նրանք որդի ծնեցին: Երեխան դեռ վաղ հասակում այդ տարիքին ոչ բնորոշ առանձնահատուկ շնորհներ էր ցուցաբերում: Նա ինքնուրույն դերձակություն սովորեց և բավականին երկար ժամանակ զբաղվեց դրանով: Բայց հետո թողնելով այդ զբաղմունքը, դարձյալ ինքնուսուցմամբ կատարելագործվեց ոսկեգործության արհեստի մեջ: Մի անգամ, երբ նա հմտանում էր այդ գործի մեջ, նա մտքին դրեց ստույգ իմանալ, թե այդ ինչ տավրի վրա էր նվազում Դավիթ թագավորը, և արդյո՞ք չի կարող ինքը նույնպես նվազել սովորել...: Բուռն ցանկությունը նրան փորձերի մղեց, և ահա տավրիդը պատրաստ էր: Մնում էր հնչեցնել սաղմոսերգու արքայի աստվածային օրհներգերի մեղեդին: Դիտելով, թե ինչպես են նվազում այլ գործիքների վրա, նա սկսեց կամաց-կամաց մատները հերթով լարերին վարժեցնել և ի զարմանս նրան ճանաչողների, ինքնուրույն սովորեց նվազել, աստիճանաբար հմտանալով այդ գործի մեջ: Այս ամենին դյուրությամբ հասնելով՝ նա կարճ ժամանակ անց

արդեն զերազանց նվազում էր, սուրբ Դավթի սաղմոսները այնպես երգելով, որ բոլորին հուզում էր նրա ոգեշունչ նվազի հրաշալի ներդաշնակությունը: Այդ ժամանակ նա հասավ իր չափահասության տարիքին, և հայրը որոշեց նրան ամուսնացնել: Բայց նա, իմանալով դրա մասին, փախավ և թաքնվեց Կապադովկիայի Կեսարիայում և այնտեղ զբաղվում էր ոսկեգործության արհեստով, չդադարեցնելով նաև տավրի նվազելը: Նրա մտադրությունն էր պահպանել իր կուսականությունը և իրեն ընծայել Աստծու ծառայությանը: Երկար ժամանակ անց հայրը իմացավ նրա մասին և նրան սպառնալի նամակ գրեց: Նա պահանջում էր, որ որդին անհապաղ տուն վերադառնա, հակառակ դեպքում սպառնալով անիծել նրան: Վախենալով վերջինից՝ որդին շտապեց հայրական կամքը կատարել և ճամփա ելավ: Սակայն դեռ տուն չհասած, ողբալի լուր ստացավ, որ իր հայրն ու քույրը հանկարծամահ են եղել, իսկ մայրը մահամերձ հիվանդ է: Մոր հետ հանդիպման ժամանակ, խոսակցության մեջ նրան բացահայտելով ամենայն երկրայինի կարճատևությունն ու ունայնությունը, նա առաջարկեց ողջ ունեցվածքը վաճառել և վանականություն ընդունել: Մայրն այդ ամենին իր համաձայնությունը հայտնեց

ու բժշկվեց: Երկյուղած պատանին ի երախտագիտություն Աստծուն՝ շտապեց վաճառել ողջ ունեցվածքը և մոր հետ ուղևորվեց սուրբ Պանտելեիմոնի վանքը, որտեղ նրանք պահքով և աղոթքով քառասուն օր անցկացրեցին: Նրանց հոգիները միացան իրենց ընդհանուր մեծ Բարերարին ուղղված աղոթքում, և ակնածալի բերկրանքով վճռեցին այնտեղից ուղևորվել Երուսաղեմ՝ Տիրոջ գերեզմանին երկրպագության: Այնտեղ, ընտրելով փրկության տարբեր ճանապարհներ, նրանք բաժանվեցին: Մայրը մնաց կուսանոցներից մեկում, իսկ որդին եկավ Աթոս և նույնպես վանք մտավ:

Աստվածավախ լուսարար Իոանն Ավյարինուն, որը տասնյոթ տարի ծառայել էր սուրբ Պանտելեիմոնի վանքում, շատ հրաշքներ էր տեսել սուրբ վկայից, բայց վախենալով, որ թուրքերի կողմից որևէ բռնություն չլինի, եթե սուրբ ծառայի հրաշքների փառքը տարածվի, միաժամանակ ուրիշների մոտ ջերմեռանդ վերաբերմունք չտեսնելով անարժաթ բժշկի նկատմամբ, լուռ էր դրանց մասին, և միայն սուրբի նկատմամբ ունեցած ակնածանքից մղված՝ իր նորածին որդուն Պանտելեիմոն անվանակոչեց: Պանտելեիմոնը հաճախ էր իր հորից լսում

սուրբ նահատակին աղոթքով դիմելու խրատներ, որը շատ-շատ հրաշքներ է գործում (այդպես էր միշտ կրկնում բարեպաշտ հայրը): Իսկ մանրամասները հայրը չէր ասում, և միայն մի անգամ, պատեհ առիթով, իբրև գաղտնիք՝ որդուն փոխանցեց հետևյալը: Մի անգամ, 1827 թվականին, մինչև արևածագը նա վանք գնաց, որպեսզի նախապատրաստի պատարագի համար անհրաժեշտ ամեն ինչ: Եկեղեցին բացելով՝ նա տեսավ բոլոր կանթեղները վառված, որից և ակնածալի երկյուղով լցվեց, սակայն կատարվածի մասին այն ժամանակ ոչ մեկին չասաց, բացի հոգևորականներից ծերից, իսկ հետագայում հաղորդեց որդուն՝ Պանտելեիմոնին: Իոանն Ավյարինուն վախճանվեց 1841 թվին:

1833 թվականին սուլթան Մահմուդի համր ներքինին եկավ սուրբ Պանտելեիմոնի եկեղեցի: Հայտնի չէ, թե նա որքան է մնացել համր վիճակում, մի հանգամանք, որը նրան ստիպել էր այնտեղ գալ: Նա նշաններով խնդրում էր սուրբ ջրհորից ջուր տալ իրեն: Նրան տարան սուրբ Պանտելեիմոնի գերեզմանի մոտ և այնտեղ բուժիչ աղբյուրի ջրից լցնելով, համրին տվեցին խմելու, և ներքինին այդ նույն պահին էլ խոսելու շնորհ ստացավ:

1833 և 1834 թվականներին թուրքերը պատերազմում էին Եգիպտոսի հետ: Եգիպտական բանակը ղեկավարում էր փոխարքա Իբրահիմ փաշայի որդին: Թուրքական բանակի մի զորամաս էմին փաշայի գլխավորությամբ, որ ուղարկվել էր թուրքական հիմնական բանակի զորացման համար, 1833 թվականի հոկտեմբերին եկավ Նիկոմեդիա, որտեղ էլ կանգ առավ մինչև իր նշանակման մասին տեղեկություն ստանալը: Մի ջոկատը ճամբար խփեց սուրբ նահատակ Պանտելեիմոնի եկեղեցուն պատկանող հողամասում, իսկ մյուսը՝ այդ կալվածքից հեռու, եկեղեցու մյուս կողմում: Երկար ժամանակ ոչ մի լուր չէր ստացվում, զորքը սպասում էր, ժամանակն անցնում էր, մոտենում էր սուրբ նահատակ Պանտելեիմոնի հիշատակության օրը (արդեն 1834 թվին): Թվում է, թե այդպիսի ժամանակ պետք էր թողնել ամեն ինչ և հոգալ այդ օրվա տոնական հանդիսություն մասին: Սուրբ վկան ինքը հոգաց տոնակատարություն հանդիսությունը խանգարող խոչընդոտները վերացնելու՝ թուրքական բանակի զբաղեցրած տեղերը ազատելու մասին: Տոնակատարությունից տասը օր առաջ նա երազում հայտնվեց փաշային և ասաց. «Իմ հիշատակություն օրը մոտենում է, այստեղ տոնախմբու-

թյուն պիտի կատարվի, դրա համար անհապաղ հավաքվիր ու այստեղից հեռացիր»: Փաշան արթնանալով, դա պատրանք համարեց և բանի տեղ չդրեց: Սակայն սուրբ Պանտելեիմոնը հաջորդ գիշերը նորից հայտնվեց նրան և կրկնեց. «Հանիր զորքը և հեռացիր այստեղից, թե չէ խիստ կտուժես»: Փաշան չենթարկվեց սուրբ նահատակի նաև այս հրամանին: Այդ ընթացքում նրա բանակում վարակ ընկավ, և թուրքերը սկսեցին մեծ բազմություններով մեռնել: Այդ ժամանակ սուրբ Պանտելեիմոնը հայտնվեց երրորդ անգամ, արդեն ոչ թե երազում, և ոչ թե գիշերը, այլ ցերեկով և հարթմնի: Նա հելլենական հագուստով անցավ թուրքական ջոկատի ճամբարի միջով, ուղղվելով դեպի փաշայի վրանը: Թուրքերը նետվեցին բռնելու (ինչպես իրենք էին կարծում) հանդուգն եկվորին, բայց նրան մոտեցողների ձեռքերն ու ոտքերը թուլանում էին, և բոլորը սարսափահար կանգ առան: Փաշայի վրանը մտնելով՝ սուրբ Պանտելեիմոնը ահեղ ձայնով ասաց. «Այդ ինչո՞ւ դու զորքիդ հետ չես հեռանում, երբ ես քեզ հայտնեցի, որ ցանկանում եմ տոն նշել: Դրա համար հենց այստեղ էլ կկործանեմ ամբողջ զորքը և քեզ»: Փաշան իր առջև տեսնելով երկու անգամ երազում հայտնվածին, սարսափահար երեսնիվայր



գետներն ընկավ, իսկ սուրբ Պանտելեիմոնը աներևութացավ: Այդ ժամ թե՛ հրաշալի երևումով, և թե՛ բանակի մեջ մահացություն տարածումից խրատվելով, փաշան անհապաղ հրաման տվեց հավաքվելու և, ո՛վ հրաշք, մինչև զորքերի դուրս գալը բժշկվեցին բոլոր նրանք, ովքեր հարձակվել էին բռնելու սուրբին և սուրբի կողմից դրա համար պատժվել էին: Իսկ փաշան սուրբ Պանտելեիմոնի եկեղեցուց հեռանալով մի ժամվա չափով, ճամբար դրեց հրեական գերեզմանոցի մոտ, Իմբայիր կոչված վայրում: Դրանից հետո քրիստոնյաները անարգել տոնեցին սուրբ նահատակի հիշատակը, օրհնելով նրա օգնությունը, հովանավորությունը և պաշտպանությունը, իսկ թուրքական ճամբարում մահացությունը դարձյալ ծավալվեց, այն էլ այնպիսի ուժգնությամբ, որ փաշայի ամբողջ զորքից մնաց մեկ երրորդից ոչ ավելին, մի բան, որը քրիստոնյաները պատիժ են համարում սուրբ Պանտելեիմոնի տաճարից որոշ եկեղեցական իրերի հափշտակության համար:

Թուզլում (Քաղկեդոնիա) մի ամուսնացած երիտասարդ՝ քսաներկու կամ քսաներեք տարեկան, Քրիստողուլ անունով, սաստիկ հիվանդություն հետևանքով համրացել էր և չորս տա-

րի այդ անհուսալի վիճակում էր: Ծնողները, լսած լինելով սուրբ նահատակ Պանտելեիմոնի հրաշքների մասին, երեք անգամ եկել էին Նիկոմեդիա, աղոթքներ կատարել, ջրհորից ջուր էին տվել խմելու, սակայն որդին բժշկություն չէր ստանում: Վշտացած ծնողները իրենց դժբախտ որդու հետ գյուղ էին վերադառնում վերջին անգամ: Նրանք գնում էին նավակով, նրանց տեսադաշտում սուրբ Պանտելեիմոնի վանքն էր: Համր անընդհատ նայում էր եկեղեցուն, և երբ անցան նրա մոտով, հանկարծ հնչեց ինչ-որ մեկի ձայնը, որ կոչում էր. «Քրիստողո՛ւլ»: Նա հետ նայեց ու բացականչեց. «Վե՛րև նայեցեք, թռչնակը, թռչնակը և սուրբ Պանտելեիմոնը»: Եվ այդ ըոպերից նրա լեզուն բացվեց: Նա սկսեց պարզ ու հստակ խոսել: Այդ հրաշքը կատարվել է 1837 թվականին: Թռչնակին և սուրբ Պանտելեիմոնին նրանից բացի ոչ ոք չէր տեսել, ոչ էլ լսել էին այն ձայնը, որը նրան կանչել էր անունով: Նույն այդ ժամանակ նա ծնողներին համոզեց վանք վերադառնալ և այնտեղ քառասուն օր անցկացրեց իր ողորմած բժշկ մեծ Պանտելեիմոնին աղոթելով և օրհնաբանելով: Քրիստողուլը առողջացած տուն վերադառնալուց հետո ամեն տարի վանք էր գալիս սուրբ Պանտելեիմոնի տոնին:

Սուրբ Պանտելեիմոնին ակնածանքով են պատվում նաև թուրքերը, ինչպես դա երևում է շատ դեպքերից, նաև այն բանից, որ նրանք էլ են հավաքվում Պանտելեիմոնի տոնակատարությանը, հաճախ իրենց հետ բերելով նաև հիվանդներին: 1844 թվականին նիկոմեդիացի մի թուրքի փայտե տունը հրդեհ ընկավ, կրակի բոցը արագ հասավ տանիքին: Թուրքը վախեցած դուրս թռավ բակ և ամբողջ ձայնով բղավեց. «Փանթելի՛, յաթի՛չ» («Պանտելեիմոն՛ն, շտապի՛ր», այսինքն՝ շտապիր օգնու՛թյան հասնել): Այդ պահին ոմանք նկատեցին երկու աղավախների, որոնք թևածուձ էին կրակի բոցի վրա, և հրդեհը իսկույն ինքնիրեն հանգավ: Երախտագետ թուրքը մի քանի պիաստր բերեց եկեղեցի և դրանք տվեց սուրբ Պանտելեիմոնի պատկերի առջև դրված կանթեղի յուղի համար:

Նիկոմեդիայում մի վեցամյա երեխա, Քրիստի ու Ելենայի որդի Իոաննը հիվանդացավ: Չորս տարի նա տառապում էր անշարժ պառկած, ուժ չունենալով անգամ անկողնում շրջվելու և այնքան էր հյուժվել, որ թվում էր, թե կենդանի մարդու փոխարեն կմախք է պառկած, կարծես մարդու ստվեր լիներ: Նայելով դժբախտ տառապյալին՝ նրա մայրն ինքն էլ էր սրտամաշ ե-

ղել ու հանգիստ չուներ, մանավանդ որ տղան կարիք ուներ ամենագործուն և հոգատար խնամքի: Մի անգամ, 1847 թվականին, տղային պառկեցնելով պատգարակի վրա, հարագատների օգնությամբ նրան տարավ սուրբ Պանտելեիմոնի վանքը և այնտեղ իջեցրեց մեծ նահատակի գերեզմանի մոտ: «Սուրբ Պանտելեիմոն, աղոթում էր մայրը հեկեկալով, կա՛մ վերցրու ինձնից, կա՛մ բժշկիր նրան»: Սուրբին վշտագին կանչող մոր ձայնը շուտով լսելի եղավ, և նրանից ամենայն ակնկալիքից ավելի մեծ մխիթարու՛թյուն ստացավ: Տղան ոտքի կանգնեց և բարձրացավ գերեզմանից դեպի վերև տանող աստիճաններով: Նա արդեն կատարելապես առողջ էր և իր ոտքով տուն վերադարձավ: Երախտապարտ հայրը (բուլղարացի) տղայի հասակի չափով երկու մեղրամոմ պատվիրեց, և երբ դրանք պատրաստ էին, տվեց որդուն: Նա մոմերը տարավ սուրբ Պանտելեիմոնի եկեղեցի և ինքը դրեց մեծ նահատակի՝ իր բժշկի գերեզմանի մոտ: Քրիստի որդի Իոաննը, որ այդպիսի հրաշքով էր բուժվել, հիմա էլ ողջ է: Նրա տարիքը արդեն երեսունն անց է:

Սուրբ նահատակ Պանտելեիմոնի վանքում հնուց ի վեր գտնվում է նրա սրբապատկերը:

Ասում են, որ այն ստեղծվել է Իոանն Կանտակուզենի թագավորության օրոք (այսինքն՝ 1341-1355 թթ.): Նիկոմեդիայի տաճարում այդ պատկերի մոտ սուրբ նահատակի կողմից գանազան հրաշքներ են կատարվել: Բայց քանի որ նրա վրայից շատ տեղերում ներկերը թափվել էին (այն պատկերված է ալեբաստրի հենքի վրա), ապա բնակիչները, նորոթյան սովորույթով, ցանկացան այն փոխարինել նորով: Եվ ահա նրանցից Քրիստոս անունով մեկը՝ արհեստով բրուտ, բարեպաշտ քրիստոնյա, ջանասիրույթյուն հանդես բերեց իր ծախքով նոր սրբապատկեր նկարել, որն էլ նկարելուց հետո դրվեց հնի տեղը, իսկ վերջինս տարան կիմիտիր (պահոց), որտեղ, ի միջի այլոց, պահվում են նաև հին եկեղեցական իրեր: Դա 1847 թվականին էր: Դրան հաջորդեց քաղաքում խոլերայի համաճարակը, և զոհերի թիվը օրեցօր այնքան էր աճում, որ հասավ ահռելի չափերի՝ մեռնողների թիվը հասնում էր օրական մինչև հարյուր մարդու: Քրիստոնյա բնակիչները հասկացան, որ իրենք այդպիսի պատժի էին ենթարկվել հին հրաշագործ սրբապատկերը նորով փոխարինելու և հինը պահեստ տանելու պատճառով: «Դրա համար, - ասում էին նրանք, - սուրբ Պանտելեիմոնը զայրացել է մեզ վրա»: Դրա մասին

խորհրդակցելով՝ նրանք որոշեցին պահոցից հանել սրբապատկերը և նորից եկեղեցի բերել, իսկ ոմանք էլ նույնիսկ խորհուրդ էին տալիս այդ սրբապատկերով խաչերթ իրականացնել քաղաքի շուրջը: Այդ ընթացքում խոլերան շարունակվում էր և սաստկանում, այնպես որ նաև վաթսունհինգ մարդ էլ քրիստոնյաներից մեռավ: Այդ համընդհանուր աղետի ժամանակ սուրբ նահատակ Պանտելեիմոնը երազում հայտնվում է այն հույն Քրիստոսին, որը նկարել էր նոր սրբապատկերը և ասում. «Եթե իմ սրբապատկերը չտանեն եկեղեցի, ապա ամբողջ քաղաքին փրկում չի լինի այդ հիվանդույթյունից»: Սարսափահար արթնանալով՝ տանտերը վազեց եկեղեցի և պատմեց իր տեսիլքի մասին: Այդժամ բոլոր քրիստոնյաները միաբանված հավաքվեցին, մեծ ջերմեռանդությամբ վեր բարձրացրեցին սրբապատկերը և նրանով երկյուղած ականածանքով խաչերթ կատարեցին, սուրբ նահատակին աղաչելով ազատել իրենց վրա եկած պատուհասից և խոստացան այդ հին սրբապատկերի համար մետաղե մակադրվազ պատրաստել, որից հետո մեծ հանդիսությամբ այն մտցրեցին եկեղեցի ու շարունակեցին աղոթքներ մատուցել սրբին, և խոլերան այդ օրվանից դադարեց: Շնորհակալական աղոթքներ

մատուցելով՝ բնակիչները (քրիստոնյաները) կարգ սահմանեցին ամեն տարի հրաշագործ սրբապատկերով հանդիսավոր խաչերթ կատարել քաղաքից դեպի վանք, որն էլ կատարում են առայսօր:

Սուլթանական դրամատան գանձապետ, հավատամքով կաթողիկ Դուգ-Օղլիի կինը կաթվածահար էր և երկար տարիներ անշարժ գամված էր անկողնուն: 1847 թվականին այդ անվանի պաշտոնյան, լսելով սուրբ Պանտելեիմոնի հրաշքների մասին, վճռեց կնոջը տանել Նիկոմեդիա, մեծ նահատակի գերեզմանի մոտ, որի համար շոգենավ վարձեց: Հիվանդին շոգենավ տեղափոխեցին հատուկ կառուցվածք ունեցող պատգարակով, որը արևելքում սովորաբար ձեռքերի վրա տանում են բարձրակարգ աստիճանավորների ծառաները: Նույն կերպ էլ Նիկոմեդիա հասնելուն պես, հիվանդին տեղափոխեցին շոգենավից սուրբ Պանտելեիմոնի վանք: Այնտեղ Ագապոս քահանան սուրբ նահատակին պաշտոն մատուցեց, սուրբ Ջրհորից ջուր լցրեց հիվանդի վրա և նա նույն պահին բժշկվեց: Ի նշան երախտիքի՝ կաթողիկ կինը սուրբ Պանտելեիմոնի եկեղեցուն ընծայաբերեց հինգ հազար պիաստր:

Գլխառատ սուրբ վկան բուժում պարգևեց մի մեծահարուստ կնոջ համր դստերը: Հայտնի է՝ ինչից էր նա համրացել, սակայն հայտնի է, որ բժիշկների, մասնավորապես՝ ազգական բժշկի կողմից տարբեր միջոցներ էին ձեռնարկվել, որոնք այնուամենայնիվ, ոչ մի օգուտ չէին տվել, և տառապյալը այդ համր վիճակում էր մնացել վեց տարուց ավելի: Ի վերջո, ազգական բժիշկը, տեսնելով բժշկական միջոցների անօգուտ լինելը, նրա մորը խորհուրդ տվեց հիվանդին տանել Նիկոմեդիա, սուրբ Պանտելեիմոնի գերեզմանի մոտ, որի հրաշքների մասին ինքը հավաստի գիտեր և դրանից մի քանիսի մասին պատմեց ազգականուհուն: Նա բարեհոփար և ուրախությամբ ընդունեց առաջարկը և շոգենավով աղջկա և ծառայի հետ մեկնեց Կոստանդնուպոլսից: Որպեսզի իր նպատակին հասնի ուղղակի և արագ ճանապարհով, բժիշկը հանձնարարական խնդրական նամակ գրեց իր ծանոթին՝ մեծարգո (չիլիբի) Նիկոլայ Դմիտրիևիչ Յատրոպուլոյին, խնդրելով կարեկցել վշտահար մորը և դժբախտ աղջնակին, ինչպես նաև նրանց կառք ու ձի տրամադրել, մի բան, որը խեղճ կինը չէր կարող անձամբ ճարել՝ Նիկոմեդիայում ոչ մի ծանոթություն չունենալու պատճառով: Ջիլիբի Նիկոլայը սրտա-

բաց ընդունեց աղջկան և մորը, նրանց օթևան տրամադրեց իր տանը, Նիկոմեդիայում նրանց գտնվելու ամբողջ ընթացքում, իսկ հետո նաև կառք ու ձի տրամադրեց: Սուրբ Պանտելեիմոնի տաճարում հիվանդի մայրը այնտեղ գտնվող ուղղափառ հոգևորականներից մեկին խնդրեց պաշտոն մատուցել բժիշկ սրբին. վերջինս խնդրանքը չմերժեց: Պաշտոն մատուցելուց հետո քահանան պատվիրեց դստերը ցողել սուրբ Ջրհորի ջրով, սակայն, պետք է նկատի ունենալ, որ Ջրհորի ջուրը սառն է: Երբ համրի վրա առաջին դուլը լցրեցին, նա դեռ լուռ էր, բայց երբ հաջորդը լցրեցին, նա, որպես թե չկարողանալով տանել սառնությունը, բղավեց՝ «Մայրի՛կ, մայրի՛կ»: Եվ այդ նույն պահից աղջկա լեզուն բացվեց: Նա սկսեց խոսել և փառք տալ իր երկնային բժշկին՝ մեծ նահատակ Պանտելեիմոնին: Տաճարից առողջացած վերադառնալիս, իր տան մուտքի մոտ տեսնելով պարոն Յատրոպուլոյին, աղջիկը հեռվից նրան ողջունեց ուրախության խոսքերով. «Չիլիբի Նիկոլա՛յ, փառք Աստծո, ես հիմա խոսում եմ»: Շնորհակալություն հայտնելով նրա արած ամեն ինչի համար՝ մայր ու աղջիկ անպատմելի ուրախությունը վերադարձան Կոստանդնուպոլիս: Դա կատարվել է 1847 թվականին:

1851 թվականին Նիկոմեդիայի շրջակայքում մորեխը ամայացնում էր դաշտերը, այգիներն ու բանջարանոցները և զնալով ավելի ու ավելի էր բազմանում: Գյուղերում ոչնչացնելով ամբողջ բուսականությունը՝ նա մոտեցավ բուն քաղաքին և համատարած ահավոր զանգվածով նստեց սուրբ Պանտելեիմոնի եկեղեցու մոտ: Քրիստոնյա բնակիչները աղոթքով դիմեցին իրենց հովանավոր, սուրբ նահատակ Պանտելեիմոնին: Պաշտոն մատուցելուց հետո կրոնավորը դուրս եկավ և սուրբ Ջրհորի ջրով ցողեց եկեղեցու մոտ եղած մարախին, և ո՛վ սուրբ հրաշագործ, փառահեղ են քո հրաշքները, այդ նույն պահին մարախը սատկեց նախ եկեղեցու մոտակայքում՝ ուր որ ցողվեց, ապա զնալով ավելի ու ավելի հեռու, ի վերջո, իսպառ անհետացավ և այսպիսով՝ սուրբ նահատակը քաղաքն ազատեց աղետից:

1858 թվականին Նիկոմեդիայի բնակիչներից մեկը՝ Խրիստո Իոաննի Թությունջին խելագարվեց: Հարազատները նրան տարան սուրբ Պանտելեիմոնի վանք՝ աղբյուրի մոտ: Նա այնտեղ մնաց քառասուն օր, որի ընթացքում նրա համար աղոթք էր վերառաքվում սուրբ վկային: Ընդ որում, նրան սուրբ Ջրհորից ջուր էին

տալիս խմելու, և հիվանդը կատարյալ բժշկու-  
թյուն ստացավ: Իր երախտագիտությունը  
սուրբ Պանտելեիմոնին հայտնելու համար նա  
մի ամբողջ տարի աշխատում էր այդ ժամանակ  
կառուցվող եկեղեցու շինարարության վրա:

Երբ նորոգվում էր վանքը, այնտեղ աշխա-  
տող մի մոսուլման տառապում էր տենդով, և  
ինչպեսի միջոցներ էլ օգտագործում էին նրան  
բուժելու համար, օգուտ չկար: Բայց շուտով  
սուրբ Ջրհորի ջրով լվացվելուն պես, բուժում  
ստացավ և շարունակեց աշխատել, ինչպես որ  
հիվանդանալուց առաջ էր աշխատում:

1859 թվականին սուրբ Ջրհորի մոտ սուրբ  
նահատակ Պանտելեիմոնի կողմից զարմանալի  
հրաշք կատարվեց: Նիկոմեդիայից մի կին տա-  
ռապում էր անդամների թուլությամբ և ջեր-  
մախտով: Ի լրումն այդ ցավի, նրա հինգ կամ  
վեց տարեկան տղան դիվահարված էր: Սուրբ  
Պանտելեիմոնի հիշատակի օրը նա հիվանդ  
տղայի հետ ուղևորվեց վանք: Երբ իջան ներքևի  
եկեղեցին, կինը կա՛մ մթության մեջ չտեսնելով  
Ջրհորը, կա՛մ թուլության պատճառով լավ չտի-  
րապետելով մարմնի անդամներին՝ սայթաքեց:  
Նա գլորվեց ուղիղ դեպի Ջրհորը (նախկինում

իջնելու տեղում վանդակաճաղ չկար) և ընկ-  
նելով դեպի ջուրը տանող պտուտակաճև սան-  
դուղքի մարմարյա աստիճանների վրա, բռնվեց  
իր տղայից, դրանով մտածելով իրեն պահել,  
բայց դրա փոխարեն իր հետ քաշեց նաև նրան.  
նրանք սրընթաց գահավիժում էին ներքև: Պա-  
հակ Աթանասը աստիճաններով ներքև էր իջել  
ջուր վերցնելու համար: Աստիճաններով ցած  
ընկնելով՝ կինը իր հետ քաշ տվեց նաև նրան և  
այնպես ուժգին հարվածեց, որ պահակը մտա-  
ծեց, թե ողջ չի մնա: Եկեղեցում աղոթողնե-  
րը և եկեղեցու ծառայողները նետվեցին դեպի  
Ջրհորը, մտածելով այնտեղ արդեն մեռածների  
գտնել: Եվ իսկապես դժվար էր ակնկալել, թե որ-  
ևէ մեկը ողջ կմնար, քանի որ դեպի Ջրհոր տա-  
նող վայրէջքի նեղ պատերը, ինչպես նաև բուն  
աստիճանները մարմարից էին: Սակայն սուրբ  
բժիշկը, որ թույլ էր տվել այդ անկումը, դա ա-  
րել էր ոչ որևէ մեկին մեռցնելու, այլ բոլորին  
բժշկելու համար: Պահակը, ինչքան էլ որ իրեն  
հասած հարվածն ուժեղ էր, գիտակցությունը  
չկորցրեց: Ամենից առաջ նա նետվեց ջրի մոտ,  
բռնեց կնոջը և վերև բարձրացնելով՝ տվեց ժո-  
ղովրդին: Բայց այդ ընթացքում նրան մի քանի  
ձայներ գոչում էին, որ տղան էլ է ընկել այնտեղ:  
Պահակը կնոջը ջրից դուրս քաշելիս տեսավ, որ

Ջրի վրա մի մուշտակ է լողում, բայց կարծեց, թե դա կնոջ վրայից ընկած հագուստն է, և դրա վրա ուշադրություն չդարձրեց, զբաղված լինելով իր վնասվածքներով: Բայց երբ լսեց ջուրն ընկած տղայի մասին, նետվեց նրան փրկելու, և անմիջապես հանելուց հետո նրան նույնպես հանձնեց ժողովրդին: Տղան արդեն ջուր էր կուլ տվել և ուշագնաց էր: Նրան գլխիվայր կախեցին, և ջուրը հորդեց նրա կոկորդից, տղան ուշքի եկավ և նույն պահին համատարած տագնապը փոխվեց ուրախություն և սուրբ նահատակի բարձրաձայն փառաբանություն: Քանի որ թե՛ տղան, թե՛ կինը, իսկ նրանց հետ նաև վնասված պահակը, յուրաքանչյուրն իր հիվանդություններից վերջնականապես բժշկություն ստացավ, դրա մասին վկայում էին բոլորի առաջ: Գոհություն հայտնելով սուրբ բժիշկ Պանտելեիմոնին՝ մայրը տղայի հետ վերադարձավ տուն:

Մի անգամ, երբ նորոգվում էր սուրբ Պանտելեիմոնի վանքը (1858-61 թվականներին), քարտաշները արևամուտից երեք ժամ անց հանկարծակի փայլատակող լույս տեսան գմբեթի վերևում, և նույն պահին բակի վերջում տեսան ձյունածեղմակ լուսեղեն հագուստով մի երիտասարդ մարդու, որ քայլում էր վանքի շուր-

ջը: Վճռեցին մոտենալ նրան, բայց մոտենալ փորձելուն պես նա աներևութացավ:

Սուրբ վկա Պանտելեիմոնի այդ երևման մասին հաջորդ օրը քարտաշները պատմում էին բոլորին:

1860 թվականին Կոստանդնուպոլսում՝ Առնաուտ-Քեյուում, կար մի հիվանդ քրիստոնյա տակառագործ տարեց մարդ՝ Սպիրիդակի (Սպիրիդոն) անունով: Նրա հիվանդությունը այնքան էր խորացել, որ բժիշկները այն անբուժելի համարեցին և պնդում էին, որ նա չուտով անպայման կմեռնի, որին էլ նրա հարազատները ժամառժամ սպասում էին: Սպիրիդակիի մոտալուտ մահվան սպասման այդ պահին նա անշարժ պառկած էր անկողնում և լինելով սաստիկ ջերմի մեջ՝ տեսավ մեծ նահատակ սուրբ Պանտելեիմոնին, որը նրան ասաց. «Մեկնի՛ր Նիկոմեդիա, այնտեղ սուրբ Պանտելեիմոնի գերեզմանի մոտ կբժշկվես»: Սակայն Սպիրիդակին այդ հայտնությունը համարելով տենդի առաջացրած զառանցանք, այդ խորհուրդը բանի տեղ չդրեց: Հաջորդ օրը նա լսեց, որ մեկը ուժեղ թակում է դուռը: Դա եղավ ցերեկը, որից հետո ներս մտավ մի երիտասարդ մարդ, խիստ հանդիմանեց Սպիրիդակիին, ասելով.

«Ինչո՞ւ դու չանսացիր ասվածին և չես գնում Նիկոմեդիա»: Հետո բռնեց նրան, քաշեց հանեց անկողնուց և աներևութացավ: Նույն այդ պահին սենյակ մտավ հիվանդի կինը, և տեսնելով ամուսնուն ոտքի կանգնած՝ զարմացավ և հարցրեց, թե ի՞նչ է նրա հետ կատարվում: Նա պատմեց սուրբ Պանտելեիմոնի՝ իրեն երկու անգամ հայտնվելու, նրա հրամանի մասին և թե ինչպես սուրբը անկողնուց իրեն հանեց և նույն պահին անհետացավ: Այս ամենը պատմելով կնոջը՝ հիվանդն ավելացրեց, որ ինքն անհապաղ մեկնում է Նիկոմեդիա: Ուրախացած կինը նրան ուրիշների օգնությամբ պատգարակի վրա շոգենավ բարձրացրեց և նույն այդ հիվանդագին վիճակով տարավ սուրբ Պանտելեիմոնի տաճարը: Այնտեղ Աստծո սրբին ջերմ աղոթքներ մատուցելով՝ հիվանդի վրա ջուր լցրեցին, և Սպիրիդակին առողջացած տուն վերադարձավ:

Էմին անունով մի թուրք, դեռևս պատանի տարիքում, հրացանից անզգույշ կրակոցի հետևանքով խլացել էր և այդ վիճակում մնացել մոտ քառասուն տարի: Ինչ-որ մեկը նրան պատմեց Նիկոմեդիայում սուրբ Պանտելեիմոնի ջրհորի մոտ կատարվող հրաշքների մասին, և

նա 1860 թվականին եկավ մեծ հրաշագործի տաճարը: Դարպասով ներս մտնելիս նրան հարցրեցին, թե ինչո՞ւ է եկել: Թուրքը պատասխանեց, որ ինչպես ինքն է լսել, այստեղ բուժիչ ջուր կա և խնդրեց իրեն ցույց տալ աղբյուրը: Կանչեցին ժամկոչ Խրիստո Իոաննի Պիչինդիրիսին և նրան հայտնեցին թուրքի ցանկության մասին: Վերջինս ուղեկցեց նրան և ցույց տվեց՝ ինչպես իջնել աղբյուրի մոտ: Թուրքը սկսեց իջնել աստիճաններով, բայց քանի որ գոտու տակ երկար կոթով չիբուխ էր խրել, ուստի ժամկոչը նրան ասաց. «Թո՛ղ չիբուխը և նրանով մի՛ մտիր»: Թուրքը ասածը չլսեց և առանց կանգ առնելու շարունակեց ընթացքը: Խրիստոն գոռալով կրկնեց, որպեսզի նա թողնի չիբուխը և նրանով չմոտենա սուրբի աղբյուրին: Սակայն թուրքը այս անգամ ևս չլսեց և շարունակեց առանց կանգնելու գնալ: Մտածելով, թե թուրքը չի ուզում հնազանդվել, նախանձախնդիր ժամկոչը, բարկությամբ թուրքի գոտուց դուրս քաշեց չիբուխը՝ նրան հանդիմանելով անհնազանդության և սրբատեղիի նկատմամբ անփույթ վերաբերմունքի համար: Ընդ որում թուրքը կանգ առավ, նայեց ուղեկցորդին և տեսնելով նրան տազնապած և իր չիբուխը ձեռքին՝ ասաց, որ ինքը խուլ է, ուստի և խնդրում է նրան



բարձր խոսել և իր աչքերի դիմաց, որպեսզի ինքը կարողանա արագ հասկանալ ասվածը: Այդ ժամանակ Խրիստոն ասաց. «Եթե այդպես է, ապա այստեղ է ձրի բժշկողը, և դու լավ ես արել, որ եկել ես նրանից օգնություն խնդրելու»: Սա ասելով՝ ժամկոչը նրա հետ գնաց ջրի մոտ և այնտեղ երեք դույլ ջուր լցրեց նրա վրա, ջուր լցրեց նաև ականջի մեջ: Այդ պահին թուրքն հանկարծ ասում է. «Ահա ես լսում եմ»: Եվ տուն գնաց առողջացած՝ փառավորելով իրեն բժշկողին: Թուրքը Նիկոմեդիայի գավառի Բոլու գյուղից էր:

1861 թվականին եկեղեցու նորոգման ժամանակ, երբ քարե մասնաշենք էին կառուցում հոգևորականների, եկեղեցու ծառայողների ու ապագա վանականների բնակություն համար, բանվորների մեջ կար քառասունհինգ տարեկան մի թուրք: Արհամարհելով տեղի սրբությունը՝ նա իր բնական կարիքները հոգում էր պարսպի ներսում և բուն եկեղեցու մոտ: Սակայն սուրբ նահատակ Պանտելեիմոնը մի անգամ նրան հայտնվեց քնի մեջ և այնպես սպառնաց, որ թուրքը վախից վեր թռչելով՝ չգիտեր ինչ անել: Մի քիչ հանդարտվելով՝ նա վազեց եկեղեցի, մոմ առավ և այն դրեց սուրբ Պանտե-

լեիմոնի սրբապատկերի առջև՝ որպես մեղքերի թողություն: Այդ ժամանակից ի վեր այդպիսի անպատվությունն չէր անում: Մինչ այդ անդիջում, համառ և կամակոր լինելով՝ նա վիճում էր և՛ վարձի, և՛ ամեն ինչի համար: Սուրբ Պանտելեիմոնի սպառնալիքից հետո նա դարձավ զիջող, հեզ և չէր կամենում թողնել աշխատանքը՝ ասելով. «Եթե ոչինչ էլ չվճարեք, անվարձ կաշխատեմ մեծն Պանտելեիմոնի համար»:

Վանքի մոտ ապրող թուրքերը բազմիցս փորձել էին այն թալանել: Նրանց հետ միասին դրան մասնակցել էր նաև այդ գյուղի կառավարիչը: Սակայն նրանք ոչ մի հաջողության չէին հասել, քանի որ բռնվել էին կա՛մ վախով, կա՛մ սուրբ նահատակ Պանտելեիմոնի հայտնությունից, որը նրանց նույնիսկ վերքեր էր հասցրել: (Թալանի ելած չորս ընկերներից մեկը մեծ նահատակի ուժգին հարվածներից սաստիկ վերքեր էր ստացել): Այս իրադարձության իրական լինելու մասին վկայել է վերոհիշյալ գյուղի մի ուրիշ թուրք բնակիչ, Ֆիազին՝ մանկավարժ (դիդակախ) Մարկո Կլեոնիմովի ընկերը: Բացի այդ, նույն գյուղից մի թուրքի՝ վանական սեփակա-նությունը խաբեությունից յուրացնելու համար ավելի ահեղ սպառնալիք հասավ: Այդ թուրքը

վարձակալում էր վանքին պատկանող տարածքը, որը քրիստոնյաները իրենք ի վիճակի չէին մշակելու, և նրան այն տալիս էին ցանքսի համար, բերքի տասներորդ մասը ստանալու պայմանով: Այդ գործարքը շարունակվում էր մի քանի տարի, սակայն թուրքը տասանորդը ոչ մի անգամ լրիվ չէր բերում, դիտավորյալ թաքցնելով բերքի իրական չափը և այն ցույց տալով անհամեմատ քիչ, որպեսզի պայմանավորված տուրքն էլ ստացվի ավելի քիչ: Այսպիսի խաբեության համար թուրքը խիստ պատժվեց՝ չորացավ նրա աջ ձեռքը, և նա այլևս չէր կարողանում ցանքս անել: Դա նրան գղջման բերեց, և նա հետո ինքն էր շատերին պատմում, որ խաբեության համար պատժվել է սուրբ Պանտելիմոնի կողմից:

Բայց ամենակարևորը վերոհիշյալ գյուղի բազում թուրքերի և ավագանու վկայություններն են, որոնք միաբերան հաստատում են, որ գիշերով վանքի մոտով անցնելիս, նրանք հաճախ են տեսնում հնաոճ հանդերձանքով մի երիտասարդ մարդու՝ վանքի մոտի մարգագետնում քայլելիս:

Նիկոմեդիացի մի թուրք, որ թաքնված դիվահարությամբ էր բռնված, հիվանդացավ տենդով և խիստ տառապանքներից երեք տարվա մեջ այնպես չորացավ, որ մնացին միայն ոսկորն ու

կաշին: Նա պառկած էր, անկարող՝ վեր կենալ անկողնուց: Մի անգամ, 1864 թվականին, նրա մոտ է գալիս մի ծանոթ հույն, հացթուխ Իոաննը՝ Մանուիլի որդին, որ շատ տարիներ առաջ էր Կոնջե բնակավայրից Նիկոմեդիա տեղափոխվել: Թուրքին այդպիսի դրության մեջ տեսնելով, նա ասաց. «Այս ի՞նչ է, դու միշտ հիվանդ ես»: «Հա՛, դրությունս ծանր է»,– պատասխանեց նա: Քրիստոնյան շարունակեց. «Ձեի՞ր ցանկանա, որ ես քեզ տանեմ սուրբ Պանտելիմոնի մոտ, մի՞թե նա քեզ չի բժշկի»: Թուրքը միաժամանակ արտահայտեց թե՛ համաձայնություն, թե՛ կասկած: Հացթուխը նրա ուշադրությունը հրավրեց այն փաստի վրա, որ սուրբ Պանտելիմոնը քրիստոնյաներից շատերին է բժշկում: Նա ավելացրեց. «Գնա՛նք, գուցե քեզ էլ բժշկի»: Ընդունելով այդ խորհուրդը՝ թուրքը, տնեցիների օգնությամբ հասավ վանք: Եվ նրան մտքրեցին եկեղեցի: Այնտեղ նրա խորհրդատու և ուղեկից Իոաննը նրա վրա երեք դույլ ջուր լցրեց սուրբ Չրհորից, և թուրքը սուրբ նահատակ Պանտելիմոնի գերեզմանից մի քիչ հող վերցրեց: Դա անելուն պես հանկարծ հացթուխին ասաց. «Նայի՛ր, ահա ես լավացա, ես առողջ եմ», և ուրախությունից չգիտեր ինչ աներ: Կտորի մեջ մի քիչ հող փաթաթելով, նա այն

իր հետ վերցրեց ապահովութեան համար վզից կախելու, որպէսզի հիվանդութիւնը չկրկնվի և առողջացած վերադարձավ տուն: Հաջորդ օրը նա գնաց Իոաննի մոտ, սրտանց շնորհակալութիւն հայտնեց իր բուժմանը աջակցելու համար և հարցրեց. «Ի՞նչ է անհրաժեշտ արդյոք անել ի երախտագիտութիւն սուրբ Պանտելեիմոնին»: Իոաննը խորհուրդ տվեց մոմ գնել և այն դնել նրա գերեզմանի մոտ: Թուրքը մոմը վառեց ու տուն վերադարձավ, և սուրբ Պանտելեիմոնի գերեզմանի հողը որպէս թալիսման միշտ կրում էր հետը՝ ուր էլ գնար և ինչ էլ որ աներ: Բժշկվելուց քսան օր հետո նրան երագում հայտնվում է սուրբ նահատակ Պանտելեիմոնը և ասում. «Ի՞նչ ես հողը պահում մոտդ ու չես տանում այնտեղ, որտեղից վերցրել ես: Տա՛ր, թե չէ քո համար վատ կլինի»: Թուրքը, արթնանալով, դա ընդունեց որպէս երագ և ծիծաղելով տնեցիներին պատմում էր քնի մեջ իր տեսածը, թե ինչ-որ մի երիտասարդ եկավ իր մոտ, շատ էր սպառնում, այն էլ մտրակով... Եվ ուշադրութիւն չդարձրեց տեսածին: Սակայն հաջորդ գիշերը սուրբ Պանտելեիմոնը նորից հայտնվեց նրան և էլ ավելի խիստ հրամայեց հողը հետ տանել: Թուրքը այս անգամ ևս հայտնութիւնը որպէս երագ ընդունեց և դարձյալ ոչինչ չա-

րեց: Երրորդ գիշերը հայտնվեց սուրբ Պանտելեիմոնը և ասում է. «Մինչև ե՞րբ դու պիտի հողը պահես և չտանես որտեղից որ վերցրել ես»: Եվ սկսեց նրան հարվածել ինչ-որ խարազանով: Թուրքը վախեցած վեր է թռչում, վերցնում է հողը և, չնայած գիշեր էր, այն տանում է Իոաննի մոտ: «Վերցրո՛ւ այս հողը, սկսեց նա, թե չէ սրա պատճառով իմ հանգիստը կորել է»: Եվ պատմեց նրան երագում երևումների մասին: Հացթուխը չկամեցավ նրանից հողը վերցնել, այլ առաջնորդեց նրան սուրբ Պանտելեիմոնի տաճար, պատվիրելով հողը անձամբ լցնել գերեզմանի այն մասում, որտեղից այն վերցրել էր: Այս անելուց հետո թուրքը արդեն հանգիստ էր ապրում:

1864 թվականին, մեր առաջին ճանապարհորդութեան ժամանակ Նիկոմեդիայից մեկնելիս մենք մտանք նաև սուրբ Պանտելեիմոնի վանքը՝ նրա գերեզմանի մոտ խոնարհվելու սուրբ վկային և այնտեղ պատահեցինք ուխտավորների: Անկարելի էր չզարմանալ սուրբ Պանտելեիմոնի նկատմամբ նրանց ջերմեռանդութեան, ակնածանքի և հավատի վրա: Ոմանք ջուր էին խմում սուրբ ջրհորից, մյուսները՝ լվացվում, թրջում էին գլուխները, ուրիշները ծնրադրած

աղոթում էին գերեզմանի մոտ ու համբուրում այն և Աստծո ընտրյալ ծառայի սուրբ պատկերը, դրանց մոտեցնելով նաև իրենց երեխաներին, կամ էլ աղոթական հառաչանքներով մեծ նահատակի բժշկարար գերեզմանին էին հպում գլուխները, աչքերը, ականջները, ձեռքերը, իրենց հիվանդությունից բժշկություն խնդրելով, մոմեր էին վառում և անգամ համբուրում էին վանքի մուտքի դարպասները: Եվ ամենազարմանալին այն էր, որ մի կին, գերեզմանի տակից մի քիչ հող վերցնելով, որպես օրհնված յուզ քսում էր աչքերին դրանք գորացնելու համար: Եվ իսկապես հրաշալի՜ գործ՝ այն, ինչը անգամ տեսնողին կարող է կուրացնել, տեսողություն պարզեցնող հավատավոր կույրին :

Զարմանալով այսպիսի սքանչելի և ուղղափառների համար օրինակելի ջերմեռանդություն վրա՝ ինձ հետ եղածներից մեկը այդ կնոջը հարցրեց, թե որտեղից են նրանք: Նա պատասխանեց, որ հեռվից են եկել և նրանց բնակատեղին Կոստանդնուպոլսից այն կողմ է: Նա նաև հարցրեց. «Բայց ինչո՞ւ եք դուք այստեղ եկել, չէ՞ որ դուք մեր դավանանքը չունեք»: Կինը առարկեց. «Ի՞նչ կա որ: Մենք պաշտում ենք սուրբ Պանտելեիմոնին և նրա մոտ ենք գալիս բժշկության համար: Նա նաև ինձ է բժշկել

1862 թվականին: Ես քսան տարի տառապում էի աչքացավով և վերջնականապես կուրացա: Ոչ մի դեղամիջոց չէր ազդում: Բայց երբ ես այստեղ եկա և Աստծու ծառային աղոթելով՝ ջրհորի սուրբ ջրով լվացվեցի և աչքերս շփեցի գերեզմանի հողով, դրանով էլ բժշկվեցի: Դրա համար էլ ես արդեն երրորդ անգամն է, որ գալիս եմ այստեղ»: Նա շարունակեց, ցույց տալով մյուսին. «Ահա վերջերս բժշկվել է նաև այս կինը»: Այդ պահին նա էլ մանկան հետ մոտեցավ և պատմեց իր բժշկվելու մասին: Նա կրծքի վրա անբուժելի վերք էր ունեցել, որ քաղցկեղ է կոչվում, բայց այն սուրբ ջրհորի ջրով թրջելով՝ բժշկվել էր: «Եվ մերոնցից շատերը գալիս են այստեղ և տարբեր հիվանդություններից բժշկվում»,– ավելացրեցին նրանք: Ակնածանքի զգացումով եկեղեցուց դուրս գալով՝ մենք իմացանք, որ առավոտյան նոր ուխտավորների մեծ բազմություն է այնտեղ եղել: Եվ մենք եկեղեցու դռնապանին հարցրեցինք, թե նրանք արդյոք գրառո՞ւմ են սուրբ նահատակ Պանտելեիմոնի կատարած հրաշքները: «Այստեղ այդպիսի սովորություն չունենք,– պատասխանեց նա հանդարտ,– և դրանք բոլորը ո՞վ կարձանագրի: Դրանք կատարվում են համարյա ամեն օր և այնքան, որ անհնար է

գրառել»։ Մենք նրան խնդրեցինք որպես երկար ժամանակ այնտեղ ապրող ականատեսի, որոշ հրաչքների մասին ավելի հանգամանորեն պատմել։ Սակայն նա չկարողացավ մեզ գոհացնել։ Աքանչելի հրաչափործությունները, որոնք միշտ նրա աչքի առաջ էին կատարվում, դարձել էին կարծես թե սովորական։ Նա խոստովանեց, որ ինքը հրաչքների մասին անգամ չի հարցնում բժշկավորներից, բացի այն դեպքերից, երբ իր ծառայողական պարտականությունները կատարելիս է ականատես լինում, կամ երբ որևէ մեկը ուրախություն առաջին պահերին ինքն է սկսում հանդիսավորապես պատմել իր բժշկվելու մասին։ Բայց դա իր հիշողության մեջ երկար չի մնում։ Վշտանալով, որ այդքան անտարբեր են վերաբերվում սրբազան իրողություններին, մենք դիմեցինք առաջնորդարան։ Սակայն այնտեղ ևս մեզ չգոհացրին այս առումով, հաստատելով միայն, որ «հրաչքները կատարվում են միշտ և շատ», իսկ դրանք գրառել ոչ մեկի մտքով չի էլ անցել։ Մենք խնդրեցինք՝ հնարավոր չէ՞ արդյոք գոնե հետազայում ավելի ուշադիր լինել և արձանագրել հրաչքները։ Մեզ խոստացան, որ այդ ժամանակից սկսած մտադիր են առաջնորդարանում մատյան բացել, իսկ վանքում՝ գրառման գիրք։ Աչալուրջ

կհետևեն հրաչքներին և կգրառեն։ Մեկնելու ժամանակ մենք սփոփվեցինք լսելով, որ առաջնորդարանը արդեն կարգադրել է նաև գիրք պատվիրել (վանքի համար)։ Իսկ 1867 թվականին մենք ականատես եղանք, որ այդ գրառումը կատարված է և շարունակվում է։ Թող Տերը օգնի նրանց այդ սրբազան գործում։

Նիկոմեդիացի Յակոբ Օղլուի որդին կաթվածահար էր եղել և վեց ամիս կատարելապես անշարժ պառկած տառապում էր։ Բժշկական միջոցները ոչ մի արդյունքի չբերեցին, այնպես որ նրան բուժող բժիշկը հրաժարվեց դրանք կիրառելուց։ Իր տառապանքներից վեց ամիս անց նա երազում տեսավ մի երիտասարդ, գեղեցիկ արտաքինով մարդու, որն ասաց. «Գնա՛ ահա այն եկեղեցին (ցույց տվեց տեղը) և իջի՛ր ներքև, որտեղ որ ջուր կա՝ այն խմելով դու կառողջանաս»։ Այս երազային տեսիլքը ընդունելով որպես ճշմարիտ ուղեցույց՝ նա խնդրեց, որ իրեն տանեն սուրբ Պանտելեիմոնի վանքը։ Եվ այդժամ նրա ցանկությունը իրականացավ։ Դա կատարվեց 1864 թվականին, այնտեղից մեր մեկնելուց հետո։ Վանքում նախ մեծ նահատակին ուղղված աղոթքներ պատվիրեցին, այնուհետև սուրբ Ջրհորից ջուր խնդրեցին։ Խմելով՝

Հիվանդը թեթևություն զգաց և խնդրեց սուրբ վկայի գերեզմանից հող տալ իրեն: Վերադառնալով տուն՝ նա ինքն այդ հողով, որպես բուժիչ բալասանով, շփեց փայտացած անդամները և երկու օր չանցած՝ կատարելապես բժշկվեց: Դրանից վեց օր անց նա առողջացած եկավ վանք և պատմում էր Աստծո ընտրյալ ծառայի միջոցով իր հետ կատարված բժշկության մասին:

1865 թվականին հռոմեա-կաթոլիկ դավանանքի պատկանող մի կին բժշկություն ստացավ իր բնույթով յուրօրինակ հիվանդությունից: Նրա ոտքն անզգայացել էր: Նա ոչ միայն չէր կարողանում այն շարժել, այլ ոտքը մինչև անգամ խանգարում էր նրան: Եվ երբ այդ կնոջը պետք էր լինում հենակներով քայլել, ապա նա իր անզգայացած ոտքը կապում էր պարանով և քարշ էր տալիս իր ետևից՝ ինչպես կապված մի բեռ: Այդպես նա տառապում էր երեք կամ չորս տարիներ: Լսելով սուրբ նահատակի հրաշագործությունների մասին՝ նա ժամանեց Նիկոմեդիա և շոգենավից անմիջապես ուղևորվեց վանք: Այնտեղ գալով՝ նա ցանկացավ աստիճաններով իջնել սուրբ բժշկի գերեզմանի և ջրհորի մոտ, սակայն չէր կարողանում: Դա տեսնելով Աստ-

ծու երկյուղով լցված ժամհար Քրիստո Հովհանի Պիչինդերիսը իր շալակն առավ կնոջը և նրան իջեցրեց մեծ նահատակի գերեզմանի մոտ, որտեղից նրա համար հող հանեց, ու կինը երկնային բժշկին ուղղված աղոթքներ մրմնջալով՝ սկսեց այդ հողով շփել իր հիվանդ ոտքը: Շփելով՝ նա չէր դադարում սուրբ վկային աղոթելուց և այդպես շարունակեց մոտ կես ժամ: Հանկարծակի կենսականություն զգալով ոտքի մեջ՝ նա ուրախությունից գոչեց և կանչեց իրեն ներքև իջեցրած ժամհարին, որին հայտնեց իր զարմանքն ու ուրախությունը, ասելով, թե ինքը զգում է ոտքի առողջացումը և կարողանում է շարժել այն: Այնուհետև ինքը վեր բարձրացավ քարե բարձր աստիճաններով, փառավորելով իրեն ձրի բժշկողին:

Կոստանդնուպոլսեցի կաթոլիկ Ագոբ-ագասը իր ընտանիքի անդամներից մի հիվանդ ուներ տանը: Եվ իմանալով սուրբ Պանտելեիմոն վկայի հրաշագործությունների մասին՝ հեռակա խնդրեց նրա սուրբ օգնությունը: Շուտով նրա հիվանդը առողջացավ: Իրեն առողջ զգալուն պես նա Ագոբ-ագասի հետ անհապաղ եկավ Նիկոմեդիա: Գոհություն հայտնելով սուրբ վկային՝ նրանք պատմեցին նրա միջոցով կատարված բժշկության մասին: Ընդ որում եկե-

դեցուն նվիրեցին իրենց բերած փորձերը:  
Դա եղել է 1867 թվականի հունիսի 2-ին:

1867 թվականին, սուրբ Պանտելեիմոնի հիշատակման օրը, ժամերգությունից հետո, առաջնորդարանի հոգևոր խորհրդի և պատվավոր քաղաքացիների ընդհանուր ժողովին ներկայացավ մի փաստաբան և ի լուր բոլորի պատմեց իր հետ կատարված բժշկության մասին հետևյալը: Նա ասաց. «Երեկ, երբ ես վանք էի գնում, աչքերի անտանելի ցավ զգացի, որից երկար տարիներ տառապում եմ: Այնպես որ մեծ դժվարությամբ կարողացա այստեղ հասնել: Բայց սուրբ նահատակին աղոթելով և սուրբ Ջրհորի ջրով թրջելով աչքերս՝ ես նույն պահին թեթևացում զգացի և հիմա, այսքան տարիների հիվանդությունից հետո, մի առանձին ուրախությամբ նայում և ազատ տեսնում եմ: Եվ որպես պարտք համարեցի պատմել պատվարժան ժողովին ի փառս սուրբ Պանտելեիմոն բժշկի»: Այս բոլորը մենք ինքներս լսեցինք Նիկոմեդիայում այդ տոնակատարությանը մասնակցելու ժամանակ:



**ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ ԵՎ ԲԺԻՇԿ  
ՊԱՆՏԵԼԵԻՄՈՆԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ  
ՔՅՈՒՄ ՔՅՈՒՆՋՅՈՒԿՈՒՄ**

Ում հայտնի չեն թուրքական կայսրության մեջ ենիչերիների գոյության բոլոր ժամանակներում նրանց կատարած կամայականություններն ու գազանությունները: 1821 թվականի հունական ապստամբության ժամանակ խաղաղ բնակչության վրա սարսափ տարածող այդ գազանաբարո զինվորներից ոմանք անցնում էին սուրբ Պանտելեիմոնի բժշկարար Ջրհորի մոտով: Մի ենիչերի, տեսնելով աղոթողների մեծ բազմությունը, որոնք աղոթում էին սրբապատկերի առջև և ջուր էին խմում, լվացվում էին կամ ջրով ցողում հիվանդներին, կատաղությունից խելակորույս դուրս քաշեց ատրճանակը և կրակեց սուրբ Պանտելեիմոնի սրբապատկերի վրա, որի առջև շատ ջերմաբանդ աղոթողների էր տեսել: Գնդակը, սակայն, զրպչելով սուրբ Պանտելեիմոնի աջ ոտքի

ոտնաթաթին, ետ թռավ, ընդամենը թողնելով մի աննշան հետք, որը մինչ այսօր էլ երևում է: Իսկ թուրքը, որ այդ պահին դիվահարվել էր, ընկավ և մինչ կհասցնեին նրան տուն տանել, մահացավ:

Կոստանդնուպոլսի Կարաքեյու (Սև գյուղ) արվարձանում թուրք Մեհմեդը հիվանդացավ և չորս տարի կաթվածահար պառկած էր անկողնում, չկարողանալով քայլել: Սուրբ նահատակ Պանտելեիմոնի հրաշագործությունների մասին իմացող նրա ազգականները հիվանդին անկողնով բերեցին սուրբ Պանտելեիմոնի աղբյուրի մոտ, ցողեցին սուրբ Ջրհորի ջրով և թուրքը տեղում բժշկվեց: Դա կատարվել է 1835 թվականին: Աղբյուրի մոտ թողնելով հենակներն ու անկողինը՝ նա առողջացած տուն վերադարձավ և հինգ հոխա (վեց կիլոգրամ) մոմ գնելով, բերեց իրեն ձրի բժշկողին որպես երախտիք՝ դրանք թողնելով մատուռում, սրբապատկերի մոտ: Այդ ժամանակից ի վեր այդ թուրքը ամեն տարի երկու հոխա մոմ էր բերում՝ սուրբ վկայի նկատմամբ ակնածալի ջերմեռանդություն զգալով:

Սկյուտարում՝ Կոստանդնուպոլսի ասիական կողմի թաղամասում, մի մարդ դիվահարվեց և

հինգ տարի տառապում էր այդ տանջալի հիվանդությամբ: Խելակորույս դրություն մեջ հայտնվելով՝ նա նետվում էր մարդկանց վրա և զգալի վնաս հասցնում, որի պատճառով էլ բոլորը նրանից վախենում էին: 1836 թվականին նրան այդ վիճակում բերեցին սուրբ Պանտելեիմոնի Ջրհորի մոտ, որտեղ հարազատների խնդրանքով քահանան նրա վրա երգմնեցուցչական աղոթքներ կարդաց: Աղոթելու ժամանակ հիվանդը գոռալով ընկավ և ի սարսափ բոլորի՝ նրա բերանից սկսեց քուլա-քուլա փրփուր թափվել: Այդ ժամանակ դիվահարությունը բուժված շատերը կային վանքի տարածքում, որոնք հանկարծ վայնասուն բարձրացրին, աղաղակելով. «Տեսե՛ք, տեսե՛ք, դեք թռա՛վ, գնա՛ց, գնա՛ց»: Այդ ժամանակ հիվանդը ուշագնաց պառկած էր: Նրա վրա սուրբ Ջրհորի ջուր սրսկեցին և նա սուրբ բժիշկ Պանտելեիմոնի ողորմածությամբ առողջացած ոտքի կանգնեց: Դրանից հետո նրա հետ դիվահարություն երբեք չկրկնվեց:

Կոստանդնուպոլսում, անատոլիական կողմում գտնվող Քուչուկ-քեյում, խոզի միս վաճառող մի մսագործ 1837 թվականին խելագարվեց: Եվ չորս ամսից ավելի տևեց այդ վիճակը:



Նրան բերեցին սուրբ նահատակ Պանտելեիմոնի ջրհորի մոտ, ցողեցին բուժիչ ջրով և աղոթքներ էին կարդում: Այդժամ հիվանդի գիտակցությունը վերականգնվեց, և նա կատարյալ բժշկություն ստացավ: Սրտագին ցնծությունը նա շնորհակալություն հայտնեց իր ողորմած բժշկողին և նրան հղելով իր աղոթքները, տեղի սուրբ Պանտելեիմոն եկեղեցուն նվիրատվություն կատարեց: Այդ ժամանակից ի վեր նա չէր դադարում մեծ սքանչելագործին երկրպագություն գալուց, ամեն անգամ որևէ ընծայաբերություն կատարելով և մեծամասամբ մոմեր նվիրելով:

1838 թվականին Կոստանդնուպոլսում երեք աղջիկներ ընկել էին անառակություն մեջ և որպես սատանայի գործիք էին ծառայում՝ նրանց ստանալի շատ հոգիներ որսալով: Բայց այդ կանանց վրա իշխող սատանան այլևս չցանկացավ նրանց մեջ ծածուկ մնալ և իրեն բացահայտեց իրեն վայել իր իսկական գործով՝ դիվահարությունով: Վեց ամիս երեք դժբախտ զոհերը տանջվում էին սարսափելի նոպաներով, այնքան որ այդ ամենը տեսնող քրիստոնյաները գթացին և ելք չգտնելով նրանց օգնելու համար, նրանց տարան սուրբ վկա Պանտելեիմոնի

բուժիչ աղբյուրի մոտ, հոգևորականին խնդրելով նրանց վրա պետք եղած աղոթքները կատարել: Դա կատարելով՝ երեցը նրանց սուրբ ջրհորից ջուր տվեց խմելու և հիվանդները նույն պահին բժշկվեցին: Որպես երախտագիտություն՝ նրանք ուխտ արեցին սրբության և ողջախոհության մեջ մնալու մինչև իրենց կյանքի վախճանը:

1840 թվականին հրաշքով վտանգավոր հիվանդությունից բժշկվեց Կոստանդնուպոլսի Մեծ Եկեղեցու դիվանապետը: Երկար ժամանակ նա հիվանդ էր, լավագույն բժիշկները չէին կարողանում նրան որևէ օգնություն ցուցաբերել և, ի վերջո, հրաժարվեցին բուժելուց: Այդ վիճակում լինելով և իմանալով սուրբ Պանտելեիմոնի բազմաթիվ հրաշքերի մասին՝ դիվանապետը խնդրեց սրբի աղբյուրից իրեն ջուր բերեն, իսկ Քյուս Քյունջյուկից՝ նրա սրբապատկերը: Քահանան հիվանդի խնդրածը վերցրած եկավ նրա մոտ Նեոքոր (եվրոպական մասում), որտեղ ապրում էր նա, սուրբ Պանտելեիմոնին վերառաքված աղոթքներ կատարեց և հիվանդին սուրբ ջրհորի ջրից տվեց խմելու: Եռանդազին աղոթքն ու կենդանի հավատը շարժեցին մեծ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի բնորոշ ո-

դորմածուկությունը՝ մահացող դիվանապետը անմիջապես առողջացավ: Նա գնաց եկեղեցի, իր հետ տանելով քահանային ու մի ոսկերիչ վարպետի և ջերմեռանդ աղոթքով իր երախտագիտությունը հորդեցնելով, արծաթյա շրջանակ պատվիրեց սուրբ Պանտելեիմոնի սրբապատկերի համար: Այն ժամանակից ի վեր դիվանապետը, բուժվելու ժամանակ տված իր խոստման համաձայն, ամեն տարի սուրբ Պանտելեիմոնի տոնին նրա եկեղեցի էր ներկայանում և կանգնում էր դպրաց դասում՝ փառաբանելու իր սուրբ բժշկին թե՛ իր երգեցողությամբ, թե՛ իր ներկայությունով՝ իբրև կենդանի վկայություն այն հրաշքի, որն երևում էր այդ ժամանակից ի վեր իր ունեցած առողջությամբ:

1841 թվականին մի կին, անունը՝ Ելենա, որ ամուսնու մահից հետո զբաղվում էր նրա արհեստով՝ կտոր նախշելով, մի անգամ դուրս եկավ կտորը լվանալու, և գործի պահին հանկարծակի կաթված ստացավ. հարվածն այնքան ուժեղ էր, որ տեղում անշարժացավ: Նրան պատգարակի վրա տուն տարան, խեղճը պառկած էր գերանի պես, չկարողանալով տիրապետել իր անդամներին: Ծնողները բժիշկ հրավիրեցին, որը մի ամբողջ ամիս փորձում էր նրա

վրա բժշկություն ողջ կարողությունը, սակայն հիվանդը մնում էր նույն վիճակում: Նրա զարմիկը, տեսնելով երկրավոր բուժումների անօգտակարությունը, մեկնեց Քյուս-Քյունջուկ և քահանա հրավիրեց՝ հիվանդի տանը սուրբ նահատակ Պանտելեիմոնին հղված աղոթքներ մատուցելու համար: Քահանան իր հետ վերցնելով անհրաժեշտ ամեն ինչ, բացի այդ՝ մի նշխար սուրբ նահատակի մասունքներից, ուղևորվեց հիվանդի մոտ: Սրբին աղոթքներ մատուցելուց հետո, նա խաչով մոտեցավ կնոջ մահճին և նոր էր սկսել խաչակնքել, երբ հանկարծ նրա մի ոտքը զգալի արագությամբ սկսեց այտուցվել: Սա տեսնելով՝ քահանան շարունակեց խաչակնքել հիվանդին, որի ոտքը ահավոր կերպով այտուցվեց, վրայի մաշկը պայթեց, ու վերքից սկսեց ծխանման թանձր գոլորչի բարձրանալ: Սրանից հետո հիվանդի վրա ցողեցին սուրբ աղբյուրի ջրից, և նա կատարելապես բժշկվեց: Բժշկվելով այդպիսի հրաշագործությամբ, միայն շնորհիվ սուրբ բժշկի ողորմածության՝ հիվանդը հարցրեց քահանային, թե ինչ անի աստվածահաճո սուրբ ծառա Պանտելեիմոնին իր երախտագիտությունը արտահայտելու համար: Իմանալով կնոջ չունևորությունը՝ քահանան կարգադրեց քառասուն օր եկեղեցի գնալ ժամերգությունների և ամեն օր

Հիսուն անգամ խոնարհվել սուրբ նահատակի սրբապատկերի առջև, ի տես բոլորի արտահայտելու սուրբ բժշկի նկատմամբ իր երախտագիտության զգացումը:

Ռուֆաթ-փաշայի դուստրը քսան տարի տառապում էր դիվազարությամբ: Չհասկանալով հիվանդության բնույթը՝ փաշան տարբեր բժիշկների էր հրավիրում, ու նրանք, կիրառելով հիվանդի վրա իրենց ամբողջ գիտեցածը, ավելի շատ տանջեցին նրան տարբեր վիրահատություններով, արյունառությամբ ու դեղերով: Ապաքինվելու ամեն հույս կորսված էր: Թուրքերը որքան էլ կարծրացած լինեն իրենց մոլեռանդության մեջ և ինչքան էլ նախապաշարված լինեն քրիստոնեական հավատի դեմ, այնուամենայնիվ, փաշան պետք է ինքն իրեն հաղթահարեր և օգնություն փնտրեր քրիստոնեական եկեղեցում: Վաղուց լսած լինելով սուրբ նահատակ Պանտելեիմոնի բժշկությունների մասին՝ փաշան վերջապես վճռեց իր հիվանդ աղջկան տանել Քյուս-Քյունջյուկի աղբյուրի մոտ և այնտեղ քահանային խնդրեց կարեկցանք ցուցաբերել դժբախտ աղջկան: Քահանան նրա վրա աղոթքներ էր կարդում, ցողում ջրով, սակայն հիվանդը բժկություն չէր ստանում: Փաշան չէր կա-

մենում նրան հիվանդ վիճակում հետ տանել, ուստի նրան թողեց սուրբ աղբյուրի մոտ, քահանային խնդրելով անել այն ամենն, ինչ կարող էր, իսկ ինքը վերադարձավ Քյուս-Քյունջյուկից ոչ հեռու գտնվող իր կալվածքը: Քահանան երկու օր աղոթում էր, հիվանդին ցողում, ջրից էլ խմել էր տալիս, սակայն նա պառկած էր և նույնաներն էլ ավելի սաստիկ էին շարունակվում: Վերջապես երրորդ օրը, ի ուրախություն բոլոր ներկաների և ի փառս սուրբ նահատակի, նրան աղոթքներ մատուցելու ժամանակ, դեռ թողեց հիվանդին, և նա կատարելապես բժշկվեց: Այս լուրը ստանալուն պես փաշայի ծառաները, որ մնացել էին հիվանդի մոտ, անհապաղ վազեցին իրենց տիրոջ մոտ, և նա ինքնամոռաց ուրախությամբ ոտաբորիկ վազեց տեսնելու իր դստերը: Նրան տեսնելու առաջին րոպեներին փաշան ուրախությունից ինքն իրեն կորցրել էր: Այնուհետև, զգալի ընծաներ մատուցելով եկեղեցուն և քահանաներին, նա իր բժշկված դստեր հետ վերադարձավ կալվածք և վկայեց աստվածահաճո մեծ ծառա սուրբ Պանտելեիմոնի հրաշագործ օգնության մասին:

Ի թիվս այլոց վերոհիշյալ բժշկությանը ահանատես էր եղել մի չեռնոգորցի քրիստոնյա, որը նույնպես բռնված էր դիվազարությամբ և

վաղուց տառապում էր: Երբ բոլոր մնացածները արդեն լքեցին եկեղեցին, նա մնալով՝ դառնորեն հանդիմանում էր ինքն իրեն, ասելով. «Ահա նաև մահամեղական աղջիկը բժշկվեց, իսկ ես՝ պիղծս, հավատում եմ Տիրոջը և մեծարում նրա սուրբ վկաներին, բայց մինչ օրս տառապում եմ և այս հիվանդությունս մեջ չեմ դիմում սուրբ բժիշկ Պանտելեիմոնին»: Այս խոսքերով մեծ նահատակի սրբապատկերի առջև ընկնելով՝ նա սկսեց աղոթել: Բայց հանկարծ նրա մոտ կրկին դիվահարություն նույն սկսվեց: Դեռ, չկարողանալով տանել իրեն այրող աղոթքը, էլ ավելի մեծ ուժով հարվածեց չեռնոգորցուն, և նա վազելով ուղիղ ջրհորը նետվեց: Այդ պահին ներկա երկու հոգևորականներին և երկու պահակներին սարսափ պատեց, որոնք ուրիշ ոչինչ չէին կարող սպասել, բացի նրանից, որ թշվառը մահու չափ ջարդուփշուր պիտի լիներ և խեղդվեր: Այս դեպքի համար վախենալով թուրքական ոստիկանության ոտնձգություններից, նրանք նույն պահին մատուռի դռները փակելով, որոշեցին չորսով միասին դուրս հանել մարմինը և գիշերով թաքուն թաղել, որպեսզի թուրքերից չտուժեն: Պարանի վրա կեռեր կապելով՝ իջեցրին ջրհորի մեջ և փորձեցին որսալ մարմինը: Շուտով մի կեռիկ բռնեց հագուստը,

և նրանք չորսով միասին զգուշությամբ սկսեցին դուրս քաշել: Բայց երբ ընդամենը քիչ էր մնացել, որ ձեռքերով բռնեին խեղդվածին, պարանը հանկարծ կտրվեց, և չեռնոգորցին կրկին ընկավ ջրհորը: Կատարվածը առավել ազդեցիկ էր բոլորի համար, քանի որ այդ ժամանակ լսվեց ընկնողի տնքոցը: Հասկանալով, որ չեռնոգորցին դեռ ողջ է, և որ միայն երկրորդ անկումով վերջնականապես մեռավ, հոգևորականներն ու պահակները անհույս ողբում էին: Սակայն ուրիշ ոչինչ չէր մնում անելու, և նրանք դարձյալ իջեցրին կեռերը, բայց արդեն շղթայի վրա ամրացված, որպեսզի դուրս քաշեն արդեն մեռածին, ինչպես մտածում էին նրանք: Բայց որքան մեծ էր նրանց զարմանքը, երբ այդ չեռնոգորցուն տեսան կատարելապես առողջ և նույնիսկ չոր, թրջվել էին միայն ոտնաթաթերն ու վերնազգեստի եզրերը: Ապշահար՝ նրանք շրջապատեցին բժշկվածին և հարցուփորձ էին անում, թե նրա հետ ինչպես կատարվեց այդ հրաշքը: Նա պատասխանեց, թե երբ սկսեց աղոթել, դեից հարվածներ ստանալով, հայտնվեց անգիտակից վիճակի մեջ և չէր հասկանում, թե ինչ է ինքն անում, և ինչ են իր հետ անում, թե ինչպես նետվեց ջրհորը, և թե ինչպես էին նրան առաջին անգամ դուրս քաշում: Ուշքի ե-

կավ, երբ արդեն երկրորդ անգամ ընկավ, քանի որ այդ ժամանակ միայն տեսավ, թե որտեղ է ինքը, և որ իրեն որսում են կեռերով՝ դուրս քաշելու համար: Մի խոսքով, հենց այդ ժամանակ նա կատարյալ բժշկություն ստացավ: Նրան հարցրին. «Ինչպե՞ս եղավ, որ ընկնելու ժամանակ ջարդուփշուր լինելուց Աստծու ծառայի կողմից պահպանվելով, ջրում չխեղդվեցիր»: Որին չեռնոգորցին պատասխանեց. «Երբ ես ընկա, ապա կանգ առա ջրից վեր, և ինչ-որ մեկը ներքևից որպես հենարան դրեց իր ձեռքը, և ես ամբողջ ժամանակ հենված էի այդ ձեռքին, ինչպես առաջին, այնպես էլ՝ երկրորդ անգամ»: Այստեղ բոլորը փառաբանեցին սուրբ վկա Պանտելեիմոնին իր փառքը այդքան հրաշալիորեն հուշակելու համար, թե՛ չեռնոգորցու հիվանդութունը բժշկելով, և թե՛ ընկնելու ժամանակ նրա կյանքը պահպանելով:

1842 թվականին Կոնստանդնուպոլսի Օրթոքսեյուս արվարձանում սուրբ Պանտելեիմոնի եկեղեցու ժամհարը (հետագայում՝ քահանա), գնաց քաղաքից դուրս, այգում զբոսնելու և այնտեղ հանկարծակի դիվահարվեց: Նրան եկեղեցու մոտ բերեցին ահավոր նոպաներով: Նա մոլեգնում էր, շարունակ անպատվում և

անհեթեթ ու հայհոյական խոսքեր ազաղակում: Երբ սկսեցին նրա վրա երդմնեցուցիչ աղոթքներ կարդալ և սուրբ Ջրհորի ջրով ցողել, նա վայրենի ոռնաց և լուտանք էր թափում կարդացվող աղոթքի ամեն մի խոսքի վրա: Այն երկու օրերից հետո, որոնք նրա համար անցան այդ վիճակում, ի վերջո երրորդ օրը նրան նորից եկեղեցի բերեցին պատարագը լսելու համար, և խորհրդակատարության ժամանակ դարձյալ լուտանքներ էր թափում: Իսկ երբ քահանան բեմի դռանը, ավագ սեղանի առջև սուրբ ընծաներով արտասանեց՝ «Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից», թշվառականը սարսուպով ընկավ և մի քանի րոպե անզգայացած մնաց: Նրան ցողեցին սուրբ Ջրհորի ջրով և այդ ժամանակ, առողջացած կանգնելով, նա գոհացավ սուրբ բժիշկ Պանտելեիմոնից, որ նրան ողորմածաբար ազատագրեց չարչարիչ սատանայից:

1845 թվականին կոստանդնուպոլսեցի մի կոչկակար Քարալամպիոս անունով, որ ապրում էր քաղաքի Ստավրոդրոմիա հայտնի թաղամասում, դիվահարվեց և սարսուպելի մոլեգնելով, ատամներով պատառոտում էր իր մարմինը և մոլեգնած ահավոր սանձարձակություններ էր անում: Նրան բերեցին սուրբ Պանտելեիմո-

նի աղբյուրի մոտ, իսկ տեղի քահանան պատ-  
րաստվում էր երկար ժամանակով գործերով  
ինչ-որ տեղ մեկնել: Տեսնելով հիվանդին տան-  
ջալի նոպաների մեջ՝ որը, եկեղեցի բերվելու  
ժամանակ քիչ էր մնում իր հոր ձեռքը պոկեր՝  
հոգևորականը, վաղուց իմանալով նրա հորը,  
մեկնումը հետաձգեց և սկսեց աղոթքներով դի-  
մել սուրբ նահատակ Պանտելեիմոնին, դրանից  
հետո երեկոյան ժամերգություն կատարեց ու  
պատարագ մատուցեց: Պատարագի ժամանակ  
դեռ ավելի խիստ էր տանջում հիվանդին: Քա-  
րալամպիոսը խելահեղ թափով գետնին ընկավ  
և ուժգին թավալվում էր, գոռում, մոլեգնում  
էր կատաղելով, բայց պատարագի վերջում դեռ  
նրան թողեց, և հիվանդը կատարյալ առողջու-  
թյուն ստացավ:

Իր երախտագիտությունը հայտնելով սուրբ  
Պանտելեիմոնին, Քարալամպիոսը ամեն տարի իր  
բժշկման օրը գալիս էր տաճար սուրբ Պանտելեի-  
մոնի ջրհորի մոտ՝ փառաբանելով արդարին:

Կոստանդնուպոլսի Օրթա-քեյու արվարձա-  
նում ապրում էր էդոէթա ազգանունով մի հա-  
րուստ մարդ, որ զբաղվում էր դրամափոխու-  
թյամբ: Նրա Կիրկոռ անունով կինը հինգ տարի  
տառապում էր պալարախտ անբուժելի հիվան-

դությամբ՝ հասած լինելով հիվանդության վեր-  
ջին փուլին: Եվ այնպես էր հալումաչ եղել, որ  
անգամ չէր կարողանում քայլել՝ անշարժ պառ-  
կած էր և անհույս տառապում էր: Ամուսինը  
ոչինչ չէր խնայում և ունեցվածքի համարյա կե-  
սը սպառեց բժշկության համար, սակայն կնոջ  
հիվանդությունը ոչ միայն չէր նահանջում, այլ  
առավել էր սաստկանում: Էդոէթան ցանկացավ  
հիվանդ կնոջը տանել սուրբ վկայի ջրհորի մոտ:  
Սակայն ինչպե՞ս դա աներ, երբ նրան դիպչել  
էլ չէր կարելի: Նա վճռեց հրավիրել մի քահա-  
նայի, որը սուրբ Պանտելեիմոնի սրբապատկերը  
վերցրած գա իր տունը, գնաց Քյուս-Քյունջ-  
յուկ: Սակայն հոգևորականները աղոթողների  
անդադար հոսքի բազմության պատճառով չէին  
համարձակվում սրբապատկերը հեռու տեղ տա-  
նել: Էդոէթան սաստկացրեց թախանձանքը,  
ներկայացնելով հիվանդի անհուսալի վիճակը  
և նրան բերելու անկարելիությունը: Ի վերջո,  
զիջելով նրա թախանձանքին, մի երեցի թույլ  
տվեցին սրբապատկերով գնալ, բայց պայմանով,  
որ սրբին աղոթքները վերառաքելուց հետո նա  
նույն օրը անպայման վերադառնա, որովհետև  
սրբապատկերը անհրաժեշտ էր աղբյուրի մոտ:  
Աղոթքներն ավարտելով՝ հոգևորականը ջրով  
ցողեց հիվանդին, որն անզգայացավ և պառկած

էր մեռելի պես: Սակայն դա խորը և տևական քուն էր, որի ժամանակ կատարվեց նրա բժշկութիւնը: Հոգևորականը, կատարելով իր գործը, ցանկացավ ծիսակարգը վերջացնելուց հետո անմիջապէս հեռանալ: Սակայն նրան խնդրեցին սպասել, քանի որ չգիտեին, թե ինչ կկատարվի հիվանդի հետ: Տեղավորվելով կողքի սենյակում՝ տանտերն ու հոգևորականը երկար զրուցում էին: Հանկարծ կեսգիշերին հիվանդը տնեցիներին իր մոտ է կանչում և խնդրում է ուտելու բան տալ իրեն: Բոլորը զարմացած շտապեցին նրա մոտ, իսկ նա հայտարարում է, որ կատարելապէս առողջ է, կրկնելով, որ իրեն մի ուտելիք տան, քանի որ նա հիմա ամեն ինչ կարող է ուտել՝ մինչդեռ վերջին ժամանակներում առհասարակ սնունդ չէր օգտագործում: Տնեցիները բոլորը ուրախացան այդ իրադարձութիւնը տեսնելով, իսկ հարուստ տանտերը զգալի նվիրատվութիւն արեց սուրբ Պանտելեիմոնի եկեղեցուն, հոգևորականին նվիրեց երեք հազար լեւ՝ արծաթով հարյուր ութսուն ուրբլի, և հիացած նրան կոչեց «բեզիմ պապա», այսինքն՝ «մեր տերտեր»: Դա հետագայում վերածվեց այդ հոգևորականի մականվան և նույնիսկ նրա հետնորդների գերդաստանը ցայսօր կոչվում է «Բեզիմ պապա»:

Կոստանդնուպոլսի Արնատ-քեյում մի հույնի որդին երկար ժամանակ տառապում էր դիվահարութեամբ: Նրան տանում էին տարբեր սրբավայրեր, բայց ոչ մի տեղ նա բժշկութիւն չէր ստանում: Ի վերջո հայրը նրան տարավ սուրբ Պանտելեիմոնի աղբյուրի մոտ, և երբ արդեն նավով ափին մերձեցան, այդժամ դիվահարը այնպէս ահարկու և մոլեգին գոռաց, որ բոլորը շուկայից փախան, չհասկանալով, թե այդ ինչ է կատարվում: Իսկ հիվանդը գոռում էր. «Չե՛մ գնա, չե՛մ գնա»: Բայց նրան բռնի բերեցին սուրբ նահատակ Պանտելեիմոնի եկեղեցի: Դա տեղի է ունեցել 1853 թվականին, սուրբ վկայի հիշատակի օրվա Պատարագի ժամանակ: Երբ երգեցին «Քեզ ենք երգում»-ը, դիվահարը ցնցվեց, ընկավ, հետո դարձյալ վերկացավ և արդեն կատարելապէս առողջ էր: Նա պարգևաված բժշկութեան համար շնորհակալութիւն հայտնեց սուրբ բժիշկ Պանտելեիմոնին: Իր երախտագիտութիւնը արտահայտելու համար ցանկացավ ընդմիջտ մնալ մեծ նահատակի եկեղեցում ծառայելու: Սակայն հայրը, հակառակ նրա կամքի, նրան տուն տարավ: Բայց հետագայում էլ ծնողից դրա թուլտվութիւնը չստանալով՝ նա ծածուկ փախավ տնից և սպասավորութեան ընդունվեց մի վարդապետի մոտ,

որն ապրում էր Քյուս-Քյունջյուկից ոչ հեռու, Սելևրիա գյուղում, որի միջոցով հույս ուներ միշտ գտնվել սուրբ Պանտելեիմոնի եկեղեցում: Հայտնի է, թե վարդապետը արդյոք օգնե՞ց նրա ցանկության իրագործմանը, բայց հայտնի է, որ բժշկվածը երկու տարի նրա մոտ ապրելուց հետո, թողեց նրան և ուղևորվեց Աթոս, որտեղ էլ մտավ վանքերից մեկը:

1850-ական թվականների սկզբում սուրբ Պանտելեիմոնի կողմից զարմանալի հրաշք կատարվեց նրա աղբյուրի մոտ: Ռիվա գյուղում (Քաղկեդոն) մի կաթվածահար եղած թուրք քսան տարի գամված էր մահճին: Նրա մոտ վերքեր էին բացվել և գարշահոտ հեղուկ էր արտազատվում: Լինելով հարուստ՝ նա փող չէր խնայում, սակայն բժշկությունից ոչ մի օգուտ չէր ստանում: Նրան խորհուրդ տվեցին դիմել սուրբ Պանտելեիմոնին, որը բժշկում է ամեն տեսակ անբուժելի հիվանդություններ: Նա ինքն էլ վաղուց լսել էր սուրբ վկայի աղբյուրի մոտ կատարվող հրաշքների մասին, բայց դեռևս իր համար օգնություն էր սպասում երկրային դեղամիջոցներից, որոնք նշանակվում էին փորձառու բժիշկների կողմից: Ի վերջո, քսան տարվա ընթացքում կորցնելով ամեն հույս,

նա հարազատներին կարգադրեց իրեն տանել Քյուս-Քյունջյուկ: Վարձկան բեռնակիրը նրան իր ուսերի վրա հասցրեց ափից մինչև սուրբ Պանտելեիմոնի եկեղեցու պարսպից ներս և ուրիշների օգնությամբ նրան այնտեղ դրեց: Բեռնակիրը հրեա էր: Սրբելով իր վրայից հիվանդի թարախի հետքերը, նա կանգնած սպասում էր, մինչև որ թուրքը կանի ինչ որ իրեն պետք էր, որպեսզի նույն կարգով նրան ետ տանի և, բնականաբար, ստանա հասանելիք վարձը: Կենդանի հավատով լցված, մեծ նահատակ սուրբ Պանտելեիմոնի անթիվ հրաշքների ականատես քահանան մոտենում է անշարժ պառկած թուրքին և ասում. «Էլ ի՞նչու ես պառկել, վեր կաց, մի՞թե դու չգիտես, որ եկել ես սուրբ Պանտելեիմոնի մոտ»: Սակայն հիվանդը առաջվա պես անշարժ պառկած էր: Բարեպաշտ հոգևորականը կրկնեց իր խոսքերը, սակայն հիվանդը դեռ անշարժ էր: Սուրբ Պանտելեիմոնի փառքին նախանձախնդիր քահանան երրորդ անգամ կրկնելով նույն խոսքերը, թեթևակի հարվածեց հիվանդ թուրքի դեմքին և քաշեց նրա ձեռքից, որպես թե ստիպելով ոտքի կանգնել: Թուրքը սկսեց թուլություն բարձրանալ: Նրան մոտեցրին ջրհորին, վրան ջուր լցրեցին, և նա, ի զարմանս ամենքի,



բժշկվեց վերքերից և կաթվածահարուցողությունից: Ուրախացած՝ նա դուրս թռավ մատուռից և գոռաց, փառաբանելով սուրբ բժիշկ Պանտելեիմոնին: Հրեա բեռնակիրը, նրան տեսնելով այդ վիճակում՝ ողջ-առողջ քայլելիս, կատարված հրաշքից սարսուծ, դուրս թռավ փողոց և ինչքան ուժ ուներ, գոռաց. «Երբեք էլ չէի տեսել այսպիսի հրաշք»: Նրա այս բղավոցի վրա մարդկանց խառը բազմություն հավաքվեց, և նա ամբոխի մեջ պատմում էր, թե ինչպես բերեց ցավոտ վերքերով պատված թուրքին, և թե ինչպես նա հանկարծակի առողջացավ: Այստեղ մոտեցավ նաև ինքը՝ բժշկվածը, վկայելով կատարված հրաշքը: Այդ դեպքի մասին լսելուց շատերին ակամա ահը պատեց, մանավանդ նրանց, ովքեր անձամբ գիտեին թուրքի քսանամյա հիվանդություն մասին: Նվիրատվություն կատարելով սուրբ Պանտելեիմոնի եկեղեցուն՝ թուրքը այդ ժամանակից ի վեր իր բուժման տարեդարձին միշտ գալիս է սուրբ Պանտելեիմոնի աղբյուրի մոտ, գոհանում սուրբ բժշկի պարգևած առողջության համար և միշտ մոմ բերում:

Կոստանդնուպոլսում կոչկակար Սաավի կինը՝ Գեորգիսան, հիվանդացավ կողացավով: Նա ստամոքսի ջղաճգություններ էր ունենում, իսկ

երբ դրանք ուժեղանում էին, ամբողջ որովայնը ձգվում էր, և Գեորգիսան կիսամեռ վիճակում էր հայտնվում: Այսպես նա տառապում էր երեք տարի, և բժիշկները չէին կարողանում նրան ոչնչով օգնել: Նրա ամուսինը, լսելով սուրբ Պանտելեիմոնի հրաշագործությունների մասին, 1857 թվականին նրան բերեց Քյուս-Քյունջյուկ, ուր աղոթքներ էին վերառաքում սրբին, հիվանդին ջուր էին տալիս խմելու, և նրանք երեք ամիս տուն չմեկնելով, աղոթում էին սուրբ Պանտելեիմոնին, որը բժշկությունը ուշացնում է նրանց իսկ հոգևոր օգուտի համար, մղում էր կենդանի հավատի և բարեպաշտական գործերի: Նրանց Քյուս-Քյունջյուկում մնալու երրորդ ամսվա վերջում Գեորգիսան կատարելապես առողջացավ: Այդ ժամանակից ի վեր նրանք ամեն տարի գալիս են սուրբ նահատակ Պանտելեիմոնի տաճար և նվիրաբերություններ կատարում ըստ իրենց կարողությունների:

Կոստանդնուպոլսում Անաստասիա անունով մի կին յոթ տարի տառապում էր ղիվահարությունից: Հարազատները 1858 թվականին նրան բերեցին սուրբ Պանտելեիմոնի աղբյուրի մոտ: Այդ ժամանակ սուրբ Մատրոնայի հիշատակին պատարագ էին մատուցում: Եվ ղիվա-

Հարը թավալվում էր, գոռում, հայհոյում էր ամեն սրբություն, բայց երբ սարկավազը բեմի դռնից դուրս բերեց Հաղորդությունը և ասաց. «Երկյուղով և հավատով մերձեցե՛ք», դիվահարը սարսափելի գոռոցով ընկավ: Արտասովոր այդ ճիչից բոլորը վախեցան: Բերանը այնքան անբնական էր ծռվել, որ սարսափելի էր նրան նայելը: Այդ ժամանակ, ի տես բոլորի, նրա բերանից ծուխ դուրս եկավ, և դա շարունակվեց տասը րոպե: Հիվանդը ուշաթափվեց, և բոլորը կարծեցին, թե մեռավ: Բայց երբ սուրբ Ջրհորից ջուր բերեցին և նրան ցողեցին, նա հանկարծ վեր կացավ և արդեն առողջ էր: Իր երախտագիտությունը հայտնելով սուրբ Պանտելեիմոն աստվածահաճո մեծ ծառային, նա քառասուն օր ապրեց եկեղեցում և երբեք չէր ցանկանա հեռանալ իր բժշկվելու վայրից, սակայն ենթարկվելով ամուսնու կամքին՝ վերադարձավ իր տուն:

Կոստանդնուպոլսում ճարտարապետի կինը, որ նույնպես ութ ամիս շարունակ բռնված էր դեռից, ընդ որում հղի էր, և երբ նրան բերեցին Բալակլիա, Տիրամոր աղբյուրի մոտ, ճանապարհին երկունքի ցավեր զգաց, որի համար էլ նրան անհապաղ տարան հիվանդանոց: Այնտեղ մանկան ծնունդից հետո նա կաթվածահար եղավ:

Նրա ոտքերը անզգայացան, իսկ ձեռքերը ծռվելով այնպես ծալվեցին դեպի ուսերը, որ դրանք չէր կարողանում բացել և վեր բռնած էր պահում: Շարժվել կարողանում էր միայն թեք նստած վիճակում, այն էլ առանց ձեռքերի օգնության, քանի որ դրանք իրեն չէին ենթարկվում: Ի լրումն այս ամենի, նրա մոտ սաստկացան նաև դիվահարության նոպաները: 1859 թվականին, սուրբ նահատակ Պանտելեիմոնի հիշատակի օրը նրան այսպիսի ահավոր վիճակում տեղափոխեցին Քյուս-Քյունջլուկ և տարան եկեղեցի: Պատարազի ժամանակ նա այնպես էր մոլեգին մոնչում, որ խլացնում էր նույնիսկ պաշտամունքը, որի համար էլ արքեպիսկոպոսը կարգադրեց նրան եկեղեցուց դուրս բերել: Սակայն ամուսինը թախանձեց հիվանդին եկեղեցում թողնել, և նա մնալով՝ բժշկություն ստացավ: Պաշտամունքի վերջանալուն պես արքեպիսկոպոսը նրան իր մոտ կանչեց, օրհնեց և ամբողջ ժողովրդի ներկայությամբ բարձրաձայն փառաբանեց բազումողորմ սուրբ Պանտելեիմոնին, որ այդպիսի սքանչելի ու փառավոր հրաշքներ է գործում:

Կոստանդնուպոլսում տասը տարեկան մի պատանի, քրիստոնյա ընտանիքից, հիվանդության հետևանքով համրացավ և խլացավ ու չորս տարի

մնաց այդ դրույթի մեջ: Հարագատները նրան բերեցին Քյուս-Քյունջյուկ, սուրբ Պանտելեիմոնի աղբյուրի մոտ, ուր խնդրեցին աղոթքներ կատարել, սուրբ Ջրհորից ջուր խմեցրին, ջրով ցողում էին նրան, սակայն պատանին մնում էր խուլ ու համր: Այդ ժամանակ եկավ ծայրագույն վարդապետը և վերցնելով հիվանդին՝ ինքը նրան ջուր տվեց սուրբ Ջրհորից: Ապա նրան վերև տարավ, պահանջեց սուրբ Պանտելեիմոնի եկեղեցու բանալին և այն դրեց պատանու բերանը, իսկ երբ պատեցրեց, որպես թե բացելով, տղան անորոշ ինչ-որ բան մը թմրեց և սկսեց լսել: Թվում էր, թե բժշկությունը թերի էր մնացել, սակայն երբ նրան տուն բերեցին և հենց նոր էին տուն մտել, տղան հարցրեց. «Իսկ ո՞ւր է մայրիկը»: Եվ այդ պահից վերականգնվեց նաև խոսելու ունակությունը: Ուրախացած գերդաստանը առողջացած տղայի հետ նույն-ժամ ուղևորվեց սուրբ նահատակ Պանտելեիմոնին գոհույթյան աղոթք մատուցելու, և դրանից հետո հայրը մինչև իր կյանքի վերջը ամեն տարի հրաչքի կատարվելու օրը գալիս էր փառաբանելու Աստծո սուրբ վկային:

1860 թվականին Սկյուտարում մի տասնհինգամյա տղա, կոչկակարի աշակերտ, Իոանն ա-

նունով, նստած աշխատելիս հանկարծ այնպիսի անհեթեթություն ասաց, որ դրանով ապշեցրեց բոլոր լսողներին: Ապա, ետ շրջվելով՝ ընկավ աթոռից և սկսեց դիվահարված մոլեգնել: Տղայի նուպաները այնքան սաստիկ էին, որ նրա մոտ եղողները ստիպված էին նրան շղթայով կապել: Բժիշկ հրավիրեցին, և նա, հասկանալով, որ այդ հիվանդությունը բժշկական միջոցներով անբուժելի է, խորհուրդ տվեց հիվանդին տանել սուրբ նահատակ Պանտելեիմոնի մոտ: Կոչկակարը հիվանդի հետ ուղևորվեց Քյուս-Քյունջյուկ: Երբ նրան տարան աղբյուրի մոտ, ծամածուվում էր, զանազան արտառոց բաներ անում և իրեն պահում էր խելագարի պես: Իսկ երբ սկսեցին նրա վրա կարգալ դեեր հալածելու համար նախատեսված աղոթքները, նա հայտնվեց անգիտակից վիճակում և ամբողջ գիշեր մեռելի պես պառկած մնաց: Բայց առավոտյան հանկարծակի սարսափելի մոռնաց ինչ-որ անբնական, անմարդկային ձայնով: Նրա վրա սկսեցին Ավետարան կարգալ: Նա կրկին ուշաթափվեց, բայց այս անգամ ուշաթափությունը վերջացավ բժշկությունը, քանի որ երբ նրան ցողեցին սուրբ Ջրհորի ջրով, հիվանդը ուշքի եկավ և իրեն կատարելապես առողջ զգաց:

Սուրբ նահատակ Պանտելեիմոնը, Աստծուց փառավորվելով՝ այսպես հրաշքներ է գործում, օգնելով ամեն տեսակ հիվանդություններով տառապողներին: Հավաստի է, որ Կոստանդնուպոլսի տարբեր արվարձանների շատ բնակիչներ հրաշքով բժշկվել են, սակայն հանգամանալից տեղեկություններ հավաքել չէինք կարող: Մեզ հաղորդում էին միայն, որ բազում հրաշքներ էին կատարվել Նեոքոր, Բոյաջի-քեյոլ, Բույուկ-դերե թաղերում, որտեղ ոչ շատ վաղուց բժշկվել էին տարբեր հիվանդություններով տառապողներ (առաջինում՝ երեք հիվանդ, երկրորդում՝ երեք, երրորդում՝ յոթ կամ ութ), և ընդարձակ Կոստանդնուպոլսի շատ այլ արվարձաններում և գյուղերում: Ափսոս, որ չկար մեկը, որից կարողանայինք իմանալ ամենողորմ սուրբի կատարած այլ հրաշքների մասին: Բոլորը վկայակոչում էին սուրբ Պանտելեիմոնի հրաշքների գրառման մատյանը, որի մեջ արձանագրված են մինչև երկու հազարի չափ հրաշքների փաստերը: Սակայն մեր այնտեղ եղած ժամանակ այդ մատյանը եկեղեցում չէր և այն գտնել չէին կարողանում (չգիտեինք ճիշտ էր ասում, թե՞ ոչ): Այդ երկու հազար հրաշքները գրառվել են քսանյոթ տարիների ընթացքում, սկսած բուն աղբյուրի մոտ մյուս եկեղեցու

կառուցման ժամանակներից: Բժշկություն ստացածներից համարյա յուրաքանչյուրը իր ձեռքով այդ մատյանի մեջ գրանցում էր, ինչպես մեզ ասացին, իր ազգանունը և տարին, ամիսն ու ամսաթիվը, առանց որևէ մանրամասնությունների, վկայելով միայն, որ բժշկություն է ստացել: Այնուամենայնիվ, անգամ այսպիսի անհատակ մատյանը որպես այդքան բազմաթիվ վկայությունների հավաքածու՝ հունարեն, թուրքերեն, հայերեն և ուրիշ լեզուներով, իր նշանակությունն ունի: Իսկ հոգևորականների ու բնակիչների խոսքերով, բացի գրառածներից, հրաշքներ, անշուշտ, շատ էին կատարվել, նույնիսկ մեծ մասը գրի չէր առնվել: Այնտեղ հանրահայտ էր նաև այն, որ տարբեր խեղանդամներ և հիվանդներ, գալով հենակներով, հեռանում էին առողջացած և հենակները թողնում էին բակում, որոնց թիվն էլ շատ մեծ էր: Ոչ վաղ անցյալում այդպես հավաքվել էին մինչև հիսուն գույգ հենակներ, որոնք պարզապես օգտագործվում էին որպես վառելիք: Այնտեղ երկար ժամանակ մեծ թվով անկողիններ կային, որոնք վրա բերում էին ծանր հիվանդների, սակայն, բարեբախտաբար, բժշկվելով, նրանք բուժված տուն էին վերադառնում, իսկ անկողինները, որպես հաղթական ավար, մնում էին

աղբյուրի մոտ, վկայելով հավատի հաղթանակը մահվան նկատմամբ, ի փառս սուրբ վկա Պանտելեիմոնի: Ափսոս որ այդ կատարված հրաշքների մասին պերճախոս հուշարձանները հրաշագործ իրադարձությունների վկաների աչքին ոչ մի արժեք չեն ներկայացնում և ճիշտ նույն կերպ օգտագործվում են ցախի փոխարեն: Դրա համար մենք չէինք կարող չարտահայտել մեր խորը ափսոսանքը այնտեղի հոգևորականներին և նրանցից չհայցել, որ ապագայում այդ հաղթության նշանները այլ կերպ օգտագործեն:



## ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ ԵՎ ԲԺԻՇԿ ՊԱՆՏԵԼԵԻՄՈՆԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ ԱՅԼ ՏԵՂԵՐՈՒՄ

**Ե**րբ հին բյուզանդական կայսրությունը ընկավ թուրքերի իշխանության ներքո, ինչպես հայտնի է, Աստծո որոշ տաճարներ վերածվեցին մզկիթների: Ի թիվս այլ տաճարների, Սալոնիկում ևս սուրբ Պանտելեիմոն եկեղեցին վերածվեց մզկիթի, որտեղ, ինչպես հայտնում են, բազում հրաշքներ կատարվեցին թուրքերի վրա: Այստեղ կհիշատակենք մի առավել նշանակալի հրաշք, որի մասին կարելի եղավ հավաստի տեղեկություններ հավաքել: Մինարեթի՝ մզկիթի աշտարակի վրայից, որը յուրաքանչյուր թուրքական մզկիթի բաղկացուցիչ մասն է, մուեճինը (խոջան կամ բեզանը) ձայնը գլուխը գցած ազատ բղավում է՝ աղոթքի կանչելով մոլորամասներին: Սակայն սուրբ Պանտելեիմոնի հին եկեղեցու մոտ կառուցված աշտարակի վրայից նրանցից ոչ մեկը այդ բանը չէր անում:

(Սալոնիկում կա նաև մզկիթի վերածված մի ուրիշ՝ Տասներկու առաքյալների անվան եկեղեցի, որտեղ թուրքերի կողմից քաղաքի գրավումից ի վեր, այդ ժամանակ սուրբ առաքյալների կողմից կատարված հրաշքից հետո կարգ է սահմանված մզկիթի աշտարակից չբաժանել, և մինչև այսօր էլ մոսուլմաններն այնտեղ աղոթքի չեն հավաքվում: Հրաշքը կատարվեց հենց այն պահին, երբ առաջին անգամ առաջին բեգանը աշտարակ բարձրացավ իր աղոթքի կանչը ազդարարելու: Նա համրացավ, իսկ նրանից հետո նաև ութ թուրքեր, որոնք բոլորը եկեղեցում տեսան տասներկու այրերին՝ սուրբ առաքյալներին և համր մնացին ամբողջ կյանքում: Սարսափած մոսուլմանները այդ ժամանակվանից որոշում կայացրին փակել և՛ մզկիթը, և՛ աշտարակը և երբեք չբացել. այդ կարգը մինչև օրս էլ չի խախտվում): Իսկ եթե մեկը հանդգնում էր բղավել, ապա միշտ սուրբ նահատակի կողմից խիստ պատժվում էր՝ ոմանք անխնա ծեծվում էին, ոմանք՝ պապանձվում, ամբողջ կյանքում համր մնում, իսկ մեծ մասամբ աշտարակի հետ միասին տապալվում էին կամ նրա վրայից հեռու էին շարտվում և ջարդովիչուր լինելով՝ մեռնում, ոմանց նույնիսկ հետո չէին կարողանում գտնել:

Ղուրանի հետևորդներին այս կերպ խելքի բերելով՝ սուրբ վկան միևնույն ժամանակ միշտ

խնայում էր մզկիթի աշտարակի մոտ բնակվող քրիստոնյաներին: Չնայած մզկիթի աշտարակի փլվելու ժամանակ տան մի մասը կամ կտուրը համարյա միշտ ավերվում էր, սակայն այնտեղ բնակվողները միշտ ողջ ու անվնաս էին մնում: Նրանք, իմանալով, որ գոռացող խոջաների համար սուրբ Պանտելեիմոնի կողմից ոչ մի արարք երբևէ անպատիժ չի մնում, երբ նրանք մզկիթի աշտարակից սկսում են իրենց սովորական միապաղաղ կանչը, ճշան մոլեռանդի երգը լսելիս, այդ պահին բոլորը դուրս են վազում տներից, որպեսզի մզկիթի աշտարակի գազաթի ընկնելու դեպքում չվնասվեն, քանի որ միշտ էլ վրա է հասնում այդ պատիժը կամ մեկ ուրիշը: Խելքի եկած թուրքերը դրանից հետո երկար ժամանակ դադարեցրին մինարեթից գոռալու իրենց փորձերը և անգամ չէին էլ վերսկսում: Նոր սերունդը, նոր իշխանավոր անձինք մոռանում էին սուրբ նահատակի տված ահեղ դասերը կամ անգամ ամենևին չէին էլ հավատում դրան, եղածը հնարովի համարելով, և հպարտությամբ հանգստացնում էին իրենց, թե այդպիսի բան իրենց օրոք չի կարող պատահել, ուստի նորից աշտարակ էին կանգնեցնում, նրա գազաթին էլ հաստատում էին իրենց իսլամական լուսինը: Սակայն նրանք էլ էին հար-

կադերված ճաշակել նույն ահեղ խրատները և հրաժարվել իրենց ոտնձգություններից: Սրանից քսանհինգ կամ ավելի տարիներ առաջ դա իր վրա զգաց նաև Մուսա փաշան, որ իր գործով կանգնած էր Սոլունում: Նա ցանկանում էր անպայման վերականգնել մզկիթի աշտարակը և մզկիթը բացել իսլամ դավանողների աղոթքների համար, չնայած եղած պատիժների հետևանքով այն բարձիթող էր եղել թուրքերի կողմից և երբեք չէր բացվում: Այդպիսի անկոտրում կամքով փաշան վարպետներ վարձեց և փորձառու ճարտարապետի ղեկավարությամբ մզկիթի աշտարակը կառուցվեց ամենալավ տեսքով և ամրությամբ, այնպես որ բոլոր թուրքերը յուրայինների համեմատ նախապատվությունը տալիս էին հույն ճարտարապետին և շնորհակալություն էին հայտնում նրան: Սակայն հաջորդ իսկ գիշերը, երբ խոջան սկսեց երգել իր կոչը, մզկիթի աշտարակի գագաթը ընկավ և խորը խրվեց հողի մեջ:

Չհասկանալով կատարված հրաշքը՝ թուրքերն այն վերագրեցին հույն շինարարի չարամտությունը, մտածելով, որ նա դիտավորյալ է դա արել, որպեսզի մզկիթի աշտարակը չվերականգնեն: Այդժամ նրան բռնեցին և ցանկանում էին կախել՝ չընդունելով ոչ մի արդա-

րացում: Վերջապես, թուրքերից ինչ-որ մեկի առաջարկով որոշեցին դժբախտ հույնին ստիպել վերականգնելու ամբողջը և ամենաամուր վիճակով, հակառակ դեպքում, եթե որևէ բան անբավարար լինի, նրան մահով սպառնացին: Վարպետը այս անգամ պիտի գործի անցներ իր կամքին հակառակ, բայց արդեն թուրքերի խիստ հսկողության ներքո, որոնք ամեն ինչին ուշի-ուշով էին հետևում: Այնուամենայնիվ, հույնը դրանից չէր նեղվում, որովհետև նախկինում էլ էր բարեխղճորեն և գործի կատարյալ իմացությամբ աշխատում: Երբ ամեն ինչ ավարտվեց լավագույնս, հույն վարպետը ազատվեց կալանքից, սակայն հաջորդ իսկ գիշերը մզկիթի աշտարակը իր ծայրով կրկին ընկավ և նորից ճիշտ այն նույն ժամին, երբ բեզանը սկսեց իր կոչը: Դրանից ապշած՝ փաշան մի կողմ թողեց իր համառությունը և մզկիթի աշտարակը քսան տարի մնաց այդպիսի կիսաքանդ տեսքով, իսկ մզկիթը փակվեց: Իսկ սրանից ութ տարի առաջ մի կրոնախև սկսեց աշտարակի վրա քարեր շարտել և որքան ուժ ուներ՝ գոռալ. «Յիրուցան կանենք ձեր ամբողջ աշտարակը և մեծ նահատակ սուրբ Պանտելեիմոնին տաճար կշինենք»: Չնայած թուրքերը նրան անմիտ էին համարում, բայց եզրակացրեցին, թե մյուս

քրիստոնյաները այդպիսի ծածուկ միտք ունեն։ Ուստի և որպես վրեժխնդրություն կամ իբրև վիրավորանք նրանց հասցեին՝ մինարեթ կառուցեցին, բացեցին նաև մզկիթը մուսուլմանների աղոթքի համար, և թուրքերը քիչ-քիչ փորձում էին կրկին հավաքվել, ընդ որում առանց խոջայի կանչի, որը չէր համարձակվում բարձրանալ աշտարակի վրա։ Նրանք մի քանի անգամ փորձեցին մզկիթի վրա հաստատել լուսնի մահիկը, բայց դրանից հետո միշտ ամպրոպաբեր ամպ էր գալիս, և կայծակի առաջին հարվածը ուղղվում էր աշտարակին՝ ջարդուփշուր անելով ամբարիշտների խորհրդանշանը։ Այնպես որ, բազմաթիվ փորձերից հետո վերջնականապես թողեցին իրենց նախաձեռնությունը, և ասում են, թե նույնիսկ հիմա էլ են զգուշանում նման փորձեր ձեռնարկելուց, դադարեցնելով նաև իրենց անիրավ պաշտամունքը մզկիթում։

Բացի ահեղ նշաններից, կատարվեց նաև պատուհասող հրաշք։ Մոռացություն մատնված մզկիթը՝ սուրբ Պանտելեիմոնի նախկին եկեղեցին, ժամանակի ընթացքում տարբեր տեղերում սկսեց քանդվել։ Տևական ճմեռային անձրևները, թրջելով պատերը, սրբելով տանում էին ծեփը, որի տակից սկսեցին երևալ Աստծո ծառաների դեմքերը և այլ պատկերներ։ Ո՛չ միջոցներ, ո՛չ

էլ կարիք ունենալով դարձյալ սվաղելու սրբերի դեմքերը՝ թուրքերը սկսեցին դրանք ոչնչացնել կամ խզբզել։ Եվ մեկը փորում էր մեխով, մեկը քանդում էր մուրճով, քարով, ի միջիայլոց, այդ ամենը անում էին կողքանց, առավելապես մզկիթին հարակից տների բնակիչները։ Այդ սրբապղծությունը անհատույց չմնաց. բոլոր նրանք, ովքեր հանդգնեցին քրիստոնեական սուրբերի պատկերները անարգել, սուրբ նահատակ Պանտելեիմոնի կողմից պատժվեցին արագահաս մահով։ Նույնիսկ նրանց գերդաստաններն էլ մեռան, այնպես որ 1845 թվականից սկսած քսան տարիների ընթացքում մզկիթի շրջակայքում թուրքերից համարյա ոչ ոք չմնաց։ Այնտեղ ողջ մնացած վերջին թուրքերն էլ՝ ալանատես լինելով պատուհասին և վախենալով արժանանալ նույն ճակատագրին, իրենց տները վաճառեցին քրիստոնյաներին և հոժարակամ հեռացան։ Այդ ժամանակվանից ի վեր սուրբ Պանտելեիմոնի հնամենի տաճարի շրջակայքը զբաղեցնում են բացառապես քրիստոնյաները։ Կան նաև մի քանի դատարկ տներ, քանի որ նրանց թուրք տերերը վախենում են այնտեղ ապրելուց, իսկ քրիստոնյա գնորդներ չեն հայտնվում։

Մզկիթի մերձակա տունը, որի վրա մի քանի անգամ ընկել էր մզկիթի աշտարակը, ինչ-



պես արդեն ասել ենք, պատկանում էր Ավք-սենտրոս Դմիտրիի Աբաղիին: 1849 կամ 1850 թվականին նրա մոտ ազգականը այդ տանն էր ապրում: Նա գիշերով բազմիցս սուրբ նահատակ Պանտելեիմոնին տեսել էր տան բակում և ավելի հեռվում՝ մզկիթի պարսպի շուրջը քայլելիս: Չիմանալով, թե դա ով կարող էր լինել, նա մտածեց, որ թուրք է և սրտնեղում էր նրա հանդգնություն վրա: Հետո մտափոխվեց, կարծելով որ գող է և ցանկանում է իրենց թալանել: Այդ մասին հաղորդելով հարազատներին՝ նա սկսեց ավելի խիստ հետևել, և երբ դրանից հետո գիշերը դուրս եկավ և հանդիպելով, համարյա թե բախվելով, անծանոթ երիտասարդին, գոռալով հարձակվեց նրա վրա, որպեսզի բռնի, սակայն նույն պահին անզգայացած ընկավ: Գոռոցի վրա հավաքված ազգականները նրան սենյակ տարան, ցանկացան իմանալ, թե ինչ է պատահել, բայց նա անխոս էր: Քիչ, բերանից արյուն էր հոսում, նա արյունաքամ էր լինում: Հրավիրված բժիշկները հայտարարեցին, թե նա մեռնելու է, հարազատների համար նման ելքը խիստ ցավալի էր, բայց նրանք միևնույն հերթին ցանկանում էին իմանալ, թե ինչպես պատահեց այդ անհասկանալի դեպքը, ուստի և հաճախակի կրկնում էին իրենց հարցերը: Ի վերջո, հիվանդը

կարողացավ միայն ասել, որ տեսել է մի պատանու: Հարազատները հասկացան, որ դա սուրբ Պանտելեիմոնից պատուհաս է եղել ինչ-որ բանի համար, իսկույնեթ քահանա կանչեցին, սուրբ վկային աղոթք մատուցեցին, և նույն պահին հիվանդը բժշկվեց ու այդ ժամանակ պատմեց իր հետ ամբողջ կատարվածը: Աստվածահաճո ծառայի նկատմամբ միշտ ակնածանք ունեցող Ավքսենտրոսի ընտանիքը սկսեց էլ ավելի պատվել մեծ հրաշագործին և գոհանալ, որ նա իրենց հովանի է լինում և տեսանելիորեն այցելում իրենց կացարանը:

1851 թվականին, երբ Սվյատոգորեցը Սուլուսում էր, իմացողներին հարցնում էր, թե ի՞նչ կարող է նշանակել այն, որ մինարեթի վրա ծայրածոջ չկա, և ոչ էլ լուսին՝ մզկիթի վրա: Նրան պատասխանեցին, որ այդ մզկիթը առաջ եղել է սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի եկեղեցին, և որ աստվածահաճո ծառան չի հանդուրժում իր եկեղեցու անպատվությունը՝ ահեղորեն պատժելով ուղղափառություն թշնամիների սրբապիղծ հարձակումները սրբավայրի վրա: Սվյատոգորեցը ընդդիմացավ. «Ինչո՞ւ միայն նա է, որ չի հանդուրժում այդ ամենը, մինչդեռ մնացած բոլոր սուրբերը և նույնիսկ Աստվածամայրն ու Տերն Ինքը թույլ տվեցին

կողոպտել իրենց սրբարանները և դրանք վերածել թուրքական մզկիթների»։ Դրան պատասխանեցին. «Դա իր Սուրբերի մեջ սքանչելի Տիրոջ դատաստանի խորհուրդն է»։

1847 թվականին Սերես մեծ քաղաքում, որ գտնվում է Մակեդոնիայի սահմաններում (Սուրբ Լեռից ոչ շատ հեռու), ահավոր հրդեհ բռնկվեց, որի ժամանակ, բացի հազար տարբեր շինություններից՝ այրվեց 15 եկեղեցի։ Այս վերջիններիս թվում էր սուրբ նահատակ Պանտելիմոնի անուկով մի եկեղեցի, և Աստծու ծառան կա՛մ իր նկատմամբ քաղաքի բնակիչների մեծ ջերմեռանդության պատճառով, կա՛մ իր հրաշքները առավել փառավոր դարձնելու համար իր շնորհաբաշխ հովանիով տեսանելիորեն պաշտպանեց իր եկեղեցին։ Այն, ի զարմանս ոչ միայն քրիստոնյաների, այլ նաև թուրքերի, հրդեհից չվնասվեց, չնայած գտնվում էր կողքի շինություններից ելնող թեժ կրակի մեջ։ Ուղղափառներից և նույնիսկ թուրքերից շատերը կրակի գալարվող բոցերի մեջ տեսնում էին մի երիտասարդ հեծյալի, որ արշավում էր եկեղեցու շուրջը և կրակը չէր համարձակվում դիպչել նրան, նրա հետ նաև՝ տաճարին։ Քրիստոնյաները հավատում էին, որ այդ հեծյալը ինքը՝

Պանտելիմոն վկան էր, ում անուկով էլ օծված էր պահպանված եկեղեցին։

1839 թվականին թուրքական կայսրության քաղաքներից մեկի՝ Ռեդեստոսի գավառում, որ գտնվում է Կոստանդնուպոլսից հարավ-արևմուտք, սուրբ նահատակ Պանտելիմոնի կողմից երկու սքանչելի հրաշք կատարվեց։

Այդ քաղաքի մոտ կա Կուսմվա կոչվող մի մեծ գյուղ, որտեղ վաղուց ի վեր սուրբ նահատակ Պանտելիմոնի անուկով տաճար կա, և ամեն տարի հանդիսավորապես նշվում է տաճարի տոնը՝ ի պատիվ աստվածահաճո ծառայի։

Ռեդեստոս քաղաքի բնակիչ բարեպաշտ Ստավրոս Կեխաբլուսը և նրա կինը՝ Ելենան, սուրբի նկատմամբ ջերմեռանդության պատճառով նրա հիշատակի օրը մեծ նահատակի տաճար էին այցելում։ Նույն այս կերպ ակնածելով ի պատիվ սուրբի հիշատակի, նրանք 1839 թվականին իրենց որդու՝ Իոաննի հետ ժամանեցին Աստծու ծառայի տոնին, որպեսզի այլ քրիստոնյաների հետ մասնակից լինեն նրա ամենաառատ ողորմություններին։

Մասնակից լինելով տաճարի տոնակատարությունը և Քրիստոսի մեծ վկայի լուսավոր հիշատակի օրվա տոնախմբությանը, մյուս հա-

վաքվածները հետ ուրախանալով՝ Ելենան ու Ստավրոսը չնկատեցին, թե ինչպես իրենց որդին՝ Իոաննը դուրս եկավ տաճարից և հասակակիցների հետ խաղալով՝ անսպասելի ընկավ խոր ձորը: Պետք է ասել, որ սուրբ Պանտելեիմոնի տաճարը այդ գյուղում կանգնած է անհարթ ու շատ վտանգավոր վայրում, քանի որ նրա մոտ ամենուր ահավոր ձորեր ու վիհեր են: Այդ քրիստոսասերների զավակը անսպասելի ընկավ այդպիսի խորխորատներից մեկը, մոտավորապես տասներկու կանգուն խորուխթյամբ և քարեքար գլորվելով, մինչև հասներ ձորի հատակը, վիրավորեց ամբողջ մարմինը, և հազիվ էր կյանք մնացել նրա մեջ: Երբ վնասված տղային այնտեղից հանեցին, հիրավի լացելու տեսարան էր ոչ միայն ծնողների, այլև այնտեղ հավաքված բոլոր մարդկանց համար, որոնք տարակուսանքի մեջ էին և զարմանում էին, թե ինչպես էր այդ ամենը կատարվել: Տղայի ծնողները, որդուն տեսնելուն պես, անմիջապես աղոթքով դիմեցին սուրբ նահատակ Պանտելեիմոնին, հորդաուստ արցունքներ հեղելով և սուրբին խնդրելով, որպեսզի ողորմած լինի իրենց ծնողական սրտի համար այդքան ծանր վշտի մեջ: Մինչդեռ նրանց որդին ավելի ու ավելի էր մոտենում մահվանը և, չնայած

նրանք չէին կորցնում հավատը, հուսալով, որ եթե հաճելի է Տիրոջը, ապա սուրբ նահատակը կարող է նույնիսկ մահացածին հարուխյուն տալ, այնուամենայնիվ, արդեն հոգում էին թաղման նախապատրաստությունը: Բայց ի՞նչ արեց սուրբը, տեսնելով նրանց հավատը և իր նկատմամբ ակնածալի ջերմեռանդությունը: Այդ ժամանակ նրանց ազգակիցը ասես պատահաբար անցնում էր այդ տեղով, նոր մորթած ոչխարի դեռևս տաք մորթի էր տանում ինչ-որ տեղ: Տեսնելով մի տեղ ամբոխված ժողովրդին՝ մոտեցավ և իմացավ ողջ կատարվածը: Կարեկցելով իր հարազատների վշտին՝ նա ինքն էլ չիմանալով, թե ինչու՝ սկսեց խնդրել և համոզել վնասված տղայի ծնողներին, որ նրան փաթաթեն ոչխարի մորթու մեջ: Ստավրոսն ու Ելենան ընդունեցին նրա առաջարկը ոչ իբրև պատահականություն, այլ որպես սուրբ վկա Պանտելեիմոնի ակնհայտ տնօրինություն, որին իրենք հենց նոր արտասովալի աղոթքներ էին վերառաքել մանկան բժշկության համար և, ապավինելով Աստծո ծառայի շնորհաուստ օգնականությանը, նույն պահին էլ իրենց կիսամեռ տղային փաթաթեցին այդ մորթու մեջ: Իսկ սուրբ նահատակը, տեսնելով նրանց այդպիսի անմիջական հավատը, ո՛վ հրաշք, նրանց տղա-

յին ակնթարթորեն կատարելապես ողջ-առողջ դարձրեց, ասես թե երբևէ ոչ մի փորձանքի մեջ չէր էլ ընկել: Եվ այսպիսով նրանց սուգը վերածվեց ուրախության:

Վերակենդանանալով մահացու հիվանդություններից՝ որպես թե քնից արթնանալով՝ տղան նկատեց, որ իր շուրջը ժողովրդի բազմություն է հավաքված և ինչ-որ խառնաշփոթություն է տիրում, և թաղման նախապատրաստություններ կան: Զարմանալով՝ հարցրեց, թե այդ ամենը ի՞նչ է նշանակում: Իսկ երբ նրան հանգամանորեն պատմեցին ամեն ինչ (քանի որ կիսամեռ լինելով, նա կատարվածից ոչինչ չէր հիշում), ընդ որում, տեսնելով մարմնի վրա վերքերի հետքերը, նա, ինչպես ասում են, ուրախությունից պայծառացավ, այդտեղ եղած բոլորի հետ փառաբանելով ողորմած հրաշագործին, որ նրան կենդանություն էր պարգևել մահվան դռնից ետ բերելով: Այս հրաշքի ականատեսները գոչում էին. «Հրաշալի՛ է Աստված Իր սուրբերի մեջ և սուրբ է Իր բոլոր գործերի մեջ»:

Սակայն այնտեղ կատարվել է սուրբ Պանտելեիմոնի ոչ միայն այդ հրաշքը: Մի այլ ժամանակ այդ նույն Ստավրոսի և Ելենայի անզգուշույթյան պատճառով նրանց փոքրիկ երեխան բարձր տեղից ընկավ: Վախեցած ծնողները այն-

տեղ եղածներին հետ վազեցին ներքև՝ մտածելով, որ իրենց մանկիկը մահացու ջարդուփշուր է եղել: Եվ ահա տեսնում են մի երիտասարդ հեծյալի, որը մանկիկին պահել էր իր ձեռքերի վրա: Ոչ ոք չգիտեր, թե ո՞վ է նա և որտեղի՞ց: Իսկ նա մոր ձեռքերի մեջ դնելով մանկանը և փոքրիկի նկատմամբ անուշադրություն համար խիստ հանդիմանելով՝ հեռացավ: Բոլոր ներկաներին վիճակվեց բավարարվել միայն հեծյալի տեսիլքով, իսկ թե ով էր նա, դրանից հետո էլ չկարողացան իմանալ: Ի դեպ, մանկան ծնողները, ջերմ հավատ ունենալով Քրիստոսի վկա սուրբ Պանտելեիմոնի նկատմամբ, կարիք էլ չունեին մտորումների մեջ ընկնելու, թե ով էր այդ փրկիչը: Նրանք միանգամայն հավատում էին, որ իրենց մանկիկին մահից փրկող երիտասարդ հեծյալը, անկասկած, նույն ինքը՝ մեծ հրաշագործ Պանտելեիմոնն էր:



**ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ ԵՎ  
ԲԺԻՇԿ ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆԻՆ ՀԱՎԱՏՈՎ  
ԴԻՄՈՂՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀՐԱՇՔՈՎ  
ԲՈՒԺՎԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ**

**ՏԻՓԻ ՏԵՆԴԻՅ ՏՈՒԼԱՅՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ  
ԶԱՐՄԱՆԱԼԻ ԲՈՒԺՄԱՆ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ**

*(Մոսկվայի թեմական տեղեկագրեր: 1873 թ, N4)*

**Տ**ուլա քաղաքի Բառանովի փողոցում, Ակսյոնովի տանը ապրող Մարիա Իվանովնա Խրիկինայի տասնիննամյա որդի Ալեքսանդրը 1868 թվականի նոյեմբերին ուժեղ հիվանդացավ տիֆի տենդով: Գործադրված բժշկական միջոցները չէին թեթևացնում նրա տառապանքները: Հիվանդի մայրը, տեսնելով մարդկային միջոցների անօգտակարությունը, փուլթաց դիմել Տիրոջը՝ Կյանքի Աղբյուրին և Սպասակի եկեղեցու քահանա Միխայիլ Վասիլևիչ Պակրովսկուն խնդրեց հիվանդին տալ Քրիստոսի Սուրբ Հաղորդությունը՝ մարդկային կյանքում վեր-

Ջին միակ մաղթությունը: Ապա, հավատարով սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնին, նրա սրբապատկերի առջև ջերմեռանդ աղերսանքով դիմեց սուրբին և օրհներգ մրմնջաց ի փառս նրա: Դրա հաջորդ օրը, երեկոյան ժամը յոթին, երբ հիվանդը ննջում էր, հանկարծ վեր թռավ և գոչեց. «Ինձ մոմ տվեք, իմ մոտ եկավ Աստծո ծառա Պանտելեիմոնը, սրվակով ջուր բերեց և ասաց. ես եկել եմ քեզ բժշկելու, ահա քեզ ջուր, խմի՛ր այս ջուրը, կառողջանաս և հավիտենապես մահ չես տեսնի»: Երբ հիվանդի մայրը մոմը ձեռքին մոտեցավ նրան, նա սկսեց շուրջը նայել, ասես թե փնտրելով իրեն հայտնված Աստծո ծառային և արտասովելով խնդրում էր զննել այն սենյակը, որտեղ կանգնել էր սուրբը: Նա չէր հավատում, որ դա երազային տեսիլք է, նա կշտամբում էր հարազատներին՝ ասելով. «Դուք չեք ցանկանում որոնել»: Ահա այդքան տպավորիչ էր սուրբի հայտնվելը:

Դրա հաջորդ օրը հիվանդի մայրը խնդրեց մաղթանք մատուցել սուրբ նահատակ Պանտելեիմոնին, Սուրբ Նիկողայոսի մատուռ կոչվող եկեղեցուց, Պանտելեիմոնի սրբապատկերի մոտից օծված յուղ և օրհնված ջուր վերցրեց, հիվանդին տվեց խմելու և օծեց նրա գլուխը: Դրանից հետո նա երկար քնեց, և դա այն

դեպքում, երբ մինչ այդ ամենևին չէր քնում. դրան հաջորդեց առատ քրտնարտադրությունը, և տիՖն անցավ: Սակայն Աստծո ծառայի աղոթքներով ազատվելով այդ հիվանդությունից, նա էլ ավելի ծանր հիվանդություն մեջ ընկավ՝ զրկվեց տեսողությունից, չնայած աչքերը բաց էին: Առաջին տեսիլքից մի շաբաթ անց նույն այդ ժամին, երեկոյան ժամը յոթին, ուշաթափ հիվանդը տեսավ իրեն մոտեցող մի պատանու՝ ձեռքին արկղիկ: Ենթադրելով, թե դա բժիշկն է, հիվանդը նրան հարցրեց. «Ինչպե՞ս են ձեզ կոչում» (այդ ժամանակ հիվանդի հարազատները նրա հարցերը լսում էին, իսկ նրան տրված պատասխանները արժանի չեղան լսելու): Նա պատասխան ստացավ. «Սուրբ նահատակ Պանտելեիմոն» (այս մասին նա հայտնեց հետո): Այդ պահին հիվանդը անտանելի ցավ զգաց աչքերում, նրան թվում էր, թե աչքերը հանում են և արյուն է հոսում, մինչդեռ նրա աչքերից արցունք էր հորդում (նկատի ունենանք, որ կատարվող բժշկությունների ժամանակ նախքան աստվածային շնորհն ստանալը հիվանդությունը սրվում է): Անտանելի ցավից նա ճչաց. «Մայրի՛կ, իմ աչքերը հանում են, ես առանց աչքերի եմ»: Ապա կրկին երևաց նույն պատանին և մոտենալով նրան՝ հարցրեց.

«Ի՞նչու ես լացում»։ Հիվանդը պատասխանեց. «Ինչպե՞ս չլացեմ, ես աչքերից զրկվեցի, թեև հիվանդ աչքեր ունեի, բայց հիմա առհասարակ չունեմ»։ Դրան սուրբը պատասխանեց. «Մի՛ լացիր, ահա՛ քեզ նոր աչքեր, կտեսնես այս աչքերով»։ Այս խոսքերն ասելով՝ նա ասես թե հիվանդի ակնախոռոչների մեջ նոր աչքեր դրեց։ Հիվանդն արթնացավ և ճչաց. «Վա՛յ, մայրիկ, նայե՛ք ինչպիսի աչքեր ունեմ, ես պարզ տեսնում եմ»։ Այսպես կատարվեց այդ հրաշալի բժշկությունը։

Այս իրադարձության քննության ժամանակ ականատես էր Տուլա քաղաքի Սպասսկի եկեղեցու քահանա Միխայիլ Պակրովսկին՝ բժշկվածի հոգևոր հայրը, որն էլ դեպքի հավաստիությունը իր քահանայական կոչմամբ վավերացրեց ստորագրությամբ։ Այս իրադարձության արձանագրության վերջում քահանայի վավերացմանը հաջորդում են Տուլա քաղաքի պատվավոր քաղաքացիներ՝ Նիկոլայ Նիկիտիչ Դոբրինինի, Իվան Սերգեևիչ Բելաբորոդովի և այլոց ստորագրությունները, որոնք ներկա էին այդ սրբանշնչի իրադարձության քննությանը։

Բժշկվածը որքան կարողանում էր հիշել՝ պատմեց, որ երկնային բժիշկ սուրբ Պանտելեիմոնը իրեն հայտնվեց գեղեցիկ պատանու տեսքով

այն հանդերձով, ինչպիսին Աստծու այդ սուրբը պատկերվում է սրբապատկերներում՝ նրա հայացքը լի էր հեզուլթյամբ և գլխարտուլթյամբ։

### ԽԼՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՈՒՄ

(«Հոգեչաճ ընթերցանություն» ամսագրից, 1876)

Վերեյսկի գավառի Սուբբոտին գյուղի սուրբ Նիկողայոսի եկեղեցու հանգուցյալ քահանա Նիկոլայ Եվֆիմովիչ Շումովի որդին՝ Վյաչեսլավ Շումովը՝ Պերերվինի հոգևոր ուսումնարանի առաջին դասարանի տասնհինգ տարեկան աշակերտը, սկսած 1870 թվականից տառապում էր գլխացավով և խլություն, որի համար էլ 1873 թվականի հուլիսի 16-ին նրան հեռացրել էին ուսումնարանից։ 1874 թվականի վերջում հասել էր խլության այն աստիճանին, որ չէր լսում մոտիկից հնչող զանգի ձայնը։ Ինչքան էլ նրան բուժում էին բժշկական միջոցներով, ոչինչ չէր օգնում։ Վերջապես բժիշկները հայտարարեցին, որ այդ հիվանդությունը բուժման ենթակա չէ։ Հիվանդի այրի մայրը, ծայրահեղ աղքատությամբ ապրելով Օստրով գյուղում, շատ վիշտ կրեց խլությամբ տառապող իր որդու համար։ Ուսումնարանից հեռացվելուց հե-

տոտ տղան, ի սեր Բրիստոսի, ապրում էր Մոսկվայում, պաշտոնաթող մայր Պյոտր Ալեքսեևիչ Պրոտոպոպովի տանը: Վյաչեսլավի մայրը, նոյեմբերի 19-ին ժամանելով Մոսկվա, հիվանդ որդու հետ խնդրագրով ուղևորվեց գերաշնորհ Իգնատիոս եպիսկոպոսի մոտ՝ օգնություն հայցելու իր հիվանդ որդու՝ Վյաչեսլավի ապրուստի համար: Գերաշնորհն ընդունելով խնդրագիրը՝ այն իր եզրակացությունը հանձնեց եկեղեցու հոգաբարձու թյանը: Վերջինս տղային բժշկական գրասենյակ ուղարկեց խլությունը հաստատելու համար: Գրասենյակում հաստատումից հետո տղային գործնականում խուլ համարեցին և նրան ու մորը հայտնեցին, որ նրանց գործը կփոխանցվի ուր որ հարկն է, որից հետո խեղճերին պատվիրեցին տուն գնալ: Բժշկական գրասենյակից ճամփա ընկնելով՝ նրանք գնում էին Նիկոլսկայա փողոցով, և ահա մոր մտքով անցավ մտնել այդ փողոցի վրա գտնվող Բոգոյավլենսկի վանքի՝ սուրբ մահատակ և բժիշկ Պանտելեյմոնի անվան Աֆոնսկայա մատուռը՝ Աստծո ծառային աղոթելու հիվանդի բժշկության համար: Մատուռ չհասած՝ մայրը տղային բաղնիքի համար 10 կոպեկ տվեց: Աղոթելով Աստծո ծառային և հավելով սուրբ մասունքներին՝ մայրը դուրս եկավ մատուռից, իսկ հիվանդը նեղվածքի պատճառով չկարողացավ

մոր հետ հավել մասունքներին և դրանց հավեց քիչ հետո, երբ հարմար պահ եղավ: Այնուհետև մոր տված տաս կոպեկը գցեց սկահակի մեջ, մասունքների մոտից բամբակ վերցրեց, մտցրեց ալկանջները և մատուռից դուրս գալով՝ մոտեցավ մորը, որը նրան էր սպասում: Հրաժեշտ տալով որդուն՝ մայրը սկսեց նրա ալկանջին բարձր գոռալ. «Աստծո օրհնությունը տուն գնա, հիմա դու տաս կոպեկ ունես բաղնիքի համար»: Հիվանդը պատասխանում է. «Ես փող չունեմ, տասը կոպեկը գցեցի մասունքների մոտ դրված սկահակի մեջ»: Մայրը սկսեց նրան հանդիմանել՝ ասելով. «Այդ ի՞նչ արեցիր, հիմա ես քեզ որտեղի՞ց փող գտնեմ բաղնիքի համար», և նույն պահին վշտացած հեռացավ: Տղան գնաց իր բարերարների տուն և նույն ժամին էլ նրա լսողությունը վերականգնվեց: Նրա բարերարները, տեսնելով նրան՝ իրար մեջ նրա մասին ասացին. «Այս ինչ ուղ եկավ, և ո՞ւր էր նա մինչև երեկո: Թերևս հոգաբարձու թյան գրասենյակում են նրան և մորը ուշացրել»: Տղան, հետևելով նրանց խոսակցություններին, ասաց. «Այո, մեզ այնտեղ ուշացրին»: Բարերարները տեսնելով, որ նա սկսել է լսել, զարմացան և հարցրին. «Ինչպե՞ս դու սկսեցիր լսել»: Նա պատասխանեց. «Չգիտեմ»: Տղան այդ պահից սկսեց լավ լսել, չիմանալով, թե գլուխն



էլ ինչպես առողջացավ: Իսկ նրա մայրը, ապրելով աղքատների ապաստարանում և անհանգստանալով հիվանդ որդու համար, սկսեց ուժեղ ճանճրույթ գգալ, ինքն էլ չիմանալով, թե ինչու, և ահա երազում տեսնում է իր որդուն՝ սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի սրբապատկերի առջև՝ ծնկաչոք աղոթելիս: Երազում նա տեսնում էր, որ կանգնելով որդու ետևում, ինքն էլ սրտի խորքից սկսեց հայցել սուրբ նահատակ Պանտելեիմոնին. «Աստծո ծառա, օգնի՛ր նրան և կարգավորի՛ր նրա կյանքը»: Աղոթքի այս խոսքերը այնքան բարձր հնչեցին քնածի շուրթերից, որ դրանցից արթնացավ նրա դուստրը ու արթնացրեց մորը: Արթնանալով՝ մայրը որոշ թեթևություն զգաց, սակայն չկարողացավ լիովին հանդարտվել և որոշեց սուրբ Նիկողայոսի տոնից առաջ Մոսկվա ուղևորվել հիվանդ որդուն այցելության: Հասնելով որդու մոտ և իմանալով, որ նա առողջ է և շատ լավ լսում է՝ զարմացավ և սկսեց գոհանալ Աստծուց: Նրա այն հարցին, թե որդին ինչպես է սկսել լսել, տղան պատասխանում է. «Չգիտեմ ինչից, բայց ես սկսեցի լսել միայն այն պահից սկսած, երբ ձեզ հետ միասին սուրբ նահատակ Պանտելեիմոնի մատուռում աղոթելուց հետո այնտեղից տուն վերադարձա: Ամենից առաջ կարողացա

միանգամայն լավ լսել իմ բարերարների խոսակցությունը և մինչև հիմա էլ լավ եմ լսում, և գլուխս էլ առողջացել է»: Մայրը, վերհիշելով, թե ինչպես էր մատուռ գնացել տղայի հետ և Աստծո ծառային աղոթել որդու բժշկության համար, կատարելապես համոզվեց, որ Աստծո ծառան լսեց իրենց աղոթքը և նրա վրա հրաշք կատարեց: Աստծո և նրա ծառայի նկատմամբ երախտագիտությունը լցված՝ նա առողջացած որդու հետ գնաց մատուռ, այնտեղ սուրբ նահատակ Պանտելեիմոնին գոհաբանական աղոթք մատուցեց և բժշկության մասին հայտնեց գերաշնորհ Իգնատիոսին, ներկայացնելով ճանաչված անձանց տված վկայագիրը, որը հաստատում էր որդու նախկին խլությունը: Այս դեպքը գրանցված է Աֆոնսկայա մատուռում, բուժումների գրանցման մատյանի մեջ: Ի հաստատումն Վյաչեսլավ Շումովի նախկին խլության և գլխացավի, իրենց ստորագրությամբ և կնիքները դնելով վկայում են՝ Տրոիցկայա Հավատակցական եկեղեցու ավագերեց Իոանն Նիկիտինը, նույն այդ եկեղեցու քահանա Գեորգի Վոզդվիժենսկին, սևագործ բանվորների հիվանդանոցի Յառուգայի բաժանմունքի բժիշկ Գավրիլ Սալմանովը, Վասիլեկեսարսկայա եկեղեցու ավագերեց Ալեքսանդր Ռոմանովսկին, պաշ-

տոնաթող մայոր Պյոտր Պրոտոպոպովը, Սուլչևի Կազանսկայա եկեղեցու սարկավազ Գերասիմ Ռոմանովսկին:

## ՁԵՌՔԻ ԲՈՒԺՈՒՄ

(«Հոգեչաճ ընթերցանություն» ամսագրից, 1882 թ.)

Մեծ նահատակն ու բժիշկը հաճախ էր առանձնահատուկ բարեպարզև հայտնությունների արժանացնում սրբապատկերները հավատով ու ջերմեռանդությամբ ձեռք բերողներին և իրեն աղոթողներին:

Դրանցից մեկը կատարվեց Տոբոլսկի նահանգի Տարսկի գավառի Նիժնեկոլոսովսկի վոլոստի (գավառակ) Վերինե-Կոլտիրլինսկ գյուղում, ուր բնակվում էր եկվոր Իվան Կուրակինը՝ գրագետ և աստվածավախ մի մարդ: Ի դեպ, նա ամեն տարի առնվազն երեք անգամ խոստովանություն էր գնում և Սուրբ Հաղորդություն էր ընդունում: Նա վաթսուն տարեկան էր:

1874 թվականի օգոստոսի 16-ին, Փրկչի անձեռակերտ պատկերի տոնակատարության օրը այդ բնակիչը Նիժնեկոլոսովսկի հարևան Կաբիրգալսկի վոլոստում որսորդական հրացանը հետը նավակով լողում էր Տենիս լճում: Նավա-

կով մոտենալով լճի կղզիներից մեկին՝ Կուրակինը դուրս եկավ նավակից, բռնեց հրացանի փողի մեջտեղից՝ փողը դեպի իրեն և անզուշուխյան հետևանքով այն կրակեց նրա աջ ձեռքին (նշանակում է՝ հրացանը նրա ձախ ձեռքին էր), կոտորակով փշրելով ջլերը արմունկի և ուսի միջև, որի հետևանքով նրա ձեռքը կծկվեց և սեղմվեց կրծքին: Նրա ձեռքը այդպես էլ հաշմված և կծկված մնաց հինգ տարի շարունակ, իսկ ուղղվեց և վերականգնվեց նախկին դրուսթյամբ միայն 1879 թվականի հուլիսի 27-ին հետևյալ կերպ:

1878 թվականի դեկտեմբերի 23-ին եկվոր Իվան Կուրակինը ուխտի գնաց Տոբոլսկ:

Խոնարհվելով Տոբոլսկում և նրա շրջակայքում գտնվող տարբեր սրբավայրերին՝ նա անորոշ ժամանակ մնաց Տոբոլսկում: Այստեղ մնալով՝ նա կիրակի և տոնական օրերին միշտ հաճախում էր Սրբտենսկի եկեղեցի, որ հաճախ ժողովրդի մեջ կոչվում էր Պյատնիցկայա: Աղոթքի կանգնելով մեծ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի սրբապատկերի առջև, որը Տոբոլսկի մյուս եկեղեցիներում գոյություն ունեցող նույն սուրբի բոլոր սրբապատկերներից ավելի շատ էր պաշտվում, և աղոթում էր նրա վրա պատկերված մեծ նահատակ Պանտելեիմոնին,

Ջերմեռանդությունը ու արտասուքով խնդրում նրա օգնությունն ու ողորմածությունը, որի վկաներն էին թե՛ եկեղեցու ժամկոչը, թե՛ ծխականները: Աղոթելով մեծ նահատակին՝ նա այդ օգնությունն ու ողորմությունը ստացավ: 1879 թվականի հունիսի 27-ին, սուրբ Պանտելեիմոնի հիշատակության օրը Արեւմտաօստրալիական եկեղեցու ժամերգությունը տոնական էր: Պատարագի ավարտից հետո մաղթանք կատարվեց, բայց հետո աղոթողներից ոմանք քահանային խնդրեցին նաև մասնավոր մաղթանքի արարողություն կատարել ջրօրհնեքով: Այս վերջին արարողության ժամանակ եկվոր Իվան Կուրակինը, ըստ իր կարողության երեք կոպեկանոց մոմ վառելով Աստծո սիրելի ծառային, առանձնահատուկ ջերմեռանդությամբ աղոթում էր ձեռքի ուժեղ ցավի թեթևանալու համար, քանի որ բուժ ցավ էր զգում, նեխահոտ էր գալիս, արդեն որդերն էլ ուտում էին ձեռքը: Եվ ո՛վ զարմանք, երբ սկսեցին ջրօրհնեքին երգել. «Տե՛ր, փրկի՛ր Քո ժողովրդին...»-ը, և երբ հիվանդը ձախ ձեռքով խաչակնքելով (կրակոցով աջ ձեռքը վիրավորելուց հետո նա այդպես էր խաչակնքում) գետին խոնարհվեց, նույն այդ պահին էլ նրա կծկված ձեռքը բացվելով մեկնվեց եկեղեցու հատակին: Սարսափով մտածելով,

որ ձեռքը բոլորովին պոկվեց, Կուրակինը արդեն ցանկանում էր բղավել, բայց համոզվելով, որ ձեռքը ոչ միայն չի պոկվել, այլ, ընդհակառակն, շտկվել է և առողջացել, նա շատ ուրախացավ և արտասուքով երախտագիտություն էր հայտնում սուրբ բժիշկ Պանտելեիմոնին:

Որ այդ բժշկությունն իսկապես կատարվել է, Կուրակինը դրա մասին պատմեց գրավոր, վկայագիրը գրելով աջ ձեռքով: Ինչպես նաև տարբեր վկաներ հաստատեցին թե՛ բժշկման, թե՛ նախորդող հիվանդության փաստերը:

Ավագերեց Ալեքսանդր Սուլոցկի:  
1881 թվականի դեկտեմբերի 2: Օմսկ:

### ԳԼԽԱՅԱՎԻՑ ԲՈՒԺՈՒՄ

(«Հոգեչափ ընթերցանություն» ամսագրի  
1882 թ. համարից)

Մոսկվայի Նիկիտինսկիյե դարպասների ետևում գտնվող Սպիրիդոնովսկայա եկեղեցու թեմի բնակչուհի, ազնվականուհի Մատրյոնա Վասիլենա Սվյավոլուցկայան, ծխական քահանային և իր հոգևոր հորը (ներքոստորագրյալ) հետևյալը հայտնեց 1882 թվականի հունիսի 28-ին Աստծո ծառա, մեծ նահատակ Պանտելեի-

մոնի միջոցով իր հետ կատարված բժշկություն մասին: Նա երկար ժամանակ տառապում էր գլխացավով, ինքն իր հիվանդությունը կոչում էր միգրեն, որը ժամանակ առ ժամանակ այնքան էր ուժեղանում, որ հնարավորություն չէր տալիս ո՛չ նստելու, ո՛չ էլ ազատ պառկելու: Մի անգամ, երբ հիվանդությունը սաստկացել էր, սենյակում նստած՝ հայացքը ակամա ընկավ այն խորշին, ուր գտնվում էր մեծ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի սրբապատկերը: Որպես մի պարզ կին, նա դիմեց մեծ նահատակի պատկերին այսպիսի խոսքերով. «Աստծո ծառա, դու շատ հրաշքներ ես գործում, որոնց մասին ես լսել ու կարդացել եմ: Իսկ ես ահա այսքան ժամանակ է՝ տառապում եմ: Ինձ հետ էլ հրաշք կատարիր, բժշկի՛ր իմ հիվանդությունը, և ես լիովին կհավատամ»: Այդ ժամանակ չգիտես որտեղից՝ փչեց թեթև և հաճելի հով, որից նրա գլուխը ակնթարթորեն թարմացավ, և նա հիվանդությունից կատարյալ թեթևացում զգաց: Նույն պահին դրա մասին պատմեց իր հետ ապրող տանտիրուհուն: Այդ ժամանակից ի վեր նա ամենևին չի զգում այն ցավը, ինչպիսին ուներ նախկինում, և որը նրան այդքան տառապանքներ էր պատճառում: Բժշկվածը ինձ ջերմորեն խնդրում էր դա հրատարակել ի փառս Աստծո

ծառա և սուրբ նահատակ Պանտելեիմոնի: Հիվանդություն և հրաշքով բժշկվելու մասին ինձ տված նրա ցուցմունքները հաստատվում են այն տան տիրուհու վկայությամբ, որտեղ նա բնակվում է:

Քահանա Ալեքսանդր Յվետկով

### ԵՐԵՔ ՆԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՇՆՈՐՆԱՊԱՐԳԵՎ ԲՈՒԺՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Հոգեչափ ընթերցանություն» ամսագրի  
1879 թ. համարից)

Բուլղարացի միանձնուհի Խարիտինան, վանական գործերով գտնվելով Մոսկվայի Նիկիտինսկայա վանքում, 1879 թվականի օգոստոսի 1-ին իր մասին հայտնեց հետևյալը: «Ես՝ (պատմում ենք իր խոսքերով), անցած Մեծ պահքի ժամանակ գտնվելով Պետերբուրգում, մրսեցի և ուժեղ գլխացավ ու թուլություն զգացի: Անօգուտ կերպով փորձելով բժշկական միջոցներ՝ ես սկսեցի ջերմագին աղոթել մեծ նահատակ սուրբ Պանտելեիմոնին, հայցելով նրա օգնությունը և հավատով հիվանդ գլխիս հպեցի կտավի վրա արտատպված նրա պատկերը: Երեկոյան դեռևս չքնած՝ ես որպես թե մոռացություն մեջ՝

տեսա ինձ մոտեցող մի պատանու, որ կատարելապես նման էր սրբապատկերներում նկարված սուրբ նահատակ Պանտելիմոնին. նա, ձեռքին մի արկղիկ, ծունկի չոքեց, թեքվեց դեպի իմ անկողինը, և գղալով ինչ-որ բան տվեց ինձ կուլ տալու: Իմ հիվանդությունն անցավ»:

Մոսկվացի պատվավոր քաղաքացի տիկին Տ. Պ. Յ.-վան, որ ապրում էր Զլատոուստինսկի նրբանցքում, իր սեփական տանը, հայտարարեց, որ իրեն եղել է Աստժո ծառայի հետևյալ նշանակալի հայտնությունը: Նա մեծ տրտմություն մեջ էր իր ամուսնու ծանր հիվանդության պատճառով: Մի անգամ գիշերը քնելով՝ նա իր անկողնու մոտ տեսավ գրավիչ արտաքինով մի պատանու, վախեցավ և արագ հարցրեց նրան, թե ինչո՞ւ է եկել իր՝ ամուսնացած կնոջ մոտ: Հայտնվածը նրան հեզաբար պատասխանեց. «Դու շատ ես տրտմում և լացում, ես էլ քեզ այցելության եկա»: Այս ասելով՝ նա աներևույթ եղավ: Քնածն արթնացավ և տարակուսում էր, թե ի՞նչ կարող էր դա նշանակել: Նայելով իր անկողնու դիմաց սուրբ նահատակ Պանտելիմոնի սրբապատկերին՝ նա ուրախություն բանալեց այնտեղ պատկերված իր երկնային հյուրին, և այդ ժամանակից ի վեր սկսեց առանձնահատուկ ջերմեռանդությամբ դիմել հո-

գևոր և մարմնավոր հիվանդությունների հրաշագործ բժշկին: Մոսկվացի պատվավոր քաղաքացի Վ. Ն. Լեպյոշկինը հայտարարեց, որ իր մերձավորների՝ Նարիշկինների ընտանիքում կատարվել է բժշկության հետևյալ նշանակալի դեպքը: Նրանց զավակը՝ մանկահասակ Գավրիլը ծանր հիվանդացավ թոքերի բորբոքումով, ջերմությունը բարձրացավ մինչև քառասուն աստիճան, հրավիրվեցին բժիշկներ, որոնք խորհրդակցություն արեցին, սակայն դրանից հիվանդության թեթևացում չեղավ: Տեսնելով բժշկական միջոցների ապարդյուն լինելը՝ աղոթքով դիմեցին երկնային բժիշկ և մեծ նահատակ Պանտելիմոնին, և նույն ժամին մանկան ցավերը թեթևացան, իսկ շուտով էլ կատարելապես առողջացավ:

### ՃՇՄԱՐՏԱՊԱՏՈՒՄ ԵՐԱՉ

(«Հոգեչաչ ընթերցանություն» ամսագրի  
1879 թ. համարից)

1879 թվականի օգոստոսի 12-ին, երբ արեղա Արսենին Աթոսից այցելության էր եկել Մոսկվայի Ալեքսեևսկայա վանքի մայրապետ Անտոնիային, խոսակցություն բացվեց այն բազմա-

Թիվ բժշկուլթյունների մասին, որոնք կատարվում են սուրբ նահատակ Պանտելեիմոնին հավատով դիմողների հետ: Այդ խոսկացուլթյանը ներկա էր Ե. Վ. Ուշակովան՝ ի Քրիստոս ննջած գերապատվելի արքեպիսկոպոս Լեոնիդի քուլթրը: Նա պատմեց 1862 թվականին իր տեսած զարմանալի երազը. Արսենի աբեղայի խնդրանքով Ուշակովան իր ձեռքով գրի առավ իր պատմածը:

1862 թվականին, Մեծ պահքի սկզբում, Մոսկվայի այն ժամանակվա առաջնորդական փոխանորդ, Դմիտրովի եպիսկոպոս Լեոնիդը կատարելապես առողջ էր և հիվանդուլթյան ոչ մի նախանշան չուներ: Նրա քուլթրը՝ Ե. Վ. Ուշակովան, որ հիմա ապրում է Մոսկվայի Ալեքսեևսկայա վանքում, իսկ այն ժամանակ դասվար տիրուհի էր Նիկոլաևսկի որբանոցում, որ ջերմագին սիրում էր եղբորը, նրա առողջուլթյան և բարօրուլթյան համար անդադար և ջերմորեն աղոթում էր Աստծուն: Մի գիշեր նրա համար արտասովալի և ջերմ աղոթքից հետո նա հանգիստ քնեց և հանկարծակի վեր թռավ սարսափելի երազից: Նրան երևաց, թե ինչպես իր կրտսեր եղբայրը գունատված մտավ իր մոտ և անտրամադիր աթոռին նստելով իր դիմաց՝ երկար չէր կարողանում մի բառ իսկ ասել և

տխրուլթյամբ իրեն էր նայում: Իսկ ինքը վախեցած նրան շտապեցնում էր խոսել: Վերջապես նա ասաց. «Արագ հագնվիր, ուղևորվենք, մեր առաջնորդը մերձիմահ հիվանդ է, և բժիշկները չեն կարող նրան օգնել»: Ինքը բարձրաձայն և հուսահատ հեկեկաց, նրա հետ դուրս վազեց սենյակից և սահնակ նստեց: Գիշեր էր: Նա տեսնում էր աստղալի երկինքը, լսում էր սահնակի ձողերի ճոնչոցը և անընդհատ հեկեկում էր, և աչքերն ու ձեռքերը բարձրացնելով դեպի աստղալից երկինքը՝ Տիրոջն աղոթում էր ողորմել իրենց: Հանկարծ մի բարձր պատ փակեց ճանապարհը, նրանք իջան սահնակից՝ չիմանալով թե ուր գնան: Այդ ժամանակ պատի մեջ մի փոքրիկ երկաթյա դուռ բացվեց և երևացին դեպի ամբողջովին լուսավորված եկեղեցի տանող աստիճաններ: Նա մենակ բարձրացավ աստիճաններով՝ զարմանալով, որ գիշերով ժամերգուլթյուն է կատարվում, և շարունակում էր լացել, հեկեկալ և գոչել. «Տե՛ր, օգնի՛ր, Տե՛ր, օգնի՛ր»: Եվ տեսավ իր կողքին կորացած մի ծերուկի, որը պատասխանեց. «Ոչ ոք, ոչ ոք չի՛ կարող օգնել»: Նա դարձյալ բացականչեց. «Մի՛թե ոչ ոք, մի՛թե իրոք ոչ ոք»: Այդ ժամանակ ծերն ասաց. «Մի միջոց կա, միայն մեկը՝ մեծ նահատակ Պանտելեիմոնի բարեխոսուլթյունը՝ աղոթի՛ր նրան, նա

Տիրոջից քո եղբորը առողջությունն կհայցի»:

Այդ ժամանակ նա արթնացավ ահուդողի մեջ և երկար փորձում էր մտաբերել, թե առաջնորդը իրո՞ք առողջ է: Առաջին գործն եղավ մաղթանք կատարել սուրբ Պանտելեիմոնին և անձամբ առաջնորդին գրել այն ամենը, ինչ որ տեսել էր նրա մասին, ապա այդ ճշմարտապատում երազի մասին պատմեց բոլոր ծանոթներին, գրեց նաև բացականերին, և բոլորը մաղթանքներ էին կատարում և Տիրոջը խնդրում էին առաջնորդից հեռացնել վտանգն ու հիվանդությունը: Սակայն այն, ինչ որ նախատեսված էր լինելու, եղավ: Մոտ երկու շաբաթ անց, պահքի երկրորդ կեսին, առաջնորդը խիստ տկարացավ, ջերմությունը, դողը, կրծքի ջղաձգումները և մյուս հյուսիսային նոպաները գիշեր-ցերեկ հաջորդում էին իրար: Բժիշկները, չնայած բոլոր ջանքերին, չկարողացան նրան բժշկել:

Այդ ժամանակ է, որ հորդեցին սուրբ նահատակին ուղղված աղոթքները: Հովվապետին բոլոր պատվողները հիշեցին նշանակալի երազը և աղոթում էին, և հավատավոր աղոթքը փրկեց հիվանդին, ու Աստված իր սուրբի բարեխոսությամբ նրան ոտքի հանեց առողջացած: Հովվապետը իր մոտ վերցրեց երազից անմիջապես հետո ձեռք բերված սուրբ Պանտելեիմոնի

սրբապատկերը, միշտ աղոթում էր սուրբ բժշկի պատկերին և այն ուղարկում իր ճանաչած հիվանդներին մոտ:

Գրի է առնված անձամբ առաջնորդի քույր եկատերինա Վասիլենա Ուշակովայի կողմից:

**ՍՈՒՐԲ ՆԱՎԱՏԱԿ ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆԻ ԵՐԵՎՈՒՄԸ  
ԱԹՈՍՈՒՄ ՄԻ ՄԵՆԱԿՅԱՅԻ 1879 ԹՎԱԿԱՆԻ  
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԳԻՇԵՐՎԱ ԺԱՄԸ ԵՐԵՔԻՆ**

(«Հոգեշահ ընթերցանություն» ամսագրի  
1879 թ. համարից)

Աջ ոտքս սաստիկ ցավում էր (ասում ենք մենակյացի խոսքերով), իմ խցում ութ օր շարունակ չփում էի տնական միջոցներով, սակայն բանն այնտեղ հասավ, որ ես բոլորովին չէի կարողանում քայլ անել և ձեռնափայտով զնացի հիվանդանոց: Այնտեղ ես պառկեցի և չէի կարողանում դիպչել ոտքիս՝ այն ուռել էր: Բժիշկը, զննելով ոտքս, ինձ ասաց. «Ձեզ մոտ հոգացավ է, ստիպված կլինեք մի քանի ամիս պառկել առանց դուրս գալու և պիտի զգուշանաք ցրտից»: Ես դրա համար սկսեցի տխրել, որովհետև սովոր էի անընդհատ շարժման մեջ լինելու մաքուր օդում: Հենակով քայլելով՝ տասը օր շարունակ

չէի կարողանում ոտքիս հենվել: Այդ ամբողջ ընթացքում օրական երկու անգամ ոտքս շփում էին քսուքներով և խմելու դեղեր էին տալիս, սակայն՝ անօգուտ: Տեսնելով, որ օգուտը քիչ է, ես սեպտեմբերի մեկից երեք օր առաջ սկսեցի տերողորմյայով աղոթել սուրբ նահատակ Պանտելեիմոնին՝ նրանից բժշկություն հայցելով: Սեպտեմբերի 1-ին, երբ պառկած էի անկողնում, գիշերվա ժամը երեքին, ասես միանգամայն արթուն վիճակում տեսա մի երիտասարդ պատանու, ով մի երեք անգամ բոթեց իմ կողը և ինձ ասաց. «Ես եկել եմ, իսկ դու քնած ես»: Ես նույն պահին խաչակնքեցի և մտածում եմ, թշնամու փորձություն չէ՞ արդյոք, ու նայում եմ նրան: Տասնութ տարեկան պատանին, լուսավոր հանդերձների մեջ, ասում է ինձ. «Դու ինձ արդեն երրորդ օրն է՝ կանչում ես, որ գամ, ահա ես էլ եկա»: Ընդ որում ինձ մի փոքրիկ սրվակ ցույց տվեց, որի մեջ մի քիչ ձեթ կար, ու ասաց. «Ես քեզ սրա միջինը կտայի, սակայն սա ինձ պետք է, ես հեռավոր ճամփա եմ գնում, ուր ինձ են սպասում շատ ծանր հիվանդներ, իսկ դու վերցրու վերին եկեղեցու իմ սրբապատկերի ձեթից և օրական երկու անգամ քսիր հիվանդ ոտքիդ, սակայն նախ լվա մաքուր, տաք ջրով»: Հաջորդ օրը ես օրհնություն խնդրեցի վանահորից, և նա իր օրհնությունը տվեց այդ

կատարելու: Այդ նույն օրը ես խնդրեցի, որ ինձ սուրբ ձեթ բերեն սուրբ նահատակ Պանտելեիմոնի կանթեղից, և բժշկից թույլտվություն խնդրեցի ջրով ոտքս լվանալու, որին նա պատասխանեց. «Ինչպես ցանկանում եք, միայն թե տեսեք, որ վելի վատ չլինի»: Եվ ես ոտքս լվանալով՝ օրական երկու անգամ սուրբ ձեթ էի քսում: Սեպտեմբերի 4-ին սրվակի ձեթը վերջացավ, ես փորձեցի քայլել առանց հենակի և, գոհություն Տեր Աստծուն և սուրբ նահատակ Պանտելեիմոնին, ոտքս վերջնականապես լավացավ:

**ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ  
ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆԻ ՆՐԱՇԱԳՈՐԾ ԵՐԵՎԱՌԻՄԸ  
14-ԱՄՅԱ ՄԱՏԱՄԵՐԶ ԼԻԳԻԱՅԻՆ, ԱՊԱ ՆԱԵՎ  
ՏԵՍԻԼՔԻ ՄԵՋ ՆՐԱ ՆՐԱՇՔՈՎ ԲՈՒԺՈՒՄԸ**

(«Հոգեշահ ընթերցանություն» ամսագրի  
1883 թ. Համարից)

Ներքոստորագրյալը, որ այս տողերը գրում է որպես ուրիշներին խրատ, հավաստիացնում է, որ այստեղ պատմված ամեն ինչ կատարյալ և հավաստի ճշմարտություն է:

Ավելի քան երեք տարիներ առաջ մեր տասնչորսամյա դուստր Լիդիան սաստիկ հիվանդա-



ցավ: Հասկանալի է, որ ես՝ նրա ծնողը և իմ կի-  
նը, խիստ վախեցանք, մանավանդ որ Լիդիան  
բարեգութ Աստուծոց աղաչանքով ունեցած մեր  
միակ զավակն էր, մանուկ հասակում տարբեր  
ժամանկներում մահացած տասներեք երեխանե-  
րից կենդանի մնացածը: Անհապաղ կանչեցինք  
տեղական լավագույն բժիշկներից մեկին, որը,  
քննելով մեր հիվանդ աղջկան, մեզ հայտատա-  
րեց, որ նա վարակված է ծանր բժավոր տիֆով,  
առավել ևս այնքանով վտանգավոր, որ հիվան-  
դի կոկորդը բորբոքված է և փակված՝ քիմքից  
ու ըմպանից զատված ներքին մաշկի ծվեննե-  
րով, որոնք խիստ խոչընդոտում էին շնչա-  
ռությանը: Չնայած այս ամենին, բարի բժիշկը  
ջանասիրաբար սկսեց բուժել մեր Լիդիային և  
երեք օր մարտնչում էր սարսափելի թշնամու՝  
տիֆի դեմ՝ օրվա մեջ մի քանի անգամ այցելե-  
լով հիվանդին:

Չորրորդ օրը իրիկնամուտին, մեր տնից դուրս  
եկող բժշկին ուղեկցելով մինչև տան դարպասը,  
ես նրան սրտատրոփ հարցրեցի. «Դե ի՞նչ, բժիշկ,  
ի՞նչ վիճակում է մեր հիվանդը: Ասեք ճշմար-  
տությունը»: Բժիշկն ինձ պատասխանեց. «Ես  
ձեզ այն կասեմ, ինչ որ հնարավոր չգտա ասել  
նյարդերը թուլացած ձեր կնոջ մոտ, այսինքն, որ  
մեր հիվանդ Լիդիայի վիճակն անհուսալի է: Նրա

բուժման համար ես գործադրեցի այն ամենը, ինչ  
տալիս է մեր գիտությունը՝ պայքարելու համար  
այդ սարսափելի պատուհասի՝ բժավոր տիֆի  
դեմ, սակայն չկարողացա հաղթահարել այն, և  
ձեր հիվանդ դուստրը այս գիշեր, ժամը տասնմե-  
կին կամ տասներկուսին մոտ անխուսափելիորեն  
պետք է որ մեռնի»: Ես հուսահատ գոռացի. «Ո՞վ  
Տե՛ր իմ... Դու կտոր, բժիշկների խորհուրդ չհրա-  
վիրե՞նք»: Բժիշկը, նստելով իր կառքը՝ պատաս-  
խանեց. «Աշխարհի երեսին ոչ մի խորհուրդ չի  
կարող օգնել ձեր հիվանդ աղջկան, նրան միայն  
հրաշքը կարող է փրկել»:

Թե բժիշկը ինչպիսի զգացումով և ինչ նշա-  
նակությամբ արտասանեց վերջին խոսքերը, ես  
վշտից անզգայացած՝ չլսեցի, սակայն այդ խոս-  
քերը ինձ վրա ազդեցին յուրահատուկ սթա-  
փեցնող եղանակով: Մեջս հանկարծ ինձ համար  
բաղձալի մի անակնկալ միտք ծագեց, որ մեզ  
համար դեռևս հույս կա՝ ամենագուրթ Աստուծո  
օգնությունը: Եվ ահա, ուղեկցելով բժշկին և  
վերադառնալով սենյակ, ներքուստ ինձ կրծող  
մի զգացողությամբ մտածում էի. «Մենք՝ մե-  
ղավոր մարդիկս, միշտ այդպես ենք անում՝  
ծանր հիվանդությունների դեպքում առաջին  
հերթին բժշկի օգնությանն ենք դիմում, այլ ոչ  
թե մեր հոգիների և մարմինների ճշմարիտ

բժիշկ Ամենագուլթ Փրկչին, որի համար էլ պատժվում ենք»:

Լուսավորված այդ բարեգուշակ մտքով և մեր հիվանդ աղջկա մասին բժշկի այդ սարսափելի կանխատեսումը չհայտնելով կնոջս, նրան ցավ չպատճառելու մտավախությունից, միայն ասելով, թե նա խորհուրդ տվեց հիվանդի համար աղոթել Աստուծոն, այդ նույն պահին ճամփա ընկա մեր տանից մի քանի սաժեն հեռու գտնվող թեմական եկեղեցի, ուր այդ ժամանակ երեկոյան ժամերգություն էր և խնդրեցի քահանային՝ երեկոյան ժամերգության ավարտից հետո անպայման մեզ այցելել սրբագործված նշխարներով, մեր հիվանդ աղջկան Քրիստոսի կենարար Խորհրդին հաղորդակից դարձնելու, ինչպես նաև մաղթանք կատարելու նրա առողջության համար: Կես ժամ չանցած այդ ամենը կատարվեց, և մեզ մոտ եկած մեր բարի հովիվը՝ հայր Եվգրաֆ Պետրովը ակնածալի ջերմեռանդությամբ, Հաղորդություն տալով հազիվ կենդանի Լիդիային, մեր խնդրանքով սկսեց Ամենասուրբ Աստվածամորը և սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնին հղված մաղթանք կատարել ջրօրհնեքի կարգով նրանց սրբապատկերների առջև, որոնք այն ննջասենյակի առջևի անկյունի մյուս սրբապատկերների մեջ առավել

աչքի ընկնող տեղում էին դրված, որտեղ պառկած էր հիվանդ Լիդիան: Զերմագին էր մեր աղոթքը՝ վերառաքված Սուրբ Կույս Մարիամին և սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնին, և ուղեկցվում էր մեր անվերջ հորդող, այրող արցունքներով: Անգամ մեր բարի քահանան, որ անկեղծորեն էր սիրում մեր ողջ ընտանիքը, տեսնելով մեր հեծեծանքներն ու դառն արտասուքը, արտասավալի աչքերով էր կատարում իր մաղթանքը: Մաղթանքն ավարտվեց: Օրհնած ջրով ցողելով հիվանդին և մեր տունը, զգեստափոխվելով և պահակին ու դպիրին ուղարկելով իրենց տեղը՝ քահանան մոտ մի ժամ ևս նստեց մեզ մոտ, մեզ մխիթարելով ողբալի դեպքին համապատասխանող Սուրբ Գրքի և Եկեղեցու սուրբ հայրերի խոսքերով, և ի վերջո հեռացավ: Ես ու կինս մենակ մնալով՝ աչքերս չէինք հեռացնում մեր թանկագին մահացող երեխայից՝ հուսալով նրա մեջ դեպի լավը փոփոխություն նկատել: Այսպես շարունակվեց մինչև ժամը տասը, բայց այստեղ իմ տկարացած կինը, որ նստած էր բազմոցին, վերին աստիճանի հոգնած երեքօրյա արթնության և հիվանդին խնամելու հետևանքով, ակամայից՝ չկարողանալով ինքն իրեն տիրապետել, ընկավ բազմոցի բարձին և խորը քուն մտավ: Իսկ ես՝ որ առավել ամուր էի

և ոչ այդքան հոգնած, մնացի հիվանդ Լիդիայի անկողնու մոտ և շարունակում էի հետևել նրա հիվանդուլթյան ընթացքին: Եվ ահա ժամը տասն անց կեսին, առջևի անկյունի սրբապատկերների դիմաց պայծառ վառվող կանթեղի լույսի ներքո սարսափով տեսա, որ իմ աղջկա հիվանդուլթյան ընթացքը փոփոխվում է՝ ավելի վատթարանալով: Նրա ձեռքերի ու ոտքերի ծայրերը, երբ ես դրանք շոշափում էի, արագորեն սկսեցին սառչել, ճակատին հայտնվեց սառը քրտինք, իսկ նրա շնչառությունը միանգամից դարձավ ծանր, խռպոտ, ընդհատվող: Ըստ երևույթին, մոտենում էին մարող կյանքի՝ մահվան հետ պայքարի վերջին ընթացքը՝ սկսվեց հոգևարքը: Այդ ընթացքում, որի մասին հիմա էլ է սարսափելի հիշել, ծայրաստիճան ցնցեց ինձ, չնայած որ մարտադաշտում տեսել էի հարյուրավոր քաջարի ծառայակից ընկեր զինվորների մահը: Բայց չէ որ դա ինձ համար օտար մարդկանց մահ էր, իսկ հիմա իմ առջև մեռնում էր իմ հարազատ, մեր փայփայած միակ զավակը: Ես ուժ չունեի տեսնելու մահվան այդ ցնցող տեսարանը, և դուրս գալով մյուս սենյակ և դեմքով ընկնելով սեղանի մոտ, երեխայի նման հեկեկացի: Բայց ո՛վ հրաշք, ես հանկարծ պարզ լսեցի, որ այն մահի՛ճը, որի վրա պառկած էր մեր մահացող դուստր

Լիդիան, ճռնչաց, որպես թե բարձրացող մարդու շարժումից, որը գրավեց իմ ուշադրությունը, և ես արցունքոտ աչքերով, շնչառությունս պահած՝ մոտեցա այն սենյակի բաց դռանը, ուր պառկած էր հիվանդը, նայեցի և զարմացա՝ չհավատալով իմ աչքերին: Մեր մահացող Լիդիան, որ երեք օր չէր կարողանում ինքնուրույն շարժել իր անդամներից ոչ մեկը, որին իր ցանկությամբ ուրիշներն էին մի կողմից մյուս կողմը թեքում, ինքն իր ուժերով բարձրացավ և նստեց անկողնում, ոտքերը ցած կախելով մահճակալից, ու սկսեց լաց լինել, իսկ հետո, շատ չանցած, ակներև դժվարությամբ իր մահճակալի առջև փռած գորգի վրա թքեց քիմքից և ըմպանից պոկված տարբեր ծվենների մի ամբողջ գունդ՝ խառնված կաշուն, տհաճ հոտ արձակող նյութի հետ: Հետո սկսեց թեկուզև ինձ համար անհասկանալի և անորոշ կերպով խոսել մեկի հետ, որին ես, սակայն, չէի տեսնում: Ես, թեև վորված նրա հիվանդուլթյան բարի ավարտի ուրախալի հույսով, տարակուսանքով ասացի. «Ո՛վ Տեր, այս ի՞նչ կատարվեց մեր մեռնող Լիդիայի հետ»: Ահա թե ինչ էր կատարվել, ինչպես որ ուրախության արցունքներով մեզ հետո պատմեց մեր Լիդիան՝ հաջորդ օրվա արշալույսի հետ կատարելապես առողջ վիճակով արթնանալով:

Թե ինչ էր կատարվել մինչ այդ, Լիզիան չէր գիտակցել, որովհետև անգիտակից վիճակում էր, կատարյալ մոռացության մեջ, բայց հանկարծ զգացել էր, որ նրան ինչ-որ մեկը բարձրացրեց և նստեցրեց անկողնու վրա: Դժվարությամբ բացելով աչքերը՝ նա տեսավ, որ իր առջև ճառագող պայծառության մեջ կանգնած են Սուրբ Աստվածամայրը և Նրանից աջ, փոքր-ինչ ետ՝ սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնը, ճիշտ և ճիշտ այն տեսքով, ինչպես որ պատկերված են ննջասենյակի առջևի անկյունում դրված մեր բազմաթիվ սրբապատկերներում, որոնց առջև դրանից երեք ժամ առաջ արտասուքով և հեծհեծանքով ջրօրհնեքով մաղթանք էր կատարվել: Այդ զարմանահրաշ տեսիլքը այնքան հաճելիորեն էր ազդել մեր աստվածավախ, բոլոր տոնական և կիրակի օրերին հոժարությամբ եկեղեցի այցելող և մանուկ հասակից վանական կյանքը կրքի աստիճանի սիրելու հակված Լիզիայի վրա, որ նա հեկեկաց բերկրալի, գորովալի արցունքներով և ցանկանում էր իր հիացմունքը բառերով արտահայտել, բայց այնպիսի ցավ զգաց, որ ակամայից աջ ձեռքով բռնեց կոկորդը և նշանացի ցույց տվեց, որ ուժ չունի խոսելու:

Աստվածամայրը, դիմելով իր կողքին կանգնած մեծ նահատակին, ասաց. «Պանտելեիմոն,

մատդ թրջիր ձեռքիդ բռնած տապանակի յուղով և Ամենասուրբ Երրորդության անունով քսիր հիվանդ աղջնակի շուրթերին ու վզին, որպեսզի նրա կոկորդից դուրս ժայթքի այն, ինչ նրան ցավ է պատճառում ու խոչընդոտում է շնչառությանը»: Պանտելեիմոնը մոտեցավ Լիզիային, և աջ ձեռքի ցուցամատը թրջելով ձախ ձեռքի յուղամանի մեջ, խաչաձև քսեց նրա շուրթերին, ապա նաև՝ վզին, յուրաքանչյուր անգամ ասելով. «Անվամբ Հոր և Որդու և Սուրբ Հոգու», և այդ կատարելով, նորից կանգնեց իր նախկին տեղը: Անասելի քնքշությամբ Աստվածամայրը ասաց Լիզիային. «Իսկ հիմա, աղջնակ, ուժգին դո՛ւրս թքիր այն, ինչ որ ցավ պատճառող բան կա քո բերանում և կոկորդում, և Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի՝ Իմ Որդու և Աստծո անճառելի գթասրտությամբ, քո ծնողների և բարի հովվի արտասովալի աղոթքներով, որ այսօր մաղթանք մատուցեց ինձ և բազմաչարչար վկա Պանտելեիմոնին, կառողջանաս և կազատվես քեզ պաշարած հիվանդությունից»: Լիզիան դա կատարեց, և կոկորդի ցավն անցավ: Աստվածամոր գթառատ բառերը Լիզիային աննկարագրելի հիացմունք պատճառեցին, մանավանդ որ նա նույն պահին իրեն կատարելապես առողջ զգաց: Լիզիան խորը գորովանքով արտա-

բերեց. «Ի խորոց սրտի շնորհակալությունն եմ հայտնում Տիրոջը ինձ ծանր հիվանդությունից բժշկելու համար և դրա համար տալիս եմ վաղուց ի վեր իմ փայփայած ուխտի երդում՝ իմ ծնողների թույլտվությամբ ընդունվել տեղի Պակրովոգևիչի վանք և մինչև իմ օրերի վերջը ծառայել Նրան՝ Իմ Աստծուն, դառնալ Քրիստոսի հարս»։ Աստվածամայրը Լիդիային պատասխանեց. «Բարի գործ ես ընտրում, աղջնակ, և կլինես վանքում, սակայն նախազգուշացնում եմ քեզ, որ եթե դրժես քո հոժարակամ խոստումը, ապա այդ նույն սարսափելի հիվանդությունից կմեռնես, որից քո ծնողների և բարի հովվի՝ Ինձ և նահատակ Պանտելեիմոնին ուղված արտասովալի աղոթքներով ահա քեզ առողջացրեց Ամենագութ Փրկիչը։ Միշտ հիշի՛ր այդ մասին»։

Վերջին խոսքն ասելով՝ Աստվածամայրը Լիդիային խաչակնքելով, թողեց նրան, և ինչպես որ թվաց Լիդիային, նորից մտավ Իր սրբապատկերի խորշը, որից դուրս էր եկել։ Նույն կերպ վարվեց նաև Աստծո բազմաչարչար վկա Պանտելեիմոնը։ Այս ամենը մեր Լիդիան մեզ պատմեց առավոտյան քնից արթնանալով։ Իսկ Աստվածամոր սքանչելի երևումից հետո Լիդիան նորից հանգիստ պառկեց իր անկողնում, ակնթարթորեն խորը քուն մտավ և առանց

արթնանալու քնեց մինչև առավոտ։ Հաջորդ օրը առավոտյան, երբ մեր մահամերձ Լիդիան միանգամայն առողջացած արթնացավ, դարձյալ մեզ մոտ հրավիրեցինք նույն այն տեղական բարի քահանա հայր Եվգրաֆին և մեր խնդրանքով նա մեզ համար դարձյալ աղոթքներ մատուցեց Սուրբ Կույս Մարիամին և մեծ նահատակ Պանտելեիմոնին, բայց դրանք այս անգամ արդեն շնորհակալական աղոթքներ էին մահամերձի բժշկվելու համար, որոնք դարձյալ ուղեկցվում էին մեր արտասուքով, բայց այս անգամ ոչ թե առաջվա պես դառը, այլ երախտագիտություն բերկրալի և գորովալի արտասուքով։ Դրանից անմիջապես հետո, մենք՝ ես, կինս և դուստրս, անհետաձգելի պարտականություն համարեցինք ներկայանալ տեղի առաջնորդին՝ Սերաֆիմին, որը շատ բարեհաճ եղավ մեր նկատմամբ և մեզ սիրով է իր մոտ ընդունում բոլոր մեծ տոների ժամանակ, և գերապատվելիին զեկուցել Աստվածամոր՝ մեր Լիդիային հրաչքով հայտնվելու և այն ամենի մասին, ինչ որ եղել էր մեզ հետ այն ժամանակ։ «Սքանչելի՛ են Քո գործերը, Տե՛ր»,- ասաց գերապատվելի Սերաֆիմը, մեզնից մեծ ուշադրությամբ լսելով այն ամենը, ինչ նկարագրված է վերևում։ Ապա համոզիչ ավելացրեց. «Այն

ամենի մեջ, ինչ որ հիմա ձեզ հետ կատարվեց, ես տեսնում եմ Աստծո մատը և իմ եզրակացությունն այն է, որ ձեր Լիդիան պետք է անմիջապես վանք մտնի, որպեսզի նրան ավելի վատ դեպք չպատահի: Սրբազան հոր բառերը մենք ընդունեցինք սրտի գորովանքով, մանավանդ՝ իմ կիսն ու դուստրս՝ Լիդիան, և կիսս նույն պահին հաստատ ցանկություն հայտնեց՝ նկատի ունենալով Լիդիայի անչափահասությունը, նրա հետ նույնպես մտնել վանք, որպեսզի արտաքին աշխարհում միայն ես մնամ, այն նկատառումով, որ մենք ոչ մի ունեցվածք չունենք, այլ ապրում ենք միայն պատերազմի ժամանակ իմ ստացած ծանր վերքերի համար ինձ նշանակված թոշակով: Եթե ես դառնայի վանական, թոշակը կկտրեին և իմ ընտանիքը վանքում չէր կարող ապրուստ ունենալ, քանզի Վորոնեժի Պակրովոգեվիչյա վանքը, ուր նա մտնելու էր, միաբանական չէր, և վանականները պետք է ապրեին միայն իրենց իսկ աշխատանքով: Սրա համար, ի սեր ընտանիքի բարօրություն, ես համաձայնություն տվեցի, մանավանդ որ արդեն վաթսուներեք թվական էր: Սրբազան հայրը, այս ամենը պատվի արժանի համարելով, հավանություն տվեց մեր ծրագրին, և իմ կնոջն ու Լիդիա դստերը սրբապատկերներով օրհնելով

սրբավայրում նոր կյանքի համար, խաղաղությունամբ արձակեց մեզ:

Այսպիսով՝ կիսս ու դուստրս՝ Լիդիան, ըստ սուրբ Սաղմոսերգուկի խոսքի՝ թողնելով կենցաղային ծովը, մտան խաղաղ նավահանգիստ՝ Վորոնեժի Պակրովոյի կուսանաց վանք և շնորհակալություն Տիրոջը՝ այնտեղ ավելի քան երեք տարի ապրում էին մեր վերջին միջոցներով ստեղծված մի լավ խցում խաղաղ, հրեշտականման կյանքով, բայց այդ ժամանակ, ավելի ճիշտ՝ այս տարվա Մեծ պահքին մեր Լիդիայի հետ կատարվեց համարյա նույնը, ինչ որ նկարագրված է վերևում: Ահա թե դա ինչպես կատարվեց: Մի անգամ Լիդիային առիթ եղավ լինելու մի շատ բարի, աստվածավախ տարեց միանձնուհու մոտ: Նույն այդ միանձնուհու մոտ այդ ժամանակ հյուրընկալվում էր նաև մի երիտասարդ աշխարհական աղջիկ, որը տղամարդու սանրվածք ուներ և սովորում էր տեղական իգական ուսումնարաններից մեկում: Խոսքի բռնվելով մեր պարզասիրտ, արդեն տասնյոթամյա Լիդիայի հետ, աշխարհիկ աղջիկը շինծու ոգևորությունամբ նրան այնպիսի բաներ ասաց, որ ինքը՝ Լիդիան իրիկնաժամին տարեց միանձնուհու մոտից վերադառնալով իր խուցը, սկսեց ասես մոլեգնածի պես մոր առջև այն մեղսալի միտքը

արծարծել, թե վանք մտնելու ուխտը, որն ինքը տվել էր երեք տարի առաջ, սարսափելի տիֆով առաջին անգամ հիվանդանալու ժամանակ, չի կարող իր համար պարտադիր լինել, քանի որ ինքը՝ Լիդիան այն ժամանակ դեռ անչափահաս էր և ուրիշ այդպիսի շատ բաներ խոսեց, ինչը իմ կնոջը՝ նրա մորը, ծայրաստիճան ապշեցրեց: Լիդիան նույնը կրկնեց ինձ՝ իր հորը, երբ ես շուտով այցելեցի նրանց վանական կացարանում: Եվ ի՞նչ: Այդ նույն գիշերը Լիդիան առաջվա պես հիվանդացավ սարսափելի բժավոր տիֆով, և հաջորդ օրվա երեկոյան մոտ այնքան վատ էր, որ նրան վերջին Հաղորդություն տալու համար հրավիրված բարի վանական քահանան ստիպված էր մինչև Սուրբ Խորհրդին հաղորդակից դարձնելը նրանից խոստովանություն ընդունել: Այդ նույն ժամանակ Լիդիային օգնություն ցուցաբերելու համար հրավիրվել էր քաղաքի լավագույն բժիշկը: Հիվանդին զննելով, նա նկատեց, որ ըստ բոլոր նշանների նա, հավանաբար, արդեն հիվանդացած է եղել նույն այդ տիֆով, որը հիմա կրկնվել է: Երբ նրան պատասխանեցին, որ դա իսկապես այդպես է և պատմեցին նրա հրաշքով բժշկվելու մասին, ապա աստվածավախ բժիշկը մեզ ոգեշնչված համոզեց, որ հիմա էլ հիվանդ Լիդիային կարող է փրկել միայն

ի վերուստ օգնությունը, որ ոչ մի մարդկային հնարք չի օգնի, և Լիդիան, դատելով գիտություն տվյալներից, գիշերվա ժամը տասնմեկին կամ տասներկուսին պետք է որ անպայման մեռնի. այս ասելով՝ բժիշկը մեկնեց: Եվ ահա այստեղ, ինչպես որ առաջին անգամ, մենք նորից մեծ ջերմեռանդությամբ դիմեցինք Աստվածամոր և մեծ նահատակ Պանտելիմոնի բարեխոսությանը և ամենագուլթ Փրկիչ Տիրոջը: Մեր ինդրանքով անմիջապես վանական բարի քահանան նրանց սրբապատկերների առջև ջերմեռանդ աղոթքներ կատարեց, որոնք ուղեկցվում էին մեր դառն արտասուքով և ծնրադրություններով: Եվ գոհություն Տեր Աստծուն, որ մեր համար ջերմեռանդ բարեխոսներ և աղոթողներ Աստվածամայրը և մեծ նահատակ Պանտելիմոնը մեզ ամոթահար չարեցին՝ չմերժեցին մեր արտասուքի, ջերմեռանդ և սրտաբուխ աղոթքները: Ըստ երևույթին, տասնմեկից տասներկուսը ընկած ժամանակահատվածում, մոր խոսքերով ասած, արդեն մահամերձ Լիդիան հանկարծ հանգստացավ և շուտով տաք քրտինքով պատվելուն պես պինդ և անդորր քնեց: Դա այն պահն էր, երբ, ինչպես որ հետո լացով և գղջմամբ պատմում էր Լիդիան, նրան երազում հայտնվեց Աստվածամայրը Պանտելիմոնի հետ և նրան հրա-

մայելով հիվանդի ճակատին, շուրթերին ու աչքերին իր տուփի ձեթից քսել, Լիդիային ասաց. «Քո ծնողների և բարի քահանայի արտասովալի, անկեղծ աղոթքներով, նկատի ունենալով քո անփորձությունը, դու նաև հիմա Աստծու անճառելի ողորմածությունը առողջ ու անվնաս կլինես, բայց այսուհետև զգո՛ւյշ եղիր՝ մի՛ մեղանչիր քո անմտությունը, որպեսզի եղածից ավելի վատթար բան չլինի»։ Եվ Աստվածամայրն ու Պանտելեիմոնը աներևութացան, իսկ Լիդիան առավոտյան կատարելապես առողջացավ և այն ժամանակից ի վեր ձգտում է իսկապես սուրբ վանական կյանքով ապրել, երկյուղելով, թե չլինի առաջին երկուսից ավելի վատթար հիվանդություն դիպչի։

Որ այս վերոշարադրյալը հավաստի ճշմարտություն է, դրանում նաև վկայում ենք մեր ստորագրությունը՝

Վերքեր ստանալու պատճառով Կովկասյան բանակի պաշտոնաթող սպա (պորուչիկ),  
իսկ հետո՝ քաղաքապետ Ստեպան Իվանովիչ,  
նրա նախկին կին, իսկ այժմ միանձնուհի՝  
Մարիա Գավրիլովնա և  
Վորոնեժի Պակրովոյի կուսանաց վանքի միանձնուհի,  
նրանց դուստր Լիդիա Ռոմանովսկիներ։  
Օգոստոսի 3, 1882 թվական, Վորոնեժ

## ԳՆԴԱԿԻՑ ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ՏՂԱՅԻ ԲՈՒԺՈՒՄԸ

(«Հոգեչափ ընթերցանություն» ամսագրից)

Յակով Դմիտրիևիչ Պապովը Ենիսեյի նահանգի Աչինսկից գրում է Սուրբ Աթոս Լեռ, որ նրա տասներկուամյա զավակը՝ Դմիտրին ծնողների բացակայության ժամանակ խաղալիքի փոխարեն վերցրեց լիցքավորված ատրճանակը և անզգուշաբար կրակեց իր ձախ ձեռքին՝ արմունկից վերև։ Երբ ծնողները վերադարձան և բժիշկ հրավիրեցին, պարզվեց, որ դնդակը ձեռքի մեջ է։ Բժիշկը չհամարձակվեց այն հանել, վախենալով որ տղան չի դիմանա վիրահատությունը։ Դա կատարվեց հոկտեմբերի 5-ին։ Տղան մինչև ամսի 21-ը տառապում էր։ Ձեռքը սկսել էր կծկվել։ Հոկտեմբերի 21-ին Աթոսի ծերերից նամակ ստացվեց, որի մեջ դրված էին մեծ նահատակ Պանտելեիմոնի՝ կերպասի վրա նկարված երկու սրբապատկեր։ Երկյուղալի ակնածանքով սեղանին դնելով սուրբ պատկերները՝ ամբողջ ընտանիքը սկսեց Աստծո ծառային աղոթել, որից հետո պատկերները դրեցին հիվանդ ձեռքին և առավոտյան վերքի մատնաչափ անցքի տեղում միայն ծաղկասպի հիշեցնող մի բիծ մնաց, և ձեռքը առողջացավ։



**ԺԱՆՏԱԽՏԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ ԱՍՏԾՈ  
ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՍՈՒՐԲ ՆԱԿԱՏԱԿ  
ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆԻ ԲԱՐԵՆՈՍՈՒԹՅԱՄԲ**

(«Եկեղեցական հաշվետվություններից»

1893 թվականի N 21)

Անցած՝ 1892 թվականի հուլիսի կեսին, Նովոբորոդի նահանգի Զամոչսկի վիճակի Դոլգովո գյուղում սիրիայան ժանտախտ սկսվեց: Այդ իմանալով՝ ղեկավարությունը կարգադրեց այնտեղ անասնաբույժ և բուժակ ուղարկել: Ժանտախտի ընթացքում փոխվեցին մի քանի բժիշկներ ու բուժակներ, բայց նրանք ոչ մի էական օգուտ չտվեցին: Տեսնելով, որ մարդկային ջանքերը օգուտ չեն տալիս, այդ գյուղի գյուղացիները հուլիսի 17-ին ղիմեցին ինձ՝ տեղական քահանայիս, խնդրելով հաջորդ օրը Պատարագ մատուցել և խաչերթ կատարել աղետի ենթարկված գյուղում, չնայած նրանց շատ ավելի վաղ էի համոզում Աստծուն դիմել աղետը դադարեցնելու աղոթքով: Խաչերթը սկսելուց առաջ ես նրանց ղիմեցի մոտավորապես այսպիսի խոսքերով. «Եղբայրներ, դուք եկել եք Աստծուց օգնություն խնդրելու, դրա համար ձեզ խորհուրդ եմ տալիս խաչերթի ժամանակ (եկեղեցուց յոթ վերստ հեռավորության վրա)

չխոսել կենցաղային գործերի մասին, իսկ երկյուղածություն զգացողությունը պահպանելու համար տիրացուի հետ երգել Սուրբ Աստվածածնին և այն սրբերին ուղղված կցուրդները, որոնց պատկերները պիտի տարվեն խաչերթի ընթացքում»: Այդպես էլ վարվեցին: Տղամարդիկ, ընթանալով քահանայի ետևից, երգում էին բոլոր կցուրդները, իսկ կանայք, գնալով տղամարդկանց ետևից, միայն երգում էին. «Սուրբ Աստվածածին, փրկիր մեզ»: Թե ինչ աստիճանի սրտաշարժ էր երթը, կարելի էր եզրակացնել այն բանից, որ քչերն էին կարողանում զսպել արտասուքը:

Հետագարձ ճանապարհը պետք է անցներ մեր այդ նույն վիճակի Օսիյա գյուղով (առավոտյան այնտեղ չգիտեին, որ խաչերթ է կատարվելու): Մինչև գյուղը մոտ երկու վերստ էր մնում, երբ այդ գյուղից երկու ներկայացուցիչ ուղարկեցին ինձ խնդրելու համար, որ խաչերթով կանգ առեմ գյուղի մեջ և մաղթանք կատարեմ: Չնայած արդեն երեկոյան ժամը վեցին մոտ էր, և դեռևս պետք էր հինգ վերստ գնալ, ես խնդրանքը չմերժեցի, չնայած հոգնածությունս: Դրանից հետո մենք խաչերթով հինգ ընթացք էլ չէինք գնացել, երբ տեսանք, որ ժողովուրդը գյուղից մեզ ընդառաջ է ելնում, կարելի է ասել, համատարած զանգ-

վածով, փոքր-ինչ հապաղելով՝ տեղի մատուռից սրբապատկերներ են դուրս բերում, որոնց ետևից գալիս են անխտիր մեծ թե փոքր: Հրաշալի երեկո էր, երկինքը անամպ, քամի չէր շարժվում, այնպես որ այդպիսի բազմանդամ, հանապատրաստից կազմված երգչախմբի երգեցողությունը տարածվում էր հեռու դաշտերով մեկ:

Իսկ ժանտախտը չէր դադարում: Ես այս առիթով խրատեցի, թե Աստված Իր ողորմությունը երբեմն նաև երկար ժամանակ չի առաքում՝ ստուգելով հավատը, սակայն ամեն դեպքում անդադար հայցողներին օգնում է, որի մասին նաև օրինակներ բերեցի: Ուստի բավական չէ մի անգամ աղոթել, այլ պետք է Աստուծոց օգնություն խնդրել այնքան ժամանակ, քանի դեռ չի ողորմել, դրա հետ միասին խնդրել նաև Աստուծո ծառաներին, որպեսզի նրանք իրենց հզոր աղոթքներով մեզ՝ մեղավորներին, օգնեն շարժելու Աստուծո գույթը՝ Նրա գայրույթը ողորմածություն վերածելու և ժանտախտը դադարեցնելու: Գյուղացիները հնազանդվեցին: Հուլիսի 27-ին, սուրբ նահատակ Պանտելեիմոնի հիշատակության օրը, Դուրբով գյուղի գյուղացիները դարձյալ խնդրեցին Պատարագից հետո խաչերթով անցնել իրենց գյուղով: Դեպի գյուղ խաչերթի ողջ ընթացքում հորդ

անձրև էր տեղում, սակայն, չնայած դրան, աղոթողների ջանասիրությունը չէր թուլանում: Նրանք քայլում էին այն նույն կարգավորությամբ և այն նույն երգեցողությամբ, ինչպես որ նախորդ անգամ: Ընդ որում, սարսափելի ցեխի և անձրևի պատճառով ստիպված էինք կես ժամի չափ կանգ առնել Օսիյա գյուղում, որից հետո երթը շարունակվեց մինչև Դուրբով գյուղը: Զրօրհնեքի կարգից և մաղթանքից հետո ինձ է մոտենում գյուղի ավագը և հայտարարում, թե իրենց գյուղի գյուղացիները ընդհանուր ժողովի ժամանակ վճռել են հուլիսի 27-ը նվիրական օր հռչակել, այսինքն ամեն տարի այդ օրը չաչխատել, իսկ ճաշու ժամից հետո խաչերթ կատարել գյուղում և բակերում աղոթքներ մատուցել: Գովելով նրանց ջերմեռանդության համար՝ ես իմ կողմից առաջարկեցի նրանց մոտ և ամբողջ ծխում կամավոր հանգանակություն կազմակերպել տաճարի համար Աթոսում սուրբ նահատակ Պանտելեիմոնի սրբապատկերը պատվիրելու նպատակով: Առաջին իսկ խոսքից բոլորը համաձայնվեցին, նմանապես և մյուս գյուղերում, որի մասին էլ ընծայագրեր կազմեցինք: Եվ ի՞նչ: Այդ օրից էլ ժանտախտը լիովին դադարեց և տասը հիվանդ ձիերից միայն մեկը՝ ծերացածը սատկեց, իսկ

մնացածները երեք-չորս օրից առողջացան և նրանց սկսեցին աշխատեցնել, մի բան, որ մինչ այդ հնարավոր չէր: Բայց Աստծո ողորմությունը մեծ է: Սկսվում էր ցանքը, բայց շատերը ձիեր չունեին: Մեր հարգելի գավառապետ Ի. Ֆ. Կոչկոն փոխարինաբար հարյուր հիսուն ռուբլի տվեց ձի գնելու համար, իր փողով ձի առավ նաև գյուղի ավագը, որպեսզի ովքեր իրենցը չունեն՝ աշխատեն այդ ձիով, ձիերով օգնեցին նաև ուրիշ ծխականներ, այնպես որ այդ գյուղը աշնանացան ցորենը բոլորից շուտ ցանեց: Նորին Կայսերական Մեծությունը՝ թագաժառանգ Նիկոլայ Ալեքսանդրովիչը, ստանալով նույն այդ համայնքի պետի զեկուցումը, բարեհաճեց հազար ռուբլի ընծայել տուժածներին: Այդ փողերը սեպտեմբերի 4-ին, գյուղի մեջ, մատուռի առջև մատուցված գոհաբանական աղոթքներից հետո, բաշխվեցին և նույն այդ օրը պետի առաջարկով թյամբ որոշվեց ամեն տարի սեպտեմբերի 4-ին Նորին Կայսերական Մեծության քաջառողջության համար պատարագ մատուցել և մաղթանք կատարել: Իսկ արդեն դեկտեմբերի 10-ին սուրբ նահատակ Պանտելեիմոնի սրբապատկերը դիմավորելու տոնն էր: Սրբապատկերը դիմավորելու համար եկեղեցուց խաչերթով ընդառաջ ելան հինգ վերստ հեռվից: Օսիյա գյուղի մեջ,

ուր տեղի ունեցավ հանդիպումը, աղոթքներ մատուցվեցին մեծ նահատակին ու դրանից հետո երթը շարժվեց եկեղեցի՝ անդադար կցուրդներ երգելով ի հիշատակ նահատակի: Երբ խաչերթը սրբապատկերով հանդերձ եկեղեցի հասավ՝ այն լուսավորված էր ինչպես Զատիկի օրը: Եկեղեցի մուտք գործելիս դարձյալ աղոթքներ կատարվեցին և միառժամանակ անց սկսվեց նաև գիշերային հսկումը: Ինչպես գիշերային հսկման ժամանակ, այնպես էլ մյուս օրվա Պատարագին, չնայած սովորական օր լինելուն, եկեղեցին լիքն էր աղոթողներով: Հիմա բոլորը մեծ ուրախություն մեջ են սրբապատկերի ժամանելու և իրենց ցանկություն իրականանալու առիթով:

Քահանա՝ Գրիգորի Պորֆիրիդով:

**ԱՍՏՈՒ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ՆԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՏԱՐԲԵՐ ԱՆՁԱՆՅ ՍՈՒՐԲ ՆԱՏԱՏԱԿ  
ՊԱՆՏԵԼԵԻՄՈՆԻՆ ՈՒՂՎԱԾ ԱՂՈՒՔՆԵՐՈՎ**

Կարդալով Աստծու շնորհով Սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի աղոթքներով կատարված հրաշքների ու բժշկությունների նշանների պատմությունները և սեփական դիտարկմամբ համոզվելով, որ նա մեր ծխականներից շատերին է ցույց տվել իր շնորհապարզ օգնությունը, որոնց տար-

բեր հիվանդությունների առիթներով ես խորհուրդ էի տալիս աղոթքներով դիմել սուրբ Պանտելիմոնին, և ինքս էլ աղոթքներ էի մատուցում Աստծու այդ ծառային, շտապում եմ տեղեկացնել սուրբ նահատակ և բժիշկ Պանտելիմոնի բարեխոսությունը և արագաչաս օգնությունը անձամբ իմ ստացած բարեգութ բուժման մասին:

Աստվածհայտնության տերունական օրը Կոստրոմա գետում ջրօրհնեք կատարելիս կամ էլ այդ նույն օրը ծխականների տները սուրբ ջուր տանելիս ես աննկատ մրսեցի և այս տարվա հունվարի 7-ին ուժեղ ատամնացավ զգացի: Հաճախակի տառապած լինելով այդ հիվանդությունը՝ այդ օրը ես փորձեցի ձեռքիս տակ եղած բոլոր միջոցները և շատ քիչ թեթևացում եղավ: Լնդերի բորբոքումը և սեղանատամի ցավը այնքան ուժեղ էին, որ ականջի ծակոց էին առաջացնում ու կոկորդի այնպիսի ցավ էին պատճառում, որ փոքր ումպերով տաք ջուր ըմպելն անգամ հնարավոր չէր լինում: Լեզվի ամենափոքր շարժումը խոսակցության ընթացքում սաստկացնում էր ցավը, իսկ ատամներով կերակուր ծամելը ամենևին հնարավոր չէր: Եթե պատահեր, որ գիշերը խորը քնի մեջ ատամներս իրար դիպչելով բերանս փակվեր, ապա ես ուժեղ ցավից գոռալով վեր էի թռչում և երկար ժամա-

նակ ստիպված էի ետ ու առաջ քայլել և ցավը դադարեցնել ինչ-ինչ դեղամիջոցներով:

Կնոջս և որոշ ծխականների ցանկությունը դեկտեմբեր ամսին ես սուրբ նահատակ Պանտելիմոնին ձոնված օրհներգ պատվիրեցի և այն ստացա հիվանդության գազաթնակետին հասած ժամանակ՝ հունվարի 19-ին: Օրհնաբանությունը հիվանդության ամենաթունդ պահին ստանալը ընդունելով որպես օգնության ակնհայտ նշան, որի համար այդ հիվանդության մեջ ես պետք է աղոթքով դիմեմ անվարձ բժիշկին և օգտվելով իմ հերթական շաբաթական ծառայությունից, հաջորդ օրը Պատարագից անմիջապես հետո եկեղեցում սուրբ նահատակ Պանտելիմոնի սրբապատկերի առջև աղոթքներ և մաղթանք կատարեցի նրան, կանթեղի յուղով օծեցի լնդերս և հիվանդ ատամս: Նույն հունվարի 20-ին, ժամերգության նախապատրաստման համար երեկոյան կանոնը կարդալուց հետո հագիվ կարողացա մեծ նահատակին օրհներգ մատուցել նրա փոքրիկ սրբապատկերի առջև, որը բերվել էր Սուրբ Աթոս լեռից: Այն պահին, երբ ավարտեցի մաղթանքը և նրան կից աղոթքը կարդալը, ատամնացավ նույն պահին էլ դադարեց, և այդ նույն ժամանակ էլ ես կարողացա հանգիստ ծամել և կուլ տալ կերակուրը: Հունվարի 21-ի առավոտ-

յան սուրբ նահատակին ես նորից մաղթանք մատուցեցի և օրհներգ ձոնեցի երախտագիտական աղոթքներով, կատարելապես համոզված լինելով, որ բարեգութ օգնություն և բուժում ստացա նրա աղոթքներով:

Քահանա Միքայել Սամարյանով

1887 թվականի հուլիսի 3-ին իմ տան բակում, տնային գործերի ժամանակ, կեսօրվա ժամը 12-ի մոտ, առանց ակնհայտ պատճառի ձախ ոտքիս ողջ ոտնաթաթի մեջ ուժեղ ծակոց զգացի և այնպիսի ջերմ ունեցա, որ կարծես թե մեկը իմ ներբանի տակ կրակ էր դրել, այնպես որ հագիվ կարողացա տուն մտնել: Երբ ճտքավոր կոշիկը հանեցին ոտքիցս, այն այտուցված էր մինչև կոճերը, իսկ մատներն ու ամբողջ ներբանը անզգայացել էին: Ցավից չէի հասկանում ինչ դիրքով դնել ոտքս, նրա յուրաքանչյուր շարժում ուղեկցվում էր գոռոցով և տնքոցներով: Ես, իհարկե, դիմեցի բժշկական օգնության և տնական դեղամիջոցների: Բժիշկները հեղուկ դեղախառնուրդներ և արտաքին կիրառության քսուքներ, լոգանքներ ու ջերմաթրջոցներ նշանակեցին, սակայն չորս ամիս շարունակ ինձ ոչինչ չօգնեց:

Նոյեմբերի 19-ին դիմեցի տեղական հիվանդանոցի բժիշկ Վ. Ֆ. Լ.-ին, որը, զննելով ոտքս

և բոլոր նշանակված դեղատոմսերը, ասաց, որ ոչ մի դեղ չի օգնի և հավանական է, որ ժամանակի ընթացքում փտախտ առաջանա, և այդ ժամանակ վիրահատման կարիք կլինի, և ավելացրեց. «Տերը ձեզ խաչ է ուղարկել, համբերություն կրեք այն»: Դրանից հետո ես դարեցրի դեղեր ընդունելը, հանգիստ թողեցի բժիշկներին և ողջ սրտով դիմեցի Աստծուն, Ամենասուրբ Աստվածամորը և Աստծո ծառա, սուրբ նահատակ Պանտելեիմոնին՝ հավատով և աղոթքով իրեն դիմող բոլորի անվարձ բժշկին: Ես գիտեի, որ Յարոսլավլում՝ մեր քաղաքի Վասիլևսկայա եկեղեցում կա նրա սրբապատկերը: Կնոջս ուղարկեցի այնտեղ աղոթքներ մատուցելու մեծ նահատակ Պանտելեիմոնին, կանթեղից յուղ վերցնելու, ինչպես նաև բերելու այդ սրբապատկերից կախված արծաթյա ոտիկը: Այդ ոտիկը ես երեք օր կապեցի հիվանդ ոտքիս, իսկ ցավող տեղին յուղ քսեցի: Դրանից հիվանդության որոշ թեթևացում զգացի: Այնուհետև ես աղոթքներ մատուցեցի Փրկչին, Աստվածամորը և Յարոսլավլյան հրաշագործներին, նաև նրանց կանթեղներից յուղ էի վերցնում և քսում ոտքիս, ու օրըստօրե ավելի ու ավելի թեթևացում էի զգում, այնպես որ երկու ամիս անց, ինչ ես մնացել էի առանց բժշկական դեղորայքի, ի վի-

ճակի էի հենվել հիվանդ ոտքիս, թեև միայն սենյակում և հենակների օգնությամբ, մի բան, որ առաջ չէի կարող անել: 1888 թվականի ապրիլի 8-ին, փոստային բաժանմունքից ծանուցում ստանալով իմ անունով ուղարկած սուրբ Պանտելեիմոնի սրբապատկերի, նրա կանթեղից յուղի, օրհներգի և տարբեր բժշկությունների մասին պատմող թերթիկների մասին, ինքս, չնայած մեծ դժվարությամբ, գնացի փոստային բաժանմունք, ստանալու նրա սրբապատկերը: Ապրիլի 14-ին իմ տանը աղոթքներ մատուցեցի Փրկչին և մեծ նահատակ Պանտելեիմոնին, ուղարկված յուղով սկսեցի շփել ոտքս և զգացի, որ իմ հիվանդությունն անցնում է: Ավագ շաբաթ ես ի վիճակի եղա պաս պահելու, Աստծու տաճար դնալու, նախապատրաստվելու ապաշխարություն և արժանացա Սուրբ Հաղորդություն ստանալու:

Ներկայումս, չնայած ոտնաթաթիս մատների տակ դեռ ցավ եմ զգում, բայց կարող եմ արդեն առանց փայտի քայլել: Վստահում եմ, որ Աստված Իր սուրբերի աղոթքներով ինձ լիովին կբժշկի:

Սիմեոն Նիկողաեիչ Իզովչիկով  
1888 թվական

Համբերությամբ սպասեցի Տիրոջը և Նա նայեց ինձ և լսեց իմ աղոթքը (Սաղմ. 39, 2), ասում է սուրբ Դավիթ մարգարեն: Այդպես էլ ես, իմ աղետալի օրերին, իմ ամբողջ հույսն ու վիշտը հանձնում էի մեր Փրկիչ Տիրոջը և նրա սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնին, որ իրեն հավատով դիմող հիվանդներին փութով ապաքինություն է տալիս: Եվ Քրիստոսի սուրբ վկան, մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհով, շուտով առաքեց իր երկնային օգնությունը:

Իմ անհուսալի հիվանդ որդու՝ պատանի Իոաննի՝ այստեղ նկարագրված բժշկությունը մարդու հոգին գործովանքով լցնող և դրա հետ մեկտեղ սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնին փառաբանող մի մեծ հրաշք է: Սակայն ըստ մեր մեղանչական տկարություն, Աստծու այդպիսի մեծ և ողորմած ծառայի փառաբանությունը չի կարող ոչնչով արտահայտվել՝ ո՛չ խոսքերով, ո՛չ գործով, բայց միայն բազմաչարչար վկայի սրբապատկերի առջև երախտագիտություն արտաբուխ արտասուք թափելով:

Իմ միակ զավակը՝ Իոաննը, որ տասներկու տարեկան էր, նախորդ՝ 1889 թվականի հոկտեմբեր ամսին հիվանդացավ տիֆով և նոյեմբերի 2-ին վերջնականապես անկողին ընկավ: Հիվանդությունը զնալով սաստկանում էր, և ահա

նոյեմբերի 14-ին վրա հասավ ճգնաժամը, որը բարեհաջող ելք ունեցավ: Բայց ի ցավ և ի հուսահատություն ինձ, ինչպես նաև ի զարմանս բժշկի պարզվեց, որ հիվանդ մանկան մոտ, որը առանց այդ էլ բոլորովին թուլացել էր, թոքերի բորբոքում է սկսվել, դրան գումարած էլ՝ տիֆն է կրկնվել: Ինձ ու իմ հարազատներին համակեցին սարսափն ու հուսահատությունը: Բուժող բժիշկ պարոն Կ.-ն, չկամենալով իր վրա պատասխանատվություն վերցնել, և ինչպես ինքն ասաց, նկատի ունենալով հիվանդի անհուսալի վիճակը, հայտարարեց, որ ուրիշ բժիշկ հրավիրեն:

Բժշկագիտության հրավիրված դոկտորը հայտարարեց, թե ինքը վճռականապես ոչինչ չի կարող ասել, մինչդեռ տղայիս վիճակը գնալով ավելի ու ավելի էր վատանում: Ո՛չ սառը թրջոցները բորբոքված գլխին, ո՛չ նրա թույլ կրծքին ու մեջքին դրած բանկաները, ո՛չ դեղորայքը համարյա ոչ մի բանով չէին օգնում: Ահավոր զառանցանքը, ուժերի նվազումը և առհասարակ տառապանքները գնալով ուժեղանում էին, իսկ ժամանակ առ ժամանակ գիտակցության կորուստ էր նկատվում:

Ո՞վ կարող էր պատկերացնել իմ հուսալքությունը՝ իմ միակ մխիթարությունը՝ միակ զավակին տեսնելով մահվան անկողնում արդեն մեռնելիս: Շուրթերը, լեզուն այրվում էին, կոկորդը

բորբոքված էր, չէր կարողանում անգամ մի կաթիլ ջուր կուլ տալ: Օ՛, որքան սարսափելի և ցավալի է հոգուս համար այդ հիշողությունը:

Բժիշկներն ու բժշկական միջոցները այլևս չէին օգնում: Ես արտասուքով և հեծեծանքով աղոթքներ էի վերառաքում երկնային բժշկին՝ բազմաչարչար սուրբ Պանտելեիմոնին:

Այդ ընթացքում իմ հարազատները հիվանդի մոտ վերջին աղոթքի հրավիրեցին Սոգիլևի հոգևոր ուսումնարանի քահանային՝ հայր Իակով Սոբուլևսկուն (իմ տղան սովորում էր հոգևոր ուսումնարանում), որն էլ նրան Հաղորդություն տվեց: Հիվանդը թեթևացավ:

Իսկ ես վշտից սրտաբեկված և տապալված՝ անմիջապես նամակ գրեցի իմ ազգակցին՝ Բելինիչսկայա մենաստանի ավագ սարկավագ Վասիլին, խնդրելով նրանից աղոթել հիվանդի համար և ինձ հայտնել Աթոսի հասցեն:

Մի քանի օր անց ես հայր Վասիլիից նամակ ստացա, որով նա հայտնում էր խնդրածս հասցեն, կից ուղարկել էր նաև բժիշկ Պանտելեիմոնին ուղղված մի աղոթք, ինչպես նաև կտորի վրա նկարված նրա սուրբ պատկերը՝ հիվանդ մանկան վրա դնելու համար:

Հավատով և արտասուքով ես համբուրեցի բուժարար սուրբ պատկերը, այն համբուրել տվե-

ցի նաև հիվանդին. տղաս այն դրեց իր թուշը շնչող կրծքի վրա: Դրանից հետո ես իմ ազգակցին՝ Մոզիլի Պակրովսկայա եկեղեցու քահանա՝ հայր Կոնստանտին Ժուդրոյին խնդրեցի աղոթքներ մատուցել սուրբ բժիշկ Պանտելիմոնին: Աղոթքների ընթացքում հիվանդն ինքն էր խաչակնքվում, իսկ հետո օծվեց սուրբ Պանտելիմոնի նշխարների կանթեղից վերցրած յուղով, որ գտնվում էր մեր մոտի մայր տաճարում: Նույն այդ ժամանակ էլ ես նամակ ուղարկեցի Սուրբ Աթոս՝ հիվանդի համար աղոթելու խնդրանքով:

Մյուս օրը կանուխ հիվանդը ինքը խնդրեց նորից հրավիրել հայր Իսկովին և իրեն Սուրբ Հաղորդուլթյուն տալ, որն անմիջապես իրականացվեց ի ուրախուլթյուն հիվանդի: Իսկ երբ հիվանդին տեսուլթյան եկավ մեր ազգական հայր Կոնստանտինը, հիվանդը խնդրեց, որ նա նորից օրհներգով հանդերձ աղոթքներ մատուցի սուրբ Պանտելիմոնին, քանի որ, ինչպես հիվանդն էր ասում և հիմա էլ է ասում, այն ժամանակ՝ առաջին անգամ աղոթքներ մատուցելիս իր հոգին խիստ թեթևանում էր:

Հիվանդուլթյունը կարծես թե դեռ չէր ցանկանում թողնել նրան, և ահա հոկտեմբերի 2-ին, կեսօրից հետո հիվանդի մոտ սկսվեց երկրորդ լրիակատար ճգնաժամը: Թվում էր, թե ուժերը լրիովին լքել էին նրան, դեմքը դարձավ մեռելա-

յին գունատ, աչքերը կիսաբաց էին, ջղածգուններ և զառանցանք սկսվեցին:

Արցունքներով ողողվելով՝ ես ընկա բազմաչարչար սուրբի սրբապատկերի առաջ և խնդրեցի բժշկին բժշկուլթյուն տալ տառապողին, իմ համար խնայել իմ որդուն: Սիրելի որդուս անկողնու մոտ իմ կնոջ լացն ու կոծը էլ ավելի էին պատառոտում սիրտս: Բայց ինչ-որ մի ծածուկ ներքին ձայն մխիթարում էր ինձ և հույս էր տալիս, որ նա չի մեռնի:

Իսկ այդ ընթացքում իմ հրավիրած երրորդ բժիշկը՝ զինվորական պարոն Գ.-ն այլևս չէր այցելում, չնայած որ նրան խնդրել էի գալ տեսնել հիվանդին: Եվ, ինչպես պարզվեց հետագայում, նա մեծ զարմանք էր արտահայտել, լսելով, որ իմ տղան դեռ կենդանի է: Հետևաբար, նա այլևս անհնար էր համարում որևէ օգնուլթյուն ցուցաբերել՝ բժշկուլթյունը հիվանդի համար անօգուտ համարելով:

Բայց զարմանալի է Աստված Իր սուրբերի մեջ: Երկնային ողորմած բժիշկը լսեց: Սարսափելի ճգնաժամը բարեհաջող ելք ունեցավ:

Լուսաբացին հիվանդի վիճակը լավացավ: Հիվանդը նորից ինքն էր աղոթք կարդում սուրբ Պանտելիմոնին և ինքն էր իրեն օծում յուղով: Նա հետո էլ էր ամեն օր կրկնում դա:



Դեկտեմբերի 3-ից սկսած հիվանդը սկսեց ապաքինվել, իսկ ամսի 28-ից սկսեց, ի մեծ և անպատմելի ուրախություն ինձ, արդեն կամաց-կամաց մի քանի քայլ անել սենյակում: Ընդ որում հիվանդն ասում էր, որ իր քնած ժամանակ, երբ ինքը շատ ծանր էր ինչ-որ պատանիների էր տեսնում իր մոտ կանգնած և իրար հետ ինչ-որ բան գրուցելիս, ընդ որում պատանիներից մեկը մյուսին Պանտելեիմոն էր կոչում: Ուրիշ անուններ չէր հիշում:

Ներկայումս իմ որդին, մեր Փրկիչ Տիրոջ, Նրա Սուրբ Մոր և սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի անճառելի ողորմածությունը համարյա արդեն առողջացել է, չնայած որ մարմնով դեռ ահավոր հյուսված է:

Իսկ ես, որպես հայր, որ այդպիսի մեծ ուրախություն և օգնություն եմ ստացել սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնից, որ ծանր և անողորհ հիվանդությունից բուժեց բժիշկների կողմից լքված և մահվան դատապարտված իմ զավակին, բարեբանում եմ երկնային մեծ բարերարին, նրա սուրբ պատկերի առջև խոնարհվում եմ և արտասուքով աղոթում և երախտագիտությունս եմ հայտնում:

Փա՛ռք քեզ բազմաչարչար սուրբ, մեծ նահատակ և բժիշկ Պանտելեիմոն:

Փոստի և հեռագրատան ծառայող  
Իվան Ռուստկովսկի:

### ՔԱՂՎԱԾՔ ՈՒՐԺՈՒՄԻ ԳԱՎԱՌԻ ՅԵՊՈՉԿԻՆ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՅՈՒ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Յեպոչկին գյուղի բնակիչ Դմիտրի Բերյոզկինը մի մանկահասակ տղա ուներ, անունը՝ Դմիտրի, որի մի աչքը ցավում էր: Աչքի հիվանդությունը այսպես պատահեց. մի առավոտ գյուղացի Բերյոզկինի երկու որդիները, արթնանալով, վառարանի վրա խաղով էին տարվել: Հայրը սաստում էր նրանց, սակայն երբ նրանք իրեն չանսացին, նա իր ձեռքի փայտը թափահարեց՝ պատժի սպառնալիքով դադարեցնելու համար չարածճիհների խաղը: Թափահարելիս կրտսեր որդին (ութ տարեկան) շրջվեց հոր կողմը, և փայտը դիպավ աչքին: Հարվածը ուժգին էր, երեխան ընկավ անզգայացած՝ արյունը վա լինելով: Երեք օր աչքը չէր բացվում, և երեխան ուժեղ ցավ էր զգում: Հայրը հուսահատություն մեջ էր: Բայց այդ ժամանակ նա հիշեց սուրբ նահատակ Պանտելեիմոնի մասին, որի սրբապատկերը կար մեր տաճարում (այդ ժամանակ նախատեսվում էր միջնորդել Աստծո այդ ծառայի նշխարների մի մասը Աթոսի վանքից մեր եկեղեցուն ուղարկելու համար) և ջերմեռանդ աղոթքով դիմեց Աստծուն և նրա սուրբ ծառա Պանտելեիմոնին: Երեք օր անց, որոնց ընթացքում հայրը գիշերները ջերմ

աղոթքով դիմում էր բազմաչարչար սուրբին, հիվանդի աչքը սկսեց բացվել ու վնասված աչքի տեսողությունը արդեն վերականգնվել էր: Հետագայում հայրը հայտնում էր հետևյալը. «Ես՝ մեղավորս, մոռացա Աստծո ողորմածությունը, դադարեցի աղոթել սուրբ նահատակին, և Միտյայի աչքի ցավը կրկին սաստկացավ, ուռեց ու երեխան չէր տեսնում: Այդ ժամանակ ես հասկացա, որ Տերը ինձ պատժում է, որ ես մոռացել եմ նրա ողորմածությունը, և խոստացա սուրբ նահատակ Պանտելեիմոնի սուրբ նշխարների տեղ հասնելուն պես մաղթանք մատուցել նրան և իմ ամեն աղոթքի ժամանակ աղոթել նրան: Իմ խոստումի հաջորդ օրը Միտյայի աչքի ուռածությունը սկսեց նվազել, և նա շուտով լրիվ առողջացավ: Ահա հիմա ես կատարում եմ իմ խոստումը՝ մաղթանք մատուցելով եկեղեցում ու տանը», - իր խոսքն ավարտեց Բերյոզկինը: Ուշագրավ է, որ աչքի վնասվածքից կամ ցավից հետք անգամ չի մնացել, մինչդեռ հարվածն այնքան ուժեղ էր, որ այդ պահին փայտը աչքին դիպչելիս կոտորվեց:

Ցեպոչկին գյուղի սաղմոսասաց Պավել Ալեքսանդրովիչ Սետնիկովի որդին, հինգ տարեկան Նիկոլայը, մրսելուց ծանր հիվանդացավ: Հիվանդը պառկած էր անկողնում, ոչ մի ան-

դամ չէր կարողանում շարժել: Մարմնի վրա գոյացան ջրոտ բշտիկներ, ուռած ոտքը կծկվեց: Բժիշկները նրա հիվանդությունը համարում էին բավականին վտանգավոր: Նրանցից մեկը հորն ասաց, որ երեխայի հիվանդությունը շատ վտանգավոր է, և նրա վերջը վատ է՝ նա կամ կմեռնի, կամ էլ երեք տարի կմնա անկողնուն գամված: Հայրը ահաբեկված աղոթում էր Աստծուն և Նրա ծառա սուրբ նահատակ Պանտելեիմոնին և ամբողջ հույսը դրեց նրա վրա՝ արտասովալի խնդրելով բժշկել իր միակ որդուն: Այս տարվա օգոստոսի 29-ին նա իր տանը ընդունեց աթոսյան սրբությունը, և քահանան հիվանդի համար աղոթքներ կարդալուց հետո երեք անգամ հիվանդ անդամները օժեց սուրբ նշխարների անչեջ կանթեղի յուղով: Հաջորդ կամ երրորդ օրը աջ թևատակի վտանգավոր ուռուցքը (բշտիկը), որը բժիշկների կարծիքով ամենավտանգավորն էր և դժվար բժշկվող, անհայտացավ: Հիվանդի հայրը նույն պահին փառաբանեց Աստծուն և Նրա ծառա սուրբ նահատակ Պանտելեիմոնին՝ դրա մեջ տեսնելով Նրա հրաշագործությունը: Շուտով փակվեց նաև ոտքի վերջին վերքը:

Այս և մյուս շատ այլ դեպքերում, որոնք այստեղ չեն գրառվել իսկապես ստուգված չլինելու և այն անձանց հեռու գտնվելու պատ-

ճառով, ովքեր բարերար օգնություն են ստացել վերջին ժամանակներս Սուրբ Աթոսից բերված սուրբի մասունքներից, տեսանելի կերպով դրսևորվեց խնդրողների ջերմեռանդ աղոթքներով ցույց տրված բարեպարզ և օգնությունը: Մասունքներ են բերվել հետևյալ սրբերի՝ սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի, աթոսյան նոր սուրբ ծառաներ՝ բազմաչարչար սուրբեր Եվթիմիոսի, Իգնատիոսի և Ակակիոսի, սուրբ նահատակներ Եվստրատիոսի, Ավիսենտիոսի, Եվգենիոսի, Մարգարիոսի և Օրեստոսի, սուրբ նահատակ Երմոգենի և երանելի սուրբ մայր Պելագեայի նշխարքներից:

Քահանա Արսենիոս Լեանիկով:

1890 թվական:

Իմ արդեն չափահաս դուստր Մարիան ա՜նակնկալ վախից տկարացավ մի հիվանդությունից, որը բժիշկները ախտորոշեցին որպես նյարդային: Դրա հետևանքով երկու տարուց ավելի նա տառապում էր անքնությունից: Այդ հիվանդությունը խիստ անտանելի էր: Հիվանդը ո՛չ գիշերը, ո՛չ ցերեկը չէր կարողանում ոչ մի բոպե քնելով հանգստանալ, նաև շատ սակավ սնունդ էր ընդունում, այն էլ ամենաթեթև տեսակի և շատ քիչ քանակությամբ: Եվ ամե՜

նակարևորը, մենք (նրա ծնողները) հոգեպես ցավում էինք, քանզի որոշ փորձառու մարդիկ կանխատեսում էին, որ տևական անքնության հետևանքով մեր հիվանդը կարող է խելագարվել: Մեր վիշտը շատ մեծ էր, այդ դժբախտության մասին մտածելն անգամ սարսափելի էր, բայց ես դեռ նրա հիվանդության սկզբում իմ մեղավոր աղոթքով դիմեցի Աստծուն, հաստատ հավատալով, որ Նա՝ ամենակարողը, թեև պատժել է մեզ մեր մեղքերի համար, սակայն կարող է նաև ողորմել: Ընդ որում ես դիմում էի տեղի փորձառու մարդկանց օժանդակությունը և հատկապես բժշկական օգնությանը, հիվանդին տանում էի նույնիսկ սուրբ քաղաք Կիև, որտեղ աղոթելով Աստվածամորը և աստվածահաճո սուրբ ծառաներին, չկարողացա ինձ ետ պահել և օգնություն չխնդրել Կիևի ամենահայտնի բժիշկներից, բայց իմ հիվանդը ոչ մեկից ոչ մի օգնություն չէր զգում: Կիևից վերադառնալուն պես նա կրկին ընկավ անկողին և տևական ու անհանգիստ ուղևորությունից հետո ավելի վատացավ, այնպես որ երբեմն զառանցում էր: Շուտով, դրանից հետո, երբ հիվանդը պառկած էր անկողնում և ուժեղ տնքում էր, ես որոշեցի գրել Սուրբ Աթոս լեռ և օգնություն խնդրել Երկնային Թագուհուց և սուրբ նահա՜

տակ ու բժիշկ Պանտելեիմոնից, գնացի մյուս՝ միջանկյալ սենյակն ու սկսեցի նամակ գրել այդ նպատակով, երբ հանկարծ թեթև խռամփոց լսեցի: Կամաց մոտեցա հիվանդին, և ի մեծ ուրախություն ինձ, նրան քնած տեսա: Նրա քունը տևեց երկու ժամից ավելի: Երբ արթնացավ, մենք բոլորս ուրախացանք, որ ավելի քան երկու տարվա ընթացքում Տերը թեկուզ երկու ժամով հանգիստ քուն պարգևեց նրան: Բայց դա քնելու միակ դեպքն էր: Հիվանդությունն ու անքնությունը առաջվա նման շարունակվում էին: 1888 թվականի հունվարի 26-ին, երբ ես նամակ ուղարկեցի ձեր վանք, հետո էլ իմ աղքատիկ նվիրատվությունը, հավատով ձեր աղոթքները խնդրելով իմ հիվանդ աղջկա առողջության համար, դրանից հետո շատ չանցած՝ 1888 թվականի մարտի 29-ին, ձեր նամակի հետ ձեզնից ստացա նաև սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի պատկերը, սուրբ ջուր և ձեթ, ինչպես նաև Աստծո այդ ծառային նվիրված օրհներգերի մի գիրք: Դրանից հետո մենք ջերմեռանդ աղոթում էինք Աստծո բազմաչարչար ծառա Պանտելեիմոնին մեր հիվանդին ողորմելու համար, և Տերը Երկնային Թագուհու և Իր ծառայի միջոցով լսեց ձեր և մեր աղոթքը, և ներկայումս, գոհություն Աստծուն, Երկնային Թագուհուն

և մեծ նահատակ Պանտելեիմոնին, իմ դուստր Մարիան ստացավ երկնային բժշկություն, իրեն շատ ավելի լավ է զգում և քնում է: Փոքր ընծայաբերություն անելով՝ խոնարհաբար խնդրում եմ ձեզ Երկնային Թագուհու սրբապատկերի և մեծ նահատակ Պանտելեիմոնի նշխարների առաջ երախտագիտություն աղոթքներ կատարել իմ հիվանդ աղջկան բժշկելու համար և այս երկնային բժշկությունը դասել Երկնային Թագուհու և սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի կատարած ընդհանուր հրաշքներին թվին:

Այն, որ վերոգրյալը հավաստի ճշմարտություն է, հաստատում եմ իմ ստորագրությամբ՝

Տիտղոսավոր խորհրդակա  
Սիմեոն Օսիպիչ Սկվարսկի:

Ի փառս Եռամիասնական Աստծո և Նրա սուրբ ծառայի՝ նահատակ Պանտելեիմոնի, կպատմեմ այն հրաշքի մասին, որ իմ՝ մեղավորիս ու անարժանիս հետ է կատարվել:

1888 թվականի օգոստոսի 27-ին, Մոսկվայի գավառի Կուսկով գյուղում, պարոն Ս.-ի ամառանոցում, ես, լինելով հյուսն, հին կահույք էի նորոգում: Այդ գործի համար ստիպված էի հին փայտ ռանդել, հանկարծ տաշեղը թռնելով՝ դիպավ ձախ աչքիս: Աչքիս մեջ ծակոցներ ունեցա, ցավ

զգացի, այնպես որ նույն պահին ստիպված էի թողնել աշխատանքն ու գնալ դեղատուն, քանի որ բոլոր բժիշկները ամառանոցից արդեն մեկնել էին: Այնտեղ զննեցին աչքս և ասացին, որ նրա մեջ ոչ մի շյուղ չկա, որ աչքիս հիվանդությունը չեն հասկանում, ու ինձ առաջարկեցին թրջոց դնել, որից, սակայն, ես ոչ մի օգուտ չստացա: Աչքս թարախակալեց, այնպես որ թարախը կաթում էր շորի վրա և ի վերջո լրիվ փակվեց: Նույն օրը երեկոյան ես մեկնեցի Մոսկվա և օգնություն զիմեցի աչքի բժիշկ Ե.-ին: Նա քննեց ինձ ու ասաց, որ ես զրկվել եմ աչքիցս, որ այն կպայթի, և մյուս աչքս վարակից պահպանելու համար բժիշկը հիվանդ աչքս դադեց դժոխաբարով (լյապիս): Մի ամբողջ ամիս գնում էի բժշկի, բայց օգուտ չկար: Աչքի խնձորակը լրիվ պատվել էր մսով, կոպերը ամբողջովին փակվել էին, այդ ամբողջ ընթացքում ես անտանելի ցավ էի զգում: Եթե ինչ-որ տեղ էլ գնայի, ձեռքով մշտապես բռնում էի հիվանդ աչքս, քանի որ ամեն քայլս ցավով էր անդրադառնում աչքիս վրա: Մեկ ամսից ես դիմեցի մեկ այլ բժշկի՝ Գ.-ին, սակայն նա էլ ասաց, որ աչքս պետք է պայթի: Վերադառնալով տուն՝ ես հուսահատությունից երկար լացեցի, որ առողջանալու հույս չկա, և որոշեցի այլևս ոչ ոքի չզրիմել, այլ միայն խնդրել Տիրոջը, որ Նա Ինքը

օգնի ինձ: Եվ Ողորմածը շուտով ինձ առաքեց Իր օգնությունը:

Նոյեմբեր ամսի առաջին օրերին գիշերը երազում տեսա մի գեղեցիկ պատանու, սպիտակ հանդերձով, ձեռքին՝ մի արկղիկ: Նա մոտեցավ ինձ և ասաց. «Ես քեզ կբուժեմ»: Առավոտյան իմ երազը պատմեցի տնեցիներին, բայց մեզնից ոչ ոք, իհարկե, դրան մեծ նշանակություն չտվեց: Միայն ենթադրեցին, որ հայտնվածը մեծ նահատակ Պանտելեիմոնն է եղել, իսկ ես՝ մեղավորս, նույնիսկ չցանկացա գնալ նրա մատուռը աղոթելու: Հաջորդ գիշերը ես կրկին երազ տեսա՝ մի կառք է մոտենում մեր տանը իբրև թե բեռնված մեծ նահատակ Պանտելեիմոնի սուրբ նշխարքներով: Ես ցանկանում էի դուրս գալ դիմավորելու, բայց մի բան ինձ ետ պահեց, այնպես, կարծես թե մնացի բնակարանում: Արթնանալուն պես սկսեցի մտածել, թե ի՞նչ են նշանակում ըստ երևույթին իրար հետ կապ ունեցող այս երազները: Եվ մտքովս անցավ իմ տուն հրավիրել սուրբ նշխարները: Բայց մաղթանքի համար վճարելու գումար որտեղի՞ց էի գտնելու: Իմ հիվանդություն ընթացքում բուժվելու համար ես ծախսեցի ունեցածս փողը: Որոշեցի մեծ նահատակին իմ տանը ընդունելու փոխարեն ինչ-որ բան

զրավի տակ դնել: Գնացի մատուռ ու զբանցվեցի ղեկտեմբերի 4-ի համար: Դրա հաջորդ օրը իմ ծանոթներից նամակ եմ ստանում, որով ինձ խնդրում են զնալ և իրենց կահույքը նորոգել: Հինգ օրվա ընթացքում ես նրանց մոտ վաստակեցի տասնյոթ ռուբլի, որն ի ուրախություն ինձ՝ հնարավորություն էր տալիս ազատորեն ընդունելու մեծ նահատակի նշխարները: Եվ ես հավատում եմ, որ դա իմ հանդեպ նրա արած առաջին ողորմությունն էր:

Ինձ հետ նույն բնակարանում, բայց մյուս սենյակում, ապրում էր այսպես կոչվող մի դիվահարված կին: Այն պահից, երբ ես հայտարարեցի, որ մեզ մոտ նշխարներ են բերելու, ընդհուպ մինչև զբանց բերելու օրը նա անընդհատ տխուր-տրտում էր և ցանկանում էր բնակարանից հեռանալ: Իսկ երբ ղեկտեմբերի 4-ին, միջօրեից հետո, ժամը չորսին սուրբ նշխարները տուն բերեցին, նա վատացավ՝ ընկավ հատակին, սկսեց ճչալ ու թավալվել: Ես մոռացա իմ մասին և փորձում էի երկու ընկերներիս հետ միասին հիվանդին տանել այն սենյակը, ուր դրել էին սուրբ նշխարները: Ավագ արեղան սուրբ նշխարների ծածկոցը դրեց հիվանդի գլխին, իսկ մենք դժվարությամբ նրա բերանը լցրեցինք մեծ նահատակի կանթեղից բերված

յուղից, որից հետո նա հանգստացավ ու լուռ պառկած էր անկողնում մինչև մաղթանքի ավարտը: Ապա նա ինքնուրույն հավեց նշխարներին, ես նույնպես հավեցի զբանց:

Ուղեկցելով սուրբ նշխարները՝ մենք հարազատներով ու ծանոթներով նստեցինք թեյելու: Հանկարծ ես զգացի, որ աչքիս մեջ ինչ-որ բան պատռվեց և աչքս բացվեց: Ես խաչակնքվեցի, նույնը արեցին նաև իմ հետ նստածները: Դեկտեմբերի 7-ին աչքիս վրայի միսը ինքն իրեն եկավ, և ես սկսեցի տեսնել: Նրա վրա միայն մի փոքր սպի էր մնացել: Երբ զբանից հետո զնացի ինձ բուժող բժշկի մոտ, նա զարմացավ ու հարցրեց, թե ո՞վ ինձ օգնեց: Ես պատասխանեցի՝ դուք բժիշկներդ, լավ եք, բայց ձեզնից ավելի լավ բժիշկ կա, ու պատմեցի նրան, ինչ որ ինձ հետ պատահել էր:

Փա՛ռք ու գոհություն՝ Ներորդություն մեջ փառաբանվող Աստծուն, որ իր մեծ նահատակ Պանտելեիմոնի բարեխոսությամբ և շնորհով ինձ բուժեց լավագույն բժիշկների կողմից անբուժելի համարված հիվանդությունից:

Կոստրոմայի նահանգի պատվավոր քաղաքացի  
Իվան Իլյիչ Սմիրնով:

Մեղք եմ համարում լուել հիսուն տարեկան հասակում մահացած իմ ամուսնու՝ Ֆրանց Իոսիֆովիչ Կորֆի հանդեպ Աստծո ցուցաբերված ողորմածութեան մասին: Նա իր ողջ կյանքում եղել է կաթոլիկ, բայց միշտ խորապես պաշտել է Աստծու ծառայող Պանտելեիմոնին: Աստծու ծառայող, ըստ երևույթին, բազում անգամներ է եղել իմ ամուսնու բժիշկ-ամոքիչն ու օգնականը նրա բոլոր վշտերում, և ահա թե ինչն է հատկապես ուշագրավ: Մահից առաջ նրա ընկերները, որոնց շատ էր սիրում, նրան մի քանի անգամ առաջարկում էին ուղղափառություն ընդունել, բայց նա համառորեն հրաժարվում էր: Մեռնելուց երկու օր առաջ նա շատ էր տառապում, իսկ երբ երեկոյան կատարվեց «Երկնային Թագուհի» աղոթքը, նա քնեց խորը քնով, որը տևեց մեկ քառորդ ժամից ոչ ավելի: Արթնանալով՝ նա սկսեց պահանջել սուրբ Պանտելեիմոնի նշխարները կամ էլ մի քիչ ձեթ նրա նշխարների կանթեղից, որով պահանջեց օծել հիվանդ տեղերը, ընդ որում երևում էր, որ նա շատ հուզված է: Մեր այն հարցին, թե արդյոք երազում ինչ-որ բան է տեսել, բավական կտրուկ պատասխանում էր. «Ինձ մի՛ հարցրեք», և այնուհետև մի ամբողջ օր համառորեն խնդրում էր իրեն տալ Աստծո լույսը՝ ձեռքին միշտ պահելով Սուրբ

Աթոս լեռից ուղարկված սուրբ Պանտելեիմոնի սրբապատկերը՝ նկարված կերպասի վրա: Մեկ օր անց միայն մենք հասկացանք ու բավարարեցինք նրա խնդրանքը՝ տալ իրեն Աստծու լույսը, և առաջարկեցինք ուղղափառություն ընդունել և օծվել սուրբ յուզով, որին նա անմիջապես էլ համաձայնեց, և միայն մի բան էր խնդրում՝ որ այդ ամենը «չուտափույթ» կատարվի: Անմիջապես քահանա հրավիրեցինք, որն էլ ամեն ինչ կատարեց ըստ Ուղղափառ Եկեղեցու կանոնների, անմիջապես Սուրբ Հաղորդություն տվեց, կատարեց վերջին օծման խորհուրդն ու հրաժարական աղոթքը՝ որ կատարվում է հոգին ավանդող հիվանդի վրա: Որից հետո, ինը ժամ անց, նա խաղաղ ավանդեց հոգին: Հանգուցյալի մտերիմներից ու ընկերներից ոչ ոք չկարողացավ համոզել նրան ուղղափառություն ընդունել, իսկ սուրբ նահատակ Պանտելեիմոնը, որին հանգուցյալը մշտապես դիմում էր, դա արեց: Եվ ես ու իմ բոլոր մտերիմները հավատում ենք դրան, և ես մեղք եմ համարում լուել հանգուցյալի հանդեպ Աստծո ցուցաբերած այս ողորմածություն մասին:

Մարիա Ալեքսեևնա Կորֆ:  
Քաղաք Տուլա,  
1890 թվական, 12 նոյեմբերի:

Ինչը որ անհնար է ստանալ մարդուց, այն հնարավոր է ստանալ Աստծուց: Այնտեղ, ուր բոլոր մարդկային գիտելիքներն ու ջանքերը ոչ չինչ չեն տալիս հիվանդությունները բժշկելու գործում, այնտեղ մնում է միայն հուսալ Ամենակարողին: Ոչ վաղ անցյալում այդպես պատահեց նաև իմ ընտանիքում: Ես ունեմ մի դուստր, անունը՝ Աննա: Նա տասնմեկ ամսական է: Օգոստոսի կեսին նա սաստիկ հիվանդացավ գլխացավով ու ստամոքսի թուլացումով, այս վերջինում բժիշկը ոչնչով չկարողացավ օգնել: Այնպես որ ես չէի մտածում, թե նա կարող էր ոտքի կանգնել: Նրա ոտքերն ասես թե պոկվել էին, ձեռքերին վատ էր տիրապետում, դեմքը անկենդան էր, իսկ և իսկ մեռածի պես: Սակայն ամեն ինչ հակառակ ընթացք ստացավ: Մեր անարժաններին՝ անարժաթ բժիշկ Պանտելեիմոնին առաքած աղոթքներով նա առողջացավ: Ես ինչ-որ տեղ և ինչ-որ ժամանակ կարդացել էի, որ Աթոսից ուղարկված սուրբ նահատակի պատկերները, ըստ հավատի մեծություն, օգուտ էին բերում հիվանդներին: Այնտեղից ծրարով ստանալով նահատակի պատկերը՝ ես արտասովալի աչքերով և ի սրտե հավատալով սուրբ Պանտելեիմոնի հարեհաս օգնությունը, պատկերը տվեցի, որ դուստրս հավի նրան և ասա-

ցի. «Եթե քեզ Պանտելեիմոնն էլ չբժշկի, թող ուրեմն քո վրա Տիրոջ կամքը լինի: Եթե առողջանաս, ապա Պանտելեիմոնի սրբապատկերի համար, որ Աթոսից են ուղարկելու, արժաթյա կափարիչ կպատվիրեմ»: Օգոստոսի 29-ի երեկոյան, ժամասացությունից հետո, ես տեղի քահանային խնդրեցի սուրբ Պանտելեիմոնին նվիրված օրհներգություն մաղթանք կատարել աղջկաս առողջանալու համար: Սկսած հաջորդ օրվանից դուստրս սկսեց առողջանալ, լուծը դադարեց և գլխացավը հանդարտվեց, որոնցից նա մինչ այդ՝ գիշեր ու ցերեկ ճշում էր ամբողջ ուժով: Ներկայումս իմ դուստր Աննան առողջ է: Հավատում եմ, որ իր առողջացման համար նա պարտական է անարժաթ բժիշկ սուրբ Պանտելեիմոնին: Փա՛ռք Աստծուն և սուրբ Պանտելեիմոնին հավիտյանս հավիտենից:

Բելգորոգի գավառի Լոգով գյուղի սարկավագ  
Իոանն Յարովիցկի,  
1890 թ. 6 սեպտեմբերի

1890 թ. ապրիլ ամսին իմ կինը մրսելու հետևանքով հիվանդացավ բոլոր անդամների հոդացավով, ուժեղ սրտխփոցով և շնչարգելություն մը: Բժշկական օգնությունը, որին ես դիմում էի, նրան գոնե փոքր-ինչ թեթևություն



չտվեց: Այդ ժամանակ մենք օգնութեան աղոթքով դիմեցինք Աստվածամորը, իսկ Հիվանդի կուրծքն ու գլուխը օծեցինք սուրբ նահատակ ու բժիշկ Պանտելեիմոնի կանթեղից վերցված ձեթով, որ ժամանակին մեզ ուղարկել էին Աթոսից, դրա հետ մեկտեղ կրծքին դրեցինք Աստվածամոր «Կենարար» կոչվող սրբապատկերը՝ խոստանալով պատվիրել, որ ձեր մենաստանում՝ Աթոսում մաղթանք կատարվի: Եվ ի՞նչ: Դրան հետևեց հանկարծահաս փոփոխութիւն դեպի լավը, այնպես որ մյուս օրը Հիվանդը կարողանում էր ազատ վեր կենալ, ոտքի ելնել, կանգնել և քայլել, իսկ շուտով նաև Հիվանդութիւնը լիովին անցավ և հետո արդեն այլևս չէր կրկնվում, մինչդեռ նախկինում հոգացավը ամեն անգամ, եղանակը փոխվելուն պես, նորից ի հայտ էր գալիս:

Վյատսկի գավառի Կարմիժ գյուղի քահանա  
Վասիլի Վերեչչագին,  
1890 թ. 29 հունիսի:

Գոհութիւն Աստծուն, որ սուրբ նահատակ Պանտելեիմոնի բարեխոսութեամբ ինձ բժշկեց վեց տարի տևած Հիվանդութիւնից: Իմ Հիվանդութիւնը բարդ էր՝ ես տառապում էի ստամոքսի լորձաթաղանթի բորբոքումով, սրտի

արատով, սուր շնչարգելութեամբ, նյարդային նոպաներով, ուժեղ սրտխառնոցով, թուլթուլ և կանացի վտանգավոր Հիվանդութեամբ: Վերջին ժամանակներս պառկած էի անկողնում՝ երկու շաբաթ վեր չկենալով: Այնժամ ես հիշեցի և մտովի սկսեցի օգնութեան կանչել Աստվածամորը և սուրբ բժիշկ Պանտելեիմոնին, որպեսզի նրանք ինձ փրկեն Հիվանդութիւնից: Եվ հազիվ էի հասցրել փակել աչքերս, երբ ինձ տեսիլք երևաց, որ դեպի ինձ մի պատանի է գալիս՝ ձեռքին սրվակ, իսկ նրա ետևից ինքը՝ Աստվածամայրը: Մոտենալով ինձ՝ նրանք ասես թե ինչ-որ բան տվեցին ինձ, որ դնեմ բերանս: Երբ աչքերս բացեցի, այդ ժամանակ էլ էի տեսնում, թե ինչպես նրանք հեռացան ինձանից: Այդ ժամանակ ես մութ տեղում էի, իսկ նրանք՝ լուսավոր և որպես թե փայլի մեջ: Անմիջապես թեթևութիւն զգացի, իսկ հետո կատարելապես առողջացա: Ես խոստացա երախտագիտութեան աղոթքներ մատուցել, բայց խոստումս չկատարեցի, անընդհատ հետաձգելով այն, մինչև որ կրկին Հիվանդացա: Նորից սկսեցի դիմել բժիշկներին, բայց ոչ մի օգուտ չստացա: Այնժամ որոշեցի անհապաղ կատարել տվածս խոստումը՝ մաղթանք մատուցել Աստծո սուրբ ծառայող Պանտելեիմոնին ու ամուսնուս հետ զնացի

Մանկտ-Պետերբուրգի Աֆոնսկոյե վանատուն:  
Մաղթանքի ժամանակ ես չէի կարողանում  
տեսնել սուրբ ծառայի դեմքը, սակայն զգացի,  
որ ուժերս ավելացան: Ես շատ էի ափսոսում, որ  
չէի կարող տեսնել նրա սուրբ դեմքը և դրա հա-  
մար էլ սկսեցի խնդրել նրան, որ կրկին տեսնեմ  
երազում, սակայն դրան ես չարժանացա: Իսկ  
ամուսինս տեսավ նրան երազում՝ նա կարծես  
պատմուճան հագած լիներ: Երբ հաջորդ ան-  
գամ Աֆոնսկոյե վանատուն գնացի մաղթանք  
մատուցելու, դեռևս մատուռ մտնելիս ես տեսա  
մեծ նահատակի պատկերը, նա որպես թե ինձ  
իր մոտ էր կանչում: Երբ մաղթանք էին կատա-  
րում, վրայիցս առատ քրտինք էր հոսում, և ես  
զգում էի, որ լավանում եմ: Մաղթանքից հետո  
ինձ յուղ և սուրբ ջուր տվեցին, և ես հարցրեցի  
ամուսնուս երազի մասին, թե ինչ է նշանակում  
այն, որ նա բժշկին տեսել է պատմուճանով,  
մինչդեռ նա պատմուճան չունի: Ինձ պատաս-  
խանեցին, որ գուցե դա նշան է, թե հարկավոր  
է որևէ ընծայաբերություն անել: Տուն վերա-  
դառնալուն պես ես սկսեցի խմել սուրբ ջուրը,  
յուղով էլ օծում էի հիվանդ տեղերս, և դա կա-  
տարում էի մի քանի անգամ: Ամբողջ մարմնիս  
վրա գոյացան թարախակույտեր, դա ինձ մեծ  
թեթևացում բերեց: Նկատելով, որ մեծ նահա-

տակի սրբապատկերը տոնական շղարչ չունի,  
ես համարձակվեցի ինքս այն պատրաստել, և  
երբ աշխատանքն ավարտեցի, աջ ձեռքս, որ  
մոտ տասներկու տարի ցավում էր, առողջա-  
ցավ: Այն ժամանակից ի վեր յուրաքանչյուր  
հիվանդության դեպքում աղոթքով դիմում եմ  
բժիշկ Պանտելեիմոնին և ամեն անգամ մեծ թե-  
թևացում եմ զգում: Ներկայումս խնդրում եմ  
ձեզ, հարգարժան հայր և միաբաններ, իմ բուժ-  
վելու համար սուրբ Պանտելեիմոնին և Աստվա-  
ծածնի «Իվերսկայա» սրբապատկերին երախտա-  
գիտություն մաղթանք մատուցել նրանց տոների  
օրերին, և խնդրում եմ ինձ ուղարկել նրանց  
սրբապատկերները ի հիշատակ իմ բուժման:

Քաղաքացի Ալեքսանդրա Պավլովնա Իվանովա:  
Մանկտ-Պետերբուրգ,  
1890 թվական, 30 հուլիսի:

1890 թվականի հուլիսի 15-ին, առավոտ կա-  
նուխ (Օմսկում) փոստով Մոսկվայից ստացա  
սուրբ նահատակ Պանտելեիմոնի սրբապատկե-  
րը, օրհնված ձեթ և բամբակ: Այդ ամենի հա-  
մար իմ և ընտանիքիս կողմից հայտնում եմ  
ամենաանկեղծ երախտագիտությունը: Ջերմե-  
ռանդ Բարեխոսուհու և սուրբ Պանտելեիմոնի  
աղոթքներով, ես՝ բազմամեղս ու անարժանս,

իմ Աննա դստեր և ծանոթ տղաների՝ Վլադիմիր և Պորֆիրի Վասիլևների հետ այդ նույն օրը երեկոյան փրկվեցի անխուսափելի մահից:

Նրանց հետ ես ձիերով ձկնորսության մեկնեցի Ներքին Խուսուր (քաղաքից ավելի քան ութսունինը վերստ հեռու), իսկ այնտեղից Իրտիչ գետի հոսանքով բոլոր չորսս ուշ երեկոյան նավով վերադառնում էինք քաղաք: Փչում էր ոչ ուժեղ, հանդիպակաց քամի: Երբ մենք քաղաքի ծայրամասից դեռ հեռու էինք, քամին սկսեց սաստկանալ, որի պատճառով ես, որպես նավավար, սկսեցի նավը վարել դեպի աջ ափը՝ այդպիսով այն մի փոքր թեքելով: Քամին ավելի էր սաստկանում: Ալիքների շիթերը մեր վրա էին թափվում և հասնում էին նավախուլին: Եվ մեկ րոպե, և վրա հասած ալիքները ամբողջովին ծածկեցին նավը, և այն սկսեց ջրասույգ լինել: Մենք բոլորս նավակից գետի մեջ ընկանք, որն այդտեղ բավական խորն էր ու փորձում էինք նավը հատակով դեպի վեր շրջել: Դա մեզ հաջողվեց մեծ դժվարությամբ, թե՛ այն պատճառով, որ ես ձախ ձեռքով բռնել էի աղջկաս, թե՛ այն՝ որ մենք բոլորս գտնվում էինք նավի մի կողմում, այն մի քանի անգամ շուռ եկավ, մինչև որ ես հասա նավախուլին, և երկու ձեռքերով կառչելով տախտակամածից՝

նավը բերեցի հավասարակշռության: Վլադիմիրն ու Պորֆիրին կառչեցին նավից ու կրճքով պառկեցին նրա վրա, որպեսզի այն այլևս շուռ չգա, իսկ ես ամբողջ ժամանակ պահած իմ թանկագին բեռը՝ աղջկաս, նրան գլխիցս վեր էի բարձրացրել, որպեսզի փրկելի ջրահեղձ լինելու վտանգից: Չնայած այդ բոլորը կատարվում էր արագ, այնուամենայնիվ, քամին մեր նավը, իսկ նրա հետ նաև՝ մեզ, աջ ափից թափով քշեց դեպի գետի խորքը և դեռ շարունակում էր քշել: Վախից փոքր-ինչ սթափվելով և ուրիշ ոչ մի տեղից օգնություն չտեսնելով՝ ես աղջկաս հետ միասին աղոթեցի Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Մորը և մեր հովանավոր սուրբ Պանտելիմոնին՝ մեզ կործանումից փրկելու համար: Եվ մեր նավը սկսեց շարժվել դեպի աջ ափը, հակառակ քամուն, կարծես մի աներևույթ ուժ հրում էր նրան: Տեսնելով ի վերուստ հասած ակնհայտ օգնությունը՝ ես առույգացա, ուժերս կարծես կրկնապատկվեցին: Բարեբախտաբար, կարողացա հանել իմ բարձր ճտքավոր կոշիկներն ու բամբակյա աստառով վերարկուն ու բռնելով նավախուլից, սկսեցի ոտքերով ուժգին աշխատել: Այսպիսով, Աստծո օգնությամբ նավը հաջողվեց հրել դեպի ափը: Մեր օգնության կանչերը վերջապես լսելի եղան ափին՝ մի բա-

նակային, զինվորական գերատեսչություն լուղարանի պահակը, իր նավակով մոտեցավ մեզ ու բոլորիս նստեցրեց նրա մեջ: Զրի մեջ մեկ կամ երկու ժամ մնալուց հետո, շնորհիվ Աստվածամոր և սուրբ Պանտելեիմոնի հովանավորություն, բոլորը, բացի ինձանից, ողջ-առողջ մնացին, իսկ ես հիվանդացա ջերմախտով, և իմ ձեռքերի հոդացավը սաստկացավ: Այդպիսի մրսածություն պատճառով ես լրիվ հուսահատվեցի կյանքիցս: Նշեմ նաև այն, որ հաջորդօրը իմ վերարկուն հայտնաբերվել էր աղետի վայրից ավելի քան քսանհինգ վերստ հեռու: Խոնարհաբար խնդրում եմ, սուրբ հայրեր, մեր փրկության համար երախտագիտական մաղթանք և օրհներգ մատուցել մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Երկնային Թագուհուն և մեծ նահատակ Պանտելեիմոնին:

Ալեքսանդր Անտոնովիչ Կյուլչկովսկի:  
Քաղաք Օմսկ,  
1890 թվական, 11 օգոստոսի:

1889 թվականի օգոստոս ամսին միանձնուհի Դարյա Պրսարենկովան երեք ծառայող կանանց հետ Բաքու էր ժամանել Սարատովի նահանգի Ցարիցինի գավառի կանանց Կամենոբրոդսկայա համայնքի համար նվիրատվություններ

հանգանակելու նպատակով: Նրանց՝ Բաքվում եղած ժամանակ կինս հյուրերին տրամադրեց մեր բնակարանի ազատ սենյակը:

Մայր Դարյան նոյեմբեր ամսին հանգանակություն հավաքելու ժամանակ քաղաքում շրջելիս հանկարծակի հիվանդացավ սրտափոցով: Դրանից հետո նրա այդ հիվանդությունը չէր անցնում, և նրան բուժող բժիշկ պարոն Ի.-ն, հիվանդությունը վտանգավոր համարելով, կարգադրեց մինչև առողջանալը որքան հնարավոր է՝ քիչ քայլել: Սակայն մայր Դարյան այնքան ուշադրություն չէր դարձնում իր հիվանդությանը, որքան նախանձախնդիր էր կատարելու իր ստանձնած սուրբ պարտականությունը, և հիվանդ վիճակում հունվար ամսին մեկնեց Թիֆլիս, այնտեղ մնաց մեկ ամիս՝ շարունակելով բուժումը: Հետո Բաթումով մեկնեց Նովոաֆոնսկայա մենաստան: Այնտեղ նրա հիվանդությունը ավելի սաստկացավ, և նա բժշկական միջոցներից ոչ մի օգուտ չստանալով՝ ամենևին թողեց դրանք՝ ինքն իրեն հանձնելով Աստծո կամքին: Մարտի 11-ին նա առաջվա պես հիվանդ վիճակով վերադարձավ Բաքու, իսկ ամսի 15-ին արդեն քայլել չէր կարողանում և անկողին ընկավ: Նույն օրը երեկոյան, մայր Դարյայի խնդրանքով իմ

Հրավիրած բժիշկը քննեց հիվանդին ու նրան հեղուկ դեղախառնուրդ ու կաթիլներ նշանակեց: Բժշկի հեռանալուն պես հիվանդի վիճակը ավելի վատացավ: Նա ուժեղ տնքում էր, գալարվում, ձեռքերը կոտրատում և հաճախակի սեղմում կրծքին: Իմ հարցին թե՛ ի՞նչ է նա զգում, մայր Դարյան միայն կարողանում էր ասել. «Ներեցեք ինձ»: Մեկ ժամ անց հիվանդին պետք էր հեղուկ դեղախառնուրդ տալ, սակայն երբ դրա համար նրան բարձրացրեցին, նա այլևս չէր կարողանում գլուխը վեր պահել և բերանը բացել՝ դեղը ընդունելու համար:

Այդ ժամանակ հավաքվեցին բոլոր ծառայող կանայք, որ ինչ-որ տեղ էին գնացել սաղմոսասացության, ինչպես նաև նրա մյուս ծանոթները:

Տեսնելով, որ հիվանդի վիճակը ավելի է վատացել, իսկ շնչառությունը՝ ծանրացել ու դժվարացել՝ ես կարգադրեցի նրան չանհանգստացնել դեղ տալով, որը նա ի վիճակի չէր ընդունել, այլ առաջարկեցի աղոթել հիվանդի բուժման համար: Այդ նպատակով սենյակ բերեցի սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի սրբապատկերը, որը ինձ ուղարկել էին Սուրբ Աթոս լեռից, և սկսեցի բարձրաձայն օրհներգ

կատարել: Ընդ որում արտասվելով աղոթում էին նաև բոլոր կանայք: Օրհներգից հետո մոտեցա հիվանդին, նրան երեք անգամ օրհների սրբապատկերով, ընդ որում չէի կարող չնկատել, որ մինչ այդ տնքացող ու անկողնում գալարվող հիվանդը այժմ հանգիստ ու լուռ պառկած էր՝ առանց տնքոցների, ու շնչառությունն էլ հավասար էր, ինչպես սովորաբար քնած ժամանակ շնչում է առողջ մարդը: Նկատելով հիվանդի վիճակի այդպիսի արագ փոփոխությունը՝ ես կանանց ասացի՝ աղոթե՛ք Աստծուն, Նրա ողորմածությունը և սուրբ նահատակ Պանտելեիմոնի բարեխոսությունը այժմ մայր Դարյայի հիվանդությունը վտանգավոր չէ, նա հանգիստ քնած է: Կանայք կրկին սկսեցին աղոթել, իսկ նրանցից մեկը սկսեց բարձրաձայն կարգալ Սուրբ Աստվածածնի կանոնը: Հաջորդ օրը առավոտյան մայր Դարյան վեր կացավ լրիվ առողջացած, ընդամենը մի քիչ թուլություն էր զգում, և այդ ժամանակվանից մինչև հիմա ոչ մի ցավ չի զգում, կարծես այն ամենևին չէր էլ եղել:

Ես, որպես վկա ու ականատես ծանր հիվանդի առողջացման, որը կատարվեց օրհներգի կատարման ժամանակ, իմ սրբազան պարտքն եմ համարում այդ մասին հայտնել ի լուր բոլոր

ըի, ի փառս Տեր Աստծո անվան և սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի:

Պյոտր Եվլամպիևիչ Ռուսկով:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս իր երկրային կյանքի ժամանակ առատորեն հրաշքներ էր բաշխում տառապյալ մարդկությանը: Բայց միաժամանակ երբեմն նաև պահանջում էր, որպեսզի Նրա Աստվածային ողորմածությունը չնորհ գտածները ջերմագին երախտագիտություն վերառաքեն Աստծուն, ուրիշներին պատմեն իր հրաշքների և ողորմության մասին և փառաբանեն Աստծուն: Երբ տասը բժշկված բորոտներից վերադարձավ միայն մեկը, բարձր ձայնով փառաբանելով Աստծուն, և ընկավ Հիսուսի ոտքերի առաջ, շնորհակալություն հայտնելով Նրան, Տերը ասաց. «Սրանք տասն էլ չմաքրվեցի՞ն. իսկ արդ, իննը ո՞ւր են, որ չվերադարձան՝ փառք տալու համար Աստծուն» (Ղուկ. 17, 17-19): Գերգեսացիների երկրում բուժելով բազում դևերով բռնված դիվահարին, Տերը նրան պատվիրեց. «Գնա՛ քո տուն հարազատներիդ մոտ և պատմի՛ր նրանց այն ամենը, ինչ Տերը քեզ արեց և թէ ինչպես ողորմեց քեզ» (Մարկ. 5, 19), այսինքն քո ամբողջ երկրում պատմիր Աստծու ողորմության հրաշքները:

Եվ ես, անարժանս, որ գրում եմ այս տողերը, չսահմանափակվելով յուր ժամանակին Տիրոջը վերառաքած իմ երախտագիտությունը, իմ մեծագույն պարտքն եմ համարում ի լուր բոլորի իմ համաքաղաքացիներին և համաերկրացիներին պատմել, թե ինչ կատարեց Տերը ինձ հետ և ինչպես Նա ողորմեց ինձ: Արդեն կես տարի է անցել այն ժամանակվանից, երբ Տերը մեծ բժիշկ Պանտելեիմոնի բարեխոսությունը ինձ հրաշագործ շնորհ պարգևեց՝ կյանքս պահպանելով իմ ու ընտանիքիս համար: Բայց տկարությունս պատճառով երկար ժամանակ չէի ազդարարում դրա մասին, ինչի համար խոնարհաբար ներողություն եմ խնդրում:

1890 թվականին, Քրիստոսի Ծննդյան տոնից մոտ երկու շաբաթ առաջ ես սկսեցի ինձ շատ վատ զգալ: Տենդային վիճակը, որի մեջ հաճախ էի ընկնում, վաղուց ի վեր ոչ մի օր ինձ հանգիստ չէր տալիս: Հիվանդ վիճակում, սակայն, ես կատարում էի թե՛ իմ ծառայությունը, թե՛ դրանից դուրս այլ գործեր էի անում և այդ պատճառով մինչև տոնի մոտենալը ես ծայրահեղ հյուսիսացի: Տոնի առաջին օրը, սակայն, ինձ համար անցավ բավականին լավ, ինչն ինձ շատ առույգացրեց: Բայց երկրորդ օրվա երեկոյան կրկին տկարացա, երրորդ օրը ինձ ավելի վատ էի զգում, հաջորդ օրը՝ ավելի և այդ-

պես շարունակ: Զանազան պատճառներով ես չէի կարող թողնել եկեղեցական ծառայությունը, և անկարողությունս վերագրելով իմ սովորական տենդային վիճակին, ինքս ինձ հետ պայքարում էի այնքան ժամանակ, մինչև որ դեկտեմբերի 30-ի առավոտյան ի վերջո անկողին ընկա և գտնվում էի ինչ-որ քարացած վիճակում: Հիվանդությունը ինձ գամեց անկողնուն ու արագ սաստկանում էր: Սկսվեց ահավոր գլխացավ, մարմինս անտանելի կոտորտվում էր, կարծես ամեն ոսկորս փշրում էին մի քանի մասերի, սկսեցին հետապնդել ահավոր տեսիլքներ: Զառանցանք սկսվեց: Ինձ շրջապատած բժիշկները ախտորոշեցին տիֆ, բայց դրա տարատեսակի վերաբերյալ նրանց կարծիքները իրար հետ չէին համընկնում: Առատ ցանի պատճառով, որ պատել էր ամբողջ մարմինս, նրանցից ոմանք ենթադրում էին բժավոր տիֆ, բայց ընդունեցին ավագ բժշկի կարծիքը, որ հիմնվում էր այլ նշանների վրա, և որոշեցին, որ դա որովայնային տիֆ է: Կարելի է պատկերացնել, թե նման ծանր հիվանդությունը ինչպես կանդրադառնար արդեն իսկ ծայրահեղ հյուծված օրգանիզմիս վրա: Իսկ ջերմությունս արդեն բարձրացել էր մինչև քառասուն աստիճան: Փոքր-ինչ ուշքի գալով՝ հունվարի 4-ին ես հրավիրեցի հոգևոր հորը և սկսեցի Սուրբ Հաղորդություն ստանալ: Այդ ժամանակ դեռ կա-

րող էի մի քիչ բարձրանալ ու նստել անկողնում, չնայած ոտքերս չէի իջեցնում: Բայց հաջորդ օրվանից լրիվ ուժասպառ եղա և առանց կողմնակի օգնության չէի կարողանում բարձրանալ: Այդպիսով երևի թե տասնմեկերորդ օրն էր, որ տառապում էի այդ հիվանդությամբ, որը տևում է մի քանի շաբաթ, սակայն ուժերս չափից ավելի էին սպառվել: Ժամանակ առ ժամանակ ուշքի գալով ես տեսնում էի, որ վերջը բարի չէ, և սկսեցի խորհել մահվան մասին: Ինքնին մահը չէր, որ ինձ վախեցնում էր, կամ էլ ինչ-որ զգայական կապվածություն չէր, որ ստիպում էր ինձ անհանգստանալ և ապրել ցանկանալ: Թեկուզ և ես անարժան մարդ եմ, այդ մասին խոսք անգամ չի կարող լինել, սակայն, այնուամենայնիվ, մտածում էի, եթե ես թողություն եմ ստացել հոգևոր հոր կողմից և արժանացել Սուրբ Հաղորդությանը, ուրեմն կարող եմ մեռնել Աստծո և մարդկանց հետ հաշտված և հաստատ կերպով հուսալ, որ ննջեցյալի վրա կատարվելիք եկեղեցական աղոթքները անպայման լսելի կլինեն: Ինձ անասելի տանջանք էր պատճառում մի այլ բան: Բացի կնոջից, ունեմ հինգ մանկահասակ երեխաներ, որոնցից մեծը վեց տարեկան էլ չկա: Եթե ներկայումս մորս անդադրում հոգսերով և մոտիկ մարդկանց համարյա մշտական հոգածությամբ հազիվ է հնարավոր լինում ապրել երկու սպասավորնե-

ըով, ապա ի՞նչ կլինի իմ մահից հետո, մտածում էի ես, երբ ընտանիքս ի վիճակի չի լինի ոչ միայն սպասավորներ պահելու, այլ անգամ անկյուն էլ չի ունենա և բառացիորեն կմնա առանց մի կտոր հացի: Իմ կարճատև ծառայություն ընթացքում ես չէի կարողացել ընտանիքիս համար բավարար ապահովություն ստեղծել: Ինձ քիչ թե շատ մոտիկ բոլոր մարդիկ գիտակցում էին, թե իմ մեռնելու դեպքում ընտանիքս ինչ ահավոր կացություն մեջ կընկնի: Ընտանիքիս համար հնարավոր դժբախտության մասին այդ ծանր մտածմունքները էլ ավելի էին խլում իմ առողջությունը, և ես երկար ժամանակով ընկնում էի գառանցանքի մեջ: Եղավ մի պահ, երբ գիտակցության եկա, և ահա ծանր մտքերի մեջ հանկարծ ինձ մոտ մի անսասան հույս փայլատակեց, որ ընտանիքիս որբանայու դեպքում Աստված կնոջս և երեխաներիս առանց Իր նախախնամության չի թողնի: «Ինչ եմ ես անընդհատ երեխաների մասին ասում՝ խղճո՛ւմ եմ նրանց, մե՛ղք են,– ասացի ես բարձրաձայն,– մի՞թե Աստված Ինքը ինձանից ավելի քիչ է սիրում նրանց»: Այդ մտքով ես հանգստացա, ինձ հանգստացրեցին նաև մոտիկ բարեկամներս, որոնք խոստացան իրենց կողմից երեխաներիս համար հնարավորինս խնամք տանել:

Ընտանիքիս համար այդպիսի դժբախտ, տանջալի օրերի ընթացքում ինձ շրջապատող մարդիկ սկսեցին մխիթարանք փնտրել թե՛ իրենց, թե՛ իմ համար աստվածահաճո մեծ ծառա և բժիշկ Պանտելեիմոնի բարեխոսության մեջ, որ փառավոր է իր հրաշքներով, Մոսկվան ծանր կացության մեջ ընկնելիս ամեն անգամ առաջինը նրան է դիմում: Նրանք մատուռ գնացին, իմ առողջության համար մաղթանք մատուցեցին, Աստծո ծառայի վզնոց-սրբապատկեր ձեռք բերեցին, որը և տուն վերադառնալուն պես դրեցին ինձ վրա: Բերել էին նաև Տիրոջ Խաչափայտով կենագործված սուրբ ջուր, որն էլ ես նույն պահից սկսեցի օգտագործել, և խնդրեցին հնարավորինս շուտ իմ տուն ժամանել սուրբ մասունքներով: Դա նշանակված էր հունվարի 11-ին: Ես չափազանց ուրախ էի այդ աստվածահաճո մտքի և ինձ շրջապատողների արածի համար, բայց միաժամանակ շատ էի վախենում, որ սուրբ մասունքներով կժամանեն արդեն իմ մահից հետո: Մինչև նշանակված օրը դեռ չորս օր էլ մնում էր, մինչդեռ ես արդեն այնպիսի վիճակում էի, որից վատը արդեն մահն է: Թվում էր, թե իմ մեջ կյանքը պահպանող ամեն ինչ կտրվել ու ավերվել էր: Զերմությունը, այդ տանջալի ջերմությունը, ցամաքեցրել էր իմ մեջ կյանքի բոլոր կենսահյուսվածքները: Պատահում էին



Հիվանդությունն այնպիսի նոպաներ, որ թվում էր, թե մնում էր միայն մի հոգոց հանել և հրաժեշտ տալ կյանքին, նոպաներ, որոնց ժամանակ էլ հենց մարդը մահանում է: Ես դժվարանում էի ոչ միայն խոսել կամ խոսակցություն լսել, այլ նույնիսկ որևէ մեկին հեռվից տեսնելը անտանելի էր: Զառանցանքը մշտապես սկսեց ինձ հետապնդել՝ ես մոռացա օրերը, ամսաթիվը, մոռացա որտեղ եմ, չգիտեի ով է ինձ շրջապատում: Ինչպես հետո պարզվեց, Չերմուկյունս քառասուն աստիճանից բարձր էր, երակազարկը շատ սպառնալի էր: Որտե՞ղ փնտրեինք բարեհաջող ելքի հույսը: Եվ այդ ո՞ր բժշկությունը կարող է բուժել նման տեսակի հիվանդությունը: Իսկ այդ հիվանդությունը երեք շաբաթ էլ չէր տևել: Ո՞վ կարող էր ասել, որ այն չի տևի ևս չորս կամ հինգ շաբաթ: Թե՛ այն, թե՛ այս ընթացքը սովորական էր հիվանդության համար: Սակայն ի՞նչ կլինեք այդ դեպքում: Անխուսափելի մահ: Եվ մեջս իսկապես մահվան կանխազգացում էր ծագում՝ հաստատ համոզմունքով, որ դա անխուսափելի է: Երբ արթնանում և ուշքի էի գալիս, մի բան էի միայն կամենում, որ սուրբ մասունքները ժամանեն իմ կենդանի ժամանակ: Այդ ընթացքում շատ տեղերում էին ինձ համար Չերմեռանդ աղոթքներ վերառաքվում Աստծուն: Այնուամենայնիվ, Տերն իմ

կյանքը երկարացրեց մինչև նշանակված օրը: Թե ինչ էր կատարվում ամբողջ այդ օրը մինչև երեկո, ես չէի հիշում, ինչպես նաև՝ նախորդ օրերը: Միայն մի բան էի տեսնում՝ ինչպես են մաղթանք մատուցելու համար սեղան պատրաստում բոլոր անհրաժեշտ բաներով, բայց այդ էլ հետագայում վերհիշեցի: Պառկած եմ ես անգիտակից, անհույս վիճակում, հանկարծ ինձ մի զանգ է արթնացնում: Ես ուշքի եմ գալիս և ասում եմ. «Մասունքները ժամանել են»: Ինձ չեն վստահում, քանի որ տարբեր կարիքների համար շատ զանգեր էին լինում, իսկ մինչև մասունքների գալը դեռ երկու ժամ կար: Սակայն իմ զգացողությունը ինձ ճիշտը հուշեց: Սուրբ նշխարները իսկապես ժամանել էին: Ես սկսեցի վախենալ, որ չլինի թե երգեցողությունն ու խնկի ծուխը ինձ հոգնեցնեն, և ես կրկին ընկնեմ անգիտակից վիճակի մեջ, սակայն աղոթքները սկսվելուն պես այդ վախը անցավ: Գորովաշարժ մաղթանքի երգեցողությունը հազիվ էր սկսվել, երբ ես անմիջապես էլ զգացի, թե ինչպես է մարմնիս մեջ մի ինչ-որ կենարար ուժ արթնանում, ասես թե մեջս կյանք էր լցվում. նկատելի էր, թե այդ երգեցողությունը որքան սրտաբուխ էր, և այդ ամենի մեջ որքան կարեկցանք կար հիվանդի նկատմամբ: Մաղթանքի ողջ ընթացքում գիտակցությունս տեղն էր,

որքան կարող էի՝ ձեռքս մի կերպ բարձրացնելով խաչակնքում էի: Բոլոր երեխաները որքան էլ փոքր էին, համակված էին ինչ-որ ծանր զգացումով, որն արտահայտվում էր նրանց դեմքերին, և ծնկաչոք աղոթում էին Աստծուն: Մաղթանքն ավարտվեց, ինձ ցողեցին սուրբ ջրով, հպեցին սուրբ նշխարներին, տապանակը անցկացրեցին իմ վրայով, որից հետո սուրբ մասունքները հետ տարան եկեղեցի:

Անմիջապես սկսեցին չափել ջերմությունս: Ես և բոլոր հարազատներս ու մտերիմներս անսկաբազրեղի ուրախություն ապրեցինք, քանի որ իմ ջերմությունը նկատելիորեն իջել էր և այլևս չէր բարձրանում, ես արդեն չէի ընկնում անգիտակից վիճակի մեջ, սկսեցի առողջանալ, և ներկայումս Աստծո շնորհիվ ես առաջվա պես ծառայում եմ: Այս դեպքում արդյոք որևէ մեկը կարո՞ղ է հարցականի տակ դնել ինձ հետ կատարված այսքան ակնհայտ հրաշալի բժկությունը: Սուրբ մասունքների ժամանման և դրանց առջև մաղթանքի մատուցման օրը իմ ընտանիքից կախված չէր, ոչ ոք չէր կարող ասել, որ նույն այդ օրը պետք է իմ հիվանդության մեջ շրջադարձ կատարվեր: Ընդհակառակը, նկատի առնելով հիվանդությանս բնույթը, ավելի շուտ կարելի էր սպասել, որ եթե ուժերս հերիքեին, այն շաբաթներով կերկարեր:

Սակայն հենց այնպես եղավ, որ սուրբ նշխարների ժամանելու պահին վերադարձավ իմ գիտակցությունը և այլևս ինձ չէր լքում, աղոթքի ժամին ես առույգություն զգացի, նույն երեկոյան էլ իջավ ջերմությունս, և բոլոր քսան օրերի ընթացքում հիվանդությունս չկրկնվեց, մի բան, որն այսպիսի դեպքերում միանգամայն սպասելի է: Իսկ ես, կրկնում եմ, գտնվում էի կործանման եզրին, բառացիորեն մահվան շեմին: Կարելի է ենթադրել, թե ուժերս ինչ աստիճան էին սպառվել, գիտակցությանս վերականգնվելուց և ջերմության իջնելուց հետո ամբողջ վեց օր չէի կարողանում անկողնում փոխել դիրքս, ոչ միայն քնել կամ շրջվել մի կողմից մյուսը, այլև գլուխս և ոտքերս մի փոքր բարձրացնել: Ինչ դիրքով էլ որ ինձ դնում էին, նույն այդ դիրքում էլ մնում էի միանգամայն անօգնական: Ոչ միշտ էի ի վիճակի մի ամբողջ բառակապակցություն ասել՝ դա իմ համար շատ դժվար էր: Քիչ էր մնացել, որ ես այդպես վաղաժամ թողնեի ընտանիքս: Բայց ահա Աստծո ողորմածությունը իմ կյանքը փրկված է: Ի՛նչ էլ որ ասեն հրաշքների թշնամիները, որևէ մեկը ինչպիսի պատահական զուգադիպություններով էլ փորձի բացատրել նման երևույթները, սակայն ինչ վերաբերում է իմ բուժվելուն, ապա որքան կարող էի տեսնել ու զգալ իմ վիճակը,

խորապես համոզված եմ, և ոչ ոք ինձ չի կարող հակառակը համոզել, որ միայն շնորհական գործությունը պահպանեց իմ կյանքը: Ես, իմ ընտանիքն ու ինձ շրջապատողները այլևս ոչ մի հույս չունեինք: Եվ ահա այժմ, սուրբ բժշկի հիշատակի օրը, երբ նրան գովերգություններ են վերառաքվում, իմ սրբազան պարտքն եմ համարում ավելի ճոխացնել դրանք՝ ի լուր ամենքի հայտնելով նրա նոր բարերարութան մասին: Խորհում եմ, որ սուրբ նահատակի աղոթքներով Աստծո ողորմածություն հայտնությունը, որն ինքս տեսա, ոչ միայն ինձ համար է կարևոր, այլև թանկ է ամեն մի հավատավոր սրտի, որովհետև այդ սիրտը կլցնի աստվածասիրական նոր գործով և աղետի մեջ ընկնելու դեպքում նրան կմղի սփոփանք որոնել երկնային օգնության մեջ, որը ցույց է տրվում Աստծո Գահի առջև նրա սուրբ ծառաների բարեխոսություններով:

Փա՛ռք Տիրոջը, որ փառավորում է իր սուրբերին (Մոսկվայի միտրոպոլիտ Ալեքսիին նվիրված երգասացությունից):

Մալայա Ալեքսեևսկայա փողոցում գտնվող  
Ալեքսեևսկայա եկեղեցու քահանա  
Վիտալի Կրասնովսկի:  
Մոսկվա,  
1891 թվական, 26 հունիսի:

Գլազովի գավառի Օմուտինի գործարանի տարածքը մեծ մասամբ բնակեցված է տարբեր ուղղությունների հերձվածողներով: Սակայն Տերը իր ողորմությունից չի զրկում նույնիսկ այդ վայրը: Ես օգտակար եմ համարում այս տողերի ընթերցողներին հայտնել այն դեպքի մասին, որին ինքս եմ ականատես եղել: Այդ դեպքը վկայում է, որ Աստծո ամենակարող աջը միշտ նախախնամում է հավատով խնդրածը ստանալու հույսով իր ողորմածությունը դիմողներին:

Անցած՝ 1891 թվականին, հնածեսերի ավստրիական աղանդին հարող մի կնոջ՝ Մարիա Անտիպովնա Սմիրնովայի դուստր Պելագեան, որ տասներեք տարեկան էր, հիվանդացավ ոտքերի կաթվածահարությամբ: Հիվանդությունը քիչ-քիչ խորանում էր և այնքան լրջացավ, որ հիվանդի ոտքերը անզգայացան ու նրան Օմուտինի հիվանդանոց ուղարկեցին բուժման: Այնտեղ հիվանդը քսանյոթ շաբաթ պառկած էր առանց փոքր-ինչ շարժվելու: Պատահում էր, երբ քնած ժամանակ նրա ոտքը կախ ընկներ մահճակալից, հիվանդն ինքն ի վաճակի չէր այն բարձրացնելու, այլ քույրն էր օգնում, որը հիվանդության ամբողջ ընթացքում խնամում էր նրան: Այդ աղանդավոր կինը Սուրբ Ծնունդից

առաջ ինչ-որ հանգամանքների բերումով եղավ իմ բնակարանում: Զրույցի ժամանակ Սմիրնովան ինձ պատմեց, որ իր աղջիկը երկար ժամանակ պառկած է հիվանդանոցում և առողջացման ոչ մի նշան չկա: Ես նրան խորհուրդ տվեցի մաղթանք մատուցել սուրբ նահատակ Պանտելիմոնին, իսկ դուստրը, ասացի ես, թող անդամակցի Սուրբ Ուղղափառ Եկեղեցուն, միաժամանակ պատմեցի բուժվելու որոշ դեպքերի մասին, որ կատարվում են Սուրբ Եկեղեցու աղոթքներով: Սմիրնովան իսկապես չհապաղեց հետևել իմ խորհրդին, Բարեկենդանի նախօրեին աղջկան հիվանդանոցից տուն տարավ կատարելապես հիվանդ, իսկ Ավագ Շաբաթվա առաջին շաբաթ օրը թե՛ հիվանդ աղջկան, թե՛ մյուսին, որ նրան խնամում էր, տարավ ու ընծայեց Սուրբ Ուղղափառ Եկեղեցուն: Պատարագին նրանք արժանացան Քրիստոսի Սուրբ Հաղորդությանը: Սմիրնովան կատարեց նաև մաղթանք մատուցելու իմ խորհուրդը: Եվ ո՛վ մեծ հրաշք, հիվանդ Պելագեան, որ իր ոտքերը չէր զգում, եկեղեցու անդամ դառնալու հաջորդ իսկ օրը սկսեց պատերին հենվելով քայլել, և նրա ոտքերը օրըստօրե ավելի ու ավելի էին ամրանում, ու փա՛ռք Բարձրյալին, նա հիմա ազատ քայլում է: Դրանից հետո և՛ մայրը, և՛

որդին նույնպես միաբանվեցին Սուրբ Ուղղափառ Եկեղեցու հետ: Աստծո Եկեղեցուց հեռացածներն ասում են, որ «դեռ ևս կարող է առողջություն տալ, դրա համար էլ ձեր Պելագեան էլ իր բժշկությունը Աստուծուց չի ստացել»: Ո՛վ մեր Աստված: Ահա երկրորդ փարիսեցիները: Նրանք էլ էին ասում. «Քրիստոս դեբրին հանում է դեբրի իշխանի՝ բեհեզգեբուղի ուժով» (Ղուկ. 11, 15): Մեր ժամանակներում էլ են լիակատար չափով կատարվում Եսայի մարգարեի խոսքերը, որ նա ասում էր այդպիսի ուխտադրուժ ուրացողներին. «Կույրի պես նրանք պատերն են շոշափելու, խարխափելու են աչքերից զրկվածների պես, կեսօրին գլորվելու են ինչպես կեսգիշերին» (Ես. 59, 10): Եվ այդ ուրացողների մոտ որտեղի՞ց է այդպիսի չարություն Սուրբ Եկեղեցու և Աստծո օրհնության հանդեպ: Դադարեցրե՛ք, մոլորված եղբայրներ, զրպարտել Աստծու Եկեղեցին, ասելով թե նա այլևս օրհնություն չունի, և թե չկան հրաշքներ և Աստծու սուրբ ծառաներ: Լսե՛ք, թե ինչ է գրում սուրբ Հովհան Ոսկեբերանը ձեր կողմից հարգված գրքում. «Շատ են գայթակղվածները, որոնք ասում են՝ չկան սուրբեր աշխարհում, նույնն են ասում նաև շատ մոլորվածներ, և կորստյան են մատնվում: Լսեք, թե Տերն

ինչ է ասում Ավետարանում. Այս սերունդը չի անցնի, մինչև այս ամենը չկատարվի, - սա ասում է սուրբերի մասին, քանի որ արդարներն ու սուրբերը չեն պակասի մինչև աշխարհի վերջը»: Սուրբ Եփրեմ Ասորին ասում է՝ «Ով ապստամբում է ընդդեմ եկեղեցու, նրա մարմինը Գեեզիի մարմնի նման բորոտություն է կվարակվի»: Վախեցե՛ք, Տերը ասում է. «Ահա գալիս եմ շուտով, և ինձ հետ են իմ վարձերը, որպեսզի հատուցեմ յուրաքանչյուրին ըստ իր գործերի» (Հայտ. 22, 12):

Օմուտինի գործարանի  
եղբայրական դպրոցի ուսուցիչ  
Մատվեյ Վետրովսկի

1891 թվի հուլիս ամսին ձախ ոտքիս վրա մի ոչ մեծ, կարմիր բշտիկ առաջացավ, իսկ որոշ ժամանակ անց գոյացավ ահավոր ցավոտ մեծ վերք: Հրավիրված բուժակը այն բուժեց, չնայած ոչ լրիվ: Բայց դրա փոխարեն նրա կողքին մի ուրիշ այդպիսի վերք առաջացավ, և այդ երկու վերքերի շուրջը երևացին մի քանի սպիտակ թարախապալարներ, որոնցից սկսեցին գոյանալ դարձյալ շատ ցավոտ վերքեր, այնպես որ արդեն չէի կարողանում ծառայության գնալ: Այլևս հույս չդնելով բուժակի վրա՝ քահանային խնդրեցի տանը Աստծուն մաղթանք

մատուցել ջրօրհնների կարգով, իսկ բժիշկ Պանտելեիմոնին՝ օրհներգով: Մաղթանքից հետո, քահանայի մեկնելուն պես, մաղթանքի կատարման ժամանակ վառվող կանթեղի յուղով օծեցի վերքերս, և գոհություն Աստծուն և նրա սուրբ ծառային, մեկ շաբաթ անց ոտքս լիովին ապաքինվեց, այնպես որ վերքերի տեղում միայն նշաններ մնացին:

Սարկավագի այրուղ գուստրը՝ Մարիան հիվանդացավ ուժեղ թուլություն, այնպես որ չէր կարողանում ինքնուրույն շարժել ոտքերն ու ձեռքերը: Այսպիսի հիվանդությունը նա պառկեց ավելի քան մեկ ամիս, և վերջապես ես խորհուրդ տվեցի մաղթանք մատուցել բժշիկ Պանտելեիմոնին: Այրին այդպես էլ արեց: Գոհություն քեզ, Աստծո ծառայիդ: Աղոթքի ժամանակ հիվանդը սաստիկ լալիս էր, իսկ քահանայի գնալուց հետո նա քուն մտավ և երկու կամ երեք օր չանցած՝ առողջացավ: Ես և իմ ընտանիքի անդամները բազում այլ բժշկություններ ստացանք սուրբ Պանտելեիմոնից:

Աստրախանի նահանգի Ենոտաևսկի դավառի  
Մասիկալսկի Պակրովսկայա եկեղեցու սարկավագ  
Իվան Տրոֆիմովիչ Գորբաչև:

Քսան տարի շարունակ իմ մայրը, որ հարվածելով վնասել էր աջ ոտքի ծունկը, տառապում

էր անտանելի ցավերից: Վնասված տեղում բաց վերք էր առաջացել, այնպես որ ոսկորն էր երևում: Այն միջոցները, որոնց դիմում էր նա, չծառայեցին բուժմանը: Նա շատերից էր թաքցնում իր հիվանդութունը, որպեսզի իր նկատմամբ զզվանք չառաջացնի: 1891 թվականի դեկտեմբերին մայրս մրսելու հետևանքով նաև ծանր հիվանդացավ և մի ամսից ավելի պառկեց անկողնում: Նրա այդ հիվանդության սկզբում, գործիս բերումով (չուգեաղացում աշխատելու պատճառով), չէի կարող ինքս այցելել հիվանդին և քրոջս միջոցով նրան օրհնված յուզ ուղարկեցի, որն ինձ Աթոսից էին ուղարկել, որպեսզի նա քսի վերքին, ինչպես նաև խմի: Մեկ շաբաթվա ընթացքում, ինչ սկսել էր հիվանդ ոտքը յուզով շփել, վերքը առողջացավ և ամբողջովին պատվեց նոր մաշկով, ու հիվանդը հիմա հեշտ ու հանգիստ քայլում է, ոչ մի ցավ չզգալով, մինչդեռ դրանից առաջ ոտքերը հազիվ էր շարժում: Օ՛, ինչ ուրախություն էր համակել մեզ բոլորիս, որ ականատես էինք սուրբ նահատակ Պանտելեիմոնի մեծագույն հրաշքին, ում իմ մայրը իր հիվանդության ժամանակ դիմում էր աղոթքով, նրա բարեխոսությունը խնդրելով Աստծու առաջ:

Իվան Վասիլևիչ Աստաֆև

## ՀԱՎԱՏԻ ԵՎ ԱՂՈԹՔԻ ԲՈՒԺԱՐԱՐ ՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մի ընտանիքում տանտիկինը հիվանդացել էր, այն էլ շատ լրջորեն: Այդ կնոջ ամուսինը ստիպված էր բուժման համար նրան ուղարկել քաղաքային հիվանդանոցներից մեկը: Հավաստի չգիտենք՝ չենք հետաքրքրվել, թե նա այնտեղ արդյոք ինչքան է մնացել, բայց բանն այն է, որ բժիշկները ամուսնուն խորհուրդ տվեցին հիվանդին հիվանդանոցից տանել տուն, բժշկական օգնություն չցուցաբերելով այն պատճառաբանությամբ, թե հիվանդությունը խրոնիկական է, բավականին երկարատև բուժում պահանջող, նաև դրական արդյունքի առումով կասկածելի, և որ չեն կարող նման հիվանդությամբ տառապող հիվանդներին երկար պահել, որովհետև սուր հիվանդություններով տառապողները չափից ավելի շատ են: Նման տխուր հայտարարությունից հիվանդի ամուսինը վշտացել էր: Հիվանդանոցից դուրս գալուց առաջ հիվանդը բժշկից համապատասխան

բժշկական հրահանգներ ու դեղատոմս ստացավ, որում նշանակված դեղերի արժեքը մոտավորապես յոթ ռուբլի էր կազմում: Կորցնելով ամեն հուլյս ու վստահություն երկրավոր բժշիկների նկատմանը՝ հիվանդը այլևս չկամեցավ դրամը ծախսել բժշկի դեղատոմսով նշանակած դեղերի համար և իր ամուսնուն խնդրում էր, որ այդ դրամը ավելի լավ է հասցեագրել ոչ երկրային բժշկի, այլ սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնին: Ամուսինը, չկամենալով մերժմամբ վշտացնել իր հիվանդ կնոջը և ուրախանալով, որ նրան կարող է սփոփանք բերել՝ խնդրեց որ սուրբ նշխարներ բերեն իրենց տուն: Աղոթքներ մատուցվեցին Աստծու ծառային, և դրանից հետո պարզվեց, որ բուժման տեսակետից անհույս խրոնիկական հիվանդությունը ամենևին էլ խրոնիկական չէ: Հիվանդը սկսեց իրեն ակներևորեն լավ զգալ և բուժվել: Ուրախացած ամուսինը այն նույն բժշկին, որ բուժում էր հիվանդին, իր տուն հրավիրեց, որպեսզի նա արձանագրի առողջացման փաստը: Բժիշկը առողջացումը վերագրում էր միայն իր դեղի ազդեցությանը, բայց երբ նրան բացատրեցին, որ հիվանդը այն չի ընդունել, նա սկսեց առողջացումը վերագրել մի ինչ-որ այլ բժշկի միջոցների ազդեցությանը, որի մոտ հիվանդը սկսել էր բուժվել հիվանդա-

նոցից դուրս գալուց հետո: Ներկայումս ինչպես հիվանդը, նույնպես և նրա ամուսինը առողջացումը ամբողջովին վերագրում են բժիշկ Պանտելեիմոնի զորությունն և նկատմամբ ունեցած հավատի ազդեցությանը:

Քահանա Լեոնիդ Վոզգովիժենսկի

Որդիս՝ Նիկոլայը, որ տասնհինգ տարեկան էր, 1888 թվականի հունվարի վերջին մրսելով, այնքան ծանր հիվանդացավ, որ չէր կարողանում աշխատել և ոտքերի հողացավի պատճառով դժվարություններ էր քայլում, որը փոխանցվում էր մեկ աջ, մեկ ձախ ձեռքին, կամ էլ՝ երկուսին միասին, նաև գլխին ու կրծքավանդակին: Ըստ երևույթին, դա հողային ոսկրացավ էր: Ես որդուս տեղավորեցի պետերբուրգյան քաղաքային հիվանդանոցներից մեկում, սակայն քանի որ բժիշկը չէր կարող ցավերը վերացնել, ապա երկու շաբաթ հետո նա դադարեցրեց բուժումը, իսկ մեկ ամիս անց տղայիս դուրս գրեց լրիվ հիվանդ և քայլելու անկարող, այնպես որ մի օրից ես ստիպված էի նրան տեղափոխել ուրիշ հիվանդանոց, որտեղ նա ևս մոտ երկու շաբաթ բուժում ընդունեց և կրկին դուրս գրվեց հիվանդ վիճակով: Իմ այցելություններից մեկի ժամանակ, երբ բժիշկները դուրս էին գրում որ-

դուս, նա այնքան թույլ էր, որ չէր կարողանում ինձ բարևելու համար անկողնուց վեր կենալ:

Ես արդեն կորցրել էի նրա բուժման ամեն մի հույս, և ապավինելով Միակ Ամենազոր Տիրոջ և Նրա Ամենասուրբ Մոր կամքին, սկսեցի աղոթել հիվանդ որդուս համար: Այդ ընթացքում առիթ էր եղել կարգալու սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի անապական մասունքներով բազմատեսակ հիվանդությունների (բժիշկների կողմից անբուժելի) շատ հրաշալի բժշկումների մասին, որ կատարվել էին 1863, 1864 և 1865 թվականներին, այդ սրբությունների՝ Աթոսից Պետերբուրգ տեղափոխվելու ճանապարհին, ինչպես նաև Պետերբուրգում՝ Ալեքսանդրո-Նևսկայա Լավրայում: Անկեղծ հավատով և ջերմեռանդ աղոթքով ես՝ բազմամեղս էլ դիմեցի այդ հրաշգործ բժշկին, ապաքինիչ Պանտելեիմոնին, նրան ջերմեռանդորեն խնդրելով թե՛ տանը աշխատելիս, թե՛ սուրբ տաճարում՝ իր պատվական սրբապատկերի առջև: Իսկ Նովոաֆոնսկոյե վանատանը և Ալեքսանդրո-Նևսկայա Լավրայում անապական սուրբ մասունքների առջև մաղթանք մատուցեցի և մի քանի անգամ օրհներգություն աղոթքներ վերառաքեցի սուրբ վկային: Դրանից հետո այցելություն զնալով որդուս՝ անսպասելիորեն

նրան գտա ավելի լավ դրություն մեջ: Հետո տարել էի սուրբ Պանտելեիմոնին նվիրված մի օրհներգ, և որդուս պատվիրեցի ամեն օր գորովանքով կարդալ այն: Տարել էի նաև նշխար, սակայն գթություն քույրը, նկատի ունենալով տղայի ծանր հիվանդությունը, թույլ չտվեց նշխար տալ նրան: Սակայն, չնայած դրան, որդիս խիստ ցանկացավ իրեն նշխար տալ թեկուզ մի փոքր կտոր, ինչն էլ ես կատարեցի: Նաև յուզ բերեցի կանթեղից, այն քսեցի ցավոտ տեղերին և մի քանի կաթիլ տվեցի խմելու: Այնուհետև մի փոքրիկ սրվակով յուզ տալով՝ նրան պատվիրեցի այն ամեն օր քսել ցավոտ տեղերին և աղոթելով խմել: Տվեցի նաև սուրբի մի փոքրիկ սրբապատկեր, այն կախեցի գլխավերևում և պատվիրեցի ջերմեռանդորեն աղոթել նրան, թեկուզ և անկողնում, և բուժում խնդրել, ընդ որում նրան վստահեցնում էի, որ եթե խնդրի Աստծո սուրբ ծառային, հաստատ կառողջանա:

Այդ ժամանակից իմ որդին սկսեց արագ առողջանալ և շուտով կրկին դուրս գրվեց հիվանդանոցից: Մի քանի օր անց մենք գնացինք Ալեքսանդրո-Նևսկայա Լավրա՝ մաղթանք մատուցելու աստվածահաճո ծառայի անապական մասունքների առջև: Մեր գոհությունն էինք



Հայտնում նրան ու խնդրում կատարյալ բուժում ստանալու համար, և սուրբ վկան անսաց մեր տկար աղոթքին: Շուտով իմ տղան կատարելապես առողջացավ, և մենք կրկին գնացինք սրբի եկեղեցի, երախտագիտություն հայտնելու անարժաթ բժշկին, և աղոթակարգ մատուցեցինք նրա պատվական և հրաշագործ սրբապատկերի առջև: Անկախ դրանից, ես աղոթում էի նաև ինձ համար, որովհետև ինքս էլ հիվանդ էի հոգային ոսկրացավով, որով տառապեցի մոտ երկու տարի: Երեք ամիս բուժումից չէի կարողանում աշխատել և ոտքերս հագիվ էի շարժում: Իմ հիվանդության ընթացքում մեկուկես ամիս եղա հիվանդանոցում, իսկ առհասարակ տարբեր ժամանակներում բուժվում էի հինգ բժիշկների մոտ և փորձարկեցի բազմատեսակ տնական միջոցներ, սակայն այդ ամենը իզուր էր: Այնժամ, արդեն սպառելով իմ աղքատիկ կարողությունը, իմ հույսը կրկին դրեցի բժիշկների Բժշկի՝ Տիրոջ և Նրա ծառա սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի վրա: Հենց այդ սուրբ բժշկին էլ ես դիմեցի իմ որդու և ինձ համար, և նա անսաց մեզ՝ մեղավորներին, և մեզ երկուսին էլ կատարյալ առողջություն պարգևեց, այնպես որ 1889 թվի մայիս ամսից ո՛չ ես, ո՛չ էլ որդիս ոչ մի ցավ անգամ չենք զգում: Այսպիսի հրաշալի և շնորհական բուժումը վերագրելով

մեր նկատմամբ Աստծո ցուցաբերած առանձնահատուկ ողորմությանը, Նրա Սուրբ Մոր և սուրբ նահատակ Պանտելեիմոնի բուժիչ զորությունը՝ իմ պարտքը համարեցի բարձրաձայն վկայելու այս հրաշալի բուժման մասին՝ ի փառս Ամենազոր Տեր Հիսուս Քրիստոսի և ի պատիվ Նրա սուրբ նահատակ և բժիշկ աստվածահաճո Պանտելեիմոնի: Գոհություն նաև նրան:

Կոստրոմայի նահանգի Սուրբալիչ գավառի  
Կարցևո վոլոստի Շալոմեց գյուղի գյուղացի  
Միխայիլ Սոֆրոնովիչ Պոտապով:

1891 թվականի դեկտեմբերի սկզբին, երբ ես Սկաչկովո գյուղում սրբապատկերներով մտնում էի իմ ծխականների տները, մաղթանքներ մատուցելով սուրբ Նիկողայոսին և ըստ յուրաքանչյուրի ցանկության այլ ծառայություններ էի մատուցում: Ես այցելեցի նաև Իգնատի Մոկիևի տունը. նա ինձ շատ զարմացրեց իր հետևյալ խնդրանքով. «Տեր հայր,՝ արտասովալի դիմեց նա ինձ,՝ խնդրո՞ւմ եմ ծնրադրություններ երեք անգամ մաղթանք մատուցեք Աստծո ծառա, սուրբ նահատակ Պանտելեիմոնին»: Նրա տանը ավարտելով ծիսակատարությունը, հարցրեցի սուրբ նահատակ Պանտելեիմոնի

նկատմամբ նման ջերմեռանդություն պատճառը, և ահա թե ինչ պատմեց նա:

«Սրանից մեկուկես ամիս առաջ,– սկսեց իր պատմությունը Մոկիււրը,– շատ ծանր հիվանդացաւ. հիվանդությունը գնալով ավելի վտանգավոր էր դառնում, և օրեցօր ավելի ու ավելի էի վատանում:

Իմ կինը սկզբում, ինչպես երևում էր՝ պատրաստակամորեն էր խնամում ինձ, բայց հետո հիվանդությունս երևի թե սկսեց ձանձրացնել նրան, ու նա սկսեց տրտնջալ և մրթմրթալ ինձ վրա և ինձ առաջարկեց գնալ հիվանդանոց: Դառնապես վիրավորված՝ ես մերժեցի իմ տիկնոջ այդ առաջարկը և սկսեցի ջերմեռանդորեն աղոթել աստվածահաճո սուրբ ծառա Պանտելեիմոնին, որի սրբապատկերը դրված է իմ տան սուրբ տապանակում (այդ սրբապատկերը ինձ Աթոսից են ուղարկել չնչին նվիրատվության դիմաց): Վերջապես, երբ ես արդեն շատ վատ էի՝ իսկ դա երեք օր առաջ էր՝ և չէի կարող ո՛չ քայլել, ո՛չ նստել, ո՛չ նույնիսկ վեր կենալ, շնչառությունս էլ դժվարացել էր, կինս սկսեց ինձ համոզել, որ բժիշկ (բուժակ) կանչեմ, ես պատասխանեցի, թե ինձ ոչ մի բժիշկ պետք չէ, և այդ ասելով ու ցույց տալով սուրբ Պանտելեիմոնի սրբապատկերը՝ ասացի.

«Սա՛ է իմ բժիշկը: Եթե այս բժիշկը ինձ չօգնի, ապա ոչ մի բժիշկ ինձ չի բուժի»: Դրանից հետո ես խնդրեցի, որ ինձ տան սուրբ Պանտելեիմոնի սրբապատկերը, և այն դնելով կրծքիս, սկսեցի ջանասիրաբար ու արտասովալի աղոթել աստվածահաճո ծառային:

Վերջապես ես քուն մտա ու ասես թե հարթմանի տեսնում էի, որ իմ խրճիթում նստարանին նստած՝ պատուհանից դուրս եմ նայում: Տեսնում եմ՝ երեք ձի լծված մի կառք է արագ մոտենում փողոցով: Կառքը կանգ առավ ճիշտ իմ տան դիմաց՝ նրա մեջ նստել էին երեք մարդ՝ երկու ծերունի, ըստ երևույթին վանականներ, և մի երիտասարդ՝ սուրբ Պանտելեիմոնի պատկերին շատ նման:

Այս վերջինը շուտափուլթ դուրս եկավ կառքից, ներս մտավ տուն, ու նստարանին նստելով իմ կողքին, թափ տվեց ուսս և ասաց. «Ահա և ես, քո բժիշկը, դու ինձ անհամբեր սպասում էիր, ես էլ շտապեցի ժամանել քեզ մոտ»:

Դրանով էլ տեսիլքը ավարտվեց: Արթնանալով՝ ես անբացատրելի երանություն և ուրախություն էի զգում, ասես թե ամենևին հիվանդ չէի էլ եղել, այնպես որ հաջորդ օրը արդեն սկսեցի աշխատել... Տեր հայր,– ավարտեց իր պատմու-

Թյունը Մոկիւնը,- բարի եղեք իմ պատմութիւնը  
Հայտնի դարձնել Հասարակութեանը, տպագրե-  
լով այն մի որեւէ տեղեկագրում, քանի որ ես  
Հաստատ Հավատում եմ և վստահ եմ, որ հրա-  
շալի բժշկութիւնն ստացա միայն Աստծո ծառա  
Պանտելեիմոնի սուրբ աղոթքներով»:

Դուխովչչինսկի գավառի Սմոլենսկի թեմի  
Սկաչկովո գյուղի քահանա  
Միխայիլ Նեկլյուգով:

### ՆԻՇԱՐԺԱՆ ԻՐԱԳԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Տոմսկի թեմական տեղեկագրերում» (1898)  
Հաղորդվում է, որ երբ Տոմսկի առաջնորդը  
չընտրվում էր թեմում, նա ուղղափառ ժողովու-  
րդի նկատմամբ Աստծո ողորմութեան ակներև  
նշաններ էր նկատել: Սպիրիտսկի ծխական Հա-  
մայնքի Անտոնովկա գյուղում մի առաքինի կին  
հրապարակայնորեն պատմել է, իսկ համագյու-  
ղացիները Հաստատել են հետևյալը: Երեք տա-  
րի առաջ առաջնորդն անցնում էր Նույն այդ  
գյուղի միջով:

Այդ ժամանակ բարի կնոջ բոլոր երեխանե-  
րը հիվանդ պառկած էին, երբ առաջնորդը ժո-

ղովրդի հետ անցնում էր գյուղի միջով՝ մայրը  
նրան խնդրել էր այցելել իր հիվանդ երեխա-  
ներին, առաջնորդը կատարել էր նրա խնդրան-  
քը: Կարճ աղոթք ասելուց հետո նա սուրբ նա-  
հատակ Պանտելեիմոնի նշխարներից վերցրած  
յուղից տալիս է հիվանդ երեխաների մորը,  
որպեսզի նա այդ օրհնված յուղը խմեցնի հի-  
վանդներին, իսկ ժողովրդին խնդրում է ըստ  
կարողութեան անօգնական չթողնել հիվանդ  
երեխաներին ու վշտահար մորը, ինչը բոլորը  
խոստանում են կատարել: Դրանից հետո Տե-  
րը այրի կնոջը առաքեց իր ողորմածութիւն-  
ը՝ նրա բոլոր հիվանդ երեխաները բժշկվեցին:  
Մի որդին, որի լեզուն պապանձվել էր և ձեռ-  
քերն ու ոտքերը՝ ծռվել, յուղը խմելուց հետո  
սկսեց արագորեն ապաքինվել: Նույն օրը նա  
սկսեց խոսել, իսկ ձեռքերն ու ոտքերը ուղղ-  
վելով՝ բացվեցին: Առաջնորդի վերջին այցելու-  
թեան ժամանակ (1897) երախտագիտութեամբ  
լցված մայրը իր բոլոր երեխաներին բերել էր  
հովվապետից օրհնութիւնն ստանալու և ողջ  
ժողովրդի մեջ ցույց էր տալիս իր այն երե-  
խային, ում ձեռքերն ու ոտքերը նախկինում  
ծռված էին: Կարելի է պատկերացնել այն աստ-  
վածասիրական գորովագին տրամադրութիւնն  
ու ոգևորութիւնը, որ ապրում էր ժողովուրդը

Աստծո ողորմածութեան այդ բացահայտ նշանի մասին լսելիս, որի վկաներն ու ականատեսներն էին շատերը, և բոլոր ներկաները, երախտագիտութեան արտասուքն աչքերին, հետեւելով հովվապետին, իրենց հոգու խորքից բացականչում էին. «Փա՛ռք Աստծուն»:

«Պոլտավայի թեմական տեղեկագրերում» (1898, № 19) հաղորդվում է հետեւյալը: Ութսունչորսամյա ծերունի Ն. Ի. Ա-ն, որ այժմ էլ ողջ-առողջ է, բայց արդեն ծեր տարիքի, եղել է քաղաքացիական դատական ատյանի քարտուղար, մշտապես ապրել է Մոսկվայում, բավականին կրթված մի մարդ, 1839 թվականին ավարտել է Մոսկվայի համալսարանի լրիվ դասընթացը (ժողովրդական լուսավորության՝ վերջերս վախճանված նախարար Ի. Դ. Դելյանովի, հայտնի գիտնական Կ. Դ. Կավելինի, պրոֆեսոր Ֆ. Ի. Բուսլաևի և այլոց հետ), 1883 թվի օգոստոսի վերջին հիվանդացավ քիթ լորձաթաղանթի բորբոքումով: Հիվանդությունը սկսվեց թեթև հարբուխով, որը քիչ-քիչ ուժեղանալով, այնքան խորացավ, որ լիովին բթացրեց հոտառութեան զգայարանն ու ծայրաստիճան դժվարացրեց շնչառությունը: Բուժման ոչ մի միջոց չէր օգնում:

Հիվանդագին նոպաները շատ տանջալի էին, քանի որ առաջ էին բերում հեղուկի անընդհատ առատ արտադրություն, որը շատ ծանր, տհաճ հոտ ուներ: Հասկանալի է, որ նման դրութեամբ հիվանդը ստիպված էր անձանոթներից հեռու մնալ: Անգամ մտերիմների մեջ լինելը շատ դժվարություն ու հոգս էր պատճառում նրան: Վերջը քիթ ամբողջ խոռոչը ծածկվեց այնպիսի ցավոտ փառով, որը կարծես մի ամբողջական կոճիկ լինեք ավելորդ աճած մսի ձևով: Դրա հետ մեկտեղ հեղուկի արտադրությունը չէր դադարում, այլ բարդանում էր ուժեղ ցավով, որը ամեն անգամ քիթը մաքրելիս սաստկանում էր:

Նման տանջալի վիճակը շարունակվում էր ամբողջ չորս տարի, մինչև 1887 թվի հուլիսը: Այս տարի, հուլիսի 26-ին, երեկոյան դեմ, դժբախտ հիվանդ ծերունին ընկճված հոգեվիճակով մենակ նստած էր իր տանը, երբ հանկարծ մոտիկից լսեց գիշերային հսկման տոնական ավետիսը:

Հետաքրքրվելով տոնակատարության առիթի մասին՝ նա իմացավ, որ հարևան եկեղեցում կա սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի մի շատ պատվական սրբապատկեր, որի հիշատակը Եկեղեցին տոնում է հուլիսի 27-ին:

Այդ հանգամանքը հիվանդին դեղեց այսպես խորհել, թե Քրիստոսի նահատակ և բժիշկ Պանտելեիմոնը, առատորեն իր բժշկարար օգնությունն է պարգևում բոլոր կարիքն ունեցողներին, ովքեր հավատով են դիմում Տեր Աստծո առաջ նրա զորավոր բարեխոսությունը, անկասկած կարող է բժշկել նաև իր տանջալի հիվանդությունը: Պետք է ասել, որ պարոն Ա-ն, չնայած իր սուր քննադատական մտքին՝ անկեղծորեն հավատում էր Աստծուն, ճշգրիտ կատարելով տան ամենօրյա առավոտյան և երեկոյան աղոթքները:

Այդ նույն երեկոյան, մեծ նահատակ Պանտելեիմոնի տոնի նախօրեին, նա վճիռ կայացրեց իր ամենօրյա սովորական առավոտյան և երեկոյան աղոթքներին ավելացնել բժիշկ Պանտելեիմոնին ուղղված առանձնահատուկ ջերմեռանդ աղոթք՝ նրա բարեխոսությամբ Աստծո ամենազոր օգնականությունը հայցելով իր ծանր հիվանդությունը բուժելու համար: Եվ այդ ժամանակ ակնհայտորեն հաստատվեցին առաքելական խոսքերը՝ արդարի զորավոր աղոթքը շատ բան կարող է կատարել (Հակ. 5, 16):

Բժիշկ Պանտելեիմոնին ուղղված իր աղոթքից արդեն մի քանի օր անց, առանց որևէ արտաքին բժշկական միջոցների, հիվանդը սկսեց իր ծանր

վիճակի թեթևացում զգալ, այնուհետև քիթը մաքրելիս հեշտորեն դուրս եկավ պնդացած արտադրություն մի ամբողջ գունդ, ընդամին, շնչառությունը թեթևացավ: Նույնը կրկնվեց նաև մեկ շաբաթ անց, վերջապես քիթի ցավոտ արտադրությունը լրիվ դադարեց, հոտառությունը լիովին վերականգնվեց, այլևս ոչ մի հիվանդագին երևույթ չմնաց, և այնժամ հիվանդն իրեն կատարելապես առողջ զգաց: Այդ ժամանակվանից ցայսօր այլևս երբեք չի կրկնվել նախկին հիվանդությունը հիշեցնող որևէ բան: Այս դեպքը մեզ լավ հայտնի է, քանի որ մենք ինքներս ենք եղել այդ տանջալի հիվանդության և նրա շուտափուլ բուժման ակնատեսները, և դրա համար էլ կարող ենք համարձակ պնդել, որ հավատով եղած աղոթքը հիվանդին փրկեց (Հակ. 5, 15) Աստծո ողորմածության առջև աստվածահաճո ծառա և սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոնի զորավոր բարեխոսությամբ: Աքանչելի՛ է Աստված իր սրբերի մեջ: Սուրբ նահատակ և բժիշկ Պանտելեիմոն՝, աղոթի՛ր Աստծուն մեզ համար:

\*\*\*

Մեծ նահատակ Պանտելեիմոնի թանկագին նշխարներով սրբացված են շատ վայրեր, մանավանդ Սուրբ Աթոս լեռը: Այնտեղ է նրա տառապյալ և բժիշկ գլուխը, և սուրբ նշխարների մասունքները հանգչում են նահատակ Պանտելեիմոնի անվան Ռուսական միաբանության վանքում: Աջ ձեռքի մի մասը՝ Վատոպեզի վանքում, ձեռքը՝ Իվերի վանքում, մատի մասը՝ Քսենոֆոնի վանքում, ճկույթի մասը՝ իր հայրենիքում՝ Նիկոմեդիայում, ոտքը՝ Քիլանդար վանքում, ձախ ոտքը՝ Ֆիլոֆեյ վանքում, տարբեր մասեր ու մասունքներ՝ Աթոսյան վանքերում՝ Դոքիարում, Զոգրաֆում, Եսֆիզմենում, Պանտոկրատորում, Կուտլումուչում, Սվյատոպավլովսկում, Գրիգորիատում, Միմոնոպետում, Քսիրոպոտամում: Բացի այդ, նրանից մասունքներ կան Սուրբ Նախավկայի, Սուրբ Աննայի, Սուրբ Աստվածածնի Ծննդյան, Իլյինսկի, Անդրեևսկի, Քսիրոպոլյի մենաստաններում, Սուրբ Պանտելեիմոնի մենաստանում, Սանկտ-Պետերբուրգում՝ Ալեքսանդրո-Նևսկայա Լավրայում, Մոսկվայում՝ Աֆոնսկայա մատուռում, պատրիարքական խորանում, Սերգիև Լավրայում, Չերնիգովի նահանգի Սոսնիցկի գավառի Սավինկի գյուղում:

Սուրբ բժիշկ Պանտելեիմոնը արագ է օգնության հասնում, բժշկելով հավատով և ջերմ աղոթքներով իրեն դիմողների հոգու և մարմնի ցավերը: 1863 թվականից՝ ավագ աբեղա Արսենիոսի կողմից սուրբ նահատակի նշխարներից մասունքները Աթոսից Ռուսաստան բերելու ժամանակվանից ի վեր դրանց բժիշկ շնորհները առատ հոսում են մեր Ուղղափառ Հայրենիքի տարբեր տեղերում:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ ԵՎ ԲԺԻՇԿ ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆԻ ՎԱՐՔԸ, ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐԱԾ ՀՐԱՇՔՆԵՐԸ .....	7
ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ ԵՎ ԲԺԻՇԿ ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ՝ ՀԱՎԱՔՎԱԾ ՍՎՅԱՏՈԳՈՐԵՑԻ ԿՈՂՄԻՑ.....	57
ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ ԵՎ ԲԺԻՇԿ ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ ՆԻԿՈՍԵԴԻԱՅՈՒՄ .....	97
ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ ԵՎ ԲԺԻՇԿ ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ ՔՅՈՒՄ ՔՅՈՒՆՋՅՈՒԿՈՒՄ ....	141
ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ ԵՎ ԲԺԻՇԿ ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ ԱՅԼ ՏԵՂԵՐՈՒՄ .....	169
ԱՅՆ ՍԱՄԻՆ, ԹԵ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ ԵՎ ԲԺԻՇԿ ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆԻՆ ՀԱՎԱՏՈՎ ԴԻՄՈՂՆԵՐԸ ԻՆՉՊԵՄ ԵՆ ՀՐԱՇՔՈՎ ԲՈՒԺՎԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ .....	185

Տիֆի ՏԵՆԴԻՅ ՏՈՒՂԱՅՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԲՈՒԺՄԱՆ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ .....	185
ԽՆՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՈՒՄ .....	189
ՁԵՌՔԻ ԲՈՒԺՈՒՄ .....	194
ԳԼԽԱՅԱՎԻՅ ԲՈՒԺՈՒՄ .....	197
ԵՐԵՔ ՆԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՇՆՈՐՆԱՊԱՐԳԵՎ ԲՈՒԺՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....	199
ՃՇՄԱՐՏԱՊԱՏՈՒՄ ԵՐԱԶ .....	201
ՍՈՒՐԲ ՆԱՏԱՏԱԿ ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆԻ ԵՐԵՎՈՒՄԸ ԱԹՈՍՈՒՄ ՄԻ ՄԵՆԱԿՅԱՅԻ 1879 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԳԻՇԵՐՎԱ ԺԱՄԸ ԵՐԵՔԻՆ .....	205
ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ՆԱՏԱՏԱԿ ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆԻ ՆՐԱՇԱԳՈՐԾ ԵՐԵՎՈՒՄԸ 14-ԱՄՅԱ ՄԱՆԱՄԵՐՁ ԼԻԴԻԱՅԻՆ, ԱՊԱՆԱԵՎ ՏԵՍԻԼՔԻ ՄԵՋ ՆՐԱ ՆՐԱՇՔՈՎ ԲՈՒԺՈՒՄԸ .....	207
ԳՆԴԱԿԻՅ ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ՏՂԱՅԻ ԲՈՒԺՈՒՄԸ .....	223
ԺԱՆՏԱԽՏԻ ԴԱՂԱՐՈՒՄԸ ԱՍՏՈՆ ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՍՈՒՐԲ ՆԱՏԱՏԱԿ ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆԻ ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅԱՄԲ .....	224
ԱՍՏՈՆ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ՆԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ԱՆՁԱՆՅ ՍՈՒՐԲ ՆԱՏԱՏԱԿ ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՂՈՒՔՆԵՐՈՎ .....	229

ՔԱՂՎԱԾԵ ՈՒՐԺՈՒՄԻ ԳԱՎԱՌԻ ՑԵՊՈՉԿԻՆ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՅՈՒ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՅ .....	241
---	-----

ՀԱՎԱՏԻ ԵՎ ԱՂՈՒՔԻ ԲԺՇԿԱՐԱՐ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ .....	283
ՆԻՇԱՐԺԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	292



ՆՈՉԵՎՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

ԺԱ

ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ ԵՎ ԲԺԻՇԿ ՊԱՆՏԵԼԵԻՄՈՆԻ  
ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՇՔՆԵՐԸ

*Նրադարակչության փնտրեն՝ Եզնիկ Արթ. Պեդրոսյան  
Թարգմանությունը տասերենից՝ Արա Զոհրաբյանի  
Խմբագիր և սրբագրիչ՝ Յուրա Նովիանինյան  
Էջադրումը՝ Արտակ Տիրանյանի*

Սուրբ Էջմիածին - 2009

Չափսը՝ 70 x 100 1/32,  
ծավալը՝ 19 տպ. մամուլ,  
շապիկը՝ 4 գույն, տեքստը՝ 2 գույն,  
տպաքանակը՝ 1000:

